


891.55.64

+

46.6

4-17 00

00 AUG 2010



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

45

ԺԷ

ՆՈՅՆՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

Փ Ա Ր Ի Զ

1936

“V E M,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀ. ԶԱԻՐԵԱՆ. — Գաբրիել Սունդուկեան	1
ՎԱՀ. ՄԻՆԱՍՈՐԵԱՆ. — Արիաւիբի օրեր	24
ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ. — Անդրանիկը Սիւնեաց երկրում (վերջ)	50
ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ. — Ղարա Մելիք	70
ՍԻՄ. ՎՐԱՅԵԱՆ. — Վ. Փափագեանի յուշերի առթիւ	80
ՀԱՅ. — ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ	87
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ. — Գեորգեան ճեմարանի մեծ դէպքը	99
ԱՆՅԵԱԼՔ. — Գ. Նորատուկեան — Հ. Գ. Մէնէվիշեան — Ս. Սառունի	103
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Դուրեան Գրական Մրցանակը — Մի ճշդում	109
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ. — Հայաստանի Գիտական Գրականութիւնը — Հայ Հանրագիտակ — Լ. Էսանեանի գործերը	111
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ. — Լ. Ասլանեան (Լաս)՝ «Հարցականի ուղիներով», Ս. Վ.	115
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ	118
ՅԱԻԵԼԻԱՆ. — Վահրամ Եղ. Մանկունի, «Գեորգ Գ. եւ իւր ժամանակը»	241

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս՝ տարեկան 4 դրար
Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանկ
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, եւ
Պարսկաստան՝ , , 50 ֆրանկ

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԻԲՐԱՔԱՆՁԻՐ 6 ԳԻՐՔԸ՝ 25 Ֆր.

Հասցէ՝ նամակների, դրամի, յողւածների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար. —

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)


Gérant : V. Hampartzumian

Impr. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquière, PARIS (17e)

03.05.2013

4-07 00

00 AUG 2010



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Դ ՏԱՐԻ, ԹԻՒ 5

1936

ՆՈՅԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

(ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

Գ. Սունդուկեանի կատարած դերը յստակ կերպով ըմբռնելու համար անհրաժեշտ է զէթ երկու խօսքով կանգ առնել այն վիճակի վրա, որ ներկայացնում էր հայ թատրոնը Սունդուկեանից առաջ: Տեղի սղութեան պատճառով սկսենք, թէկուզ, հէնց Սունդուկեանին նախորդող ժամանակներից, այսինքն՝ անցեալ դարի 50-ական թւականներից, երբ թէ՛ Պոլսի եւ թէ՛ Կովկասի հայութեան մէջ զգացւեց ազգային թատրոնի պահանջը: Հայկական երկու հատուածներն էլ թատերական գործը սկսեցին փոխառութեամբ օտարներից: Արեւմտահայերն իրենց սնունդը ստանում էին Ֆրանսական գրականութիւնից, արեւելահայերը՝ ռուսականից: Թարգմանում էին զաւելտներ, կոմեդիաներ, իսկ Պոլսում նաեւ օպերէտներ: Այդ բոլորը կատարում էր անխնամ ու հապճեպով եւ, սովորաբար, հրատարակութեան չէր արւում: Կովկասի հայ բեմին ամենից շատ նիւթ էին մատակարարում Փուլիսեանն ու Տէր — Գրիգորեանը, որոնք այնքան մեծ վարձուքին էին ձեռք բերել, որ մէկ — երկու գիշերայ մէջ մի ամբողջ թատերախաղ էին պատրաստում:

Կովկասում, հայ թատրոնին կից գործում էր եւ վրացական թատ-



511-2001

րոնը, որ նոյն իսկ դեռ 1850 թ. պետական նպաստ էր ստանում: Վերաց թատրոնի գլուխը կանգնած էր յայտնի գրող Եղիս. Գէորգի էրիս-դովը, որի մերձաւոր աշխատակիցն էր հայ Զուրաբ Անտոնովը, հեղինակ բազմաթիւ թատերախաղերի, որոնք վայելում էին ժողովրդականութիւնն նոյն իսկ համաշխարհային պատերազմի նախօրեակին: Սակայն, հակառակ այդքան բարեյաջող պայմանների, վրաց թատրոնը վերջ գտաւ 1856 թ.-ին:

Կովկասեան թուրքերն այդ ժամանակ դեռ թատրոն չունէին, թէեւ Միրզա - Ֆաթհ - Ալի - Ախունդ - Ջադէն գրել էր 7 թատերախաղ ազրբէջանեան թուրքերի լեզուով, որոնց մէջ կային եւ խիստ յաջող գործեր: Այդ թատերախաղերը 1852-ին հրատարակեցին ռուսերէն թարգմանութեամբ, իսկ բնագիրը լոյս տեսաւ 1857-ին: Դրանք թարգմանւած են եւ պարսկերէն եւ երկար ժամանակ սիրւած էին Պարսկաստանում: Իսկ Կովկասում մինչեւ 90-ական թւականները ոչ մի անգամ չեն ներկայացել:

Այս էր թատրոնի ընդհանուր կացութիւնը Կովկասում, երբ, իրեն թատերագիր, երեւան եկաւ Գ. Սունդուկեանը:

II

ՄԱՐԴԸ

Գարրիէլ Սունդուկեանը ծնւել էր 1825 թ. յունիս 29-ին, Թիֆլիսում: Նրա հայրը, Անչիս - Խատիս եկեղեցու ծխական Մկրտում Սունդուկեանը, բնիկ Թիֆլիսցի էր, Թիֆլիսի մոկալակներէց *), եւ պատկանում էր արտասահմանի - Եւրոպայի - հետ առեւտուր անողներին:

Մկրտումը վախճանւեց, երբ Գարրիէլը դեռ 6 տարեկան էր: Վերջինիս, ինչպէս եւ կրտսեր եղբօր ու քրոջ խնամքն ու դաստիարակութիւնը ամբողջովին անցաւ մօր, որ ծագում էր Ռոտինեանց տոհմից եւ մեծ մտքի ու լայն սրտի տէր կին էր: Նա կարողացաւ իր զաւակին տալ այն ժամանակների համար բացառիկ կրթութիւն եւ մինչեւ մահ էլ պահեց իր ազդեցութիւնը նրա վրա:

Մի դէպք մեծապէս օգնեց նրան: Ամուսնու մահից յետոյ, նրանց տան վերին յարկում բնակւեց Փարիզի Արեւելեան Կենդանի Լեզու-

*) Մոկալակի էին կոչուում Թիֆլիսի հարուստ վաճառականները, որոնք սովորաբար գրաւում էին մեծաքանակ առեստով: Առանձին դաս էր վրաստանում՝ դասային յատուկ արտօնութիւններով: Մոկալակիները համարուում էին պատւաւոր քաղաքացիներ:



ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

ների վարժարանի ուսուցչապետ ուսնայեցի Յակովբ Շահան Զրպետը իր Փրանսուհի կնոջ հետ: Շահան Զրպետը հրաւիրւած էր Ներսէս Աշտարակեցու կողմից կազմակերպելու Ներսիսեան դպրոցը:

1832 թ. ապրիլ 1-ին Գաբրիէլը սկսեց դաս առնել Զրպետ ամուսիններից եւ շարունակեց մինչեւ 1838 թ., երբ օգոստ. 16-ին մեռաւ Շահան Զրպետը, իսկ կինը վերադարձաւ Փրանսա: Ամէն օր առաւօտեան ժամը 8-ից մինչեւ երեկոյեան ժամը 6-ը Գաբրիէլը մնում էր Զրպետի տանը, ուր, բացի ընդհանուր դարգացումից, ստանում էր նաեւ Զրպետից հին ու նոր հայերէնի, իսկ կնոջից՝ Փրանսերէնի դասեր: Արդիւնքը եղաւ աւելի քան գոհացուցիչ: Գաբրիէլը շատ լաւ սովորեց հայերէն լեզուն եւ ազատ խօսում, կարդում ու գրում էր ֆրանսերէն: Բացի այդ, Զրպետից սովորեց եւ լատիներէն ու իտալերէն եւ առանձնապէս սիրեց երկրաչափութիւնը: Տարիներ յետոյ, Սունդուկեանը, առանց վարձատրութեան, երկրաչափութիւն դասաւանդեց Ներսիսեան դպրոցում: Քանի որ Զրպետեան ամուսինները ունեւէին չգիտէին, մօր պնդումով Գաբրիէլը ունեւէին լեզւի դասեր առաւ նախ հայ – կաթոլիկ Մամուլեանից, յետոյ ուստական Գիմնազիայի հայերէնի ուսուցիչ Արարատեանից:

Զրպետի մահից յետոյ Գաբրիէլը մտաւ Արզանով եղբայրների Ազնականների գիշերօթիկ վարժարանը, որ կազմակերպւած էր Լազարեան Ճեմարանի ձեւով, եւ 1840-ին աւարտեց մրցանակով: Նոյն տարին մտաւ Թիֆլիսի Գիմնազիան, որ աւարտեց 1841-ին: Իբրեւ յաջող աշակերտ, ստացաւ պետական թոշակ եւ մեկնեց ուսանելու Պետերբուրգի համալսարանում: Մտաւ բանասիրական բաժնի արեւելեան լեզուների մասը եւ յաջողութեամբ աւարտեց 1850-ին

1850 թ. Թիֆլիս վերադառնալուց յետոյ, Սունդուկեանը, իբրեւ թոշակառու, կոչեց պետական ծառայութեան եւ Կովկասի փոխարքայի դիւանատանը ստացաւ սեղանապետի օգնականի պաշտօն: Երեք տարի յետոյ, փոխարքայի կարգադրութեամբ փոխադրեց Դերբենտ, նահանգապետի դիւանատան կառավարչի պաշտօնով: Այդ փոխադրութիւնը տեղի ունեցաւ իբրեւ հետեւանք բախումի, որ Սունդուկեանը 1852-ին ունեցաւ փոխարքայի դիւանատան գանձապետ Բելեայեւի հետ: Վերջինս անարգական վերաբերում էր ցոյց տւել դէպի Սունդուկեանը, եւ սա շատ ծանր խօսքերով պատասխանել էր նրան: Բելեայեւը դիւանապետ Շչերբինայի միջոցով պահանջել էր, որ Սունդուկեանը հրապարակով ներողութիւն խնդրէ իր ասածների համար, բայց մերժում էր ստացել: Շչերբինան բաւականացել էր միայն Սունդուկեանին բանտարկելով դիւանատան մէջ, բայց Բելեայեւը այդ-

քանով չէր գոհացել եւ յաջողել էր, 7 ամիս յետոյ, Սունդուկեանին Դերբենդ փոխադրել տալ:

Դերբենդում Սունդուկեանը մնաց ամբողջ հինգ տարի եւ բազմաթիւ անգամներ խնդրեց փոխարքայ իշխ. Վորոնցովին եւ սրա յաջորդ իշխ. Բարխատինսկիին, որ իրեն իրաւունք տրւի վերադառնալ Թիֆլիս: Խնդրում էր եւ մայրը, բայց միշտ ապարդիւն: Միայն 1858 թ. նրան յաջողեց տեղափոխել Թիֆլիս, այս անգամ Ճանապարհների Հաղորդակցութեանց Շրջանային Վարչութիւնը, ուր պաշտօնավարեց 50 տարի, մինչեւ 1907 թ. փետրւար, երբ թողեց պաշտօնը տարեկան 2500 ռուբլու կենսաթոշակով և գաղտնի խորհրդականի աստիճանով: Հրաժարականի պաշտօնաթղթում կառավարութիւնը առանձնապէս գնահատում էր նրա անկաշառ եւ ազնիւ նկարագիրն ու օրինակելի պաշտօնավարութիւնը:

1863 թ. Սունդուկեանը ամուսնացաւ Սոֆիա Միրիմանեանի հետ, որի հետ գրեթէ 50 տարի ապրեց սիրով ու համերաշխութեամբ: Ամուսնութիւնից ունեցաւ հինգ զաւակ՝ երկու մանչ, երեք աղջիկ:

Իր ամբողջ կեանքը Սունդուկեանը անցկացրեց Թիֆլիսում. միայն չորս տարի ապրեց Պետերբուրգում, ուսանելիս, հինգ տարի Դերբենդում եւ մի ամիս էլ Փարիզում: Թիֆլիսի հետ նա կապւած էր բացառիկ սիրով եւ քաղաքն ու բնակչութիւնը ճանաչում ու սիրում էր ջերմօրէն: Նա հաւասար կատարելութեամբ տիրում էր հայերէն ու վրացերէն լեզուներին, լաւ գիտէր թուրքերէն ու պարսկերէն եւ հիմնովին տեղեակ էր արաբերէն լեզւի տարբերքին: Շատ լաւ գիտէր եւ ռուսերէն ու ֆրանսերէն:

Սունդուկեանը բարձրահասակ, բարեկազմ, սլափառելի արտաքինով, գեղեցիկ մարդ էր: Արտաքինով միշտ մաքուր ու վայելուչ, հագնում էր անթերի ճերմակ սպիտակեղէն եւ ամառ — ձմեռ կրում էր բաց — գորշ մորթէ գտակ: Անթերի մաքրութեան տպաւորութիւն էին թողնում եւ նրա տունն ու ընտանիքը: Մարմնաւոր մաքրութիւնը ապացոյց էր եւ նրա ընտանիքի բարոյական մաքրութեան, որի բոլոր անդամները կապւած էին իրար հետ սիրոյ եւ մտերմութեան կապերով:

Սունդուկեանը հարուստ մարդ չէր, բայց եւ երբեք կարիքի մէջ չի գտնւել: Նա որոշ ժառանգութիւն էր ստացել իր հօր երբեմնի խոչոր հարստութիւնից եւ ինքն էլ շատ լաւ ռոճիկ էր ստանում: Այդքանը բաւական էր պարզ եւ հիւրասէր կեանքի համար: Նա իրեն սահուում էր մեծ արժանապատուութեամբ եւ անկեղծ յարգանք էր առաջ բերում ամենքի մէջ:

Նիւթական ապահովութիւնը ազատում էր նրան կախումից հասարակական գործերում: Նա ինչ որ անում էր՝ անում էր առանց վարձատրութեան, յաճախ ինքն էր ծախսում առանց յետ ստանալու ակնկալութեան:

Սէրը դէպի թատրոնական գրականութիւնը Սունդուկեանի մէջ երեւան եկաւ դեռ պատանեկան օրերին: Մի անգամ, դեռ գիմնադիպի աշակերտ եղած ժամանակը, 17 տարեկան հասակում, նրա ձեռքն ընկաւ Շիլլէրի «Սէր եւ Խարդաւանք» թատերգութեան ռուսերէն թարգմանութիւնը: Երեկոյեան նստեց կարդալու եւ, հակառակ մօր պնդումների, տեղից վեր չելաւ մինչեւ որ առաւօտեան ժամը 4-ին չվերջացրեց ընթերցումը: Եւ երկար ապրում էր կարդացած գրքի տպաւորութեան տակ: Ըստ երեւոյթին, այդ նոյն գիշերն էլ երեւան եկաւ նրա սէրը դէպի թատրոնը: Պետերբուրգում, ուսանողական աշխատանքների միջոցին, նա ջանասիրութեամբ յաճախում էր ռուսական եւ ֆրանսական ներկայացումները Ալեքսանդրինսկի եւ Փոքր թատրոններում, որոնք երկուսն էլ այն ժամանակ դերասանական փայլուն կազմ ունէին: Միեւնոյն ժամանակ Սունդուկեանը եռանդով ծանօթանում էր համաշխարհային գրականութեան եւ, մանաւանդ, թատերական գլուխ գործոցներին:

III

ԳՈՐԾԸ

Երբ 1858 թ. Սունդուկեանը Դերբենդից եկաւ Թիֆլիս, այնտեղ նա գտաւ հայկական կազմակերպւած թատրոնի պէս մի բան: Առաջ էր եկել դերասանների աւելի կամ պակաս չափով մնայուն մի խումբ եւ ժամանակ առ ժամանակ տրւում էին ներկայացումներ: Խաղացանկը բաղկացած էր գլխաւորապէս զաւեշտներից ու թեթեւ կոմեդիաներից, որ ռուսերէնից առնելով յարմարեցնում էին Փուլինեանը եւ Տէր — Գրիգորեանը:

Երբ Սունդուկեանը ծանօթացաւ ու բարեկամացաւ դերասանների ու թատերագիրների հետ, սրանք շատ շուտով տեսան, որ նա լաւ հասկանում է բեմական արւեստը եւ շատ իրազեկ է եւրոպական թատերական գրականութեան: Բանը սկսեց խորհուրդներից, որոնց համար յաճախ գիմում էին Սունդուկեանին, իսկ վերջը բարեկամները սկսեցին խնդրել, որ թատերախաղեր գրէ: Սունդուկեանի առաջին փորձը, 1863-ին, եղաւ «Գիշերւայ սաքրը խէր է» կատակը, որի մէջ արտայայտեց Սունդուկեանի հմտութիւնը բեմական արւեստ-

տում, այլ եւ նրա քաջ ծանօթութիւնը մանր առեւտրական դասի կեն-
ցաղին ու Թիֆլիսի բարբառին: Մի գործողութիւնից բաղկացած այդ
կատակը անօրինակ յաջողութիւն գտաւ եւ երկար չէր վերացում
բեմից:

Սունդուկեանի յօրինած երկրորդ թատերախաղը եղաւ «Խաթա-
րալա»-ն, (1865 թ.), սկզբնապէս երկու գործողութիւնից: Այստեղ
վեր է առնւած ամուսնութեան խնդիրը, որ այն ժամանակները հայ
կեանքի ցաւոտ երեւոյթներից մէկն էր: Եւրոպական կրթութիւն
ստացած մի բրիտանացի, փողոցում, մի տան դրան առջեւ, պատա-
հում է մի գեղեցիկ կնոջ եւ շատ հաւանում է նրան: Դրանից օգտը-
ւում է այդ տան տէրը, մի հարուստ վաճառական, որ ունէր արտա-
քինով խիստ տղեղ, բայց գեղեցիկ հոգու տէր մի աղջիկ. եւ աշխա-
տում է իր աղջկան ամուսնացնել վերեւ յիշւած երիտասարդի հետ:
Վերջինս պնդում է, որ նշանելուց առաջ տեսնելի հարսնացուի հետ:
Հայրը սարքում է տեսակցութիւն — նշանադրութիւնը: Բայց ինչքան
եւ աշխատում են աղջկան գեղեցկացնել, կեղծիքը երեւան է գալիս
եւ նշանադրութիւնը ջուրն է ընկնում:

Այս նիւթը Սունդուկեանին շատ էր զբաղեցնում եւ նա երկու
անգամ վերամշակեց իր գրւածքը: Երկրորդ վերամշակութեան ժա-
մանակ «Խաթարալա»-ն դարձաւ երեք գործողութիւնից բաղկացած
եւ վերջնական ձեւն ստացաւ 1879 թ. իրեւել չորս գործողութեամբ
թատերախաղ: Աստիճանաբար խաղը ազատեց կատակի տարրից եւ
վերածւեց իրական ճշմարտութեամբ յագեցած թատերական երկի:
Պէտք է նկատել, որ հեղինակը աշխատում է գրաւել ընթերցողի եւ
դիտողի համակրանքը դէպի մտաւորականը, որ այդպիսի տարօրե-
նակ ձեւով կին է փնտռում իրեն համար, բայց ընթերցողի ու դիտո-
ղի, ինչպէս եւ հեղինակի իրական համակրանքը ամբողջապէս թըշ-
ւառ աղջկայ կողմն է:

Հայ կնոջ կեանքի ծանր վիճակը Սունդուկեանի մշտական մտա-
հոգութեան առանցքն է կազմում: Նա անմխի ու համարձակ կեր-
պով, գրեթէ իր բոլոր երկերում այս կամ այն ձեւով պաշտպան է
դուրս գալիս հայ կնոջ ոտնահարւած իրաւունքների, արդարացնում
կամ ելք է փնտռում եւ միշտ համակւած է անկեղծ ու ջերմ կարեկ-
ցութեամբ դէպի հայ կնոջ դառն ճակատագիրը:

«Խաթարալա»-յին 1866 թ. յաջորդեց «Օսկան Պետրովիչն էն
կիբֆում» մէկ արարնոց կատակը, որի մէջ Օսկանը — «Գիշերայ սա-
բըր խէր է» զաւեշտի հերոսը — մահաւանդ յետոյ, հակառակ իր ա-
կնկալութեան, դժոխք է ընկնում, ուր հանդիպում է իր Թիֆլիսեցի

ծանօթներից շատերին, որոնց թւում եւ «Խաթարալա»-յի հերոսնե-
րին: Եւ ամէն հանդիպման առթիւ Օսկանը սրամիտ նկատողութիւն-
ներ է անում:

1869 թ.—ին Սունդուկեանը տւեց մի նոր կատակ՝ «Եւ այլն, կամ
Ուր Դիագիմէս», որի մէջ Թիֆլիսցի առեւտրականները սուր ծաղրի
են ենթարկում Փարիզից վերադարձած եւ պատւաւոր ընտանիքում
իրեն պահել չգիտցող երիտասարդին: Հեղինակը իր այս գրւածքին
առանձին կարեւորութիւն չէր տալիս եւ տպեց միայն 1907 թ., երբ
պատրաստում էր իր երկերի ժողովածուի հրատարակութիւնը:

1869 թ. վերջերը Սունդուկեանը լոյս ընծայեց իր «Ելի մէկ գոն»
վեց արարնոց թատերգութիւնը: Սկզբնապէս այդ երկը կրում էր
«Մալխաս» անունը եւ մէկ անգամ ներկայացւեց բարեգործական նը-
պատակով, բայց հեղինակը մնաց դժգոհ եւ առաւ ու անմիջապէս վե-
րամշակեց: «Ելի մէկ գոն»-ի բովանդակութիւնը հետեւեալն է.—
Սարգիս անունով մի հարուստ վաճառական ունի մի ուսեալ ու դա-
ղափարական որդի, որ սիրահարւած է մի գնդապետի աղջկայ վրա.
աղջիկն էլ սիրում է նրան: Թիֆլիսցի միլիոնատէր Բրիլիանտովն էլ
ունի մի աղջիկ ու մի տղայ. երկուսն էլ թեթեւամիտ ու պճնասէր:
Բրիլիանտովը որոշում է որդուն ամուսնացնել գնդապետի աղջկայ
հետ, իսկ աղջկան՝ տալ Սարգիս տղին: Այդ նպատակով համաձայնու-
թեան է գալիս Սարգիս հետ, սա էլ իր հերթին խօսք մէկ է անում
գնդապետի կնոջ հետ: Նրանց ծրագիրը իրականանում է. մայրը յա-
ջողում է համոզել աղջկան, որ մերժի Սարգիս որդուն եւ ամուսնա-
նայ միլիոնատէրի որդու հետ: Սկզբնական ձեւի մէջ, ընդհակառակը,
խաղը վերջանում էր միլիոնատէրի խայտառակութեամբ եւ սիրահար
զոյգի ամուսնութեամբ:

1870 թ. Սունդուկեանը հրապարակ է գալիս իր «Պէպա»-յով, որ
իրական յեղաշրջում առաջ բերեց հայ թատերական գրականութեան
մէջ: «Պէպա»-ն շատ շուտով գրաւեց առաջնակարգ տեղ հայ բեմի վը-
րա եւ մինչեւ այսօր էլ պահում է այդ տեղը: Հիմա էլ վերածւած է
չարժապատկերի եւ շարունակում է գրաւել հասարակութեան ուշա-
դրութիւնը: «Պէպա»-ն մի տեսակ յայտնութիւն եղաւ ամբողջ Կովկա-
սի համար: Նա անցաւ վրաց, թրքական եւ նոյն իսկ ուսական բե-
մերը: Սունդուկեանի միւս բոլոր երկերի պէս, «Պէպա»-ն էլ բացա-
ռիկ յաջողութիւն գտաւ վրացիների մօտ: Պէտք է ասել, որ «Պէպո»-
յի վրաց բեմի վրա ունեցած յաջողութեան պատճառներից մէկն էլ
վարպետ թարգմանութիւնն է, որ արեւ է հեղինակը ինքը:

«Պէպո»յի մէջ միաժամանակ զարգանում է երկու դրամա. մէկը

Պեպոյի քոյր Կէկէլի ողբերգութիւնն է. Կէկէլը նշանաւծ է մի երիտասարդ վաճառականի հետ, որին խոստացաւ է 1000 ռուբլի օժիտ: Պեպոն կորցրել է վաճառական Արուսիին Զիմզիմովի տւած 1000 ռուբլու մուրհակը, եւ Զիմզիմովը մերժում է վճարել դրամը, որի պատճառով նշանաւծն էլ հրաժարւում է Կէկէլից, որ խորը վշտի մէջ այսպէս է արտայայտում իր ցաւը. «Ինձ պաշ արաւ ու իմ պաշը տարաւ ուրիշին էրիտ.» (3-րդ գործ, 2-րդ տես.):

Աղջկայ այդ ողբերգութեան կից եւ աւելի ուժգնութեամբ զարգանում է Պէպոյի հոգեկան տառապանքը. նա ինքն է նշանել քրոջ եւ խոստացել օժիտ տալ. ինքն է կորցրել մուրհակը եւ դրանով անբուժելի ցաւ պատճառել քրոջ: Երկրորդ գործողութեան մէջ կայ մի հիանալի երկախօսութիւն Պեպոյի եւ Արուսիին միջեւ, ուր Պեպոն բարձրանում է բարոյապէս եւ ողորմելի վաշխառու Արուսիինը մնում է սեւերես: Սունդուկեանի իր խիստ ասելով՝ այդ երկախօսութիւնը յօրինելիս, նա վերապրել է այն խիղախ խօսքերը, որ 1853-ին ինքը ասել էր փոխարքայի դեղանատան դանձապետին եւ որի պատճառով աքսորւել էր Դերբենտ:

Իր յանդուգն խօսքերի համար Պեպոն դատապարտւում է բանտարկութեան, բայց ահա մուրհակը գտնւում է: Առնելով այդ լուրը, Արուսիինը շտապում է Պեպոյի մօտ եւ խոստանում է ազատել բանտից. նա պատրաստ է նոյն խիստ կրկնակին վճարել, միայն թէ խայտառակութիւնից ազատւի: Բայց Պեպոն անողոք է. նա պատասխանում է. «Հաջաթ չէ, կէհամ բիրթը կու նստիմ. էնդի խօ չիմ մեռնի, մէ օր կու ազատւիմ ախար, էլի վաղէն հեռու չէ: Ծառի՛ն իս խափի էսէնց, շատի՛ գլխին իս օյին էկի էսէնց, շատի՛ բողազն իս դուս կտրի էսէնց, ու յիս Պեպոն չիմ ըլի, թէ դիփունանց ջիգրը չիմ հանի: Սաղ աշխարքում էրէսդ մուր կու շինիմ»:

«Պեպո»-ն Սունդուկեանի միակ երկն է, որ դուրս է գալիս քաղքենի շրջանից եւ պատկերացնում է Թիֆլիսի հասարակական նոր խաւի՝ արհեստաւորների եւ շրջուն առեւտրականների կամ կինտոների կենցաղը: Գեղեցիկ ձօնի մէջ, որով դրւածքը նւիրւած է յայտնի դերասան Գէորգ Չմշկեանին, որը համոզւել էր տիպեր առնել կինտոներից, Սունդուկեանը «կինտո» հասկացողութիւնը բնորոշում է «լոթի եւ պաժարնի» *) բառերով:

Թիֆլիսի կինտոները բաժանւում էին երկու կարգի՝ զարաչուխա-

*) «Պաժարնի», որ նշանակում է հրէշ, մօտաւորապէս նոյն իմաստով գարծ է ամուսն եւ պալատիայոց մէջ՝ «թուլումպաճի»:

լու եւ սարդ կինտոներ: Պեպոն պատկանում էր զարաչուխալու շարքին՝ մի տեսակ կինտոյական աղնականութիւն, որ պահում էր իրեն մեծ արժանապատուութեամբ, խիստ պատւախնդիր էր եւ տրւած խօսքը պահող: Հագուստով էլ նրանք տարբերւում էին միւս կինտոներից: Հագնւում էին սեւ չերկէսկա, մինչդեռ պարզ կինտոները, ինչպէս Կակուլին, հագնւում էին սովորական արխալուխ եւ միայն հանդիսաւոր օրերին երեւում էին չերկէսկայով: Պարզ կինտոները չըրջուն մանրավաճառներ էին եւ իրենց ամբողջ ապրանքը կրում էին գլխի վրա, փայտէ ամանով (թաբախ): Կինտոների երկու խումբն էլ յայտնի էր սուր լեզուով եւ ուրախ ու զարթ ապրելակերպով: *)

Պեպո»-յին յաջորդեց, 1871 թ., «Բանդուած Օջախ»-ը, ուր ողբերգութիւնը ծագում է մի աղջկայ ամուսնութեան խնդրից: Օսէփ անունով ոչ – հարուստ վաճառականի կին՝ Սալմէն՝ կամենալով իր աղջկան տալ մի երիտասարդ պետական պաշտօնեայի, երկար խնդիրներից յետոյ, համաձայնւում է օժիտը հասցնել 7000 ռուբլու: Օսէփը մեծ դժարութեամբ կարողանում է յանձն առնել այդ պարտականութիւնը: Այդ մասին լուր է առնում Օսէփի պարտապահանջ վաշխառու Փարսեղը, որ մտածում էր ի՛ր աղջկը ամուսնացնել նոյն պաշտօնեայի հետ: Անմիջապէս դիմում է դատարան, նշանադրութեան օրը, մուրհակը ձեռքին, ոստիկանների հետ գալիս է Օսէփի տունը եւ հիւրերի ներկայութեամբ դրամն է պահանջում: Փեսացուն խիղճն փախչում է, հիւրերը բամբասելով հեռանում են եւ «քանդւած օջախը» մնում է մենակ ու թշւառ:

Թատերգութեան բոլոր տիպերը շատ բնական ու կենդանի են, միայն Օսէփը մի քիչ շատախօս է: Դրա փոխարէն՝ Օսէփի հօրաքոյր Խախօն ուղղակի հիանալի է իր ոսկի սրտով ու իմաստուն խօսքերով: Նա այնքա՛ն յիշեցնում է Սունդուկեանի մօրը, որը անսահման ազդեցութիւն է ունեցել որդու վրա: Վեսելովսկիին դրած մի նամակում, Սունդուկեանը ասում է, թէ Օսէփի տիպով նա ներկայացրել է իր ազգականներից մէկին, իսկ Խախօն իր մայրն է:

Վերջապէս, 1878-ին, հայ դերասանական խմբի խնդրանքով, Սունդուկեանը հայացնում է Մոլիէռի «Ժորժ Դանդէն» յայտնի թատերախաղը: Հայերէնում Ժորժ Դանդէնը դառնում է Դանդու Գէվօ, Անժելիկը՝ Նարնուրիսա, Դէ – Սոտանովիլը՝ Զանգիբաշի եւ այլն: Ինչպէս, առհասարակ, Սունդուկեանի բոլոր գործերը, այս էլ

*) Վրացի բանաստեղծ Գրիշաշվիլին Թիֆլիսին նւիրած իր ուսումնասիրութեան մէջ շատ էջեր է նւիրել կինտոներին:

բեմի վրա մեծ յաջողութիւն ունեցաւ, բայց հեղինակը հրապարակութեան չտւեց, այլ սկսեց թարգմանել բուն բնագիրը, որ լոյս տեսաւ միայն 1907-ին: Թարգմանութիւնը կարելի է համարել գլուխ գործոց, եւ Սունդուկեանի տիրապետութիւնը Թիֆլիսի բարբառին՝ սքանչելի:

Այս երկերով վերջանում է Սունդուկեանի ստեղծած իրապաշտ թատերախաղերի շարքը, որ մեծ մղում տւեց հայ թատրոնին եւ հայ սիրող զերասանից ստեղծեց գիտակից թատրոնական գործիչ: Սունդուկեանի այս գործերի ազդեցութեան տակ էր, որ հայ թատրոնական գրականութիւնը ստացաւ իրապաշտ բովանդակութիւն եւ ընթացք:

Ապա Սունդուկեանի ստեղծագործութեան մէջ գալիս են աւելի փրկսփայլական ընդթ կրող երկեր: Վաթսուն տարեկան հասակում, 1890-ին, նա գրում է «Ամուսիններ»-ը: Առաջ նա մերկացնում էր հայ իրականութեան եւ մասնաւորապէս ընտանեկան կեանքի վէրքերը: Հիմա արդէն փնտրում է վէրքերը բժշկելու միջոցներ: «Ամուսիններ»-ի մէջ, որ Սունդուկեանի միակ գործն է, գրւած գրական հայերէնով, պետական բարձր պաշտօնեայ Սամսոնեանը ամուսնացած է Մարգարիտ անունով մի գեղեցիկ ու պարկեշտ կնոջ հետ: Ամուսինը, աւելի քան թեթեւամիտ մի մարդ, ամէն քայլափոխին դաւաճանում է կնոջ: Կինը գիտէ այդ եւ նեղում է թէ ամուսնու անառակ վարք ու բարքից եւ թէ ընտանեկան անբովանդակ ու տժգոյն կեանքից: Մի անգամ նա հանդիպում է իր մանկութեան մէկ ընկերոջ՝ սպայ Արամեանին, որին սիրել է մի ժամանակ ու սիրել փոխադարձաբար: Հին սէրը նորից բորբոքւում է նրա մէջ, եւ նա որոշում է թողնել ամուսնուն ու սեփական աշխատանքով ապրել: Ամուսինը մերժում է իրաւունք տալ, որ նա առանձին ապրի, բայց Արամեանը յաջողում է նրանից ստանալ այդ իրաւունքը: Մարգարիտն ու Արամեանը բացատրում են փոխադարձ սիրոյ մէջ եւ որոշում են սպասել օրինական ամուսնալուծութեան, որ յետոյ ամուսնանան: Այսպիսով, ուրեմն, ելքը գտնւած է. կինը կարող է թողնել իր չսիրած ամուսնուն եւ ազատ ընտրութեամբ նոր կեանք սկսել սիրած մարդու հետ:

Այն ժամանակների եւ ա'յն շրջանների համար, ուր ապրում էր Սունդուկեանը, սա, ի հարկէ, նոր ուղի էր: Այս գործը, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, մեծ հոգս ու յուզում պատճառեց Սունդուկեանին, բայց առանձին յաջողութիւն չունեցաւ ո'չ հայ, ո'չ վրաց, ո'չ էլ ռուս բեմերի վրա: Երկու հակադիր ուղղութեան պատկանող թեր-

թերն էլ՝ «Մշակ» ու «Նոր Դար», աննպաստ արտայայտեցին, ի հարկէ, ամէն մէկը իր տեսակէտից:

«Ամուսիններ»-ից յետոյ Սունդուկեանը երկար լռեց: Եւ միայն 1907 թ. հրապարակ եկաւ «Բաղնիսի բողջա» գաւեշտով, ուր երիտասարդ այրի Թալալը, որ մի շաբաթ առաջ կորցրել էր ամուսնուն, որի մահը դառնօրէն լացել էր, հեռանում է սկեսուրի տնից, իբր թէ, մօր հետ բաղնիք գնալու եւ յետոյ մօրը տանը գիշերելու համար: «Բաղնիսի բողջա»-ն պատրաստելիս, նա գաղտագողի մէջը դնում է իր բոլոր թանկագին իրերն ու լաւ հագուստները եւ գնում է ծնողների տունը, ուր բաղնիքի փոխարէն նրան սպասում էր նշանադրութիւն մի հարուստ ծերունու հետ, որին Թալալը խելքից հանել էր իր տեսքով, երգերով ու պարերով:

Իր այս գործին Սունդուկեանը կցել էր հետեւեալ ծանօթութիւնը. «Սա իմ «Պեպո» կատակերգութեան յառաջաբանը, նրա նախերգանքն է, ուր Աղալոյի եւ Թալալի դիմակի տակ մանրամասնօրէն նկարագրւած է, թէ ինչպէս գտան միմեանց եւ ամուսնացան «Պեպո»-յի Զիմզիմովն ու նրա ընտրած ու սիրած Եփեմիան»:

Հակառակ իր յառաջացած տարիքին, այս գաւեշտով էլ Սունդուկեանը պահել է ոճի ու գործողութեան աշխուժութիւնը: Տիպերն ու կեանքի պատկերները այնպէս կենդանի են ներկայացւած, որ «Բաղնիսի բողջա»-ն ոչինչով յետ չի մնում Սունդուկեանի առաջին շրջանի գործերից:

1907 թ. Սունդուկեանը թողնելով պետական պաշտօնը՝ ձեռնարկում է իր անտիպ գործերի հրատարակութեան եւ արդէն տպւած ու սպառւածներին՝ վերահրատարակութեան՝ վերջնական խմբագրութեամբ: Եւ 1907 թ.ից սկսած իր բոլոր հրատարակութիւնների վրա իր անան կողքին, փակագծի մէջ աւելացնում է «Համմալ» կամ «Նոյն եւ Համմալ», որ իր սկզբնական ծածկանունն էր:

1909 թ. Սունդուկեանը Թիֆլիսում բեմադրում է մի նոր թատերախաղ՝ «Սէր եւ Ագատուքիւն», իսկ յաջորդ՝ 1910-ին, իր ծննդեան օրը, յունիս 27-ին, այդ թատերախաղից մէկ օրինակ ընծայում է կընոջ մի յուզիչ մակագրութեամբ: Այդ գրւածքում 40 տարեկան մի մարդ ամուսնանում է 20 տարեկան ամէն տեսակէտից գեղեցիկ մի աղջկայ հետ: Ամուսինը անսահման սիրով սիրում է իր երիտասարդ կնոջ, բայց վերջինս յայտնում է, թէ ինքը շատ է գնահատում ու յարգում, բայց չի սիրում ամուսնուն: Վերջինս զգացւած՝ կնոջ ազատութիւն է տալիս եւ ինքը հեռանում է՝ խոստանալով ձեռք բերել ամուսնալուծութեան արտօնութիւն: Նիւթը, ինչպէս տեսնում ենք,

նոյնն է ինչ որ «Ամուսիններ»-ի մէջ, միայն այնտեղ ամուսինը անպիտան մէկն է, իսկ այստեղ՝ շատ աղնիւ, զգայուն եւ զոհաբերութեան ընդունակ մի մարդ։ Տէ տարեկան հեղինակի այս գործը, հակառակ նիւթի հնութեան, զարմացնում է կենդանի ու գունազեղ երկախօսութիւններով։

Իր վերջին գրածքը, որ աւարտեց 1912-ին — իր մահուան տարին — եւ որի ուղղումն ու սրբագրութիւնը փոխանակ կնոջ, ինչպէս անում էր առաջ, յանձնեց Նինա աղջկան, 87ամեայ Սունդուկեանը նւիրում է հայ աղջկայ փառաբանութեան։ Ընդհանուր առմամբ, կեանքից ու հետաքրքրութիւնից զուրկ մի գրածք է, որ առանձին արժէք չի ներկայացնում նրա երկերի մէջ։ Կոչւում է «Կտակ»։

Այստեղ խօսք չալտի լինի Սունդուկեանի հրապարակախօսական գրածքների, «Մեղու»-ում, «Մշակ»-ում եւ «Արձագանգ»-ում տըպւած նրա «Մասլահաթ»-ների կամ «Վարենկի Վեչեր» երգիծական պատմածքի մասին։ Սունդուկեանի ստեղծագործութեան եւ հայ թատրոնի պատմութեան մէջ նրա կատարած դերի բնորոշման համար նրանք անմիջական նշանակութիւն չունեն, թէեւ հետաքրքրական են Սունդուկեանի մաքուր հոգին ու սիրտը, նրա անաղարտ նկարագիրը ըմբռնելու տեսակէտից։

IV

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Սունդուկեանի մասին գրողները մէկից աւելի անգամներ աշխատել են պարզել, թէ ո՞ւմ է հետեւել հայ մեծանուն թատերագիրը, ո՞վ է ունեցել նրա վրա առանձնապէս մեծ ազդեցութիւն՝ Մոլիէրն ու եւրոպական թատերական գրականութիւնը, թէ՞ ուսումնական թատերագիր Օստրովսկին։ Նշանաւոր ուսուցիչներն էին Պրոպանովսկին և Նալբանդյանը։ Պրոպանովսկին համարում էր նրան ի պատասխան չնորհաւորութեան. «Խորապէս զգացած եմ հաճելի ուղադրութիւնից մեծ գրողի, որ յիշեցնում է ինձ մեր անմոռանալի Օստրովսկուն»։ Ֆէդոտովայի այս կարծիքին համամիտ են գրեթէ ամենքը, ի թիւս որոց եւ իւր. Վեսելովսկին, որ իր գրական ուսումնասիրութիւնների մէջ յաճախ վերադառնում է այս խնդրին։ Սակայն, հարցի լաւագոյն պատասխանը տալիս է ինքը Սունդուկեանը նոյն Վեսելովսկին գրած 1902 թ. նոյեմբ. 19 նամակում։ Առաջ ենք բերում այդ նամակը Ե. Շահազիզի թարգմանութեամբ։

« Ես Ձեր հարցումներին պատասխանում եմ բացսիրտ, որ ծնւած եւ կրթւած լինելով Ռուսաստանում, անցած լինելով ուսուցիչական գործունէութեան

նի եւ համալսարանի դասընթացները, լսած լինելով ուսուցչապետների, նամանաւանդ գրականութեան ուսուցչապետ Նիկիտենկոյին չորս տարի շարունակ Պետերբուրգի համալսարանում, ես բնականօրէն պիտի գտնէի ուսումնական կեանքի ազդեցութեան ներքոյ։ Բայց թէ ո՞ր ուսուցչին հեղինակները ամենից աւելի են ազդել իմ վրա եւ այդ հեղինակների ո՞ր գրածքները յատկապէս տպաւորութիւն են թողել, այժմ ես չեմ կարողանում եմ որոշել։ Ինձ թւում է, որ ես քիչ թէ շատ ամենքին էլ երախտապարտ եմ իմ զարգացման համար, ինչպէս եւ շատ օտարազգի հեղինակների, որոնց գրածքները ես մանկութիւնից կարդացել եմ Փրանսերէն լեզուով։

« Ամենից աւելի ես ինձ երախտապարտ եմ համարում նախ իմ մօրս, որ իր բարութեամբ եւ առողջ դատողութեամբ իւր ամբողջ կեանքի ընթացքում ղեկավարել է իմ գործողութիւնները, եւ, երկրորդ, իմ դաստիարակներին — գիտնական Ջրպետեանին եւ նրա կրթւած փարիզեցի Փրանսուէի կնոջը, որոնց մօտ ես մնացել եմ վեց տարի շարունակ, առաւօտեան ժամը ութից մինչեւ երեկոյեան վեցը։

« Մայրս եւ իմ մանկութեան դաստիարակներս արել են այն որ խելճին, զրկեալին եւ կարօտեալին եւ միշտ վերաբերւել եմ կարեկցութեամբ։ Ես, օրինակ, երբեք չեմ մոռանայ այն սասանիչ ներգործութիւնը, որ ես զգացել եմ 40 տարի սրանից առաջ Վիկտոր Հիւգոյի «Դատաւարտեալի վերջին օրը»-ի Փրանսերէն բնագիրը կարդալու ժամանակ»։

Սունդուկեանի տւած այս բացատրութիւնը ամենից ճիշտն է։ Համոզումները, հասկացողութիւնները, ճաշակները իւրաքանչիւր կրթւած մարդու մէջ արդիւնք են նրա իւրացրած մշակոյթի, որ իր հերթին բաղկացած է բոլոր այն ապրումներից ու տպաւորութիւններից, որ մարդ ստանում է իր բովանդակ կեանքի ընթացքին. յաճախ փոքրիկ մի բան, պատահական մի տպաւորութիւն, փոքրցում տեսած մի դէպք մարդու մէջ թողնում են խորունկ եւ անջնջելի հետք։ Միայն նեղմիտ ու սահմանափակ մարդիկ կարող են կուրորէն հետեւել։ Սունդուկեանն իր ժամանակի համար լայնօրէն զարգացած, շատ կարողացած, ուսուցիչ եւ եւրոպական գրականութեան մօտից ծանօթ եւ կեանքի խորունկ փորձ ու ծանօթութիւն ունեցող, բիւրեղի պէս մաքուր սրտի տէր մարդ էր։ Նա կեանքը առնում էր իր իրական վիճակով, իր երկերի գերակատարներին մօտենում էր ուղղամտութեամբ, սրտով ու համակրանքով եւ մտրակում էր այն ամենը, որ իր անաղարտ հոգուն թւում էր զատապարտելի։ Բնական է, որ նման մի մարդ ստեղծա-

գործէր առանց կաշկանդումի, եւ առանց կրկնելու ուրիշի ասածները, զերծ պատրաստի կաղապարներից, ազատ եւ ինքնուրոյն կերպով:

V

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ԼԵՁՈՒՆ

Սունդուկեանի բոլոր երկերը, թատերական թէ այլ կարգի, գրած են Թիֆլիսի բարբառով: Միակ բացառութիւն է կազմում «Ամուսիններ» թատերգութիւնը, որ գրած է գրական լեզուով եւ այդ պատճառով էլ զուրկ է Սունդուկեանի միւս երկերի աշխուժութիւնից եւ գունազեղութիւնից: «Ամուսիններ»-ի լեզուն անկենդան ու ձանձրալի է, զուրկ համից ու հոտից եւ նոյն իսկ, ոմանց պնդումով, զերծ չէ անհարազատութիւններից:

Սունդուկեանի միւս բոլոր երկերը աչքի են զարնում լեզւի կատարելութեամբ: Ամէն քայլափոխին տեսնում է Թիֆլիսի բարբառի կատարեալ տիրապետութիւնը: Սունդուկեանը այդ բարբառն իւրացրել էր իր մօր կաթի հետ. արդէն նրա մայրը ուրիշ լեզուով չէր էլ խօսում նրա հետ: Սունդուկեանի կրնն էլ բնիկ թիֆլիսցի էր եւ ամուսնու հետ խօսում էր միայն այդ բարբառով, որ հետագային էլ մնաց նրանց ընտանեկան լեզուն: Սունդուկեանը իր լեզւի ճոխութիւնները ստանում էր եւ Թիֆլիսի հասարակ ժողովրդից, որի շրջանում սիրում էր լինել ու զրուցել եւ որտեղից քաղում էր լեզական նորանոր հարստութիւններ: Իսկ եթէ ի նկատի առնենք եւ նրա հմտութիւնը գրաբար հայերէնի մէջ եւ լեզական բնական ընդունակութիւնները, հասկանալի կը լինի նրա լեզւի ու ոճի կատարելութեան գաղտնիքը:

Սունդուկեանը երբեք չէր գրում աճապարանքով եւ միշտ լաւ մը տածում էր: Եթէ երկախօսութեան մէջ նրան պակասում էր որ եւ է բառ, նա յամառօրէն փնտռում էր եւ գտնում կեանքից կամ փոխ էր առնում գրաբար լեզւի անսպառ գանձարանից՝ յարմարեցնելով փոխառութիւնը Թիֆլիսի բարբառի պահանջներին: Նոյն ձեւով վարում էր եւ արաբերէնից, պարսկերէնից ու թուրքերէնից փոխ առնած բառերի հետ. յաճախ ստուգում էր նրանց նշանակութիւնը բառարանների միջոցով եւ առնում էր միայն այն բառերը, որոնք իրապէս համապատասխանում էին իր փնտռած իմաստին: Կաղիմիրսկիի արար – Փրանսերէն եւ Կիֆէրի ու Բելինի թուրք Փրանսերէն բառարանները նրա սեղանի գրքերն էին:

Սունդուկեանը ո՛չ միայն շատ լաւ գիտէր, այլ եւ ապրում ու

զգում էր Թիֆլիսի բարբառը, այդ պատճառով նրա երկերի գործող անձինք խօսելու ձեւով էլ տարբերում են իրարից՝ համաձայն տարիքի կամ ընկերային վիճակի: Պեպօն, օրինակ, բոլորովին այլ կերպ է արտայայտում, քան Արուսիկ Զիմզիմովը, թէեւ երկուսն էլ խօսում են միեւնոյն բարբառով: Գործող անձերի լեզւի այս տարբերութիւնը առանձնապէս աչքի է զարնում «Մէր եւ Աղատութիւն» գրած՝ քի մէջ, ուր 90ամեայ Աղալօն իր խօսելակերպով բոլորովին տարբերում է 40 տարեկան մարդուց, սա էլ՝ 20 տարեկանից:

Թիֆլիսի բարբառի գործածութեան կատարելութեան Սունդուկեանը հասաւ «Ժորժ Դանդէն»-ի թարգմանութեան մէջ: Նա հաւատացնում էր, թէ այդ գրածքը հայերէն ուրիշ կերպ կարելի չէ թարգմանել, բայց եթէ Թիֆլիսի բարբառով, որով միայն կարելի է արտայայտել Մոլիէրի նուրբ սրախօսութիւնները:

Պէտք է աւելացնել, սակայն, որ նոյն այդ Թիֆլիսի բարբառը արգելք եղաւ Սունդուկեանի երկերի լայն տարածման: Թիֆլիսից դուրս դժւար էր գտնել ղերատաններ, որոնք կարողանային բնագրի լեզուով խղալ նրա թատերախաղերը, իսկ թարգմանութիւնը, ի հարկէ, վնասում էր երկի հարազատութեան:

Իրեւ բացառութիւն, պէտք է յիշել «Օսկան Պետրովիչը էն կինքում» զաւելտի վերածումը պոլսահայ բարբառի, որ կատարել է դերասան Ֆասուլեանը՝ «Տայը հիւրիկ անդէնը» անունով: Գործը կարելի է համարել իրապէս յաջող:

VI

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ ՎՐԱՅ ՄՕՏ

Սունդուկեանը սնւեց ու դաստիարակեց այն ժամանակ, երբ կովկասեան, այսինքն՝ հայ ու վրացի մտաւորականութիւնը նոր – նոր ծնունդ էր առնում, իսկ թուրք մտաւորականութիւնը դեռ բնաւ դոյուլթիւն չունէր: Հայ մտաւորականութիւնը վրացականի համեմատութեամբ բաւական հին էր, չնորհիւ Լազարեան ձեմարանի, որի ընթացաւարտները ազատ մուտք ունէին ռուսական համալսարաններ: Երբ Թիֆլիսում բացւեց գիմնազիա, նրա աշակերտներից յաջող աւարտածները պետական թոշակ էին ստանում՝ իրենց ուսումը համալսարանում շարունակելու համար:

Հայ ու վրացի համալսարանականները կովկաս վերադառնալուց յետոյ ապրում էին համերաշխ: Նրանց միացնում էր ոչ միայն դըպրոցը, այլ եւ մտաւորականի վիճակը հասարակութեան մէջ, ուր ո՛չ

միայն բարձրագույն, միջնակարգ կրթութիւն էլ հաղադրւում էր: Մասնաւորապէս Սունդուկեանը, որ հաւասարապէս լաւ տիրապետում էր թէ՛ հայերէն եւ թէ՛ վրացերէն լեզուներին ու գրականութեան, վրացիների շրջանում էլ մտերիմ մարդ էր, որ հասկանում ու գնահատում էր երկու ժողովուրդների կենսական պահանջները: Մանաւանդ որ, այն ժամանակ դեռ հայերի ու վրացիների աղգային քաղաքականութիւնը հակառակ էր եւ ուղղւած էր միայն կառավարութեան ռուսացման ձգտումների եւ թիւրքերի ու սլաւոնների դէմ, որոնց ճշմարտութեամբ դեռ թարմ էին բոլորի յիշողութեան մէջ:

Յամենայն դէպս, Սունդուկեանն ինքը միշտ սիրով ու բարեկամաբար էր տրամադրւած դէպի վրացիները, որոնք, իրենց հերթին, յարգանքով ու սիրով էին վերաբերում նրան: «Մշակ» թերթում (1910 թ. թիւ 96) հրատարակւած իր մի նամակի մէջ, «Պեպո»-յի բեմադրութեան երեսնամեակի առթիւ, Սունդուկեանը գրում էր. «Աշխատելով երկու հայրենակից, ինձ մեծապէս սիրելի վրացի եւ հայ բեմերի համար, պատկերացնելով ընդհանուր մարդկային զբաղմունքներ եւ գաղափարներ, ես չափազանց զգացւած եմ ինձ ուղղւած խօսքերով ու ձառերով, ստացւած շնորհաւորական նամակներով, հեռագրներով եւ ուղերձներով»:

Սունդուկեանի դերն ու նշանակութիւնը վրաց թատրոնի պատմութեան մէջ շատ լաւ արտայայտւած է վրաց վաստակաւոր թատրոնական գործիչ Կ. Ղիպիանիի մէկ ուղերձի մէջ, որ 1901 թ. ապրիլ 27-ին ներկայացւեց վրաց թատերախմբի կողմից: Ուղերձը կարդացւեց վրացերէն լեզուով Ղիպիանիի կողմից, «Պեպո»-յի վրացերէն ներկայացումից յետոյ: Ղիպիանին յիշելով, որ վրաց թատրոնը սկսւել է իշխ. Գ. Էրիստովի եւ հայադղի Չուրաբ Անտոնովի ջանքերով, որոնցից յետոյ 25 տարի դադար է առել, չարունակում է. «Հանդէս դառնալով, եւ վրաց թատրոնի համար վրա են հասնում ուրիշ ժամանակներ, նոր կեանք է սկսում սթափւելով 25ամեայ մահաբերից - երեւան է գալիս վերածնունդը»: Ապա Ղիպիանին խօսում է Սունդուկեանի տիպերի ընդհանրութեան մասին հայերի եւ վրացիների մօտ, գովաբանում է Սունդուկեանին իբրեւ ոգեգէտի, ժողովրդի հոգու խորքերը թափանցողի, ջատագովում է հայ դերասաններին, որոնք արտայայտել են Սունդուկեանի տիպերը: Եւ չարունակում է. «Ոչ բոլոր մահկանացուներին է վիճակւած լինում օժտւած լինելու այդպիսի ընդունակութիւններով, այդ պատճառով եւ մենք առաջ ենք քաշում ձեզ մեր միջից, իբրեւ բարձր տաղանդի տէր մի միւս»:

պէս վրաց թատրոնի գործիչներից ամենահինը, է՛լ աւելի բերկրանքով ողջունում եմ ձեզ այսօրւայ հանդիսին, որովհետեւ մենք, մայրենի թատրոնի գործիչներս, սնւել ու մեծացել ենք ձեր պիէսներով. մենք ուսել ենք արւեստը ձեր պիէսների վրա, մենք ոգեւորւել ենք ձեր երկերով եւ այսպիսով ձեր աշակերտները լինելով՝ հրճանքով շնորհաւորում ենք ձեր այսօրւայ յորելեանը, քանի որ ոչ ամենքիս է վիճակւած հետագայ սերնդի այդպիսի երախտագիտութիւնը, ինչպէս ձեզ»:

Ղիպիանիի խօսքերը յորելեանական չափազանցութիւններ չէին: Եթէ վրացիները այդպիսի հանդիսաւորութեամբ տօնեցին Սունդուկեանի յորելեանը 1901 թւին, երբ հայ - վրացական յարաբերութիւնները սրւած էին տարապայմանօրէն, նշանակում է, թէ այլ կերպ վարւել կարելի չէր, թէ Ղիպիանիի խօսքերի մէջ չափազանցութիւն չկար: Եւ, յիրաւի, վրաց գրականութեան պատմութեան ի՛նչ գիրք ուղում էք առէք, ամէն տեղ կը գտնէք Անտոնովի եւ Սունդուկեանի անունը: Ծիշտ է, յաճախ այն էլ է ասւում, թէ դրանք «վրացացած հայեր» են, բայց անունները առանց յիշատակութեան չեն թողնում:

«Վրացացած հայ» խօսքի առթիւ չեմ կարող չյիշել Գէորգ Չմբլկեանի գանդատը իր յուշերում («Փորձ», 1877), թէ վրացիները «Պեպո»-յի ներկայացման ժամանակ Պեպոյի դէմքին տալիս էին վրացական ձեւ, կարծես ուղերով ընդգծել, թէ դրական տիպը պէտք է լինի վրացի, իսկ բացասականը՝ հայ:

Երբ Սունդուկեանը մեռաւ, վրաց հասարակութիւնն ու մամուլը հայերի հետ համահաւասար վշտով ողբաց նրա մահը: Առաջ բեմ վրաց բանաստեղծ Գրիշաչվիլիի խօսքերը. Սայեաթ Նովային ներած իր ուսումնասիրութեան մէջ՝ նա շատ ջերմ կերպով արտայայտւած է Սունդուկեանի մասին: Մատնանշելով Սունդուկեանի տաղանդի ինքնուրոյնութիւնը՝ նա հրճւում է Սունդուկեանի «իմ մահը ե թաղումը» գրւածքի մէջ արտայայտւած հոգեկան գեղեցկութեամբ: Եւ վերջացնում է. «Մեռաւ Սունդուկեանը եւ աղօտացաւ այն հայելին, որի մէջ այնպէս գեղեցիկ կերպով արտացոլւում էր Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը»:

VII

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Իր ստեղծագործական տարիների ընթացքում Սունդուկեանի կեանքը արտաքինապէս ըստ ամենայնի չափւած ու ձեււած էր: Ցերե-

կը՝ պաշտօն, ժամը 3-ին ճաշ, ապա կարճ հանգիստ ու զբօսանք, իսկ երեկոյեան աշխատանքը զբաղեցնէր մօտ, որ երբեմն ընդհատուում էր հիւրերի այցելութեամբ եւ բարեկամական զրոյցով թէյի սեղանի շուրջ:

Սունդուկեանի կեանքի մէջ տեղի են ունեցել մի շարք դէպքեր, որոնք որոշ տպաւորութիւն են թողել նրա հզեկան վիճակի վրա: Նախ՝ մօր մահը 1873 թ., որ նա ապրեց շատ ցաւազին կերպով:

Մանուկ օրերից Սունդուկեանը երազում էր գէթ մի անգամ ընկնել Փարիզ, որը նա սիրում էր եւ ճանաչում իր առաջին դաստիարակչուհի Տիկ. Զրպետի պատմութիւններից ու Փրանսական զբաղակալութիւնից: Երբ եկաւ այդ երազը իրականացնելու ժամանակը, Սունդուկեանը նախ Փրանսերէն թարգմանեց «Պեպո»-ն, հոգու խորքում փայփայելով իր երկը Փրանսական բեմի վրա տեսնելու յոյսը: Թարգմանութիւնը խմբագրեց Թիֆլիսի Փրանսական հիւպատոսը, որ նաեւ տւեց յանձնարարական նամակ յայտնի թատերագիր Վ. Սարգսուի վրա: Սունդուկեանի զբաւածքը կարգաց ինքը Սարգսուն, ինչպէս նաեւ յայտնի գրագէտ Ալ. Դիւմա որդին: Դիւման մի շատ սիրալիկ նամակ գրեց Սունդուկեանին, բայց խորհուրդ չտւեց ներկայացնել՝ առաւելելով, թէ «Պեպո»-ն չի համարատարախանում Փրանսական հասարակութեան ճաշակին եւ յաջողութիւն չի ունենայ: Նամակը ծանր հիասթափում պատճառեց Սունդուկեանին:

Առաջին օրերը Սունդուկեանը պատանիի պէս յափշտակուում էր Փարիզով, հակառակ որ արդէն վաթսուոն տարեկանի մօտ էր: Նա բարձրացաւ Վանդոմի կոթողը եւ Յաղթական կամարը: Անհաշիւ ծանօթութիւններ հաստատեց: Լինում էր ամէն տեղ: Բայց հազիւ երկու շաբաթ անցած, սկսեց քաշել Թիֆլիսի կարօտը: 1878 թ. յուլիս 21/9-ին նա գրում էր կնոջ՝ նամակին բնարան առնելով Սայեաթ Նովայի ծանօթ խօսքերը՝ «Առանց քիզ ինչ կոնիմ սոյբաթն ու սաղըն. — Առանց քիզ ի՞նչ կոնիմ Փարիզը, Սոնա ջան, իմ քաղցր, իմ նազ Սոնա ջան: Քո ձէնը, երեսանց ձէնը որ չեմ լսում, ձեզ որ չեմ տեսնում, դիմ քնթէ դուս է գալի... Մարդու աճկը վունչինչը չի կշտացնի. քանի էտի էի, հա՛յ Փարիզ ու Փարիզ, հիմի վուր էստի իմ, հա՛յ իմ Թիֆլիս ու Թիֆլիս...»

1855-ին Թիֆլիս է այցելում յայտնի ռուս թատերագիր Ա. Օստրովսկին, եւ Թիֆլիսի թատրոնում նրան հանդիսաւոր ընդունելութիւն է սարքւում: Սունդուկեանը ծանօթանում է Օստրովսկիի հետ, որը ներկայ էր գտնւել նրա թատերախաղերի ներկայացումին: Օստրովսկին ծանօթանում է եւ «Պեպո»-յի ռուսերէն թարգմա-

նութեան, շատ դո՛հ է մնում եւ տանում է հետը Մոսկւա՝ կամենալով ներկայացնել Փոքր թատրոնի բեմի վրա: Բայց ճակատագիրը այստեղ էլ դէմ է դուրս գալիս Սունդուկեանին: Մոսկւա հասնելով՝ Օստրովսկին շատ ծանր հիւանդացաւ եւ 1866 թ. մեռաւ, ռուսերէն «Պեպո»-ն էլ մնաց ներկայացւած:

1888 թ. հայոց եւ վրաց թատրոնները տօնեցին Սունդուկեանի թատերական գործունէութեան 25ամեակը: Հանդէսը դուրս եկաւ շատ սրտազին: Երկու ժողովրդի մտաւորականները ջերմ մասնակցութիւն ունեցան տօնակատարութեան: Իսկ 1901-ին, նոյնպիսի հանդիսաւորութեամբ, տօնեց «Պեպո»-յի բեմագրութեան 30ամեակը:

1890 – 1898 տարիների ընթացքում Սունդուկեանն ունեցաւ մի մեծ հիասթափութիւն եւս. ինչպէս վերեւն ասացինք, 1890-ին նա հրապարակ էր հանել «Ամուսիններ»-ը, զբաղան լեզուով: Այս խաղն էլ ուզում էր ներկայացւած տեսնել ռուսական բեմի վրա: Թարգմանելով ռուսերէն՝ նա գրւածքը ներկայացրեց զբաղնիչին՝ ներկայացման արտօնութիւն ստանալու համար: Գրաքննական կոմիտէն, սակայն, մերժեց արտօնութիւն տալ, այն առարկութեամբ, որ թատերգութեան մէջ աննպաստ դոյներով ներկայացւած է բարձրաստիճան մի պաշտօնեայ: Կոմիտէի վրա վատ էր ազդել այն հանգամանքը, որ Սունդուկեանը ինքն էլ բարձրաստիճան պաշտօնեայ էր: Գործը ձգգձգեց ամբողջ 8 տարի եւ միայն մի շարք ուղղումներից յետոյ արտօնութիւն տրւեց 1898 թ-ին: Ռուսերէնի մէջ մտցւած ուղղումները Սունդուկեանը չմտցրեց հայերէն բնագրի մէջ:

1892 թ., տեղի ունեցան կաթողիկոսական ընտրութիւններ: Թիֆլիսի թեմի պատգամաւորների շարքում ընտրւեց եւ Սունդուկեանը, իրրեւ մշակական կուսակցութեան թեկնածու, բայց ընտրութեան ժամանակ քւէ տւեց «Մշակ»-ի հակառակորդ թեկնածուին. Գր. Արծրունին խորապէս վրդովեց եւ իր թերթում յարձակեց Սունդուկեանի վրա: Վերջինս պատասխանեց, թէ ինքը երախտապարտ է «Մշակ»-ին, եթէ իր ընտրութիւնը նրա կամքով է եղել, բայց որ եւ է յանձնառութիւն չի ստացել եւ քւէ տւել է համաձայն իր հասկացողութեան ու աղատ խղճով եւ իր վարմունքը համարում է ճիշտ ու շիտակ: Այս բախումը «Մշակ»-ի հետ շատ վշտացրեց Սունդուկեանին, եւ հաշտութիւնը տեղի ունեցաւ միայն 1900-ին: Դրանից յետոյ, Սունդուկեանը «Մշակ»-ում տպեց չորս «մասլահաթ», որոնցից վերջինը իր մահւան տարին:

Ութսունական թւականներին Սունդուկեանը ինչ որ բարեկամութիւն է հաստատում Ալ. Լեպեչինսկայա անունով մի կնոջ հետ, որի

հետ նամակագրութիւն էր պահում եւ նամակներով հայերէն գրաբառի դասեր էր տալիս: Լեպեշչինսկայան խանդավառ նամակներ էր գրում: Նամակներից երեւում է, որ Սունդուկեանին նա բնաւ չէր տեսել: Ի՞նչ էր սա՝ սիրային զգացում միայն կըն՞ջ կողմից, թէ՞ Սունդուկեանն էլ էր պատասխանում՝ ոչինչ յայտնի չէ:

Իր կեանքի վերջին մէկուկէս տարիներին Սունդուկեանի առողջութիւնը բոլորովին խախտւած էր. նա տառապում էր զառամութեան ախտով, բայց պահել էր մտքի յստակութիւնը: Հակառակ հիւանդութեան, նա, շարունակում էր աշխատել եւ գրեց իր վերջին գործը՝ «Կտակ», որ նրան յարգող դերասանները պատրաստում էին ներկայացնելու՝ գիտենալով, որ Սունդուկեանը շատ է ուզում տեսնել իր նոր գրածքի բեմադրութիւնը:

Մահանից մի տարի առաջ, 1911-ին, Սունդուկեանը ամառն անցկացրեց Բորժոմում, ուր գրեց իր վերջին դիմումը ընտանիքին եւ հայ հասարակութեան՝ «Իմ մահն եւ քաղումը»: Այդ գրածքը այնքա՛ն անկեղծ է, այնքա՛ն սրտառուչ, որ անկարելի է առաջ չբերել ամբողջութեամբ, իրբեւ վերջաբան այս յօդւածի:

Սունդուկեանը աշխատում էր մինչեւ կեանքի վերջին վայրկեանը: Մահան օրւայ առաւօտը, 1911 թ., մարտ 16-ին, նա յանձնեց իր երէց աղջկան «Կտակ»-ի ձեռագրի ուղղումները, որ կատարել էր մի օր առաջ:

Նրա գրասեղանի վրա, թղթերի մէջ, դտնեց մի թերթ, որի վրա գրած էին հետեւեալ կէտերը.

15 մարտի 1912 թ. Ա՛յ, էլի քանի բան ունիմ.

- 1) «Կտակ»-ը տեսնել բեմի վրա.
- 2) «Կտակ»-ը տպել.
- 3) Տպիլ Հաղիդի մասլահաթները.
- 4) Տպիլ Վարինկի վեչերը.
- 5) Ջրպետեանի ու նրա կնոջ պատկերները ճարել. Մաղամ Դելֆին Դորբժանսկու հանգու. ձեռին էր Տվերում.
- 6) Իմ կինքը գրել. էս դադա կինք ինձ ո՞վ կուտայ. Աստուծ խօմենակ ինձ համար չի պարպի:

Գ. Ս.

Կարելի՞ է երեւակայել աւելի յուզիչ բան, քան այսպիսի արժանաւոր ծերութիւնը, որ եսականութեան ստւերն իսկ չունի իր մէջ:

ԿՏԱԿ

Իմ մահն եւ քաղումը

Մնա՛ք բարով, յիս գնացի էն հանգի տիղ, վուրդանց, ինչ աշխարհը ստեղծվի է, ջեր ոչով չէ հիդ եկի:

Դուք լա՛ւ ըլիք, երգար օր ունենաք, ջանով առողջ ըլիք, սրտով ուրախ, հոքով հանգիստ:

Ինչ գէթ իմ արի օմքնու, խնդրում իմ բախչէ, ով ինձ է գէթ արի ու դաղիլէ սիրտս, իս էլ բախչում իմ իստակ սրտով. խնայտանքը վունչիչ զնամիչ չանէ իրան իր օրումը: Ինձ թաղելիս վունչիչ թանթանէք հարկավուր չէ: Տան կարք ու սարքին ձեռը չտաք, դարթնի իմ բանելու ու քնելու օթախին, վուր դի իմ յաւիտենական քնելու դողենքը պիտի պատրաստիք: Մնացած օթախները էնէնց մնայ, վունցոր կայ, ինչրի ինձ կու թաղին, իժում դուք գիդիք:

Սիւլիւր վունց մէ օթախումը չըլի ու դուք էլ, իմ աղիղ Սօֆի ջան ու սրտով սիրած վուրթիքս ու թուռնիրս (Chère Hélène), վուր իսկի էլ սիւլիւր չհաքնիք, խիստ լաւ կօ՛նիք: (Ամա խելքս իսկի չէ կտրում, թէ դարուլ անիք): Վէնօկնիր մէ հատ էլ չըլի, վունց տանը, վունց դուսը, վունց դուք չինել տաք, վունց ուրիշիմէն ընթուռիք. վաղօրօք էգէտ հայտնեցէք, վուր ոչով չնեղանա:

Կուբօ դրէք ինձ իմ սիւլ սերթուկով ու մորթէ իմ սիպտա գդակով. իմ թաղումի առաջ տանը վունչիչ պանիխիդիք չըլի. մենակ իմ տանու քաղանէն հերիք է, վուր եկողներու համա մէ «Հայր մեր» աւէ, վունցոր վաղ կարք էր: Ու թէ հիւսովուրներն ու յաղերը իսկի էլ չնիղանան, չգան ու ամէն սահաթի, մէկ միկու իդենն, կնգաս ու վուրթկերանցս նուրմէկանց չլացցնին, աւելի լաւ կօնին: Նրանցմէն ով ուզում է իր սրտի ցաւը յայտնի իմ դիյիւր թող իր այցետոմսը տա դռներումը կամ թէ չէ, էնդի էվէտ դաւթրումը գրէ իր անումը, վունցոր լուսաւոր յիրգիւրներումը ընթունած է:

Մոռացայ իր տիղն ասիմ վուր դադէթնիրը չլքցնիք անթիւ ու անճոռնի յայտարարութիւններով ու անտեղի խօսկերով: Ով չի գիդի, որ դիփուռիդ համա, ով ինձ սիրում էր, յիս էսէնց սիրեկան ու թանգադին իմ էլի. համ էլ էտ խօսկիրը շատերը, մէկ մէկու մտիկ տալով, մինձ ու դառը, խիստ դառը կսկիծով ին յայտնում:

Մախլաս:

Իմ մահան յայտարարութիւնը գրեցէք, առանց չինո յայտնելու, էսէնց՝

Գարրիէլ Սունդուկեան Համալ վախճանեց (Ժամանակը) հու-

ղարկաւորութիւնը տեղի կունենայ (օրը) առաւոտեան (ժամը) հանգուցեալի բնակարանից, եւ այլն:

Ինձ թաղելու օրը մէ քահանայ ըլի մենակ — իմ տանու քահանէն — իմ առջիւր քնացող ու մէ էլ միկ տիրացու, նրան ծառայող: Ուրիշ քահանաներու, ուրիշ հոգեվուրտկաններու ոչովի չխնդրիք ու չնիղացնիք (ամա ումը պիտի կանչիլ էյիք ու իմ ասելով չիք կանչի, իրանց ախր թամամ վջարեցէք, վուր ինձ համա չասին թէ՛ ինչ սկուպօյի մարթ է էլի): Ծառայութենի խաչիր ու նշանիր վունց բալչնիրով, վունց առանց բալչի իսկի չըլի:

Իմ առջիւր քնացող քահանէն ու տիրացուն սուս ու փուս գնան իրանց ճամփէն տանեմէն ինչրի եգեղեցին ու էնդանց ինչրի գերեզմանս. ճամփին վունչիչ շարական ու բարձրաձայն աղօթկներ չըլի:

Թանգադին Սօֆի ջան ու թանգադին զաւակներս. դուք համա. չա խելօք իք էլի. դուք գիդիք, վունցոր սրտեներուդ կու զայիմ. ացնիք ինձ ճամփայ գցելիս:

Ամփովանու ուրիշ ցերեմօնիք իսկի չըլի. իլտիմ թէ ձիաներու գլխին են բմբլէ թայգուլնիրը սարքած, վու ինձ ձիձիին է բերում. ութ համալ ու ութ կինտօ մեծրեցէք. հիրթով ճտի պէս կու թոցնին ինձ. կուլի նրանց մէջը դուրթ Պէպօ էլ ռաստ գա. էտ խիստ մինձ պատիւ կուլի իմ Պէպօյի համա: (Իրանց ջափահախը, ինչ հարկաւոր է, աւելի տէք ու պակաս չէ. նրանք շատ չին ուզի): Վի'րչը թաղեցէք ինձ, վուրդի էլ գո'ւղիք: Յիս գուղէյի իմ մօր մօղ, ամա տիղ չկայ. նրա մօտ թաղած երեխերքս թարժած չըլին: Գերեզմնիս վրայ վունչիչ արձան հարկաւոր չէ. մէ սիւքար ու իմ ջանը: Վրէն գրիլ տէք էսէնց՝

Գաբրիէլ Սունդուկեան — Համմալ

Ծնւեց 1825, յունիսի 29-ին

Վախճանեց 191. թ...-ին

Թէ սրտով վրէն արձան իք ուզում ու արժանի կու համարիք, էտ արձանը, իմ փուխանակ, Պէպօյի համա կանգրեցէք, վու'ւրդի ուր կու սաղ գայ:

Սաղ բօյով կանգնած ըլի բացը պատվանդանի վրա իր հաքուստով, գդակը ծածկած, մէ ձեռին Արութինի բարաթը, մէկէլ ձեռքով վրէն գրածն ըլի ցույց տալի նրան, վուր գլխաբաց ու սերթուկով սիւերեւ կանգնած է կշտին: Տակս, պատվանդանի վրայ գրած ըլի մենակ էս խօսկերը՝

Պէպօ՝ «էս քու կոտրած ձեռով չի'ս գրի'...»

էն արձանն ու պատվանդանը թուջեմէն ըլի ածած ու շինած. վրէն վունց մի տեղ իմ անումը չյիշիք:

Իմ ցանկութիւնը էն է մենակ, վուր դիվունի սրտումն ու մըտկումը հիգնուհիդը աւելի ու աւելի հաստատուի էն հասկացողութիւնը (ու գլխով հաստուի էն միտիլը) թէ հաշա ուտիլը մինձ ամութ բան է մարթու համա ու ուլ իր պարտիլը չի ճանչնա, տւած խօսիլը չի կատարի, իր ձեռք քաշած թուխտը կու ուրանայ, նա մարթ չէ, ինչքան գուղէ բացը ըլի կանգնած մարթկերանց մէջ:

Գանք հիմի ասածներուս կատարելու վրա:

Պէպօյի արձանը շատ հեռու բան է. էստու համա ոչով չնեղանաք հիմի ու անմիղ ժամանակ չկորցնիք:

Իմ թաղումին ինչ փուղ պէտք գա իմ պարտին է, էստու զահրը գնիկս ու վուրթիքս կու քաշին էն պստիկ կարողութենեմէս, վուր թողնում իմ նրանց համա:

Քելեխ — մելեխ իսկի հարկաւոր չէ. էն օրւան ախկըտներու ճաշի փուղը իմ տանեմէն կու տաք Հայոց Բարեգործական Ընկերութեանին նրանց բաժնելու:

Մնաց իմ թաղումի կարք ու սարքի կատարիլը. վունցոր գրիլ իմ էստի վերիւր: Սրա համա յատուկ խնդրում իմ «Մշակ» լրագրի յարգելի խմբագրութենին, իմ սրտակից բարեկամներուս, աչկիս լուս կնգաս ու վուրթկերանցս աշխտին ճշտութենով գլուխ բերեն ասածս ու խնդրածս:

Մնա՛ք բարով:

Մնա՛ս բարով, թանգադին իմ Սօֆի ջան:

Մնա՛ք բարով թանգադին զաւակներս:

Մնա՛ք բարով սիրելի բարեկամներս:

Մնա՛ք բարով սիրելի մարթիք, ինչ ասկի, ցիղի ու հաւտի էլ ըլիք:

Մնա՛ս բարով, իմ սիրած Թիֆլիս քաղաք:

Մնա՛ս բարով սիրելի ու պաշտելի ասկ. Աստուձ վաթանիդ արժանի անէ:

Դիվունիդ սերը սրտումս խուրը թաղած տանում իմ հիդս:

Մնա՛ք բարով:

Գաբրիէլ Սունդուկեան — Համմալ.

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

ԱՐՅԱԽԻՐՔԻ ՕՐԵՐ

VII

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀԻԱՆ ՄԻՋԵԻ

Բանտասենեակի դրան շիկոցից ընդոստ արթնցայ: Կանչում էին դրասենեակ: Յանկարծակիի եկայ, իսկ երբ պտարաստ էի դուրս դալու, տեսայ, որ Մկնաղէմը տնտնում է:

— Էֆէնդի', խոստացաք երկու մէջիդէյէ տալ...

Ասացի, որ դառնալուս դրամը կը մանրեմ ու կը տամ:

Գրասենեակում ենթադրում էի պատահել դոկտոր Ստիլին եւ ժանդարմների պետին: Բայց բանտի երիտասարդ պաշտօնեայից զատ ուրիշ մարդ չկար: Ինձ տեսնելով՝ քաղաքավարութեամբ խնդրեց մօտենալ:

— Սամսոնի ոստիկանութեան հրամանով ձեզ պէտք է յետ ճամբենք, ասաց մի ձեռով, որ չեչտում էր կարգադրութեան հարկադրիչ բնոյթը:

Անակնկալ էր, որովհետեւ ամէն տեսակ հաւանականութիւններ մտածել էի, բացի այդ:

— Սակայն, բանտային «նիզամ»-ի համաձայն, մենք ձեզ ուղարկում ենք Գաւախի միւտիլի կարգադրութեան:

Եւ նայում էր այնպէս, որ, կարծես թէ, պէտք է համախորհուրդ քննութեան առնէինք խնդիրը: Մի պահ ուղեց ընդհատած դերը շարունակել, բայց յետ նստեց ու վարանքով ասաց.

— Ճանապարհը բաւական երկար է, դրամ ունի՞ք սայլի համար:

Ես հանեցի զրպանիցս Գարեգինի յետ տւած թուղթ լիրան եւ դրի սեղանի վրա:

— Այդ շատ է, երկու մէջիդէյէ կը բաւէ: Մանր չունի՞ք:

— Չունիմ:

— Սաղը'կ:

Դրան դէմ կանգնած Մկնաղէմը արագ ու անշշուկ մօտեցաւ:

— Այս դրամը մանրիւր եւ վերի սայլերից մէկը վար բեր, էֆէնդուն Գաւախ տանելու համար:

Ու նորից սկսեց դրել: Ես քիչ յետ քաշւելով՝ սկսեցի մտածել դալիքի մասին: Յիշեցի Սամսոնի բանտում մնացած ընկերներին՝ Թէր-Վեանին, Պողոսեանին, Փիրանեանին... Ուրեմն նորից Սամսոն, բանտ, բախտակից ընկերներ, ընդհանուր վախճան... Արդար էր: Եւ սակայն հայու թիւնից թափուր Սամսոն գնալը դառն ճակատագրի պէս ծանր էր...

Վերադարձաւ Մկնաղէմը, դրամը դրեց սեղանին եւ յայտնեց, որ սայլը պատրաստ է:

— Սայլապանին կանչի՛ր:

Ներս մտաւ մի չարքաշ գիւղացի ու, ձեռքերը փոքրին դրած, աղաղակող համեստութեամբ կանգ առաւ դրան մօտ: Բայց քիչ յետոյ, մոռանալով իր դերը, սկսեց Մկնաղէմի հետ եռանդով փափուսալ:

Պաշտօնեան գրութեան վրա աւաղ թափեց, շուրթերը շարժելով մտքի մէջ կարգաց, ծրարեց, հասցէագրեց, զմուսեց ու ոտքի ելաւ:

— Էֆէնդուն այս թղթով կը տանիս, կը հասցնես Գաւախի միւտիլին: Ա՛ռ քեզ երկու մէջիդէյէ: Նայիր, որ հանգիստ տեղ հասցնես էֆէնդուն:

— Հէ՛չ հոգ մի անէք, բէյ, մինչեւ հիմա իմ սայլի վրա ոչ մի դէպք...

— Լա՛ւ, ընդհատեց պաշտօնեան: Ապա դառնալով ինձ՝ յանձնեց ձեռքը մնացած դրամները ու յարեց:

— Կարող էք երթալ:

Շեմքի մօտ յանձնեցի Մկնաղէմին խոստացած երկու մէջիդէյէն: Նրա փոքրիկ աչքերը ճառագայթեցին, ու իրարու վրա ինչոր բարեմաղթութիւններ արաւ: Որջը, ուր դարձայ նրա հետ միասին, գլը խարկս առնելու, այժմ այլ տպաւորութիւն թողեց. մի կտոր կեանք կար այդ սեւ պատերի մէջ...

— Լաւ եղաւ, էֆէնդի, որ քեզ այս կողմը ճամբեցին. Սիւլէյ-ման աղան Գաւախիցի է, ճանաչում եմ, լաւ մարդ է, ես էլ ինչոր պէտք էր ասացի, ապահով կերթաս, կը հասնիս...

Առի գլխարկս, Գարեգինի կապոցը ու ելայ: Մայթի մօտ կանգնած էր բաց, քառակուսի, երկանիւ մի սայլ: Առջեւում, անխնամ ոլորած քէչայի վրա, նստած նիրհում էր ցնցոտիապատ մի տղեկ: Մուտքի մօտ կանգնած էին սայլապանը, Մկնաղէմը եւ բանտի պահակը: Վտիտ եղների ձախ ընկած պոչերը, աղբից սեւացած ու սմբած

փորերը վկայում էին լծի տակ եղած տեւական մի վիճակ: Մանչուկը ինձ տեսնելով հապճեպով վար իջաւ: Թէեւ աւելի հաճոյքով պէտք է ոտքով գնայի, բայց տեղ բռնեցի սայլի ծայրին ու շարժեցինք: Չարմանալի է, որ ճամբում են ինձ առանց պահակի: Եւ առաջին միտքս այն եղաւ, որ դեռ Գաւախին չհասած՝ կարող պիտի լինեմ փախչել: Քիչ վերը շարւած էին 20 – 25 նոյն ձեւի սայլեր:

— Սիւլէյմա՛ն աղա, Սիւլէյմա՛ն աղա, Գէօրիա... գոչում էին սայլապանները:

— Գաւախա՛, Գաւախա՛, զւարթութեամբ պատասխանում էր սայլապանը:

Արեւը ուղղահայեաց կախել էր: Կիզիչ ճառագայթները, կարծես, մտնում էին գլխիս մէջ: Ու ո՛ր կողմն էլ դառնում էի, աչքս արեւից պաշտպանելու, նա ամէն տեղ էր՝ դէմքիս, ձեռքերիս, ճամբու վրա, բլուրներին, դաշտերին: Թեթեւ քամին մաղի պէս շարժում էր արեւի ճաճանչների մէջ բլուրներից վար քշող փոշին: Բայց տոթ էր:

Բաւական հեռացել էինք քաղաքից, երբ համոզեցի, որ, իրօք, ինձ ճամբում են առանց պահակի: Դրա հետ միասին փախչելու դաշտափորը աւելի ու աւելի համակեց ինձ: Վերջիցս ճանապարհը՝ Կաւղա, պահակատուն, լեռնադաշտը, Գաւախ, Չախալլի, Սամսոն: Պարզ էր, որ առաջին երեք շրջաններում փախչելու ո՛չ տեղ կար, ո՛չ էլ հնարաւորութիւն. նախ՝ ճանապարհ չգիտէի, ապա՝ որքան ինձ յայտնի էր, այդ շրջաններում յունական զիւղեր չկային: Բայց պարզ էր նաեւ, որ Գաւախում ինձ պէտք է նորից բանտ դնեն, իսկ այնուհետեւ Չախալլիից, Սամսոնից փախչելու մասին մտածելը աւելորդ էր: Այսպիսով մնում էր մի ելք, դեռ Գաւախին չհասած փախչել: Աղօտ կերպով պատկերացաւ ինձ սարի վրա ցրւած այդ գաւառական քաղաքը, միակ փողոցը, որով արագութեամբ վար իջանք, սարի գագաթը, թիկունքի դաշտերը: Կասկած չունէի, որ այնտեղից երեք – չորս ժամւայ ընթացքում կարող էր լինեմ հասնել Չախալլի: Իսկ այնուհետեւ Կատը – Քէօյ կամ մի ուրիշ յունական զիւղ ապաստանելը թւաց ինձ միանգամայն հնարաւոր: Այժմ մնում էր որոշել այն հարցը, թէ ե՛րբ էր լինենք Գաւախի մօտերը: Պարզ էր որ, եթէ հասնելու լինէինք ցերեկը, ոչինչ անել հնարաւոր չէր: Մի պահ այս միտքը ինձ յուսահատութեան մատնեց: Բայց քիչ չանցած հասկացայ, որ եղան արաբայով այդ ճանապարհը կտրել ու հասնել ցերեկով՝ անկարելի է:

Սայլի թրխկոցներից գլուխս ցաւում էր: Իջայ եւ սկսեցի քայ-

լել: Գարեգինի ձեռքս մնացած կապոցի մէջ եղած պաշարի խղճուկ մնացորդները սպառելուց յետոյ միայն հասկացայ, թէ ի՛նչպիսի անմտութիւն էր Կաւղայից հաց չգնելս: Բայց ենթադրեալ փախուստիս յաջողութեան մասին այնքան վստահ էի, որ չուտով այդ էլ մոռացայ: Անձեռոցիկները, երեսի սրբիչները, իբրեւ Գարեգինից մնացած նւիրական յիշատակներ, խնամքով փաթաթեցի կապոցի լաթի մէջ ու գոտուս վրայից կապեցի, որ չկորչեն:

Եղները գնում էին դանդաղ: Հայր ու որդի անցել էին առջեւ եւ իրարու հետ զրուցելով գնում էին: Եթէ ճանապարհն իմանայի, հիմա իսկ անհետանալը ոչ մի դժուարութիւն չէր ներկայացնում: Բայց ո՛ւր գնալ, ի՞նչ հաշուով եւ ի՞նչ վստահութեամբ, որ առաջին իսկ քայլիս չեմ հանդիպելու ջարդարարների որ եւ է խմբի: Հայրը տեսնելով որ սայլից իջել եմ, քայլերը դանդաղեցրեց մինչեւ որ սայլը հասաւ:

— Ե՛րբ տեղ կը հասնենք, Սիւլէյմա՛ն աղա:

— Ալլաի գործն է, օղլում: Եթէ այսպէս գնանք, ազանից յետոյ կը հասնենք: Սաղըկ էֆէնդին ասաց. հէ՛չ հող մի անի, հանգիստ քեզ Գաւախ կը հասցնեմ: Բայց ասաց որ «աջամ» ես եւ զարմանում եմ, թէ քե՛զ ինչու են քշել... Ի՞նչ ասեմ, եավրում, սէպապի աչքերը քուսանան... Այսքան տարւայ մարդ եմ, բնաւ այսպիսի բան տեսած չէի... փա՛հ, փա՛հ, փա՛հ... Այս ի՛նչ զուլում է, որ այս խեղճ հայերի գլխին իջաւ... Տեսնած, լւա՛ծ բան չէ՛, օղլում, Ալլաի այս գործը կաքուլ չի անի...

— Աչքդ ի՛նչ է եղել, օղլում. եթէ ասեմ խիւած է՝ նման չէ. եթէ ասեմ վար ընկար...

— Վար ընկայ...

— Քարի վրա՞:

— Քարի վրա...

— Մի՛ ասիլ, մի՛ ասիլ, եավրում. Ալլաի դուժմանիս այդպիսի փորձանք չտայ: 25 տարի առաջ այդպիսի մի փորձանք ես էլ ասրեցի: Ինչե՛ր ասեա չքաչեցի. քիչ մնաց պէտք է քուսնայի: Այն ժամանակ ձիապան էի Թոքատցի Ջաֆար – բէյի մօտ: Ջաֆար – բէյը մանակ ձիապան էի Թոքատցի Ջաֆար – բէյի մօտ: Հէնց, որ մնում էր մենակ, մի «սարխոշ» ձի ունէր. քաքուրի ձի. հէնց, որ մնում էր մենակ, սիրտը ճաքում էր, խրխնջում էր, հա՛ խրխնջում, մինչեւ որ ձայնը կտրւում էր. միշտ պէտք է նրան մէկ – երկու ձիերի հետ տանէի ջուր տալու: Մի օր Ջաֆար – բէյի մօտ հիւրեր եկան: Ձիերը նստեցին, գնացին: Սարխոշը մնաց մենակ. դէս ու դէն ընկաւ, խրխնջաց, խրխնջաց ու վերջը խեղճացաւ, մսուրի դիմաց ծուռ կանգնած մը-

նաց: Իրիկան դէմ մտածեցի տանեմ ջուր տամ: Ոչինչ, յետեւիցս խեղճացած գալիս էր: Զուրը խմեց, մի քիչ փորփորեց առւի մօտ, հանդարտեց: Ինքս ինձ ասացի՝ ես էլ ջուր խմեմ ու դառնանք: Կապը երկարեցի, ծայրը թեւիս փաթաթեղի ու նոր էի շուրթերս մօտեցրել ջրին, երբ Սարխոշը սրտապատառ խրխնջաց, դուրս ցատկեց ջրից ու սկսեց ինձ քարերի վրա քաշքշել: Օղլում, այն ի՞նչ պատուհաս էր. ո՛չ կարողանում էի թեւս կապից ազատել, ո՛չ ոտքի ելնել, ձին պահել. քաշեց, քաշքշեց, աչքս քարին դիպաւ, պատուեց. վերջը կապը քակեց ու փախաւ: Պարզեց, որ մեր ձիերին Սարխոշը հեռուից տեսել էր. բռնել, բերել էին: Զափար — բէյը, հիւրերը ծիծաղից թուլացել էին: Զափար — աղան ասում էր՝ ինչո՞ւ մենակ ջուր տւիր ձիուն: Ինչ որ է, առին ինձ էլ իրենց հետ տարին: Աչքիս վէրքը քանի գնաց վատացաւ: Թողի եկայ Գաւախ: Դէմքիս կէսը դեղումի պէս ուռաւ: Բարեկամներս խորհուրդ տւին գնալ Սամսոն: Ելայ գնացի: Ալլաքը կեանք տայ Գարահիսարցի Հինդլեան բժշկին, ո՞վ գիտէ թէ ո՞ղջ է արդեօք... Ինչոր է, երկու ամսայ մէջ աչքս բժշկեց: Բայց էլ ոչ դրամ մնաց մօտս, ոչ էլ կարողացայ գործ գտնել: Համարութեամբ մի քիչ դրամ հաւաքեցի, որ գնամ Տրապիզոն եղբորս մօտ: Բայց եկայ Տրապիզոն եւ իմացայ, որ եղբայրս մի ամիս առաջ գնացել է Ստամբուլ: Հիմա Ղալսեքի է, հարստացել է. տուն ունի, հող ունի, չորս զոյգ եղ ունի, երեք ձի, երկու կին, թէ՞ երեք կին, 50-ից աւելի ոչխար ունի: Հիմա կասես, թէ եղբայրդ հարստացաւ, դու այդպէս մնացիր. բախտ, օղլում, բախտ չունիմ... Ինչե՞ր ասես չքաշեցի, էլ ո՞ւր ասես չգնացի, ամէն գործի ձեռնարկեցի, բայց բախտս միշտ թարս ճամբով գնաց...

Սալապանը սաստիկ յուզւել էր ու յաճախ կանգ էր առնում իր վիշտը ինձ փոխանցելու մղումից դրդւած.

— Հիմա էլ կինս մեռաւ ու այս միակ զաւակս ստիպւած եմ ինձ հետ քաշքշել... Ի՞նչ անեմ, ո՞ւմ թողնեմ. մտածում եմ, տանջւում եմ, բայց ասում եմ թող տեսնի, սովորի, ճամբաները հասկանայ, սա՛ էլ գործ է, որ վերջը մի կտոր հացի տէր դառնայ...

— Հիմա արի հարցրու, թէ ի՞նչ պէտք է լինէր հալս, եթէ այս սայլն ու եգններն էլ չլինէին... Ա՛խ, օղլում, Ալլաքը չորքաջի Գրիգորի հոգին լուսաւորի... Նա չլինէր, ա՛յս էլ չէի ունենայ... Ափսոս, ափսոս՝ Գրիգոր էֆէնդին, մեղք եղաւ... «Ի՛նչ խալընը»... Գրիգոր էֆէնդին «Դիմ խալընը»... Քանի՞ տարի է ճանաչում եմ, իսլամից տարբերութիւն չունէր... Նա՛, Ակո՛ւր էֆէնդին, Օհանէ՛ս աղան, ու-

րիչ շատերի հետ միասին, Ամասիայի կիրճում փչացան... «Ալլա՛հ էֆէր» գոչեցին ու վրա տւին... շրփշրփշրփշ...

Սալապանի դուրս ընկած, դեղնած ատամները երերում էին.

— Բայց չորքաջի Գրիգորի չուկչուկները փրկեցին: Սէյիդ էֆէնդին ասաց՝ «Որբերին մի՛ նեղէք. առէք, տարէք, սէպալ է. մեծ աղջիկներին կին արէք, առէք մէկը, երկուսը, երեքը, չորսը... աւելին մեղք, ասաց: Գալով փոքրերին՝ հինգը, վեցը», մի խօսքով, ով ինչքան կարող է: Աղբօրս ասեմ, չորքաջի Գրիգորի աղջիկները...

Յանկարծ, սալապանը առաջ նետեց ու շնչահեղձ կանչեց. — Հօ — հօ՛, հօ — հօ՛, հօ — հօ՛... Դիմացի տափակ բլրից սայլը մանչուկին հրելով ճամբուց ելել էր դէպի տարածուն մացառները: Ուժերս հատել էին եւ դժարութեամբ էի գնում: Միւս կողմից քամին էլ սաստկացել էր: Հաղիւ էի հասել բլրի գագաթին, երբ վարը, հովտի մէջ տեսայ առաջացող ուղտերի մի մեծ կարաւան: «Դընգը, դընգը, դընգը»... լսում էր «Վիշիւնգ» ուղտի վրից կախ ընկած զարդարուն վզնոցի կողորածեւ զանգերից: Թեք արեւի ճառագայթները մերթ ընդ մերթ փայլելում էին նրա կրծքի զարդերին: Առջեւից, կապը բռնած, գալիս էր մի մարդ, որ բոլորովին ուղտապանի նման չէր: Երբ կարաւանը մօտեցաւ, մարդու շարժումներից ապշեցի: Նա ցատկոտում ու սստոստում էր ուղտի չորս կողմը եւ ձեռքի, գլխի շարժումներով, կերելի թէ, խրախուսում էր նրան: Երբեմն մտնում էր ուղտի կրծքի տակ ու ձախ ընկած «թալիսմանները» գնում: Հինգ-վեց քայլի վրա ուղտը, յանկարծ, կանգ առաւ եւ մեծամտօրէն նայեց ինձ: Դրեթէ միաժամանակ ուղտի կրծքի տակից յետ նայեց մարդը: Սարսուռը ուժգնօրէն մարմինս ցնցեց... Նա՛ էր, ամասիացի խենթը... Երկու քայլ արաւ դէպի ինձ, բայց սարսափահար մնաց տեղը գտնւած.

— Ա՛լ... լա՛ — լա՛ — լա՛ — լա՛ — լա՛հ...

Կապը բաց թողեց, ձեռքը դրաւ ալտին, մի ակնթարթ բերանաբաց, շնչահեղձ նայեց. ապա, յանկարծ, բոլոր ուժով վազելով դէպի վար՝ ճչաց...

— Եա — հո՛ւ... Եա — հո՛ւ... Եա — հո՛ւ... , ո՛ւ... , ,

Կարաւանը մի մասով խմբւել ու կանգ էր առել: Ներքեւից քամու հետ միասին լսում էին կանչեր.

— Օլա՛ն հէ՛յ... Օլա՛ն ցէ՛յ օլտը՛...

Վրա հասան երկու ուղտապաններ, որոնք առաջնորդ ուղտի մօտ կանգնած՝ հեռաւորով դիտում էին խենթի դիւահար փախուստը: Ինձ

տեսնելով՝ լրջացան ու մօտեցան: Ճիշտ նոյն պահին վարից դառնում էր սայլապանը:

— Սէն քիմ սո՞ն, հարցրեց մէկը:

— Հոգիւմէքըն աղամը դըր, հանդարտութեամբ ասաց սայլապանը, ծոցից դուրս քաշելով նամակը:

— Կաւգատան կիօնդէրիոյրար Գաւախա:

Յոյց տւեց նամակը: Ուղտապանները նայեցին ծրարի զմուռսը ու «փէշիմգի» կապից քաշելով գնացին...

Ուղտերի զանգակները այժմ լսւում էին պղնձէ կաթսայից հըն-
չող ձայների պէս: Դնդդդդդը բռնել էր չորս կողմս: Կարաւանը մեծ էր, բռնները ծանր. պարզ էր, որ ռազմամթերք է: Ուղտերի պճեղ-
ները զսպանակների պէս նստում էին գետնին ու ոտքերը ցից — ցից
նետում դէս ու դէն: Թթւած, հանդիսաւոր, դունչերը վեր՝ շարք —
շարք անցնում էին: Ու գրեթէ ուղտ չկար, որ ինձ արհամարհանքով
չնայէր...

— Աղբօրս ասեմ, Իսկանտար էֆէնդին առաւ...

— ...

— Չորքաջի Գրիգորի աղջիկները... Ի՞նչ եղաւ, էֆէնդի... Ա-
րի՛, արի՛ սայլը նստիւր...

Նստեցի, շարժւեցինք: Հեռից մերթ ընդ մերթ ուժգնանում ու,
յանկարծ, մարում էր ուղտերի զանգերի խուլ դնդդդդդը: Արեւի
ճառագայթները դեռ պլպլում էին հորիզոնի մօտ, բայց մերթ ընդ
մերթ պատապարւում էին մագլցող ամպի տակ: Շրջապատը, կար-
ծես, եզրերով վեր ելած ձգտում էր պարուրել ամէն բան: Ձախ կող-
մից պատահող բարձրադիր թփերը, երկարաշունչ քամու տակ, դի-
նով երերում էին: Եւ դէս ու դէն ընկնելով, դժբախտութեամբ հա-
մակած կանանց պէս, ոստերով ծեծում էին լանջերը: Տարածած
մակած կանանց պէս, ոստերով ծեծում էին լանջերը: Տարածած
մթնշաղը գունդ էր գունդ մագլցում էր դէպի մեզ: Եւ շրջապատի մէջ
լեղապատառ աճապարանք կար. հող, թուփ, լոյս, ամէն բան շտա-
պում, փախչում ու փոշու մէջ ճարճատում էր, գոյութիւն պահելու
անկարող:

Սայլը քերում էր լեռնադաշտը, որ դնալով ցցւում էր: Թէ ո՞ւր
էինք, ճամբու ո՞ր մասում, ոչ մի գաղափար չունէի: Ձախ կողմից տա-
րածւում էին մացառներ, աջից՝ անվերջ քարքարուտներ: Սայլապա-
նը, տղեկը, քայլ առ քայլ սայլին առաջանալով, բաւականաչի հե-
ռացել էին: Նրանք, քամուց խուսափելով՝ երբեմն կոնդ էին առնում,
նայում էին սայլին ու նորից շարունակում իրենց ճանապարհը: Եղ-
ները գնում էին դանդաղ, օրօրւելով, մի անգամ ընդմիջտ պարզւած

ճանապարհով ու, կարծես, միայն մտածում էին, թէ ո՞ւր դնեն ոտ-
քերը, որ քարերից խուսափեն:

Ամպի տակից նշմարող արեւը արդէն մայր մտնելու վրա էր,
երբ դիմացի մացառների մէջ նկատեցի մի կացնաւորի: Որ եւ է հե-
տաքրքրութիւն չունեցայ, թէ ո՞վ է: Բայց, յանկարծ, մարդը ոս-
տիւններով անշուշտ անցաւ եզների առջեւ, ու ապակիանման աչքե-
րը ոլորելով՝ կացինը բարձրացրած խոյացաւ վրաս: Ոչ մի ձայն
եւ ոչ մի շարժում իր կողմից ինքնաբերաբար տեղի չունեցան: Բայց
մարդու թափը կասեց եւ ցցւած մնաց մօտս: Նրա աչքերը այնքա՛ն
ճերմակ էին, որ կարծես թէ բիրեր չունէին. դարձանալի կերպով
ցատկոտեցին:

— Դու ո՞վ ես, չնչաց աչքերը վրաս չուրով:

Պատասխան տալու հետքն անգամ բացակայում էր մէջս: Ինձ
սպանելու ցանկութեամբ մարդը այնպէ՛ս էր բռնկւած, որ ողջ հու-
թեամբ կանգնած տեղը զգո՞ւմ էր: Յանկարծ, մի բղաւոց մեքենա-
բար ուշադրութիւնս մէկ կողմը դարձրեց:

— Հէ՛յ... հէ՛յ... հէ՛յ...

Սայլապանը թեւերը ճօճելով գլխապատառ վազում էր դէպի մեզ:

— Վարմա՛... պէֆլէ՛... պէֆլէ՛...,,

Հասաւ, մտաւ իմ եւ կացնաւորի արանքը:

— Վո՛ւրմա, օղլում...

Ու սայլապանը չունչ առաւ, հիմնաւոր խօսք ասելու մի ձեւով:

— Պէֆլէ, մէֆթալ վար պէնտէ...

Պրպտեց ծոցի մէջ՝ ա՞ջ... ձա՞խ... նամակը չկայ: Սարսափով
նայեց կացնաւորին, ապա, յանկարծ, կցկտուր շարժումներով, ա-
րագ — արագ, դրսից շօշափեց ծոցերը... Ահով համակւած դէմքի վը-
րա ձեւաւորւեց մի ժպիտ... Այնտեղ էր... ահա՛:

— Հոգիւմէքըն առամը տըր...

Զմուռսը, գիրը, ծրարը վեր, վար, ինչպէս կար՝ այնպէս էր:

— Կաւգատան կիօնդէրիոյրար Գաւախա...

Կացնաւորը, որ թթւած նայում էր մերթ ինձ, մերթ նրան, վիզը
ներս առաւ, վրիպած որսորդի պէս դէս ու դէն նայեց ու երեք-չորս
ոստիւններով անհետացաւ մացառների մէջ: Սայլապանը մի պահ
չձմած մնացել էր. ապա մէկէնիմէկ արագ շարժեց եզները: Երբ սայլը
մի քիչ մացառներից հեռացաւ, աւելի մեծ անհամբերութեամբ քը-
լեց եզներին: Ապա, դէմքը շարունակ մացառներին յառած, խրա-
խուսելով եզներին՝ քիչ — քիչ սկսեց հանդարտւել: Բաւական հեռա-
ցել էինք արդէն, երբ սկսեց յանդիմանել տղեկին:

— Քանի՜ անգամ քեզ ասացի, թէ սայլի յետեւից գնա. «չէ՛, քեզ հետ պիտի լինեմ»... Հիմա տեսա՞ր, թէ ինչ եղաւ, էտէփսը՛գ... Սպասիր դու, սպասիր... Թո՛ղ ես Սիւլէյման աղան չլինեմ, եթէ կաշիդ չքերթեմ. կը տեսնես, տեղ հասնելուն պէս կը հասկանաս, թէ ես ով եմ, խի՞նզի՛լ...

Եւ քանի յանդիմանում էր, այնքան բարկութիւնը սաստկանում էր.

— Չասե՞ս թէ ինչ է քո ընթացքդ, խողի ծնունդդ, խո՛ղ... Փայտի տակ քեզ պէտք է այնքան տրորեմ, որ խելքդ գլուխդ դայ...

Բայց մանչը արդէն այնքան յետ էր մնացել սայլից, որ հօր յանդիմանութիւնները չէին կարող հասնել նրա ականջներին։ Սայլապանը լռեց եւ փայտով թեւերը խաչելով՝ սկսեց առաջնորդել եղներին։

Որքան բարձրանում էինք, այնքան քամին սաստկանում էր։ Մացառները, թիւերը, քամու տակ պառկում, ելնում էին, հողից պոկւելու մի անդուստ թափով։ Քամին փոշու պատ էր կազմում, որմնադրի պէս հաւասարացնում էր. ապա ուժգին կործանում, խշխշոցով փոշին նետում էր մացառներին։ Երբեմն կանգ էր առնում, շունչ հաւաքում. ապա, յանկարծ, մտրակելով, վեր էր հանում փոշու շէնքի բեկորները ու գլտորելով՝ մոխրափրփուր ալիքներով, դարձնում էր քշում հեռու, դէպի ամպոտ հորիզոնը։ Արեւն արդէն մայր էր մտել։ Արեւելքից, թեւերը կախ, թռչում էին ամպի խմբեր։ Ու մերթ ընդ մերթ, հեռէն — հեռու, մթմթթալով որոտում էր։ Լեռան գլխից իջնում էին մարդիկ։ Թւաց, թէ ընդամենը մի հոգի է, սակայն գնալով բազմանում էին ու, կարծես թէ, բուսնում էին։ Սայլը կանգ էր առել։ Մարդիկ հասնում, անցնում էին։ Բղկտած, ոտաբորիկ տաւաղիւր հայ գիւղացիներ։ Իջնում, քայլում էին զգուշութեամբ, ոտքը գետնին զննելու ցաւից խուսափելով։ Կանայք քաշքշում էին փոքրերին, քիչ աւելի մեծերը քամուց մղած վաղում, դառնում, կանգնում էին։ Չորս կողմս մի այնպիսի ժխոր էր, որ ամէն բան փշրւում, փոշիանում, վրիպում էր աչքիցս։ Ու, յանկարծ, սարսուռը ինձ մըտրակեց.

— «Բհօի՛ւ... դի՛տ»։

Երինջ էր, որ մեր եղների մօտ դամբած չէր ուզում գնալ։ Առջեւի ոտքերը փայտերի պէս ցցելէր, գլուխը պահել ծնկների մէջ։ Մարդիկ հեւ ի հեւ հրում, քշում էին՝ ապարդիւն։ Յանկարծ, սայլապանը բոլոր թափով փայտը իջեցրեց նրա մէջքին։ Երինջը մի խենթ ոստիւն արաւ ու պոչը կամարաձեւ վեր ցցած անհետացաւ փոշու մէջ... Լեռն ի վեր մագլցելով շարժեցինք։ Քիչ չանցած ելանք լեռնա-

դաշտը։ Քամին այժմ փչում էր ցատկոտուկներով։ Մացառները օրօրում էին, կարծես թէ, քամուց աղատ տեղ դտնելու եւ կանգ առնելու համար։ Եւ չըջապատը արագութեամբ սեւանում էր...

Մթնեց։ Ձեռքերս, ոտքերս, գլուխս թրթռալով դողում էին։ Քուռքերս մուրջի պէս զարնում էին։ Ականջներս խշշում էին ու գլխիս կափարիչը ելնում ու իջնում էր։ Թէ ո՞ւր ենք, ճամբու ո՞ր մասում, ոչինչ չեմ կարողանում հասկանալ։ Սայլապանը աջից, ձախից անվերջ փայտում ու խրախուսում էր եղներին։ Որոտը պայթում էր հեռում ու գլտորւելով արձագանգում դէպի մեզ։ Քիչ — քիչ խաւարը այնպէս պարուրեց չորս կողմը, որ կարծես թէ երկինք չկար այլեւս։ Դիմացը հեռում կրակ կար. կայուն վիճակը մատնում էր, որ խարոյկ է։ Շատ աւելի մօտ, դէպի ձախ առկայծում էր մի լոյս։ Մենք էինք մօտենում լոյսին, թէ՞ լոյսն էր դէպի մեզ գալիս՝ չգիտեմ։ Սայլը երկար խոց հանելով թեքեց դէպի ձախ։ Մի մարդ լապտերը ձեռին մօտենում էր մեզ։ Կառապանը կանգնեցրեց սայլը եւ վազեց դէպի նա։ «Նամակը» հանեց, ցոյց տւեց եւ ինչ որ բաներ ասաց։ Մարդը ճրագի տակ դարձրեց, զննեց ծրարը ու յետ տալով՝ լապտերը ճօճեց դէպի վար։ Բայց սայլապանը, նամակը ձեռքին զանազան ուղղութիւններ ցոյց տալով, յամառութեամբ շարունակում էր իր խօսքը։ Վերջապէս, մարդը նրա հետ միասին դարձաւ դէպի սայլը։ Մի բարձրահասակ ժանդարմ էր։ Լոյսի տակ նայեց ինձ եւ լապտերը ճօճելով՝ գոչեց.

— Արի՛։

Ես իջայ ու հետեւեցի նրան։ Մեր դիմաց մթութեան մէջ ստեւանում էր մի շէնք, որի առջեւ, լոյսի տակ, նշմարելով դետնատաւած պատշգամբը եւ նրա տակ հաստատուած լայն ու երկար թաղթի ծայրը, յիշեցի բարձրաւանդակի պաշակատունը։ Մտանք ինչոր նեղ անցք։ Ժանդարմը հրեց մի դուռ եւ ներս անելով ինձ՝ կողպեց։ Ո՞ւր էր, ի՞նչ էր՝ չգիտեմ։ Վայրկենապէս թւաց, թէ դիմացս մարդիկ կան ու միապաղաղ խօսում են.

— «Խօ՛րօրօ...օ՛...»։

— Քի՛մ տըր...

Ոչ մի ձայն։ Մարմինս փշաքաղեց... Թւա՞ց, թէ իրօք ձայներ էին՝ չգիտեմ... Ինչոր տեղից բոլոր ուժով փչեց քամին, շխշխկացնելով դուռը։ Պարզ էր, ուրեմն, որ քամին է... Եւ, իրօք, քամին այժմ իմ դիմացից բարտու նման սուրում էր։ Լաւ նայելու դէպքում

կարելի էր անգամ պատուհանը համատարած խաւարից տարբերել: Բայց հազիւ չէմքից եւս երկու քայլ արի, երբ, յանկարծ, դարձեալ լսեցի.

— «Խօ՞րօրօ...օ՞...»:

Ծունկերս թուլացան, ոտքիս տակ դետինը ձօճւում էր...

— «Խօ՞րօրօ...օ՞...»:

Աջ եւ ձախ, կարծես թէ, սեւացած սաղեր, վզերը երկարած, սուլում են... Ու գետնի տակ կարծես պարապ տակառներ են դարձնում.

— «Խօ՞րօրօ...օ՞...»:

Ի հարկէ, եթէ ես բնականոն դրութեան մէջ լինէի, ի՞նչ էր որ այս...

— «Խօ՞րօրօ...օ՞...»:

Ականջներիս մէջ անվերջ առանց այն էլ...

— «Խօ՞րօրօ...օ՞...»:

Բո՛րբր... Սարսափահար մի քանի քայլ արի, հանդիպեցի պատի ու ընկայ...

— «Խօ՞րօրօ...օ՞...»:

Ու մտածում եմ, թէ ձայները գետնից են... Ու ինքս ինձ ասում եմ՝ «վերջ տուր, խելքդ գլուխդ հաւաքիր»...

Թժրած, անյոյս տարակուսանքներով համակւած, պատի տակից լսում եմ ոտնաձայն... Ապա հատ ու կտոր թիւրքերէն խօսքեր, որոնք քիչ - քիչ վերածւում են ժխորի... Դուրսը նառերի մօտ մարդիկ կան: Ձախ պատի պատուհանից մերթ ընդ մերթ տարբերում եմ լոյսի աղօտ ցոլքեր:

Յանկարծ, լսեցի.

— Օլա՛ն, շու «մայրիկ», «մայրիկ» տէտիկիւրի գէ՞ տըր...

— «Մայրիկ», եանի քի անա, բացատրեց մի ուրիշը:

— Պապասընտան կուրքուլտուկ, շիմտի անաւընը՞ մի արայի-նաղըգ...

Հրհռոցին յաջորդեց մի ժխոր, որից ոչինչ չէր կարելի հասկանալ: Միաժամանակ լսում էր թմբիթմիոց. կարծես թէ, բարձրանում ու տարածւում են պատշգամբի նառերին: Քիչ - քիչ աղմուկը մեղմանում էր ու գրեթէ մարելու վրա էր, երբ նորից տարբերեցի նոյն ձայնը:

— Օլա՛ն, հայտե՛, եաստըկ օյոււնու օյնայալըմ:

Ու բազմաթիւ «հայտե՛», «հայտե՛» ձայների վրա, նորից սկսեց իրարանցում: Մերթ ընդ մերթ ձայները ընդմիջւում, մարում էին ու լսում էր թմբիթմիոց. ապա, յանկարծ, սաստկանում էին եւ ամէն

բան իրար էր խառնւում, անասելի աղմուկի մէջ... Ըստ երեւոյթին, ինչոր խաղ է, որ գնալով տաքանում էր: Մի քանի վայրկեան այդպէս տեսեց: Ապա նառերը սկսեցին ճարճատել... Միաժամանակ լսեցին հայհոյանքներ. վեր են ցատկում, վար են ցատկում... կռի՛ւ է... Մէկին կարծես պատուհանի տակ խեղդում են...

Ու, յանկարծ, տիրական մի ձայն.

— Օլա՛ն...

Լռութեան մէջ լսում էի ընդմիջւող թմբիթմիոց...

— Օլա՛ն, ուրախիւքսընըգ...

Դուրսը կատարեալ լռութիւն տիրեց:

— Նէրտե՞ տըր չաուշ:

— Էֆէնտի՛մ:

— Նե՞ տըր պու, գէ՞ Էտէպսիզիկ տըր:

— Բէյ էֆէնդի, Արդուլլան ասաց «եաստըկ օյոււնը» խաղանք. սկսեցին խաղալ: Բայց Իսմայիլը բարձի մէջ քար է դրել ու խփել Արդուլլահի գլխին: Արդուլլան էլ ոտքով խփել է Իսմայիլի ամուրձիքներին: Յետոյ Իսմայիլի երկրացիները յարձակւեցին Արդուլլանի վրա, Արդուլլանի երկրացիներն էլ Իսմայիլի վրա ու տո՛ւր, թէ կը տաս...

— Է՛, փեֆ էյի, պէօյլէտէ «եաստըկ օյոււնը» օյու՛ր մի:

— Նե՛ «եաստըկ», գէ՛ «մաստըկ», պէյ, եափաղը, փամբուկ հեփիսի պիր կարըշուրար...

— Իսմայիլ իլերի կէլսի՛ն:

Իրարանցումը խուլ կերպով նորից վերսկսեց...

— Չապու՛կ... գէ՞ տըր պու, գէ՞ կաբապալըկ տըր: Լռութիւն:

— Եւմին Էտէրիմ, քի եաստըկ պէնիմ տէյիլ խոի. պիմիյորըմ քի՞մ աքտը պանա, պէն տէ ալըփ՝ աքտըմ, Արդուլլանին պաշընա տէյտի...

— Դէսէն եա՛, «պաշընա՛ տէյտի»... Նասը՛լ փարգընա վարմա-տըն, քի եաստըկտա տաշ վար... Քիւրէկ գեգաընտան *) կուրքուլ-տըն՝ շիմտի պաշըմըգա պէլա՞ մը օլանակըն...

— Եւմին Էտէրիմ...

— Ֆիքրին գէ՞ տիր, կէնէ մափուսա կիրմէ՞կ իստէյորըն:

— Պէյ էֆէնդի, համո օլտուն Ալլահա...

— Հայտե՛, տէ՛փ օլ... Կալկընը՛գ հեփինիգտէ, շիմտի եալա չը-կանակընըգ...

*) Թիապարտութիւնից:

Թմաթմափոցով նառերի վրա քայլում են, իջնում, բոլորը միասին խօսում են... Դրան մօտից ոտնաձայներ հասան ինձ եւ հաղիւ կարողացայ հասկանալ, որ դալիս են դէպի ինձ, երբ դուռը, յանկարծ, բացւեց եւ միաժամանակ չորս կողմս նորից տարածւեցին նոյն անդնդախոր ձայները:

— «Խօ՞րոյօրօ...օ'...»:

Մարմինս դողից զընդաց, բայց մինչեւ որ ինձ նորից դատայ, ներս մտաւ բարձրահասակ ժանդարմը, նրա յետեւից գերուկ մի ուրիշը, որին աղօտ կերպով յիշեցի, ապա հինգ — վեց ուրիշ մարդիկ, խայտաբղետ հագուստներով ու զինւած: Ոտքի ելայ, պատն ի վեր երկարեցի:

— Պն^ո քիմ տըր, դարձաւ գերուկը բարձրահասակ ժանդարմին, զարմացած նայելով ինձ:

— Մափուս տըր, Կալգատան կէօնտէրիյորլար Գաւալսա, բացատրեց բարձրահասակ ժանդարմը, ձեռքի լապտերը դնելով մուտքից դէպի աջ կառուցւած նառերին: Գետնատարած, հողածածկ մի ընդարձակ սենեակ էր, որի միայն մի երրորդ մասը հաղիւ էին բռնում նառերը:

— Կափույաւ ա'չ, դռնեց գերուկը:

Հաղիւ նկատեցի, որ մուտքից դէպի ձախ, պատի տակ մի փոքր ու ցածրիկ դուռ կայ, երբ այնտեղից լսող խլրտոցը ինձ բոլորովին չլմեցրեց...

Ու, Աստա՜ծ իմ, այն ի՛նչ էր... Գլուխս դառնում էր. պիտի վար ընկնէի, եթէ չկէի պատի տակ. աչքիս լոյսը մերթ խաւարում էր, մերթ բացւում... Իրար յետեւից դրան տակից դուրս էին դալիս ծանօթ մարդիկ... Պետրոսեանը, «Իզմիր» Օթէլի Կարապետը, Թաթարեանը, Եղեկեւեանը, Հաջի՛ն, տնտես աղբար Գարբիէլը, չորրորդ դասարանի բարձրահասակ Մեթլումեանը, դպրոցից ելած ու դերձակ դարձած յաղթանդամ Կիրակոսը եւ ուրիշ շա՛տ շատերը... Իրարու յետեւից դուրս էին դալիս հիւժւած, մոլորւած, մահաւան չափ գունատ, որոնող, հարցնող եւ ծա՛յր աստիճան ամփոփւած ու զգոյշ մի ձեւով... Գրեթէ բոլորն էլ շեշտակի նայում էին ինձ ու անմիջապէս խուսափում... Մեծ մասը ձեռքին, շալակին, թեթեւ բեռներ ունէր... Դուրս եկողին նստեցնում էին. որքա՞ն էին, չգիտեմ. գուցէ յիսուն, վաթսուն մարդ. սենեակը մինչեւ նառերը գրեթէ ամբողջութեամբ բռնւել էր... Քարացել էի ու ի՛նչ ասելս կամ անելս չգիտէի...

— Հիմա պէտք է ճամբայ ելնէք, սայլերը ուր որ է կը հասնին

եւ ամէն մարդ իր ընտանիքի քով կերթայ, ասաց գերուկը ու դուրս ելաւ:

Շէմքի մօտ, միջանցքում, դուրսը նառերին լսւում էին ինձ արդէն ծանօթ ձայներ: Բարձրահասակ ժանդարմը, ներսը մնացած չէթաները ելան նառերի վրա եւ լապտերը կախելով՝ նառերի մէջտեղից մինչեւ առաստաղը երկարող կոճղի պէս հաստ սիւնին, այնտեղից վար առին կապոցներ ու հացը, պանիրը, սոխը կտրտելով սկսան ուտել:

Վարը նստածների համար, կերելի թէ, այլեւս ոչ մի անակնկալ չկար. նրանք աւելի յոգնած, համակերպւած էին, քան նախորդ դաղթի սամսոնցիները: Ոմանք շշուկով խօսում էին մօտ նստածների հետ, ոմանք քակում, կապում կամ շտկում էին իրենց կապոցները, իսկ մեծ մասը լուռ, գլուխները ցից՝ նայում էր ինձ. գլուխս բացասաբար շարժեցի. ի՛նչ պիտի նշանակէր այդ, չգիտեմ... Բայց այժմ բոլորն էլ ինձ էին նայում, իսկ ես վախենում էի ձայն հանել...

— Միւսիւ Վահան, ինտո՞ր հոս ընկար... չչնջաց բոլորից աւելի ինձ մօտ նստած Կարապետը:

— Յետ են տանում, չգիտեմ...

— Ո՛ւրտեղէն յետ բերին ձեզ, հարցրեց Եղեկեւեանը:

— Վարի քաղաքի բանտից:

— Վտանդ կա՞յ վարը...

— Կայ...

— Զարդը սկսե՞ր է... Բոլորովին բնական մի ձեւով հարց տըւեց Թաթարեանը:

— Եթէ անփորձ տեղ հասնէք, աշխատեցէք վարի քաղաքից ոչ մի գնով առաջ չերթալ:

Խօսքերս սպանիչ ազդեցութիւն ունեցան. պէ՞տք էր արդեօք ա՜նէի, թէ չէ՞ չգիտեմ...

— Զե՛ղ ինչու բերին այստեղ, դարձայ ես Կարապետին:

— Ուշ էր արդէն երբ դուրս ելանք Չախալլիէն. ըսին, որ Գաւախում վար պիտի դնեն: Բայց քեցին վար ու դեռ Կարատաղի լեռներին չհասած փոթորիկի բռնւեցանք: Տղամարդկանց սայլերէն վար իջեցուցին. ըսին, որ լեռը ոտքով պիտի գնանք: Լերան գլխին քիչ մը պահեցին, բայց սայլերը չեկան ու հոս բերին, մինչեւ որ սայլերը հասնին: Սարսափելի քամի էր, հաղիւ հաղ տեղ հասանք: Բնաւ յոյս չունէինք, միւսիւ Վահան, թէ ողջ պիտի մնանք, բայց կերելի թէ դեռ քաշելիք ունինք... Աչքդ ի՞նչ է եղած, միւսիւ Վահան...

— Խփեցին...

— Դուք մինչեւ ո՞ւր հասաք, նորից հարց տւեց Եղեկեւեանը:

— Մինչեւ էլէնի...

— Երբեք չեմ կոտորում, յանկարծ, գոռաց ժանդարմը:

Լուսինը: Աչքս մնացել էր դիմացի անկիւնում նստած Հաջու վրա: Յիշեցի քաղաքապետարանը, իմ հանդէպ արտայայտած խնամքը, թրքանալ ցանկացողների դէմ ունեցած բուռն ցասումը: Հաջին քայլի կարող էր դուրս լինել. դիւղացի, քաղաքացի, մեծ, փոքր, մարդ, կին գնում են ու գնում, իրենց խաչերը չալակած...

Յետ նստած ու պատին յենւած՝ Հաջին խաչւածի տեսք ունէր: Գլուխների վառյալ ճրագի լոյսը մերթ ընդ մերթ ընկնում էր նրա դուռնատ դէմքին: Աչքերը լայն բացած ու կենտրոնացած, նա նայում էր ինձ: Բա՞ն էր ուզում ասել՝ չգիտեմ: Նստած էր քիչ ծուռ ու թեք: Որքա՞ն փոխւել էր, Տէր — Աստուած. դէմքը կմախքի դէմք էր դարձել. կարծես, թէ մեռած է եւ միայն աչքերն են ապրում: Դեղին — կարմիր մորուքը ծուլել էր, մազուտ կուրծքը բաց էր, Ֆէսը իջել էր ճակատին: Յանկարծ, նա գլուխը վեր հանեց ու, աղօտ լոյսի տակ, հին սրբի պատկերի պէս խիստ դէմքով, շեշտակի նայեց վրաս... Շանթահա՛ր եղայ, կարծես թէ ինձնից դժգոհ է... Արդեօք ի՞նչ էր ուզում ասել... Հաջու աչքերը լայն — լայն բացւած մի ակնթարթ փայլատակեցին... Ձեռքով, կարծես թէ, ուզում է խաչ անել, բայց փայլատակեցին... Հաջին նայեց, նայե՛ց ու, յանկարծ, բոլորովին կեց...

Դուրսը իրարանցում կար: Ներսը՝ աճող անհանգստութիւն ու խենթութեան հասնող անհամբերութիւն:

— Եկա՛ն...

— Հասա՛ն...

— Մերո՞նք են...

— Ի՞նչ կըսես...

— Ձե՞ս լսեր...

— Փա՛ռք Քեզ, Տէր...

— Աստուած իմ, Դո՛ւ...

Վայրկեանի մէջ սայլերի ճռնչը, կանանց կանչերը, սայլապանների հարայնոցները դուրսը այնպիսի ժխոր ստեղծեցին, որ ոչինչ հասկանալ հնարաւոր չէր: Ձէթաները վար իջան, դուրս ելան: Ժանդարմը, նաուերի վրա կանգնած, դեռ ծամում, ծամծամում էր, լսատեղը ձեռքին: Շէմքի մօտ յայտնւեց գիրուկը.

— Հայտե՛լ, տիշարիա...

Բոլորը մէկ ոտքի ելան ու խմբւեցին դրան մօտ... Նստած տեղս,

կարծես թէ, հոլի պէս դառնում էի. մի պահ ո՛չ տեսայ, ո՛չ լսեցի. ապա ներսը, դուրսը, ամէ՛ն բան իրար խառնւեց... Մէկը ինձ մօտեցաւ ու մի կտոր հաց տւեց... Մեծլումեանն էր, որ հակառակ փոքր տարիքին, շարքի մէջ կանգնում էր վերջին դասարանի աշակերտների հետ... Եւ, յանկարծ, նկատեցի, որ նաուերի վրա ցցւած ժանդարմից բացի, սենեակի մէջ է՛լ ուրիշ մարդ չկայ...

— Գալգ սէնէ՛... գոռաց նա: Ես ելայ: Բայց, յանկարծ, ժանդարմը վար ցատկեց ու լսատեղը ձեռքին կանգ առաւ անկիւնում... Հաջին կքած մնացել էր... Ժանդարմը ճրագի տակ նայեց, տնողեց նրան, փորձեց վեր հանել գլուխը: Հաջու կքած ստեղծ պատի վրա երկարեց: Ժանդարմը յետ քաշւեց, մի պահ չար նայեց, ապա մօտեցաւ չէմքին.

— Օլա՛ն հէ՛յ, քիմ վար տըր կէլսըն...

Դուրսը դեռ իրարանցումը շարունակւում էր: Ներս մտան երեք զգգւած թիւրքեր: Կարծես, թէ մէկին պէտք է խեղդեն կամ բղրկտեն: Ժանդարմը, Հաջու մօտ կկղած, լսատեղի տակ ցնցում էր նրան.

— Օլա՛ն, պու հալիֆ կէօրուֆիք, քի էօլմիշ տըր... կալտըրի-նիգ... Ձէֆինի՛գ... Տիշարիա՛, տիշարիա,,,

Հաջին, իրօք, մեռել էր: Գլուխը ձախ էր ընկել: Վեր ցցւած, կմախքացած թեւերը անկենդան երերում էին. անդամալոյծ ոտքերը յետ էին մնում մարմնից... քաշքշելով դուրս տարան: Յանկարծ դուռը վրաս շրխկաց եւ ամէն բան խաւարեց...

Ու այն երբ էր՝ չգիտեմ, որ գլուխս վեր առի գետնից եւ համատարած խաւարի մէջ, անկիւնում նկատեցի մի մարդ, որ մերկ դաստակի վրա խշխշոցով դարձնում էր խոշոր համրիչի պէս մի կապ:

— «Դու ո՞վ ես», ասացի ես:

— «Ձե՞ս յիշում»...

Ոչ, ես նրան չեմ յիշում:

— «Գաջաջն եմ»...

— «Եւ ի՞նչ ես դարձնում», ասում եմ ես անսովոր համրիչի խըշխոցից զարմացած:

— «Չորացած ականջներ են: Քո ընկերով ականջներն էլ այստեղ են. կուզե՞ս ցոյց տամ»...

— «Օ՛, գիտեմ, գիտեմ, մի ցուցնիլ, մի դարձնիլ, հերիք է», ասում եմ ես, եւ քունը դարձեալ համակում է ինձ...

**

— Գա՛լգ...

Երազի պէս շարունակ հասնում է ականջներին այս խօսքը.

— Գա՛լգ...

Մի թեթեւ դող, քերքերելով կաշին, ինձ արթնացրեց: Մօտս կկզած էր սալլապանը: Քիչ անդին, հրացանի խողովակից բռնած, կանգնած էր բարձրահասակ ժանդարմը: Խոր մթնշաղի պէս մի լոյս կար սենեակում: Ու չգիտեմ, թէ ի՞նչ է տեղի ունենում:

— Գա՛լգ, շիմտի կիտէնէյիգ:

— Ո՞ւր...

— Գաւախա, Գաւախա, գա՛լգ:

Հազիւ ուզեցի վեր կենալ, երբ, յանկարծ, նկատեցի դէմի ցած-լիկ բաց դրան մոտ խորշը եւ վախը ինձ այնպէս մտրակեց, որ ծընկներս կքեցին եւ յետ ընկայ:

— Հարիփ տիվանէ տըր, ասաց ժանդարմը:

— Սօռգ ալմըշտըր, ասաց սալլապանը:

Այն ժամանակ ես ելայ: Մարմինս ցրտից զնգնդում էր, պաղած մկանունքներս ցաւով էին բացւում եւ ամէն տեղ ծածկւում էր:

Դեռ նեղ անցքին մէջ սալլապանը առաջ անցաւ եւ թէ ո՛ւր գնաց՝ չգիտեմ: Դուրսը, նառերի վրա, չորս կողմը պարզեց մի արտասու-վոր տեսարան. անհաշիւ փետուրներ, բուրդ, բամբակ, բղկտած բարձի երեսներ, քուրջներ ցաք ու ցրիւ թափւած, փակած էին դետ-նին ամէն տեղ... Որքան էլ անիմատ եւ անհասկանալի էր այդ տե-սարանը, բայց մտքերս, իրենք իրենց, լարւած զսպանակների պէս, զանազան ուղղութեամբ ցատկոտելով, քիչ – քիչ պարզում էին ամէն բան...

— «Բարձի խա՛ղը»...

— Այստեղ նստիր մինչեւ սալլապանը գայ, ասաց ժանդարմը ցոյց տալով նառերի ծայրը:

Նստեցի: Իսկ ինքը, չորս – հինգ քայլ առաջ անցնելով, ուշա-դիր նայեց դէպի ձախ, դէպի աջ, ապա ծուլօրէն յետ դարձաւ ու ինձնից քիչ հեռու տեղ բռնեց նառերին: Աչքիս տակով տեսնում էի, որ փամփուշտակալը կարգաւորում էր, ապա հրացանի կոթը դրաւ ծունկին ու սկսեց բլթակը շիկշիկացնելով շարժել: Ձայնից հասկա-նում էի, որ հրացանը իւղած է եւ բլթակը լաւ է բանում, բայց մի բան արգելում էր ինձ նայել. «Ձնայիս, հա՛...» պարզորոշ ասում էր ինձ մի ներքին ձայն: Յանկարծ, ժանդարմը հրացանը դրաւ ճիշտ մօտս, նորից չորս – հինգ քայլ առաջ գնաց ու թիկունքով դէպի ինձ

թեք կանգ առած՝ սկսեց նայել դէպի աջ: «Լցրեց, թէ պարպեց հրա-ցանը», մտածում եմ ես... «Եւ ինչո՞ւ դրաւ մօտս»...

— «Որպէսզի վերցնեմ եւ պարպեմ վրան»...

— «Որպէսզի վերցնեմ եւ պարպեմ վրաս»...

— «Որպէսզի վերցնեմ... Որպէսզի՛ վերցնեմ»...

— «Որպէսզի... Վերցնեմ»...

— «Որպէսզի վերցնեմ եւ վրա հասնի ինձ ջարդի»...

Ու հետաքրքիր եմ, թէ ի՞նչ պիտի լինի...

Ժանդարմը դառնում է ու թեւն անցնելով հրացանը՝ գնում դէ-պի աջ:

Լոյսի ճաճանչները առասպելական սանրի նման չի՛թ – չի՛թ ճեղ-քում էին խաւարը: Ձայն ունի՞ արդեօք լոյսը՝ չգիտեմ: Բայց թը-ւում էր, հազարաւոր աքաղաղների հեռաւոր կանչի արձագանգը, յաւիտենական «ղո՛ւ»-ի պէս, կախած մնացել է աղջամուղջի փեշե-րին: Լոյսի անհաշիւ բշտիկները օդն էին ցնդում ամէն տեղ: Ու կա-պոյտի կաթնաման ալիքները ծա՛լք – ծա՛լք հալածում էին խաւա-րը: Երջապատը այնքա՛ն լուռ էր, որ կարծես, թէ խուլ էի: Համա-տարած անշարժութեան մէջ միայն մառախուղն էր երբեք, որ բամ-բակի քուրջներով լեռնադաշտին թաւալւելով, սեպածեւ լեզուներով երկարում էր դէպի վեր: Տեղ – տեղ նրա լեզակները մտնում էին բոցերի մէջ ու նազանքով լիզում քարերի, բլրակների լանջերը:

Դողը թէեւ դեռ վրաս էր, բայց արդէն հասկանում էի ամէն բան: Անհրաժեշտ էր միայն մի քիչ յետ ու առաջ գնալ, պաղած մարմինս շարժել: Քայլելով դէպի ձախ, մինչեւ պատշգամբի ծայրը, դամւած մնացի տեղս: Վարը, դաշտի մէջ, չէնքի պատի ուղղութեամբ մի սալլ կար: Երեք կին, մի աղջնակ նստած էին սալլի մէջ: Մէկը, որ վզին ձերմակ շալ ունէր, իրար անցաւ եւ բոլորն էլ նայեցին դէպի ինձ: Քայլերս ուղղեցի դէպի սալլը: Բայց հազիւ մի քանի քայլ էի արել, երբ, յանկարծ, մէկը յետեւից գոռաց.

— Ո՞ւր ես գնում...

Հասած տեղս մնացի. ժանդարմը մօտեցաւ եւ նայեց աչքիս մէջ.

— Ալլա՛հ, Ալլա՛հ... Ի՞նչ ես նայում... Հիմա՛ գնա տեղդ, թէ չէ միւս աչքդ էլ ես կը քոռացնեմ...

Ու քայլերը ուղղեց դէպի սալլը: Ես յետ դարձայ ու նախկին տեղը նստեցի: Միաժամանակ բոլոր քրքրւած մտքերս չքացան ու տեղի տւին մէկ հարցի առաջ.

— «Ովքե՞ր են»... Ու մտածում եմ, թէ թաղի մէջ, ո՞ր ընտա-նիքն է երեք կին, մէկ աղջնակ...

ծորալ: Եւ նոյն ձեւով արիւնաքամ էր լինում միւս ոտքս. մարմինս
զօտիւնից վար ծանրացաւ ու լէշի պէս փակաւ սայլին...

— Ո՞ւր ես տանում ինձ, էֆէնդի...

— Գաւախտ', Գաւախտ':

— Ո՞րտեղ է Գաւախտ'...

— Շիւտի եթըշըրըգ...

Յանկարծ, սայլը կանգ առաւ ու դղրդոցը բռնեց չորս կողմս.
Երարու յետեւից մի երկար շարքով վերեւից իջնում էին սայլեր եւ
արագութեամբ անհետանում: Թմրութիւնը նւաճում էր ինձ: Երբեմն
մի ձայն, մի շարժում, սայլի մէջ նստած տարագիրների միջից, ինձ
զգաստացնում էր ու մերթ ընդ մերթ թւում էր, թէ ծանօթ մարդիկ
են. բայց ակնթարթի չափ կարճ էր տեսում այդ: Յանկարծ լսեցի.

— Միւսիւ Վահան'...

Ապա իրարու վրա.

— Միւսիւ Վահան'...

— Միւսիւ'...

— Միւսիւ'...

Բայց ոչ ոքի չկարողացայ տեսնել, հասկանալ: Քունը ինձ յաղ-
թահարում էր եւ լսում էի միայն աստիճանաբար մարող դղրդոց...

Սայլը երբ շարժեց, ես սթափեցի...

— Լսի՛ր, էֆէնդի, ճիշտն ասա՛, ո՛ւր ես տանում ինձ...

— Վալլաի բիլլա՛հ, Գաւախտ':

— Ո՞ւր է Գաւախտ', ցոյց տուր ինձ:

Մարդը դարձրեց սայլը եւ փայտը երկարեց դէպի վեր.

— Պա՛ք, շիւտի եթըշըրըգ:

Բայց մեր դիմացը ցցած լեռից զատ ուրիշ ոչինչ տեսայ: Մարդը
նորից դարձրեց սայլը եւ փայտելով, խրախուսելով եղներին, քեց:
Գիտակցում էի, որ մահս անխուսափելի է, բայց եւ ապրելու մի ա-
ղօտ յոյս դեռ մնում էր մէջս.

— Ո՞րքան մնաց Գաւախտ', էֆէնդի'...

— Ագ կալտը, շիւտի եթըշըրըգ:

Հասկացայ, որ հարցումներս անօգուտ են... Արեւն արդէն մայր
էր մտել կամ թաղնել էր լեռների տակ ու թէեւ տոթը դեռ երերում
էր օդի մէջ, բայց զնալով աւելի ու աւելի պաղում էր: Արիւնը գլխիս
կապերի մէջ թանձրացել էր այնպէս, որ տեղ — տեղ ենթարկւում էր
հալման: Անցած ճանապարհից տեսնում եմ, որ մազլցում ենք լեռը
ու բարձունքը այնքան կտրուկ է, որ սայլի մէջ գրեթէ կիսով չափ

նստած դիրքի մէջ եմ: Այս անգամ սայլապանը ինքը մօտեցաւ եւ դո-
հունակութեամբ դռնեց.

— Հէ՛չ ֆիքիր էդմա, պիրագտան եթըշըրըգ:

Բայց այժմ արդէն չա՛տ էի թուլացել ու նոր էր միայն գլխիս
մէջ միտք ծագում, թէ ի՞նչ հաշիւ կար Գաւախտում մահից փրկութիւն
յուսալ...:

Սայլը շատ դանդաղ ու դժւարութեամբ էր վերեւ բարձրանում:

Քունը ինձ ա՛յնպէս էր յաղթահարում, որ միայն սայլի ուժգին
ցնցումներից էի սթափւում ու մերթ ընդ մերթ տեսնում չէնքերի բե-
կորներ, սայլի հետ քայլող թուրք փոքր տղաներ, այստեղ ու այնտեղ
կանդ առած թիւրքեր...

Սայլը չէր գնում: Մի փոխիս, մի մարդ բան են հարցնում. ոչինչ
չեմ հսկանում, քունը նւաճում է ինձ...

Նորից արթնացայ, երբ սայլը դառնում էր: Չորս կողմս անհա-
շիւ խուլ ձայներ կային: Թւում է, թէ ինձ յետ են տանում ու երբեմն
տեսնում եմ մարդկանց բաղմուտիւն...

Այժմ սայլը նորից չի գնում: Մի կին վրաս թեքած աղիողորմ
ճչում է.

— Զաւա՛կս, զաւա՛կս, աս ի՞նչ բրին քեզ...

Այնքա՛ն ձայնը ծանօթ էր, որ ճիշդ դորձադրեցի տեսնելու.
Ալէմշահ — հանումն էր, տանտիրուհիս: Մի ամօքիչ ու սփոփիչ
փայրկեան էր այդ: Բայց, յանկարծ, մի ձիաւոր ժանդարմ, աղմու-
կով ճեղքեց մարդկանց շարքը ու մտրակի մի ուժգին հարած իջեցրեց
նրա մէջքին. Ալէմշահ — հանումը մի սուր ճիչ արձակեց ու փախաւ...

Ապա զգացի, որ ինձ սայլից առին ու տարան... Ու լսեցի.

— Օ՛ հաւա, օ՛ հաւա...

Ինձ վար դրին մի սենեակի յատակին: Աջ ու ձախ կանգնած էին
մարդիկ, որոնց ձայները հասնում էին ինձ կոկորդալուր երգի ձե-
ւով... Ու այլեւս ոչինչ չտեսայ...

Մէկը պատառուտում, հանում էր վրաս փակած հագուստներս.
Երկար ու փարակ բրդբրդում ու քաշքշում է ճերմակեղէնիս զօտին...
Ապա համր լուծեան մէջ երազի պէս լսում եմ ոսկիների զնգոց ու
մի ձայն.

— Պաքընը՛գ, էֆէնդիլէր, պի՛ր, իֆի՛, ի՛ւչ...

Բելգրադ

ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱՆՊՐԱՆԻԿՆԵՐ ՄԻՆԵԱՅ ԵՐԿՐՈՒՄ

է.

ՂԱՐԱԲԱՍՂԻ ԽՆԴԻՐԸ

Բուն Ձանգեղուրի շրջանի կարգապահութիւնը, որ Անդրանիկի հեռանալուց յետոյ խանդարւած էր, կրկին վերականգնուած էր: Ղափանի ներկայացուցիչները հաստատեցին, թէ տակաւին Մեղրիումն են գտնուում հարւածող զօրամասից անջատուած երրորդ գումարտակի հրամանատար բժիշկ Բօնապարտեանը եւ ձիաւորների հարկւրեակի հրամանատար Ջէրէջին իրենց տղաներով: Բարեբախտաբար, Մեղրիի շրջանն էլ անձնատուր չէր եղել, չնայած որ թիւրքերը քանիցս դիմել էին: Մի անգամ նոյն իսկ տաճիկները ցանկացել էին խաբել հայերին եւ առաջարկել էին բանալ Օրդուբատից դէպի Ձանգեղան տանող ճանապարհը, սակայն, հայերը իբր պատասխան այդ առաջարկին, ուղարկել էին մի փամփուշտ:

Հոկտ. 19-ին արդէն բաւարար ուժերով գրաււած ենք ինքնապաշտպանութեան կարեւոր կէտերը. ուստեւ նոյնպէս կանոնաւորուած է, իսկ պահեստի ուժերը ենթադրածից աւելի շատ են: Անդրանիկը այդ օրը անձամբ մեկնեց Քարաչէն գիւղը, ուր պահեստի ուժերն էին կենտրոնացած:

Քարաչէնը, աշուղների այդ պատմական գիւղը, Գորիս - Տեղ խճուղուց քիչ հեռու է ընկած, ձորի մէջ. գիւղի տների մեծ մասը քարաչէն է, կան եւ այնպիսիները, որոնք պատ չունին, ուղղակի լեռան ծոցի մէջ բացւած ծակեր են, որոնք վերածւել են տների. մի տեսակ քարանձաւներ: Այդպիսի շատ տներ կան եւ Հին Գորիսում: Ճակատների բոլոր գիւղերը հեռախօսով միացած են Գորիսի հետ, որ, այսպէս ասած, ռազմական գերագոյն կայանն էր: Գորիսից այդ օրը Արշակ Շիրինեանը հեռախօսով յայտնեց Անդրանիկին, թէ Դաշնակիցները գրաւել են Չաթալջան, ապա Երեւանից Գորիս է գալիս

գլխապետ Պ.-ն, իսկ Սիսիանից թուրքերը անակնկալ կերպով հեռանում են...

Քարաչէնում կազմեցին պահեստի Ա., Բ. եւ Գ. վաշտերը: Անդրանիկը մեկնեց Տեղ գիւղը: Խճուղուց երեւում է մի խոր ձոր ոչ շատ հեռու՝ Ջարուղը, ապա պարզ երեւում է Մարքիզ սարը, որ իշխում է շրջակայքի վրա. երեւում է եւ Հազարուի ձորը, Մարքիզի միւս կողմում: բարձրութեան վրա երեւում է խճուղին, որ տանում է դէպի Ղարաշլաղ գիւղը: Երեւում են լեռները եւ վանքը, իսկ հարաւում փռւած են Ձանգեղանի դաշտն ու պատմական Փայտակարն - Ղարադաղի լեռները, Արաքսի աջ ափին, Պարսկաստանում:

Տեղն էլ ձորի մէջ է. տները նոյն տեսակ են շինւած, ինչպէս եւ Քարաչէնում. փողոցները՝ ցեխոտ, ջուրը՝ սակաւ: Գլխապետ Պ. ներկայացաւ եւ հաստատեց Շիրինեանի հաղորդածները: Բայց որքան քաղաքական արտաքին լուրերը սրտապնդէ էին, նոյնքան ցաւալի էին տեղական ներքին հաղորդագրութիւնները: Գողթն գաւառի Բիստ, Նասրվան, Փարակա եւ Ռամիս գիւղերից բացի՝ շրջանի միւս հայկական գիւղերը ընդունել էին տաճիկների իշխանութիւնը, զինաթափ էին եղել եւ վատ վիճակումն էին: Թիւրքերը պաշարել էին գիւղերը եւ պահանջում էին տուգանք, պարէն, աղջիկ եւ այլն: Օրդուբատում նստող Խալիլ պէյր 87,000 ռուբլի տուգանք էր դրել Յղնայի վրա, որից 65,000 ստացել էր գոհարեղէններով եւ այլն, որ Ագուլիսն էր յանձնել. նմանապէս թշնամուն էին յանձնել հրացանները, փամփուշտները եւ ատրճանակները:

Հոկտ. 21-ին Ղարաբաղից կարեւոր լուրեր հասան: Խճաբերդ գիւղից երեք սուրհանդակներ եկան, որոնք գրութիւն էին բերել Դիզակի շրջանի հրամանատար Արտեմ Լալայեանից: Ըստ այդ գրութեան՝ Շուշին անձնատուր էր եղել տաճիկներին առանց մի գնդակ արձակելու. քաղաք էին մտել տաճիկական եւ թրքական միացեալ ուժերը, 1500 զինուոր, 4 թնդանօթ եւ 12 գնդացի: Ղարաբաղի գիւղերը չեն ենթարկւել տաճիկներին եւ ճարտար գիւղի շրջանում կռիւ կայ:

Երկու օրից յետոյ հասան նոր սուրհանդակներ. Շուշուց բացի՝ բոլոր շրջանները՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ եւ Լեռնային Գանձակն ու Գարտմանը չէին ենթարկւել տաճիկներին: Գնացին Կոռինձոր սահմանային քաղաքի գիւղը, ուր գալիս էին Խճաբերդի վրայով Ղարաբաղի սուրհանդակները. գիւղը շատ էլ մեծ չէ, գտնուում է ձորի մէջ, բաղկացած 120 տնից: Այդտեղից անցանք Խընձորեակ. ճանապարհը բաց դաշտի միջով է. հայաբնակ շրջանը

Թուրքաբնակ մասից բաժանուում է մի ձորով, որից դէնը երեւում են Թրքական գիրքերը:

Խնձորենակի ծայրում, հարաւ — արեւելեան կողմը, մի մատուռի մօտ, գտնուում է մի համեստ գերեզմանաքար, որի վրա պարզ գրւած է՝ Մխիթար սպարապետ Գաւառիցի: Անդրանիկը եւ մի քանի սպաներ ու պաշտօնեաներ միասին դիմեցինք դէպի քաջարի նահատակի օթեւանը, ուր մի քահանայ օրհնեց սպարապետի մամուսպատ գերեզմանը, որ 1729 թւից ի վեր անխօս քարոզիչ է հայրենասիրութեան եւ վեհ քաջութեան...

Հոկտ. 28-ին հեռախօսը ձայնեց Տեղ գիւղից, թէ Ղարաբաղից նոր սուրհանդակներ են հասել: Երկու ժամից յետոյ նրանք արդէն Գորիսումն էին: Մէկը Հարար գիւղացի մի առնական ծերուկ էր, որ Ղարաբաղի բարբառով համով — հոտով պատմում էր, թէ ինչպէս Ղարաբաղի շրջանները չեն ենթարկւել Օսմանլուի եւ թէ ամենքը փափագում են, որ Անդրանիկ փաշան ոտը դնի Ղարաբաղ: Երբ Անդրանիկը հարցրեց, թէ ի՞նչ կուզէ իբր վարձատրութիւն իւր վտանգաւոր ճամբորդութեան համար, նա պարզօրէն պատասխանեց. «Մի հատ մօսիւն, եթէ աղան (Անդրանիկը) կամենայ»:

Այդ պատկառելի ծերունին նամակների փոխարէն հանդարտօրէն մեկնեց իր ձեռքի գաւազանը, առանց մի խօսք ասելու: Եղիշէ Քաջունին անմիջապէս քանդեց գաւազանի ծայրը եւ միջից հանեց նամակները, որոնք շատ կարեւոր էին: Վարանդայի հրամանատար Սոկրատ Բէկը հաղորդում էր Անդրանիկին, թէ տաճիկները ինչպէս մտան Շուշի, իսկ «չրջանը զինաթափ չեղաւ, Վերին ու Ներքին ձորատար գիւղերը մերժեցին տաճիկների վերջնադիրը, որից յետոյ Շուշուց 400 զինուորներ 4 թնդանօթով եւ 6 գնդացիքով յարձակւեցին այդ շրջանի վրա, բայց բոլորն էլ ընկան կազմակերպւած ծուղակի մէջ, կոտորւեցին, գերւեցին, եղան եւ փախչողներ. թնդանօթներն էլ, ինչպէս եւ գնդացիները ընկել են հայերի ձեռքը, միայն փչացած վիճակում»:

Սոկրատ Բէկը յայտնում էր նոյնպէս, որ ընդհանուր Ղարաբաղը վճռած է կուել մինչեւ վերջ եւ այդ նպատակով արդէն կազմակերպւած են շրջանների հրամանատարութիւնները, որոնք կարող են հանել մինչեւ 15,000 զինւած մարտիկներ, միայն թէ զօրավար Անդրանիկը շարժւի դէպի Շուշի:

Գաւազանի միջից դուրս եկաւ եւ մի գրութիւն, ուղղուած Դիւղակի հրամանատար Արտեմ Լալայեանից զօրավար Անդրանիկին, ու-

րով հրաւիրում էր գալ իր շրջանը եւ խոստանում էր ամէն ինչ հայթաթել:

Այսպիսով ուրեմն արշաւանքը դէպի Ղարաբաղ օրերի խնդիր էր դառնում: Բայց պարզ երեւում էր, որ Անդրանիկը այնքան էլ չի շտապում դէպի Ղարաբաղ. նախկին հայդուկը այժմ՝ զգուշաւոր դրավար էր դարձել. բացի դրանից նա մի գաղտնի առելութիւն էր տածում՝ դէպի Ղարաբաղցիները ա'յն չարաբաստիկ օրից ի վեր, երբ էրգրում ի տակ մի խումբ Ղարաբաղցի զինուորներ, վարակւելով իրենց ուսու ընկերներից, «դէպի տուն» էին գոռացել եւ Անդրանիկի մարտակոչներին պատասխանել էին մի համազարկով, թէպէտ օդի մէջ, բայց ուղղւած դէպի Սաանոյ հերոսը...

Ա. Շիրինեանի եւ ուրիշների յորդորներով, Անդրանիկը վերջ ի վերջոյ, տեղի տւեց եւ սկսեց պատրաստւել արշաւանքի: Կարգադրեց, որ Սիսիանից Գորիս փոխադրւեն Շուշու վաշտը եւ գնդապետը: Զօրքերը կեդրոնացան Գորիսում՝ կազմակերպւելու համար փառաւոր արշաւանք դէպի Ղարաբաղի մայրաքաղաքը: Չնայած ստեղծւած խանդավառ մթնոլորտին, Անդրանիկը այնուամենայնիւ տատանւում ու ձգձգում էր, որ ուրիշ դէպքում բնաւ յատուկ չէր նրան: Զօրամասի բոլոր վաշտապետները գրաւոր դիմում արին Անդրանիկին, որ անյապաղ արշաւէ դէպի Ղարաբաղ, բայց նա շարունակում էր ձգձգել: Անդրանիկը երկու կէտի պատասխան էր ուղղում գրաւոր կերպով: 1) Վստահ լինել, թէ ամբողջ Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան ցանկութիւնն է, որ Անդրանիկը Զանգեզուրից օգնութեան երթալ Ղարաբաղի ժողովրդին: 2) Արդեօք Զանգեզուրի ժողովուրդը ուղղում է ամէն միջոցներով, մարդով, ռազմամթերքով ու զրաւաններով օգնութեան երթալ Ղարաբաղին: Ի զուր համոզում էին նրան, թէ արդէն այդ երկու կէտերի պատասխանները ձեռքի տակ ունի գրաւոր, քանի որ Սոկրատ Բէկի եւ Արտեմ Լալայեանի նամակները պարզ արտայայտում են Ղարաբաղի զինւած ժողովրդի կամքը: Նմանապէս, Անդրանիկի համար լոյսի պէս պարզ էր, որ Զանգեզուրի համայն հայ ժողովուրդը ջերմօրէն ցանկանում է, որ այդ արշաւանքը սկսւի որքան կարելի է շուտ: Ազգային Խորհուրդն էլ նոյն տեսակէտն էր պաշտպանում եւ յորդորում էր օր առաջ սկսել արշաւանքը. յապաղումը կարող է ճակատագրական հետեւանք ունենալ: Այդ մասին կան կենդանի վկաներ, ինչպէս՝ Ազգային Խորհուրդի նախագահ Բժ. Միքայէլ Պարոնեանը, Անդրանիկի զօրամասի բժիշկ Ռուբէն Տէր — Ստեփանեանը եւ անձնական քարտուղար Եղիշէ Քաջունին:

Կամակոր Անդրանիկը գրեց Ղարաբաղ, որպէսզի նման կարեւոր

եւ պատասխանատու քայլի համար արտայայտւի ժողովուրդը իր ներկայացուցիչներին միջոցով եւ հրաւերն անհատական բնոյթ չկրէ։ Տեղի ունեցաւ եւ Զանգեզուրի համագումարը, որ, ի հարկէ, որոշեց ամէն կերպ օգնութեան հասնել Ղարաբաղին։

Հոկտ. 31-ին Զանգեզուրի համագումարի որոշումները եւ այլ կարեւոր հրահանգներ ու տեղեկութիւններ գրեցին կտաւի վրա, որ կարեւոց հաղուստի մէջ, որպէսզի սուրհանդակները տանեն Ղարաբաղ։ Օրէց — օր Շուշուց եկողներին թիւը շատանում էր։ Տեղ գիւղից հաղորդում էին, թէ 13 հոգի զանգեզուրցիներ են հասել այնտեղ, Գորիս գալու համար։

Նոյեմբ. 1-ին Շուշուց դուրս եկած զանգեզուրցիները Գորիս հասան եւ հաղորդեցին, թէ Պոլիսը գրաւած է, եւ Գերմանիան էլ զինաթափ է եղել։ Տաճիկների կորուստները Ղարաբաղում, Մամաչի ձորում, իրական են։ Շուշում ձերբակալւած են կարեւոր գործիչները եւ բանտն են նետւած։ Տաճիկների տրամադրութիւնը խիստ ներքեւ է. Թիֆլիզից Շուշի փոստն աշխատում է, բայց տաճիկները վերջին փոստի թերթերը հայերին չեն յանձնել։

Երեւանից էլ այդ օրը նամակ ստացւեց, ըստ որի Խալիլ փաշան յետ է կանչել Գանձակում գտնուող Նուրի փաշային. միւս կողմից էլ Վրաստանը վերջնադրով պահանջում է Հայաստանից՝ մինչեւ Շահալի յանձնել իրեն...

Նոյ. 8-ին պատահաբար Երեւանից եկող մի Սիրիանցի նամակներ եւ տեղեկութիւններ է բերում. յայտնի դարձաւ մեզ համար, որ տաճիկական դահլիճը Պոլսում ընկել է եւ Տաճկաստանը զինադադար է կնքել։

Բանից դուրս եկաւ, որ Դաշնակից ներկայացուցիչները արդէն Վլադիկավկազ են հասել եւ այնտեղից շուտով կը դնան Թիֆլիզ։ Գերմանական զորքերը սկսել են հեռանալ Վրաստանից. իբր թէ Ռուսաստանը չի ճանաչել Բրեստ — Լիտովսկի դաշնագիրը եւ եօթ օր միջոց է տւել տաճիկներին քաշելու մինչեւ 1914 թւի սահմանները...

Նոյ. 9-ը սգի օր էր ամենքիս համար. տեղի ունեցաւ Ոսկան Ստեփանեանի թաղումը։ Քեմալի գաւառի Բաղառիճ գիւղացի, Ռուսմանիայից եկած մի կամաւոր, համակրելի եւ շատ եռանդուն երիմաստան էր, որ իր անուշ բնակութեան շնորհիւ սիրւած էր զինակից-տասարդ, որ իր անուշ բնակութեան շնորհիւ սիրւած էր զինակիցներին կողմից։ Գնդացի — զօրամասի հրամանատարներից մէկն էր եւ Սիրիանումն էր գործում, ուր խիստ մրսեց եւ ծանր հիւանդ վիճակում եկաւ Գորիս։ Այստեղ թէպէտ բժշկական օգնութիւն հասցըրին, բայց արդէն ուշ էր. անողոք հիւանդութիւնը խլեց Ոսկանի ծա-

ղիկ կեանքը։ Դէպի Ղարաբաղ կատարելիք մեծ արշաւանքի մեր անդրանիկ զոհն էր։ Այդ օրը եկեղեցում եւ գերեզմանատանը ասեղ ձգեցին տեղ չկար...

Նոյեմբ. 11-ն է, սակայն լուրերը Ղարաբաղից ուշանում են։ Պարզեց, որ տակաւին ծերուկ սուրհանդակը նստած է Կոռնիձորում, որովհետեւ Հազարուի ձորի խիտ մշուշը արգելք էր հանդիսացել ճամբայ ընկնելու։ Անհամբեր են բոլոր շուշեցի սպաները, խմբապետներն ու զինւորները. բոլորի ցանկութիւնն է օր առաջ հասնել օգնութեան Ղարաբաղին, որ կուսխնձոր էր դառնալու Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ։ Մեր հայրենակիցներից խմբապետ Աղաջանը եւ տեղակալ Արշակ Բալասանեանը յանձն առին անցնելու Ղարաբաղ իբր սուրհանդակներ։

Նոյեմբ. 15. սպասողական վիճակը ջղայնացնում է Անդրանիկին էլ, եւ նա այդ օրը կազմակերպեց արհեստական տագնապ. իբր թէ լուր է ստացւել, որ տաճիկները առաջանում են Ղարաղլաղի կողմից դէպի Տեղ գիւղը։ Անդրանիկը հրաման է արձակում, որ տասը լուսկում բոլոր զօրամասերը թողնեն Գորիսը եւ կազմ ու պատրաստ մեկնեն Տեղ։ Զօրքը շտապում է կատարել հրամանը, իսկ Ժողովուրդը մնացել է չարած եւ չի իմանում, թէ ինչ անակնկալ է այդ։ Զօրամասը իր բոլոր հրամանատարներով, ղեկավարութեամբ Անդրանիկի, անմիջապէս քաղաքից աճապարեց դէպի Տեղ եւ մի քիչ յետոյ երգ ու տաղով վերադարձաւ Գորիս։ Ամենքը ուրախացան եւ հասկացան բանի էութիւնը։

Նոյեմբ 16-ը դարձաւ բնական տաղնապի օր. Խնձորեսկ գիւղում բանակ դրած հեծելազօրի երրորդ հարիւրեակի խմբապետը 10 ձիաւորով հետախուզութեան էր դուրս եկել դէպի Թրքական դիրքերը. թուրքերը յարձակւել էին ձիաւորների վրա, եւ կռիւ էր սկսւել, որի հետեւանքով Կոռնիձորից հեծելազօրի երկրորդ հարիւրեակը եւ զօրքի երկրորդ վաշտի մի մասը դիմել էին կռիւ վայր։ Այս լուրը չափազանցւած ձեւով հասաւ Գորիս, եւ Անդրանիկն անմիջապէս օժանդակ ուժեր ուղարկեց Խնձորեսկ։ Դրութիւնը շուտով պարզեց, երբ արդէն կռիւը դադարած էր։

Նոյեմբ. 21-ին, վերջապէս, լուր հասաւ, որ Ղարաբաղ գնացածները վերադարձել են, միայն այնտեղ մնացել է տեղակալ Արշակը։ Սուրհանդակները գրաւոր հրաւերներ են բերել Ղարաբաղ արշաւելու. թղթերը ստորագրել են Խամսայի մելիքների յաջորդները՝ զինւորական մեծ ու փոքր խմբապետ — հրամանատարները, բայց Անդրանիկը գրութիւնների մէջ որոշ հակասութիւն գտաւ. մէկ գրութեան մէջ

ցանկութիւն է յայտնուում, որ Անդրանիկն անմիջապէս շարժւի դէպի Ղարաբաղ. իսկ միւսով, արիւնահեղութիւնից խուսափելու համար, խնդրում է տասն օրով յետաձգել արշաւանքը: Նկատի ունենալով Վարանդայի (մեծ շրջանի) հրամանատար Սեկրատ Բէկ Մելիք - Շահնազարեանի արաջարկութիւնը 10 օրով յետաձգելու արշաւանքը, որպէսզի նա քաղաքագիտօրէն գրաւէ Ծոռին, ապա հրաւիրէ փաշային գալու Ղարաբաղի մայրաքաղաքը, առանց արիւնահեղութեան, Անդրանիկը յարմար դատեց յետաձգելու գործողութիւնները տասն օրով: Դրան բացարձակապէս դէմ էին զարաբաղցի սպաները:

Նոյեմբ. 27-ն է. տասն օրւայ պայմանաժամից արդէն 9 օր է անցել, բայց լուր չկայ Ղարաբաղից, եւ չգիտենք, թէ խաղաղ բանակցութեան ճամբով խնդիրն ի՞նչ եղբակացութեան է հասցրել Սոկրատ Բէկը: Անհրաժեշտ է կենտրոնացնել զօրամասերը Տեղ գիւղում, որ վերջին կայանն է. պայմանաժամը լրանալուն պէս, այդտեղից առաջ կը շարժեն մեր զօրքերը: Անդրանիկի եւ նրան ենթակայ զօրամասերի մեկնումը Գորիսից հրաժեշտի բնոյթ էր կրում. Գորիսի Հայ Կանանց Միութիւնը գործել էր կարմիր մետաքսից մի դրօշակ, ոսկեթել բանաւածքով, «Հայկական Առանձին Հարւածող Զօրամաս» վերտառութեամբ: Գորիսից դուրս գալուց առաջ կատարեց դրօշակի օրհնութեան եւ նւիրման արարողութիւնը: Տեսարանը խիստ յուզիչ էր. Գորիսի հրապարակում բոլորեալ է զօրամասի քաջարի հեծեալները, շրջապատուած ժողովրդի խուռն բազմութեամբ. մի անկիւնում դրւած է սեղանը. գալիս է հերոս Անդրանիկը, հաւաքւում են եկեղեցական դասը, Աղզային Խորհրդի անդամները եւ բոլոր աստիճանաւորները: Հանդիսաւոր կերպով բերում են դրօշակը՝ կարմիր, ոսկեթել ծոպերով եւ վերտառութիւնով: Պատշաճաւոր արարողութիւնից յետոյ՝ Կանանց Միութեան ներկայացուցիչը դրօշակը ներկայացնում է Անդրանիկին մի հակիրճ ճառով՝ յայտնելով նրան երախտագիտութիւն եւ մաղթելով կատարեալ յաջողութիւն: Անդրանիկը զգացւած եւ խրոխտ ձայնով իր շնորհակալութիւնն է յայտնում: Նա ասում է՝ «Մինչեւ հիմա շատ դրօշակներ նւիրւած են, որոնք բոլորն ալ նշան եղած են արիւնի, աւերի, ջարդի եւ դժբախտութեանց: Կը մաղթեմ որ այս դրօշակը լինի վերջինը եւ բերէ յաջողութիւն ու խաղաղութիւն: Կոչ կընեմ բոլոր հայերուն, մասնաւորապէս զանգեղուցիին՝ լինել արի, պաշտպանել իր իրաւունքը եւ կռուել ազգի ազատագրութեան ու իր կեանքի, պատւի ու ինչքի պաշտպանութեան համար: Ահա՛ միակ ուղին ամէն մի պարտաճանաչ հայու. կեցցե՛ն այդ պարտաճանաչ կռուողները»:

Հռուսներով եւ որոտընդոստ ծափահարութիւններով ժողո-

վուրդը ճանապարհ դրեց սիրած հերոսին, որ իր հեծեալգօրքով սրն-թաց յառաջացաւ դէպի խճուղին՝ առջեւից ծածանեցնելով նոր ստացած կարմիր դրօշակը...

Մութն ընկել էր արդէն, երբ հասանք Տեղ մեծ գիւղը, որի դրեթէ բոլոր տներն ու մարազները լեցուն էին արշաւանքին մասնակցող զինուորներով: Զորս հարիւր զարաբաղցիներից եւ զանձակեցիներից բաղկացած զօրամասն էլ տեղաւորեց խճուղուն վից երեք - չորս մարազներում:

Ը.

ԳԵՊԻ ՂԱՐԱԲԱՂ

Նոյեմբ. 28-ին տիրում է եռ ու դեռը: Անդրանիկը դադար չու-նի. ամբողջ ժամանակ կարգադրութիւններ է անում, դասաւորում է, հրահանգներ տալիս, ջղախնացած սրան - նրան է ծեծում, անգամ անւանի մարդկանց, ինչպէս, օրինակ, հանգուցեալ Արշակ Շիրինեանին, Գեղէոն Տէր - Մինասեանին, Սահակ Հայրապետեանին եւ մանր - մունր շատ կոմիսարներին...

Դէպի Ծոռի արշաւանքը մի խոշոր պատմական դրւագ է, մի վըսեմ ձեռնարկ, որի համար զօրամասի միջոցները բաւարար չեն, հետեւապէս զանգեղուցիին պէտք է օժանդակէ ոչ թէ միայն մարդկանցով, այլ եւ զբաստներով, հացով, դարիով, դարմանով եւ այլն: Զը նայած, որ Զանգեղուրի Համագումարը որոշել էր միաձայն կերպով այդ բոլորը սիրով ու անխռով տրամադրել, սակայն իրականացման ճամբին շատերն էին դանդաղում, ձգձգում. ահա այդ վայրկեաններին էր, որ ահաւոր էր դառնում Անդրանիկի վայրոյթը եւ նրա հզօր կամքը ծեծի եւ բռնութեան միջոցով էր ի կատար ածում ժողովրդի դրաւոր որոշումները:

Նոյեմբ. 29-ին, առաւօտեան շատ վաղ, ժամը 3-ին արդէն ամէն ոք կազմ ու պատրաստ է. զօրամասերը լուռ ու հանդարտ առաջ են շարժւում, որպէսզի աննկատելի կերպով անցնեն Զարուղի եւ ապա Հազարի ձորերը, խուսափեն աւելորդ ընդհարումներից եւ չուտ դրաւեն իշխող բարձունքը՝ Մարքիզ սարը, որ կարող է մեծապէս խանգարել զօրամասի առաջխաղացումը:

Նախընթաց օրը Անդրանիկն ինձ նշանակել էր պահեստի զօրամասի պետ, տեւ էր ինձ Ծոռու եւ Գանձակի վաշտերը, ծանր երկու թնդանօթների հետ միասին: Այդպէս էր արել, ինչպէս կատակով նկատում էր, որ «ողջ եւ առողջ զարաբաղցի տղաներով մուրա-

դի հասցնէ», սակայն այդ հանգամանքը չխանգարեց, որ Զաբուդի գլխին հրահանգ դար առաջ անցնելու եւ մտնելու ձորը՝ թնդանոթներու վրա հանդերձ: Չնայած որ այդ ռազմական սխալ էր՝ պահեստի զօրքը եւ թնդանոթները դնել առաջին գծի վրա, բայց չէր կարելի չկատարել հրահանգը, եւ ես անյապաղ խճուղու երկու կողմերն էլ գրաւեցի ինձ ենթակայ զինւորներով, իսկ թնդանոթներից մէկը իջեցրի խճուղու մի յարմար տեղը՝ միւսը պահելով ձորի գլխին, անակընկալի չենթարկւելու համար: Թշնամուն հանդիպեցինք հէնց Զաբուդ գիւղում, որ թեթեւ հրացանաձգութիւնից յետոյ տեղի տւաւ: Հազարի բարձունքները իշխում էին մեզ վրա, եւ Գեարապուղի բարձրադիր դիրքերից թշնամին անդադար հարւածում էր մեզ: Մենք էլ սկսեցինք նեղել նրան մեր թնդանոթների ծանր ուժերով, սակայն թշնամին մտնում էր անսասան իր բարձունքներում, իսկ մենք ձորումն էինք մնացել: Թշնամին անպատիժ չէր կարող իջնել, մենք էլ չէինք կարողանում բարձրանալ օրը ցերեկով, որովհետեւ թշնամու անշեղ կրակը սպառնում էր հնձել մեր շարքերը: Իմ օգնականներին հարկ եղած ռազմական հրահանգները տալուց յետոյ, ես բարւոք համարեցի յետ դնալ ու դրուժեան մասին անձամբ ղեկուցանել Անդրա-նիկին, որ Զաբուդի ձորում, ճանապարհից ոչ շատ հեռու, մի ցցած ապառաժի մօտ վրան էր զարկել: Ինչեւ աշտմ էլ այդ ապառաժը կոչւում է «Անդրանիկի քար»:

Խորհրդակցութիւնից յետոյ, Անդրանիկի հետ, ձիերով անցանք դէպի առաջաւոր դիրքերը: Գեարապուղի բարձունքից թշնամին անմիջապէս նկատեց մեր փոքրիկ հեծելազույնը եւ բռնեց հրացանաձգութեան ենթարկեց: Ժանաւանդ Անդրանիկի ուղղութեամբ զնդակները տեղում էին կարկուտի պէս: Մեր «պահեստի» զինւորները իրենց դիրքերից եռանդով կրակ բաց արին թշնամու վրա, ներքեւից վերեւ, եւ մի քանի շեշտակի համադարկներով ու թնդանոթային ուժգին կրակով թշնամու թափը կտրեցին:

Հազարուի ձորի միւս կողմում ճանապարհը բարձրանալով անցնում է Ղարաղլաղ հայկական աւերած գիւղի միջով, ապա Թթու-Ջուրի (Լիսազորսկ) վրայով մտնում է Շուշի քաղաքը: Մարքիզ գազաթը ցցած է Զաբուդ եւ Հազարի գետերի խառնարանում եւ իշխում է երկու ձորերի վրա, ուրեմն ցերեկով գրեթէ անհնար է գրաւել, իսկ գիշերն էլ անակնկալներ կարելի է ենթարկւել: Զաբուդի ձորն էլ դէպի հիւսիս երկարում է մինչեւ Մինքենդի թրքական լեռնային շրջանները, իսկ Հազարի ձորը դէպի վեր գնում է մինչեւ Հաջի-Սամլուի, թաթար - քրդական շրջանի ձիւնապատ լեռները: Զաբուդ

եւ Հազար գետերը միախառնելով իջնում են դէպի հարաւ եւ թափւում Արաքսի մէջ, Կարեազինի թրքական շրջանում: Վերոյիշեալ ձորերի խորշերում պարփակւած են 20-ից աւելի թրքական գիւղեր՝ Աւդալլար, Մէրքիզ, Ղլլա, Սուլթանքենդ, Մալիքէկու, Սուս, Թաթարասի, Զէյլա, Սիւմիւքու, Նաւրուզու, Զայքենդ...

Աւաղակարարոյ թուրքեր են այդ գիւղերի բնակիչները, որոնք ռուսական յեղափոխութիւնից յետոյ աւելի սանձարձակ էին դարձել: Փակել էին Գորիսից Շուշի տանող խճուղին եւ պատուհասել շատ անգամ տուն վերադարձող զինւորներին, կողոպտելով ու սպանելով նրանց: Այդ ձորերումն էին սպանւել 217 զարաբաղցի դասակից զինւորները, որոնց ոսկորները թափթփւած տեսանք այդտեղ: Իսկ ամբողջ թուրքերի թոյլտուութեան, փորձեց անցնել Շուշի, Զաբուդի ձորից յետոյ իր առջեւ դուռ Հազարի կառուրջը փակւած եւ ընկաւ երկու կրակի մէջ, եւ կռւելով ու մեծ կորուստներ տալով՝ հաղիւ կարողացաւ նահանջել եւ հասնել Տեղ գիւղը: Նմանապէս այդ շրջանի գիւղերն էին, որ երկու ամիս առաջ, քոչուր թուրքերի օգնութեամբ, յարձակեցին հայկական Ղարաղլաղ գիւղի վրա եւ աւերեցին: Նըրանք էին դարձեալ, որ փերձեցին Կոռինձորի եւ Խանաժախի ուղղութեամբ արշաւել դէպի Զանգեզուր: Մի շարք յաջողութիւններից յետոյ, մանաւանդ երբ տաճիկները գրաւեցին Շուշին, այդ ձորերի թուրքերը շատ էին երես առել: Նրանք մնայուն պահակներ ունէին Մարքիզի գազաթին, որտեղից եւ սկսեցին կրակել մեր զօրամասերի վրա:

Զիգզագ խճուղին կրակի ենթակայ է թէ՛ Մարքիզի եւ թէ՛ Գեարապուղի դիրքերից միաժամանակ: Պարզեց, որ թշնամին ունի կանոնաւոր խրամատներ, եւ տեղական աւաղակարարոյ կռուողների հետ նոնաւոր խրամատներ, եւ տեղական աւաղակարարոյ կռուողների հետ միասին կային եւ տաճկական ասկերներ: Մինչեւ գիշեր զօրամասի ձեռքն անցան որոշ դիրքեր, բայց ունեցանք եւ բաւականաչափ վերաւորներ եւ սպանւածներ: Վերջիններիս թուումն էր նաեւ զարաբաղցի փոխ - գլխապետ Ստեփան Սարգսեանը, որի գրական կեղծանունն էր Ստեպար: Նա անդգուշութիւն ունեցաւ խոյանալու դէպի Գեարապուղի անառիկ դիրքը եւ թշնամու զնդակը փոքրիկ առաւ: Դա ամենամեծ զոհն էր, որ տւինք Ղարաբաղի ազատագրութեան ճամբին, 1918 թւին:

Նոյեմբ. 30-ին Անդրանիկի համար գործնականորէն պարզեց, որ առանց Մարքիզի գրաման չի կարելի առաջ շարժւել, այլապէս շատերը կը նահատակւին ապառախ Ստեպարի նման: Փոքր ինչ

խորհրդակցելուց յետոյ որոշեց, որ ես «պահեստի» ուժերով կենտրոնից անընդհատ կրակ թափեմ Բեարաուդի ամուր դիրքերի վրա, իսկ քաջ խմբապետ Աղաջան Բալասանեանը տեղացի ձիաւորներով անցնէ Հագարու գետը, աջ թեւին եւ զարնէ թշնամուն, ջանալով մտնել թիկունքը: Ձախ թեւից կռիւը շարունակուեալ էր եռանդով՝ Մարքիզի ուղղութեամբ: Չնայած կենտրոնից բացած ուժգին կրակին, երբ Աղաջանը փորձեց անցնել գետը իր ձիաւորներով, թշնամին նրան անմիջապէս առաւ դժոխսային կրակի տակ: Հետեւանքն եղաւ այն, որ ձիաւորները նահանջեցին, խմբապետ Աղաջանի ձին սպանեց, իսկ ինքը վիրաւորեց ոտից թեթեւ կերպով. նրա կողքի զինուորն էլ վիրաւորեց...

Այդ դէպքից յետոյ Անդրանիկը ետփոխուեց քաջեց գլուխը եւ ուղղակի խճուղու կողքին պառկեց հանգստանալով՝ խիստ պատէր տալով լինել աչալուրջ եւ անակնկալի դէպքում անմիջապէս զարթեցնել իրեն: Մարքիզի ուղղութեամբ մեր կռիւը զարգանում էր յաջողութեամբ: Հետեւակ եւ ձիաւոր ուժերը, թէպէտ դանդաղ, հետդհետէ դիմում էին դէպի իշխող գագաթը, գրաւելով օժանդակ դիրքեր:

Ուղիղ կէսօրին Անդրանիկը մէկէն ոտքի ելաւ եւ պահանջեց իր հաւատարիմ «Ասլան» ձին. շոյեց, համբուրեց ամենի Ասլանին, որ մանկան պէս հեղ էր նրա հանդէպ, իսկ առիւծ էր կտրում ուրիշների մօտենալիս: Անդրանիկը նստեց ձին եւ սլացաւ դէպի Մարքիզ. հաւատարիմ քաջերը հաղիւ կարողացան հեծնել իրենց ձիերը եւ հետեւել նրան:

Հրաշալի էր Անդրանիկի վերելքը դէպի Մարքիզ: Թշնամին պարզ նկատեց թէ ո՛վ է եկողը, եւ ջղայնացած գնդակների կարկուտ տեղաց նրա վրա, սակայն քաջասիրտ եւ խիզախ երիւթը իր նոյնքան քաջորդի հեծեալով շարունակ դիմում էր դէպի վեր: Տղաներն իրենց դիրքերից գոռացին՝ «Փաշան գալիս է, փաշան գալիս է», եւ մէկ էլ լսեցին դու հուռտաները: Ձինուորներն իրենց դիրքերից մէկէն պոկեցին եւ փոթորկի պէս սլացան դէպի Մարքիզ: Մի քանի րոպէից յետոյ Մարքիզ լեռան գագաթին ծածանեց մեր կարմիր դրօշակը: Յետոյ մերոնք գրաւեցին համանուն Մարքիզ կամ Մարքեազ դիւղը, այդ շրջանի արիւնհարբունների որջը:

Մարքիզ սարից մեր ուժերն առաջ շարժւելով՝ գրաւեցին Սուսը եւ Զէյլան, իսկ ձիաւորների երկրորդ հարիւրեակը ձախ թեւի կողմից անցաւ Հագարի կամուրջը, մտաւ Աւդալար առանց դիմադրութեան: Աւդալարի գրաւումով չէզոքանում էր Բեարաուդի ա-

նառիկ դիրքը, քանի որ Աւդալարից անարգել կարելի էր բարձրանալ Ղարաղլաղի բարձունքը, ապա անցնել Թթու - Զուրը եւ Շուշի: Հայերի յաղթանակն անսպասելի էր թուրքերի համար, ուստի Հագարի ձորն ի վայր սկսեց խուճապահար փախուստը. թուրք բրնակիչները ձիերի, էջերի եւ եղների վրա բեռնած իրենց ունեցածը՝ չտապում էին հեռանալ այն վայրերից, ուր հարիւր տարուց ի վեր բնակւում էին: Մէկ անգամ էլ այդպէս դրանց պապերին, քչել էին Դաւիթ Բէկի եւ Աւան Իւզրաշու քաջարի դիւցազները, սակայն ուսական տիրապետութեան օրով նրանք յետ էին եկել Նուխու եւ Արէշի կողմերից:

Այդ յաղթանակից յետոյ ամենքս սրտատրոփ սպասում էինք հրամանի, որ շարժւենք դէպի Մելիքների հայրենիքը, բայց, դժբախտաբար, լուր բերին, թէ Հարաւ դիւղի վրայով Կոռինձոր է եկել մի սուրհանդակ, որ հեռագիր է բերել զօրավար Անդրանիկի անունով՝ Բագուի անդլիական հրամանատարից եւ մի ուրիշ հեռագիր էլ Արքրէյջանի նախարարապետ Խան Խոյսկուց: Անդլիական զօրավարը հեռագրում էր Անդրանիկին եւ Շուշու հայկական ուժերի հրամանատարին, որ առաջխաղացութիւնը դադարեցնեն, քանի որ խաղաղութիւնը կնքւած է: Իսկ Խան Խոյսկին հեռագրում էր Շուշու ընդհանուր նահանգապետին, քաղաքապետին, Աղդային Խորհրդին եւ հայկական ղեկավարական հրամանատարին, որ անդլիական զօրավարի հեռագիրը անյապաղ հասցնեն Անդրանիկին:

Շուշու մեր ընկերները, տեղույն կառավարութեան նախկին անդամները, Վարանդայի հրամանատար Սոկրատ Բէկը, ո՛չ թէ միայն ոչնչով չնստատեցին մեր յառաջխաղացմանը, այլ եւ գոնէ չուչացրին չարաբաստիկ հեռագիրը, որ մեր զօրամասը հասնէր Թթու - Զուր եւ Շուշի...

Անդլիական զօրավարի ո՛չ անունը կար եւ ոչ էլ ստորագրութիւնը, ուստի մեր մէջ կասկած ծագեց, որ թուրքերը կարող են խորամանկութեան դիմած լինել: Եթէ անդլիական զօրավարը ցանկանում էր Անդրանիկին մի բան հաղորդել, մի՞թէ չէր կարող հաղորդադրութիւնը հասցնել ուղիղ ճամբով եւ պաշտօնական ներկայացուցչի ձեռքով եւ ո՛չ թէ ծերուկ միականի Հարար դիւղացու միջոցով... Անդրանիկը սկզբում համամիտ եղաւ մեզ եւ որոշեց պատասխանել անդլիական զօրավարին՝ կասկած յայտնելով եկած հեռագրի վաւերականութեան մասին եւ յիշատակեց այն պատճառները, որոնց հիման վրա ինքը դիմում էր դէպի Շուշի: Արքրէյջանը տաճկական ուժերի ներկայութիւնից քաջալերւած գրաւել էր Շուշին, տաճիկների

հետ միասին. նրանք բանտարկել էին հայ մտաւորականներին, ժողովրդին ճնշել էին եւ հայ ճամբորդներին հարիւրներով սպանել, զէնքերը խել եւ այլն, որով սպառնում էին հայկական Ղարաբաղի գոյութեանը: Անդրանիկը թէպէտ տատանւում էր, բայց պատասխանը նոյն ճամբով ուղարկեց: Ամենքս շտապում էինք միւս առաւօտեան, անցնելու դէպի Ղարաղլաղ, երբ դեկտ. 2-ի առաւօտեան լուր հասաւ, թէ խճուղու վրայով դէպի Աւզալար է գալիս սպիտակ դրօշակ պարզած մի ինքնաշարժ: Լուր տրւեց կամուրջը պահող զինւորներին, որ թոյլ տան առաջ անցնել: Հետեւակ եւ ձիաւոր մէկական վաշտեր զինւորական բարեւ տւին եկող սպաներին:

Եկողները Դաշնակից պետութիւնների սպաներիցն էին՝ անգլիական կապիտան Սքուար եւ ֆրանսական կապիտան Գասֆելդ, որոնք բերել էին զօրավար Տոմսոնի նամակը:

Թ.

ԶԻՆԱԴԱՌԱՐ

Դաշնակից սպաները, պարզեցին քաղաքական մութ մնացած կէտերը եւ Դաշնակից պետութիւնների յաղթութեան մանրամասնութիւնները:

Սպաների հետ եկած երրորդ անձնաւորութիւնը Հ. Յ. Դ. Ապառաժի Կենտր. Կոմիտէի մի նամակը յանձնեց Անդրանիկին: Այդ նամակի մէջ ընկերները պարզելով համառօտ կերպով քաղաքական աշխարհի անցուղարձերը՝ շեշտում էին, որ անգլիացիք մտադրութիւն ունին Լեռնային Ղարաբաղը Զանգեզուրի հետ միասին կցելու Ադրբեջանին, որպէսզի նրան ուժ տան ընդդէմ բոլշեւիկեան արշաւանքին, որ վաղ թէ ուշ պէտք է տեղի ունենայ դէպի Անդրկովկաս: Ընկերները թախանձանօք խնդրում էին որ փաշան կանգ չառնէ եւ մտնէ Շուշի, այդպիսով կատարւած փաստի առաջ դնելով Դաշնակիցներին եւ Մուսաւաթին: Բայց, ղժբախտաբար, այլեւս ուշ էր, Անդրանիկը այդ վճռականութիւնը չունեցաւ, եւ Ղարաբաղը հետագային ստիպւած եղաւ դառնութեան բաժակը քամել մինչեւ վերջին մրուրը:

Դեկտ. 3-ին, տրւելիք պատասխանը՝ նամակներն ու տեղեկագրերը պատրաստ էին, եւ զօրավար Տոմսոնի ներկայացուցիչները պէտք է մեկնէին: Կոնւր դադրած էր ամենուրեք: Զօրքի մեծ մասը պատւի էր կանգնած մեծաշուք հիւրերի համար: Հեռանալուց առաջ դաշնակից սպաները աչքէ անցուցին Անդրանիկի քաջերին: Զօրավարը գնահատեց իր զինւորներին հիւրերի առաջ. նա ասաց, որ իր զին-

ւորները երկար տարիներ չարչարել են, զրկանքներ կրել, որպէսզի հասնեն այն օրին, որ եկել է արդէն. դա դաշնակիցների իրաւունքների եւ ազատութեան յաղթանակի օրն է: Շնորհակալութիւն յայտնեց Դաշնակիցներին, որոնք եկան գտան իրենց փոքր, բայց անկեղծ դաշնակցին, այսինքն՝ Անդրանիկին եւ նրա զօրամասին:

Հիւրերը մեկնեցին զիւ հոռոտների ներքոյ: Անդրանիկը մի հեռագիր ուղարկեց Ազգային Պատերազմութեան նախագահ Պօղոս Նուբար փաշային եւ յայտնելով նրան տաճկահայ գաղթականների թըլառութիւնը՝ խնդրեց ժամ առաջ օգնութեան հասնել: Զանգեզուրի Ազգային Խորհրդի երկու ներկայացուցիչները՝ Արշակ Շիրինեան եւ Նիկողայ Յովսէփեանը մի շարք խնդիրներ լուսաբանելու համար վերոյիշեալ սպաների հետ մեկնեցին նախ Շուշի, ապա Բաղու: Դաշնակից սպաները ճանապարհւելուց առաջ կարգադրեցին, որ Անդրանիկը մնայ իր տեղում, ոչ յետ գնայ եւ ոչ էլ առաջ արշաւէ, այլ իր զօրամասով պահէ Հազարից դէսը, Զանգեզուրը, որ համարւում է Հայաստանի մասը: Անդրանիկն առաջարկեց որ իրեն թոյլ տան խաղաղ կերպով մտնելու Շուշի կամ Նախիջեւան, որտեղ կան զօրանոցներ, քանի որ Գորիսում չկան յարմար շինութիւններ զօրքի ձմեռելու համար: Սպաները խոստացան այդ խնդիր - առաջարկը լուծել տաան օրւայ ընթացքում:

Տեղական զինադադարը հաստատուն հողի վրա դնելու եւ մի շարք գաւառական խնդիրներ լուծելու համար՝ Զանգեզուրի Ազգային Խորհրդի նախագահ բժիշկ Մ. Պարոնեանի գլխաւորութեամբ մի պատերազմութիւն դնաց տեսակցելու Հաջի Սամլուեցի Սուլթան Բէկ Սուլթանովի հետ, որ քիւրտ - թաթարների պարագլուխն էր: Վերջինս հայերի կողմից առաջարկւած բոլոր պայմաններին համաձայնւում է. թուրքերի եւ ջրդերի տրամադրութիւնը խիստ ընկճած էր, քանի որ ո՛չ թէ միայն Անդրանիկի զօրամասն էր նրան նեղել, այլ եւ Ղարաբաղի Խաչեն դաւառի հայութիւնը յարձակել էր Պիճանիսի ուղղութեամբ, որ Հաջի Սամլուի կենտրոնն է, իսկ Դիզակի զինւած ուժերն էլ ռազմական ցոյց էին արել Քիրսի չըջանում, այնպէս որ եթէ Անդրանիկի արշաւանքը կատարէր ժամանակին եւ Դաշնակիցների անակնկալ միջամտութիւնը չլինէր, Շուշին, ապա եւ հայկական Լեռնային Ղարաբաղն անպայման կցւած կը լինէին Հայաստանին, Զանգեզուրի հետ միասին:

Զօրամասը յետ քաշւեց Տեղ՝ դեկտ. 4-ին, իսկ դեկտ. 5-ին յաղթական ընդունելութեամբ կրկին մտաւ Գորիս: Տեղի ունեցաւ զինւորների մասնաւոր ցրում դէպի Սիսիան ու Դարալագեազ: Դեկտ.

20-ին, վերջապէս, լուր հասաւ, թէ Ազգային Խորհրդի անդամները անգլիացի ներկայացուցիչների հետ հասել են Տեղ, որտեղից դի- շերով Արշ. Շիրինեանը եկաւ Գորիս եւ հաղորդեց, թէ հրահանգւած է Անդրանիկին իր զօրամասով մնալու Զանգեզուրում:

Դեկտ. 21-ին, կէսօրից յետոյ, ժողովուրդը հաւաքւած քաղա- քաղլիսի առաջնորդութեամբ աղ ու հաց մատուցեց անգլիացի ներ- կայացուցչին: Զօրքը շարւած էր քաղաքի հրապարակում եւ երեք մեծ դրօշակներ ծածանուում էին մուտքին՝ անգլիականը, զօրամա- սինը եւ ռուսականը: Ընդունելութիւնը տպաւորիչ էր եւ խանդա- վառ: Եկողներն էին՝ անգլիացի մայոր Գիրբոնը, որ միջհասակ եւ խոհուն մարդ էր, ապա անգլիացի գլխապետ Սերայտը: Կային եւ երկու ուրիշ ներկայացուցիչներ, մէկը թիւրքերի կողմից՝ Արդուլ- Փաթհ բէկ Հասանբէկով, իսկ Բագուի Հայոց Ազգային Խորհրդի կողմից՝ Զիլինգարեան Գուրգէն:

Դեկտ. 22-ին երեկոյեան անգլիացի հիւրերի հետ միասին տե- դական կարեւոր գործիչներ ճաշի հրաւիրւեցին Անդրանիկի մօտ: Սեղանապետն էր հանդուցեալ Նիկոլայ Յովսէփեանը (Զանգեզուրի Բիսմարկ մականունով), իր համբաւած հոետորական ընդունակու- թիւններով. նա ճառում էր հայերէն, թուրքերէն եւ ռուսերէն: Բա- ժակահառու թարգմանում էին անգլիերէն: Խմեցին Դաշնակիցնե- րի, նրանց յաղթական բանակների, ներկայ գտնուող ներկայացու- ցիչների, հիւրերի եւ կարեւոր գործիչների կենացը, դրւատելով նը- րանց հասարակական արժանիքները: Մեծ խանդավառութեամբ խմե- ւեց մանաւանդ Անդրանիկի կենացը, որին Նիկոլայ Յովսէփեանը կոչեց Զանգեզուրի փրկիչ: Ընթրիքից յետոյ տեղի ունեցաւ պաշ- տօնական տեսակցութիւն: Մայոր Գիրբոնը յայտնեց իր առաքելութեան նպատակը: Տեսնելով որ թէ՛ զօրամասը եւ թէ՛ շրջանի ազգաբնակու- թիւնը, մանաւանդ տաճկահայ եւ Նախիջևանի զաղթականութիւնը ուտեստի մեծ կարիք ունեն, նա որոշեց միւս օրն եւ եթ Շուշու վը- բայով Բագու ճամբել կապիտան Սերայտին, որպէսզի կենսամթերք- ներ հասցնէ Զանգեզուր:

Այնուհետեւ պարզեց, որ մայոր Գիրբոնի զբաղմունքի խնդիրներն են լինելու՝ ա) Բաց անել եւ ապահովել ճամբաները դէպի Շուշի - Գորիս - Ղափան, թէ՛ մարդանց եւ թէ՛ ապրանքների ազատ փոխա- դրութեան համար. բ) Գծել աղղեցութեան շրջանակ Անդրանիկի իշ- խանութեան եւ Ադրբէջանի միջեւ, որպէսզի իւրաքանչիւր շրջանի մէջ կատարւած անկարգութեան համար պատասխանատու լինի հա- մապատասխան տիրապետողը. որոշեց որ Զաքուղ - Հազարի գծից

դէնը պատասխանատու լինին թուրքերը, իսկ Զաքուղից դէսը Զան- գեզուր, Ղափան եւ Սիսիան շրջանների համար Անդրանիկը, որպէս այդ շրջանների դիկտատորը եւ իրական ուժերի հրամանատարը: Անդրանիկը պէտք է պահէր կարգը եւ ապահով դարձնէր իր շրջան- ներում գտնուող զաղթականութեան համար ուտեստեղէնի փոխադը- րութիւնը:

Բոլոր կէտերի շուրջը համաձայնութեան եկան մայոր Գիրբոնի հետ թէ՛ Անդրանիկը եւ թէ՛ թուրք ներկայացուցիչը. միայն Շուշի քաղաքի հարցը առկախ մնաց, որովհետեւ թէ՛ Անդրանիկը եւ թէ՛ մանաւանդ նրան շրջապատողները գտնում էին, որ Զանգեզուր - Ղարաբաղ - Գանձակի (լեռնային) հայութիւնը, մօտ 300,000, չի կարող ենթարկւել Ադրբէջանի իշխանութեանը՝ Շուշի քաղաք 15 հազար թրքութեան եւ Հաջի Սամլուի ու Քեալբաշարի 20,000 քիւրդ - թաթար տարրերի պատճառով, որոնք ցցւել էին հայաշատ գաւառնե- րի կենտրոնում: Պնդում էին, որ Ադրբէջանը կարող է իշխել միայն Ասկերանից դէնը Աղղամի վրայով մինչեւ Եւլախ - Բագու: Ի պա- տիւ Անդրանիկի, պէտք է ասել, որ նա պաշտօնապէս յայտնեց այդ միտքը, թէ չի կարող օրինաւոր համարել 300,000 հայութեան են- թարկւելը Ադրբէջանին 35 - 40,000 թաթարների պատճառով, եւ թէ Ղարաբաղի ժողովրդի կամքն է կցւել Զանգեզուրի հետ միասին ան- կախ Հայաստանին, եւ թէ, վերջապէս, Ադրբէջանը չի կարողացել ընկճել մարտնչող Ղարաբաղի հայութիւնը, բացառութեամբ Շուշի քաղաքի, որին տիրել էր ո՛չ թէ Ադրբէջանը, այլ թիւրքերն, որ այժմ ջախջախւած է: Այդ կնճռոտ խնդրի լուծման մասին մայոր Գիրբոնը խոստացաւ բոլոր տեսակի առարկութիւնները ներկայացնել ուր հար- կըն է: Միաժամանակ յայտնեց, որ զօրամասը պէտք է մնայ Զան- գեզուրի շրջանում մինչեւ 1919 թ. մայիս ամիսը եւ այդքան ժամա- նակ Դաշնակից պետութիւնները հոգալու են զօրամասի կարիքները. կազմւեց զօրամասի վեց ամսւայ նախահաշիւը եւ ցանկն այն մթերք- ների, որոնց կարիքը շատ զգալի էր շրջանում:

Դեկտ. 23-ին Անդրանիկը նախ քան համաձայնութիւն տալը մինչեւ մայիս մնալու Զանգեզուրում, որոշեց իմանալ իրեն ենթա- կայ զօրքի եւ հրամանատարական կազմի կարծիքն այդ մասին: Տե- ղի ունեցաւ ժողով, որ եկաւ այն եզրակացութեան, թէ անհնար է զօրամասը պահել Զանգեզուրի շրջանում մինչեւ մայիս, քանի որ նախ ազգաբնակութիւնը ի վիճակի չէ հայթայթելու զօրամասի զին- տրների եւ ձիերի անհրաժեշտ ուտեստը. երկրորդ՝ շրջանը զինուոր- ների ձմեռելու համար չունի յարմար շէնքեր եւ այլ յարմարութիւն-

ներ. երրորդ՝ զինւորներից շատերը ցանկանում են գնալ եւ փնտռել իենց հարադատներին. չորրորդ՝ զօրամասի զինւորները այդքան ժամանակ պէտք է կատարեն ոստիկանական դեր, որ այնքան էլ հաճելի չէ կռուող զօրքի համար: Զօրամասը գտաւ, որ ինքը պէտք է շարժւի Երեւանի կողմը եւ դրա համար պէտք է բացւի Նախիջևանի ճանապարհը, որպէսզի զօրքը Սիսիանից 17,000 նախիջևանցի հայ զաղթականութեան հետ միասին իջնէ դաշտը եւ տեղաւորւի իր նախկին բնակավայրերում, իսկ զօրքը կը մնայ Նախիջևան քաղաքի ուսական նախկին զօրանոցներում. հակառակ դէպքում, զաղթականութիւնը (Նախիջևանի) սովից կը փչանայ Սիսիանի շրջանում: Առաջարկ եղաւ, որ զօրամասը կարող է ձմեռը մնալ եւ Խանքենդի (այժմ Ստեփանակերտ), ուր ամէն յարմարութիւն կայ՝ զօրանոցներ, հրաշալի օդ եւ անմահ ջուր...

Ժ.

ԶՕՐԱՅՐՈՒՄ

Դեկտ. 24-ին մայր Գիրքներ մեկնում է Շուշի, որպէսզի այնտեղից հեռագրով հաղորդի Անդրանիկի եւ նրա զօրամասի առաջարկները: Մայր Գիրքն է հետ Շուշի է անցնում եւ հարաւորող զօրամասի բժիշկ Ռուբէն Տէր - Ստեփանեանը, որ խօսում էր անգլիերէն եւ ֆրանսերէն: Նոյն օրը Շուշի են մեկնում եւ Շուշու եւ Գանձակի գընդերի մնացորդ զինւորները, այլ եւ Զանգեզուրում փակւած դարաբաղի մասնաւոր անհատները, թուով 400 հոգի: Մայր Գիրքն սկզբում չէր ուզում թողնել մեզ զինւած անցնելու, միայն 30 - 40 հրացանի իրաւունք էր ուզում տալ, սակայն Անդրանիկի եւ բժշկի բուռն միջամտութեան շնորհիւ, իմանալով որ տարիներ շարունակ մեր զինւորները կուէլ են դիրքերում Դաշնակից պետութիւնների օգտին, զիջեց եւ գրեց անգլիերէն լեզուով թուութեան գիր, որի մէջ յիշատակւած էր, թէ զրօտվար Անդրանիկի դարաբաղի զինւորներն են, որոնք խաղաղ կերպով գնում են իրենց տները՝ համաշխարհային պատերազմի վերջանալու անթիւ:

Այնուհետեւ այլեւս ուղղակի գործողութիւններ տեղի չունեցան Զանգեզուրում մինչեւ Անդրանիկի այնտեղից դուրս գալը:

Խաղաղութեան շրջան էր. Անդրանիկը մեծ ուշադրութիւն դարձրեց բարեօրէնութիւն թէ՛ զինւորների եւ թէ՛ զաղթականների վիճակը: Առաջին հերթին բաժանեց Բագրից զօրավար Բագրատունու միջնորդութեամբ զօրավար Բիչերախովի ուղարկած մէկ միլիոն ուրբի:

Այդ գումարից 600,000 ուրբի յատկացրեց զաղթականութեան, իսկ 400,000-ը բանակին. իւրաքանչիւր զաղթական ստացաւ 29 ուրբի:

Մի կարճ ժամանակում մայր Գիրքն եւ բժիշկ Ռուբէնը երկար պտոյտ արին. նրանք Բագրից վերադարձան Գորիս, անցան Ղափան, ապա Սիսիանով իջան Նախիջևան: Քեօլանու մօտ թուրքերը նրանց վրա կրակ բաց արին, բարեբախտաբար, անվնաս: Նախիջևանում տեղի ունեցած բանակցութիւնները դրական ելքի չէին յանգել, որովհետեւ թուրքերը յայտարարել էին մայր Գիրքին, որ թոյլ չեն տայ երբեք, որ այդ շրջանը մտնէ զինւած հայ զաղթականութիւնը. նման պարագային ընդհարումն անխուսափելի կը լինի: Միակ յաջողութիւնը, որ ունեցել էր մայր Գիրքն, այն էր, որ Երեւանի հայկական կառավարութեան հաշին փութը 50 ուրբով յաջողւել էր 10,000 փ. ցորեն գնել: Այնուհետեւ մայրը գնացել էր Երեւան, տեսնել էր հայկական կառավարութեան հետ, անցել էր Թիֆլիզ, ուր ղեկուցել էր Նախիջևանի ու Երեւանի վիճակի մասին եւ ապա անցել Բագու: Մայր Գիրքն մնացել էր Բագու, իսկ կապիտան Բօչէրը եկել էր փոխարինելու կապիտան Տաունտսենտին:

Բագրից զօրավար Բագրատունին բժիշկ Ռուբէնի հետ ուղարկել էր հարիւր հատ ուսական Սուրբ Գէորգ զօրավարի խաչեր, որպէսզի Անդրանիկը բաժանէ իր զինւորներից ամենաքաջներին: 1919 թ. փետր. 24-ին, Վարդանանց տօնին, Անդրանիկը անձամբ բաժանեց Գորիսի հրապարակում՝ եկեղեցում հողհանգիստ-պատարազը վերջանալուց յետոյ:

Փետր. 25-ին կապիտան Բօչէրը ներկայացաւ Անդրանիկին Գորիսում: Թուրքերը աշխատում էին զօրամասը հեռացնել Զանգեզուրից եւ այն էլ Շուշի - Աղդամ - Եւլախ դժով: Կապիտան Բօչէրը առաջարկեց Անդրանիկին զօրամասով անցնել Եւլախ, բայց, ի հարկէ, Անդրանիկը մերժեց՝ առարկելով թէ կարող է ընդհարում տեղի ունենալ, մի բան, որ ցանկալի չէ խաղաղութեան շրջանում: Բօչէրը ակնարկեց, թէ Դաշնակիցները ճանաչում են կովկասեան հանրապետութիւնները եւ եթէ Աղբէջանը որ եւ է տեղ պաշտօնեայ նշանակէ, իրենք պարտաւոր են ընդունել եւ օժանդակել նրան: Պարզ էր, որ անգլիացի կապիտանն ակնարկում էր Ղարաբաղ - Զանգեզուրի կըցման մասին Աղբէջանին: Աղբային Սորհուրդը եւ Անդրանիկը խորհրդակցելուց յետոյ, կտրուկ պատասխան տուին, թէ Զանգեզուրի մասին խօսք անգամ չի կարող լինել, քանի որ նա զէնքը ձեռին կրուել է տաճիկների եւ թուրքերի դէմ եւ պահպանել է բոլոր ժամանակ իր անկախութիւնը, եւ եթէ որ եւ է նոր փորձ լինի այդ ուղղու-

Թեամբ, դարձեալ ժողովուրդը կը կուէ մինչեւ արեան վերջին կաթիլը: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, դա պատմական Արցախն է, Հին Հայաստանի մի նահանգը, որ նոյնպէս կուէլ է գէնքը ձեռին եւ անձնատուր չէ եղել ո՛չ տաճիկներին եւ ոչ էլ Թուրքերին, բացի Շուշի քաղաքից, որին տաճիկները տիրել են մօտ երկու ամիս, այն ինչ ընդարձակ հայկական շրջանները՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Զրաբերդ եւ Գարդման՝ գլուխ չեն խոնարհել տաճիկա - Թրքական ուժերի առաջ. հետեւապէս խոշոր անարդարութիւն կը լինի, եթէ Դաշնակիցները այդ քրիստոնեայ գաւառները կցեն մահմեդական Ադրբեջանին, փոխանակ թոյլ տալու, որ միանան հոգով իրենց հարապատ Հայաստանին:

Մարտ 5-ին մայր Գիբոնը կրկին անցաւ Շուշու վրայով Գորիս: Դարձեալ առաջարկ արաւ Անդրանիկին զօրամասով անցնել Շուշի - Եւլախ գծով Թիֆլիզ, սակայն Անդրանիկը կրկին մերժեց հետեւեալ պատճառաբանութիւններով: - ա) Զօրամասը իր հետ պիտի փոխադրէ մեծ քանակութեամբ ալիւր ու գարի՝ մինչեւ զօրացրումի կատարումը զօրքը եւ ձիերը կերակրելու համար: բ) Զօրքի ձիերի մեծ մասը զինուորային սեփականութիւնն է եւ շատերը չեն ուզենայ զրկուել իրենց ձիերից, որոնք Հայաստանին եւ իր ժողովուրդին մեծ օգուտ կարող են տալ, այնինչ Եւլախով գնալու պարագային, ձիերը չեն կարող փոխադրուել, հետեւապէս ստիպւած պիտի վաճառեն Թուրքերին: գ) Եւլախ գնալու դէպքում պէտք է զինաթափ լինեն, իսկ Երեւան երթալու դէպքում գէնքերը կը մնան հայերին: դ) Եւլախով գնալու պարագային զօրամասի զինուորները ահագին ճանապարհ պիտի անցնեն՝ Երեւան կամ Հայաստանի որ եւ է մասը երթալու համար, քանի որ նրանք անպայման պէտք է աշխատեն այդ շրջաններում փրկուող գտնելու համար իրենց ողջ մնացած ազգականներին: Այս պատճառաբանութիւնների հիման վրա Անդրանիկը յայտնեց մայր Գիբոնին, որ «հաւանական ընդհարումներից եւս խուսափած լիելու համար, ինչպէս եւ յայտնել են Նախիջևանի Թուրքերը, եւ դուք չէք հարկադրել նրանց, մեր զօրամասը կանցնի Երեւանի շրջանը Դարալագեաղի վրայով»:

Մայր Գիբոնի մեկնելուց առաջ հասնում է զօրավր Տոմսոնի նոր հրահանգը, որով կարգադրում է Անդրանիկի զօրամասին անցնելու Բաթում, ուր պիտի մնայ այնքան ժամանակ, մինչեւ որ հնարաւորութիւն լինի մեկնելու հայրենիք, քանի որ Երեւանում ներկայումս սովն է տիրում: Սակայն, զօրամասի ժողովը կտրուկ կերպով մերժեց այդ առաջարկը եւ հրաժարեց գնալու Աղզամ - Եւլախ գծով:

ընդ սմին ցանկութիւն յայտնեց որ մայր Գիբոնը զօրամասին ընկենալ Գորիսից Երեւան գնալիս:

Լեռնահայաստանի կաշկանդող ձմեռն էր: Խիտ ձիւնով ծածկուել էին ձորերն ու սարերը, մանաւանդ Սիսիան - Դարալագեաղ սահմանագծի վրա: Գորիսի Ազգային Խորհրդի անդամ Ա. Շիրինեանը, որ կրկին Երեւան էր գնացել եւ վերադառնում էր Զանգեզուր՝ հայկական կառավարութեան կողմից նշանակւած Զանգեզուրի նահանգապետ Արսէն Շահմազեանի հետ միասին, մնացել էր Դարալագեաղում փակւած եւ սպասում էր ճամբաների բացւելուն: Շատ մեծ դժւարութիւններ կրելով, տեղ տեղ արհեստական միջոցներով ճանապարհ բանալով, նրանք, վերջապէս, հասան Գորիս եւ սկսեցին կազմակերպել տեղական միջոցներ եւ ինքնապաշտպանութիւնը, քանի որ հարւածող Զօրամասը պէտք է հեռանար, իսկ Ադրբեջանը չէր հրաժարուում իր յաւակնութիւններից:

Մարտ 18-ին մայր Գիբոնը դարձեալ Գորիս ժամանեց, որպէսզի այս անգամ ընկերանայ զօրամասին դէպի Արարատեան աշխարհը, իսկ լիէթընանտ Հաուէլսը պէտք է մնար Սիսիանում՝ պաշտպանելու դադթականներին:

Մարտ 22-ին Գորիսի Քաղաքագլխի տանը ողջերթի ճաշկերոյթ սարքեց քաղաքի կողմից. ներկայ գտնւեցին Անդրանիկը, Ազգային Խորհուրդը լրիւ կազմով, քաղաքի ընտրւած ներկայացուցիչները, մայր Գիբոնը, նահանգապետ Ա. Շահմազեանը եւ ուրիշներ: Քաղաքը պաշտօնապէս ողջերթ եւ յաջողութիւն մաղթեց Անդրանիկին եւ երախտապարտութիւն յայտնեց նրան, որ իր ներկայութեամբ ազատեց շրջանը եւ քաղաքը տաճիկա - Թրքական տիրապետութիւնից:

Անդրանիկը իր հրաժեշտի խօսքի մէջ շեշտեց, ի միջի այլոց, որ ինքը հաւատացած է, թէ Դաշնակիցները եւ Զանգեզուրի հայ ժողովուրդը թոյլ չեն ատյ երբեք, որ Թուրքը մուտք ունենայ իրենց երկրամասի մէջ: Ժողովուրդը վերջին հրաժեշտը տաւ իր պաշտած հերոսին, որ մարտ 25-ին բարձրացաւ Գորիսի գլուխը, որտեղից հրացանների զւարթ համազարկի որոտով մնաք բարով ասաց Գորիսին եւ ողջ Զանգեզուրին...:

Թաւրիզ

(Վերջ)



ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ

ՂԱՐԱ ՄԵԼԻՔ

(Յուշեր)

Մի քանի տարի առաջ, «Դրօշակ»-ում կարդացել էի հետեւեալ տողերը։—

« Խենթի հետ բանակցում էին Երեւանի մեր ընկերները, իսկ վերջնական պայմանագրութիւնը ստորագրողներին մէջ կայ Ղարա Մելիքը։ Սա էլ հետաքրքրական դէմք է, որ Դաշնակցութեան առաջին շրջանի կարեւոր ուժերից մէկն է եղել։ Հայ յեղափոխական շարժման պատմութեան ծանոթանալիս նրա հետքը հանդիպում ենք շատ տեղեր — Ե՛ւ Պարսկաստան, Ե՛ւ Բարձր Հայք, Ե՛ւ Արարատեան դաշտ եւ նոյն իսկ Ամերիկա, ուր տալած են նաեւ նրա յուշերը, «Հայրենիք»-ի էջերում։ Ինչ որ խորհրդաւորութիւն կայ նրա կեանքի մէջ։ Յարաշարժ, շատ փորձերի մասնակից, շատերին գործակից, միշտ նորանոր ծրագիրներ յղացող, մէկ ձեռնարկը չլրացրած միւսին նետուող, մոլեռանդ յեղափոխական — այսպէս է պատկերանում մեզ Ղարա Մելիքը, որի կեանքը եւ գործը կարող էր արկածալի վէպի նիւթ կազմել եւ ուր, սակայն, մնացել է բոլորովին անտեսւած։ Արժէ որ ծանօթ մարդիկ գրեն իրանց գիտցածները Ղարա Մելիքի մասին»։ *)

Այսպէս էլ կարող էին արտայայտւել բոլոր նոքա, որոնք գիտեն Ղարա Մելիքին։ Հետագայ տողերի գրողը, որ շատ մտերիմ բարեկամ է եղել նրան, սրտի խորը ցաւով դիտած է, թէ ինչպէս նրա անունը չէր յիշւած, կամ անցողակի կերպով յիշւած, այն բազմաթիւ պատմական գրութիւններում, որ հրապարակւել են դաշնակցական մամուլի մէջ վերջին երկու տասնեակ տարիների ընթացքին, այսինքն՝ Ղարա Մելիքի մահւանից յետոյ (1915)։

Եւ ուզում եմ այստեղ գրի առնել այն, ինչ որ գիտեմ Ղարա Մելիքի մասին։ Այս գրութիւնը մի պատմական գործ է, ոչ էլ կենսա-

*) «Դրօշակ», 1932, քիւ 12 — 1 :

գրական ուրազի՞ծ, այլ մի ցիրուցան եւ համառօտ յիշողութիւն մեր անմոռանալի դաստիարակ Ղարա Մելիքի կեանքից, մի տկար փորձ իմ բարոյական սրտականութիւնը կատարելու նրա հանդէպ։

Ղարա Մելիքի հետ բախտաւորութիւն ունեցայ ծանօթանալու 1903-ի վերջերը կամ 1904-ի սկզբում, ուսւ — ճապոնական պատերազմի նախօրեակին։ Ես ծանօթացայ նրա հետ իր իսկական անունով՝ Բարսեղ Մելիք — Գրիգորեան։ Բարսեղը շատ մտերիմ բարեկամ էր իմ մեծ — ծնողներին, որ նախապէս ապրում էին Սարըղամիշում եւ յետոյ տեղափոխւեցին Բագու։ Անշուշտ, նրանց այդ բարեկամութիւնը մշակւած էր այն օրերին, երբ Ղարա Մելիքը գործօն կերպով նետւած էր յեղափոխական ասպարէզ եւ չփման մէջ էր ուսւ — թըրքական սահմանակից բնակչութեան հետ։ Իբր աշակերտ, ես այն ժամանակ ապրում էի մեծ — ծնողներին հետ Բագուում, որտեղ եւ հանդիպեցայ Ղարա Մելիքին։

Մինչեւ Ղարա Մելիքի հետ ծանօթանալս, ես նրա մասին ոչինչ չգիտէի, բացի այն, որ մեծ — մայրս ինձ պատմած էր, թէ՛ «Բարսեղը ինչե՛ր չի բերած թիւրքի գլխին»։ Իսկ Ղարա Մելիքի համեստութիւնը, անշուշտ, թոյլ չէր տւած պատմելու իր յեղափոխական գործերի մասին։

Ռուս — ճապոնական պատերազմի նախօրեակին էր։ Ղարա Մելիքը դեռ նոր էր ամուսնացել եւ իր երիտասարդ կնոջ հետ Թիֆլիսից, Բագուի վրայով, գնում էր Բերլին, որտեղ կինը մտադիր էր երաժշտութեան դասեր առնել։ Բերլինում իր կնոջը տեղաւորելուց յետոյ, Ղարա Մելիքը վերադառնում է Բագու, որտեղ նորից հանդիպում եմ նրան մեծ — մօրս տանը։ Շուտով լսեցինք, որ նրա ամուսնական կեանքը խանգարւել է՝ հասնելով դժբախտ վերջաւորութեան։ Նրա կինը չույլ եւ քայքայիչ ծախսեր անելուց յետոյ, գնում — ապրում է մի ինչ որ հրէա ուսանողի հետ, հետագային ունենալով նրանից երկու զաւակ։ Հրէան ձգել էր խեղճ կնոջը իր բախտին, եւ երբ Ղարա Մելիքը նորից վերադարձաւ Բագու, մի քանի տարուց յետոյ, այդ մոլորւած կինը օգնութիւն եւ ողորմութիւն էր խնդրւում նրանից... Իջմիածին կոնսիստորիան իր ժամանակին ապահարզանի իրաւունք տւեց Բարսեղին, եւ այդպէս վերջացաւ նրա կեանքի այդ էջը։

Այս ընտանեկան անսպասելի ու ծանր հարւածից յետոյ, Ղարա Մելիքը մտածում է գնալ Ամերիկա եւ լսելով, որ ես էլ բուռն ցանկութիւն ունեմ անցնելու Ամերիկա ուր եւ է բան սովորելու նպատակով, խոստանում է ինձ էլ տանել հետը։ Մի օր նա ասաց ինձ. «Եթէ

ես Ամերիկա երթամ, քեզ էլ հետս կը տանեմ»։ Այս խտուածը ինձ համար վառ յոյս էր, որի իրականացման մասին կասկած չունէի։ Մեր ծանօթութեան հէնց առաջին օրից Ղարա Մելիքը ինձ հաւատ ներշնչեց, թէ տւած խօսքը կատարող մարդ է, նրա «ոչ»-ը ոչ է եւ «այո»-ն՝ այո։ Եւ այդպէս էլ եղաւ։

Դեռ ուռւ - ճապոնական սլաւերագմը չէր սկսած, Ղարա Մելիքը նորից գնաց Բերլին մի կարճ ժամանակի համար, երեւի, իր ամուսնական խնդիրները վերջնականապէս կարգադրելու նպատակով։ Ապա շուտով վերադարձաւ Բագու եւ ժպիտով յայտնեց ինձ. «Գրիշա՛, գնում ենք Ամերիկա, պատրաստուիր»։

Պատերազմը սկսեց։ Մենք գտնուեալ էինք Բագուում եւ պատրաստութիւններ տեսնում մեկնելու համար Ամերիկա։ Երբ առաջին հեռագիրը լուր բերեց, թէ Ճապոնիան արդէն պատերազմական գործողութիւններ է սկսել Ռուսաստանի դէմ, Ղարա Մելիքը, ինչպէս եւ ամբողջ Կովկասի հայութիւնը, բացառանքեց՝ «եա՛, Տէր Աստուած», եւ ազաւում էր Նախախնամութեան, որ ցարական դարձելի կառավարութիւնը պարտւի եւ արժանաւոր պատիժը ստանայ այն չարիքները եւ անարդարութիւնները համար, որ բերել էր հայ ժողովրդի գլխին Տաճկաստանում եւ Կովկասում։

Բագուից մենք ճանապարհ ընկանք դէպի Վարչաւա։ Այստեղ Ղարա Մելիքն իրեն աւելի ազատ էր զգում։ Բագուում եւ Կովկասի դանազան մասերում ոստիկանութիւնը միշտ հետապնդում էր նրան, ամէն բանով կարող էր ձերբակալել եւ բանտ նետել կամ աքսորել։ Ղարա Մելիքը ճամբորդում էր պարսկական անցագրով, թէպէտ ինքը Ագուլիսից էր։

Մարտի սկիզբներին մենք հասանք Բերլին, որտեղ հանդիպեցինք մի քանի կովկասցի հայ ուսանողների, որոնցից այն տպաւորութիւնն ստացեց, թէ նոքա բոլորն էլ լաւ ճանաչում էին Ղարա Մելիքին եւ յարգում իբրեւ վետերան յեղափոխականի։ Այդ ուսանողներից մէկը հետագային վարդապետ ձեռնադրեց Բագուում. մի ժամանակ էլ գերմաներէն լեզու ուսուցիչ էր Բաթումի գերմանադիւանում. անունը, դժբախտաբար, մոռացել եմ։ Ինչպէս պարզեց ինձ, Ղարա Մելիքը շատ ծանօթ ուսանողներ ունէր թէ՛ Բերլինում, թէ՛ ժընեւում եւ թէ՛ ամէն տեղ, որտեղ կար հայ ուսանողութիւն։ Ղարա Մելիքի հետ չըլիման մէջ մտնող հայ ուսանողները դառնում էին կամ դաշնակցական, կամ համակիր ազատագրական պայքարին։ Հէնց հիմա էլ կան բազ-

մաթիւ հայ մտաւորականներ, որ իրանց յեղափոխական մկրտութիւնը ստացել են Ղարա Մելիքի ձեռքով։

Բերլինից, Համբուրգի վրայով, «Դէյշլանդ» նաւով անցանք դէպի նոր եւ անծանօթ աշխարհ՝ խորհրդաւոր ու առասպելական Ամերիկան։ 1904 թ. ապրիլ 1-ին հասանք Նիւ Եորք։ Դեռ քաղաք չը մտած, նաւից հեռագրով լուր տւինք մի հայրենակցի, որ մեզ դիմաւորի նաւային կայարանում։ Այդ մարդը ժամանակին նամակ էր գրել Ղարա Մելիքին, երբ վերջինս դեռ Կովկասում էր, եւ փառաբանելով նրա ազգային գործունէութիւնը՝ խնդրում էր, որ եթէ Ամերիկա դալու լինի՝ լուր տայ իրեն։ Շատ սպասեցինք, բայց այդ ամէն բան, բայց երբ մի գործնական ապացոյց է պահանջում, հրապարակ չեն դալիս։ Այդ դէպքը մի օրինակ է, այն դիւրահաւատութեան եւ հիասթափութեանց, որ Ղարա Մելիքը յաճախ ունենում էր գործնական կեանքում։ Նա իր օրինակով էր չափում ամենքին եւ կարծում էր, թէ ուրիշների խօսքն էլ համապատասխանում է գործին։

Նիւ Եորքից անցանք Շիքագո, ուր շփման մէջ մտանք տեղական հայ գաղութի հետ։ Այն ժամանակ Շիքագոյում էր ապրում Սապահ - Գիւլեանը, «Երիտասարդ Հայաստան»-ի խմբագիրը, որի հետ ծանօթացանք շուտով։ Ղարա Մելիքի եւ Սապահ - Գիւլեանի հանդիպումն ու յարաբերութիւնները քաղաքավարի եւ պարկեշտ էին։ Այն ժամանակ ամերիկահայ գաղութում դեռ նոր էր մշակուում միջկուսակցական անդորրութեան եւ սկզբունքային պայքարի իրաւունքների անձեռնմխելիութեան գաղափարը։ Դեռ նոր էին լաւացած կուսակցական կոիւններում պայթած գլուխները։ Շիքագոյում հնչակեան կոիւնները այնքա՛ն էին գիտցած, որ մի տեղական ամերիկեան թերթ, «Հըն-չակիստ» անունը տալիս էր զանազան զաւեշտական հերոսներին ծաղրական պատկերների մէջ։ Ղարա Մելիքի եւ Սապահ - Գիւլեանի Շիքագոյում գտնելը մի շատ լաւ առիթ էր դաշնակցականների եւ հնչակեանների համար համերաշխութեան սկզբունքը քարոզելու։ Այդ երկու կուսակցութիւնները միացեալ ուժերով կազմակերպեցին մի մեծ հրապարակային ժողով, ուր խօսեցին Ղարա Մելիքը եւ Սապահ - Գիւլեանը, եւ կարելի է ասել, որ այս ժողովը եւ դրա նմանները շատ նպաստեցին, որ միջկուսակցական կոիւններն ու խայտառակութիւնները մեղմանան եւ դադարեն։

Ղարա Մելիքի այցելութիւնները, Շիքագոյում եւ չըջակայ քա-

դաճներում բարոյական շատ մեծ ազդեցութիւն գործեցին դաշնակցական շարքերի եւ, ընդհանրապէս, հասարակութեան լայն խաւերի վերա: Հէնց այդ ժամանակները Շիքազօ եկաւ Հ. Յ. Դաշնակցութեան գործիչ Տիգրանեանը *): Դա մի շատ անկեղծ, սրտցաւ, բայց դիւրադիմաւոր էր եւ խիստ տաքարիւն խօսող: Կարելի է ասել, որ Տիգրանեանն ու Ղարա Մելիքը Ամերիկայում կատարած ազգային - դաշնակցական (հրապարակային պրոպագանդի) ռազմիրաններն էին, ի հարկէ, Վաւաճանին տալով առաջնութեան պատիւը եւ ամենակարեւոր տեղը:

Շիքազօյում մենք մնացինք մի քանի ամիս եւ մեր ձեռնարկած մի անյաջող գործը փակելով՝ հեռացանք այնտեղից: Գնացինք Սէնթ Լուիզ, ուր համաշխարհային ցուցահանդէս կար: Սէնթ Լուիզին կից, Իսթ Սէնթ Լուիզում կար մի մեծ հայկական դաղութ: Ղարա Մելիքը այնտեղ եւս չփման մէջ մտաւ հայկական շրջանների հետ եւ իր մասնակցութիւնը բերեց ազգային - յեղափոխական շարժման: Մի քանի օրից յետոյ մենք բաժանուեցինք. Ղարա Մելիքը մնաց Իսթ Սէնթ Լուիզում, իսկ ես ուղեւորեցի դէպի Բոստոն:

Սէնթ Լուիզից Ղարա Մելիքը դնացել էր Ֆիլադելֆիա եւ հիւր էր իր մի հին բարեկամի, տրապիզոնցի նախկին ուսուցչի, դաշնակցական Բիւզանդ Բադրատունիի: **) Շուտով նա ինձ էլ կանչեց այնտեղ: Գնացի, որովհետեւ Բոստոնում անելիք չունէի, բացի թօթափելուց բոլոր այն վառ յոյսերը, որ, Ամերիկա եկող բոլոր երիտասարդների պէս, ես էլ սնուցանում էի բոլորովին անտեղի կերպով:

Ֆիլադելֆիայում Ղարա Մելիքը նոյնպէս զբաղեց ազգային - յեղափոխական գործերով եւ Բիւզանդ Բադրատունիի հետ մասնակցել է Դաշնակցական տեղական Կոմիտէի ձեռնարկներին ու հաւաքոյթներին: Յաճախ խօսում էր հրապարակային ժողովներում: Երբ Վաւաճանը Բոստոնից եկաւ Ֆիլադելֆիա, պրոպագանդի գործը վաւերեց Ղարա Մելիքի աջակցութեամբ: Ղարա Մելիքը աջակցեց նաեւ Դր. Լորիս - Մելիքեանի առաքելութեան՝ ի նպաստ հայկական բանորոգումներին:

Երբ Կովկասում սկսեցին հայ - թրքական ընդհարումները, ստացւող հեռագիրները, հայկական կոտորածների մասին, սաստիկ

*) Թադէոս Խզմալեան — յայտնի մանկավարժ եւ հասարակական գործիչ:

**) Մի հետաքրքրական դէմք էլ սա. «Վէմ»-ի էջերում մեծ յօդած պիտի մտնէ Գեորգի Բադրատունիի եւ շատ շնորհակալ պիտի լինեմք, եթէ իրագեղները մեզ տեղեկութիւն հազարդեմ մրա մասին:

մտատանջում էին Ղարա Մելիքին: Հայկական դիմադրութեան լուրերն, ընդհակառակը, նրան սրտապնդում ու ոգեւորում էին, ինչպէս եւ ամբողջ ամերիկահայութեան: Ղարա Մելիքը բացարձակապէս մեղադրում էր ուսուցիչութեան, թուրքերին հայերի դէմ հանելու մէջ, թէպէտ ուսուցիչութիւնը յաջողութիւն չէր ունենայ, եթէ թուրքերը արդէն իսկ հայերի դէմ չլինէին: Աւելին, Ղարա Մելիքը համոզւած էր, որ հայկական բոլոր դժբախտութիւնների պատճառը, թէ՛ արեւմտեան Հայաստանում եւ թէ՛ Կովկասում, ուսուցիչութիւնն էր: Եթէ Ռուսաստանը ուղենար, շատ հեշտութեամբ կարող էր զսպել թրքութիւնը եւ ուժ տալ հայկական խնդրին: Մինչդեռ, իրապէս, ուսուցիչականութիւնը ամէն կերպ հակառակութիւն էր ցոյց տալիս հայերի ազգային ձգտումներին:

Ղարա Մելիքը մոլեռանդ կերպով հաւատում էր, թէ թրքահայութիւնը մի օր պիտի ազատուի, բայց ի՞նչպէս, — իրեն համար էլ պարզ չէր: Նա համոզւած էր, որ տաճկական լծի տակ ճգմած հայկական նահանգների բարենորոգութիւնը հնարաւոր է, եթէ հայ ժողովուրդը զանգւածօրէն ցոյց տայ զօրեղ ինքնապաշտպանութեան ոգի եւ սորվի դէնք գործածել: Իր բոլոր հրապարակային եւ անհատական խօսակցութիւնների մէջ, երբ հարցը ազգային ազատագրման մասին էր, նա միշտ շեշտում էր նախ եւ առաջ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը, եւ բեմերից բացաղանջում էր. «Հայ ժողովուրդ, յոյսերդ ուրիշի վրա մի՛ դիր, դէնք գործածել սորվի՛ր, դէնքով պիտի փրկես քեզ»:

Ղարա Մելիքի ամբողջ մտահոգութիւնը ուղղւած էր դէպի սահմանի այն կողմը՝ Տաճկահայաստան: Նա համոզւած էր, թէ՛ լաւ կամ վատ՝ ուսուցիչ լուծը աւելի տանելի է. եթէ Ռուսաստանը զբաղէր տաճկահայկական նահանգները, հայութիւնը դէթ Ֆիլիքական բնաջնջումից կազատէր: Կովկասահայութեան համար նա, ի հարկէ, որ եւ է ազգային ազատագրական կամ անջատողական գաղափարներ չէր սնուցանում: Եւ, անշուշտ, երբեք չէր երեւակայում այն դէպքերը, որոնք տեղի ունեցան Կովկասում 1918 թվականին եւ յետոյ — Հայաստանի Հանրապետութիւն, անկախ պետական դրօշ Արարատի կրծքին . . .

1913 թ. Օգոստ. 5 մի նամակում Ղարա Մելիքը գրում էր ինձ. «Նորութիւններ չկան: Ռուսաստանը պատրաստուած է զբաղել Հայաստանը. երանի՛ լինի եւ մի անգամից վերջ տրւի սոսկալի աւերածութիւններին: Ուղենք — չուղենք, դրանից լաւը չպիտի ստանանք. երկիրը դատարկուած է հայերից եւ գնալով կատարեալ ամայի դաշ-

տի կը վերածւեն հայկական նահանգները. այն ինչ ուսանելի գրաւելով՝ երկու խոշոր հատւածները — Ռուսահայ եւ Տաճկահայ — կը միանան իրար հետ եւ կուտուրապէս առաջ կերթան. փոխտտականները կը վերադառնան, մահմետական հայերը իրենց մայր եկեղեցու ծոցը կը դառնան, եւայլն»:

1905 թ. Յունիարին ես անցայ Ֆլորիդա, որտեղի օդը տաք էր եւ կեանքը աւելի հանգուրժելի շատ սահմանափակ նիւթական միջոցների տէր ուսանողների համար. Ղարա Մելիքը մնաց Ֆիլադելֆիա մի ժամանակ եւս եւ յետոյ վերադարձաւ Կովկաս: 1909 թ. յուլիսին, յանկարծ, Պետերբուրգից նրանից ստացայ մի հեռագիր, որով կանչում էր իր մօտ. Բաթումի ուսուցիչն էր թերթում կարգացել էր, որ ես նախապէս իւղեր մաքրելու մի նոր ձեւ էի գտել եւ կանչում էր, որ մի քանի նախնական փորձեր կատարեմ Նորէլի նախապէս ընկերութեան բնաւոժարանում: Ինձ համար երկնքից ընկած պարգեւ էր այդ: Երկիրքը հէնց ինքը Բարսեղն էր. նա՛ միայն կարող էր այդպիսի բաներ անել: Անշուշտ, նա մտածել էր. եթէ փորձերը յաջողութեամբ պսակեն, չա՛տ լաւ. եթէ ոչ, է՛հ, կը դայ, հարազատներին կը տեսնէ ու երկար տարիների կարօտը կառնէ:

Յուլիսի վերջերին ես արդէն Պետերբուրգումն էի. Ղարա Մելիքը գտնուում էր ալստեղ անձնական գործերով: Նա Կովկասից աքսորւած էր եւ իր կալածային ու նախահոգային բոլոր գործերը յանձնել էր մի շուշեցի փաստաբանի, որ գանձել էր նրա դրամները, բայց չէր ուզում կամ չէր կարողանում տալ. վճարում էր փոքր դումարներով, որոնք սառույցի պէս հալում էին Ղարա Մելիքի ձեռքում, մեծ մասամբ ուրիշների վրա: Ինքը Ղարա Մելիքը շատ համեստ կեանք վարող մարդ էր, շատ պարզ նիստ ու կաց ունէր, բայց միշտ շրջապատւած էր բազմաթիւ կարիքաւորներով: Մի օր մէկ բարեկամ, միւս օր մի ուրիշը. այսօր այս ազգականը, վաղը՝ միւսը. մի օր այս ինչ ծանօթն ու հայրենակիցը, միւս՝ մի ուրիշը, եւ այսպէս անվերջ. եւ բոլորին օգնում էր: Ուսանողներին ցոյց տւած աջակցութիւնը՝ իր կարգին: Ազգային գործերի համար տւած դրամների հաշիւը առանձին: Ղարա Մելիքը իրեն օգնութեան դիմող ոչ մէկին չէր մերժում՝ ծանօթ թէ անծանօթ: Երբ յաճախ ման էինք դալիս Նեւսկի պողոտայով, նա իր ձեռքում միշտ պատրաստ ունէր մի «աբասի», մի «գրիվենիկ» կամ մի «չահի» աղքատներին բաժանելու համար: Նեւսկի եւ Լիտէյնի գըլ-խաւոր փողոցների բոլոր մուրացկանները շատ լաւ գիտէին նրա բարի եւ համակրելի դէմքը:

Ղարա Մելիքը ապրում էր ուրիշների համար եւ դրա մէջ էր գըտ-

նում իրեն համար սիրտիանք: 1913 թ. յուլիս 4 նամակում նա գրում էր ինձ Թիֆլիսից. «Ես չկարողացայ ամառանոց դնալ եւ մնում եմ տապալկւելու ալստեղ, Թիֆլիսում. գոհ եմ, որ Բագուի շոգն ու փոշին չկան: Ինչ ունէի՝ բաժնեցի, մնացի «դէլ էն Կիկոն, դէլ էն Միկոն», բայց ուրիշ գործեր ձեռք եմ բերել, կարելի է Աստուծոյ յաջողէ եւ նորից մի բան ստանամ»: Այո՛, «մի բան ստանամ», որպէսզի նորից բաժանէ... Այսպէս է եղել Ղարա Մելիքը ամբողջ կեանքում:

Ալստեղ թերեւս հետաքրքիր լինի առաջ բերել մի դէպք Ղարա Մելիքի երիտասարդութեան կեանքից, որ այնքան բնորոշ է նրա համար: Ղարա Մելիքը ինքը պատմել է հետեւեալը. մի խումբ ցորենի վաճառականներ արհեստական սով էին ստեղծել Ագուլիսում: Ժողովուրդը սաստիկ նեղւում ու տառապում էր: Ղարա Մելիքը մտածում է մի խաղ խաղալ վաճառականների դիւին. նա մի քանի մարդկանց միջոցով ուղտեր է վարձում, բեռնաւորել է տալիս խոտով լեցւած ցորենի տոպրակներով եւ, նախօրօք լուր տարածելով, թէ ցորենի մեծաքանակ բեռներով բեռնաւորւած կարաւան է գալիս, ուղտերին դանդաղօրէն շարժում է դէպի Ագուլիս: Լուրը կրակի պէս տարածւում է ամէն կողմ: Վաճառականները շտապում են մարդ ուղարկել կարաւանի առաջ, որոնք հեւ ի հեւ վերադառնալով՝ յայտնում են, թէ իրենց աչքերով տեսել են ցորենի տոպրակներով բեռնաւորւած ուղտերի կարաւանը: Վաճառականները շտապում են բանալ պահեստները եւ աժան դնով վաճառքի հանել ցորենը: Երբ Ղարա Մելիքի «ցորենի բեռները» մտնում են դիւղ, վաճառականների պահեստներն արդէն դատարկւել էին: Բայց որքա՛ն է լինում վաճառականների ապշուլթիւնն ու կատաղութիւնը, երբ յայտնի է դառնում իրենց դիւին խաղացւած խաղը:

Ղարա Մելիքը ատելով ատում էր այն հայերին, որոնք պինդ փակելով իրենց գրպանները՝ ուրիշի հաշին ազգասիրութիւն էին անում. նա շատ խիստ քննադատում էր հայ անհատներին, որոնք զլանում էին նիւթապէս աջակցել ազատագրական շարժման: Ի սրտէ ցաւում էր հարուստների ազգային անտարբերութեան առթիւ եւ սաստիկ դատապարտում, ատում էր չարչիականութիւնը, թէեւ կարծում էր, որ տիրող տնտեսական պայմաններում հարուստ դասակարգը որոշ օգտակարութիւն ունէր հայ ազգի համար, եթէ ոչ ազատագրական, դէթ մշակութային ու տնտեսական տեսակէտից: Ղարա Մելիքը համակիր էր ընկերավարութեան. հաւատում էր, թէ պիտի դայ մի ժամանակ, երբ մարդկային շարքաչ կեանքը և անարդարութիւնները պիտի վերանան եւ աւելի արդար կարգեր հաստատուին: Սակայն, ըստ իմ գիտո-

ղութեան, նա չէր հաւատում, որ հասարակութեան ցաւերը դարձանելու համար պէտք է այդ հասարակութիւնը տակն ու վրա անել եւ նրա բարդ ընկերային կազմակերպութիւնը զանազան արկածների ենթարկել: Նա անքուն չէր մնում այն մասին, թէ ընկերվարութիւնը ինչ բարիքներ պիտի բերէր հայ ազգին ապագայում. նրա ամենակարեւոր հոգսն էր հայ ազգի ֆիզիքական դոյութեան փրկութիւնը եւ ազգային հաւաքականութեան ստեղծումը: Ղարա Մելիքը ներկայացնում էր Դաշնակցութեան զանգւածների ազգային արտայայտութիւնը եւ ձգտումների մարմնացումը, կամ, եթէ այսպէս կարելի է ասել, խորհրդանշանը:

Պետերբուրգից եւ անցայ Կովկաս, ուր մնացի մինչեւ 1909: Այնտեղից կրկին գնացի Պետերբուրգ, Բարսեղի մօտ, ապա նորից եկայ Ամերիկա, ուր 1910 թ.՝ յուլիսին լրացուցի ուսումս եւ վերադարձայ Պետերբուրգ: Այս իմ գնալն ու դալը անհնար պիտի լինէր, եթէ Ղարա Մելիքը նիւթապէս ու բարոյապէս օգնած չլինէր: Պետերբուրգ նրա մօտ եկան եղբոր որդին եւ իմ եղբայրը, երկուսն էլ ուսանողներ: Մի քիչ անցած էլ Գերմանիայից եկաւ Ղարա Մելիքի երկրորդ եղբորորդին, նոյնպէս ուսանող: Բոլորս էլ հաւաքւած էինք Բարսեղի թեւի տակ: Բոլորս էլ ապրում էինք ապագայի յոյսերով: Մեր մըտքովն իսկ չէր անցնում, թէ ինչ փոթորկալի օրերի նախօրեակին ենք գտնուում: Մենք էլ չգիտէինք, թէ ինչ են մեր յոյսերը: Մեր մարմինը գտնուում էր Պետերբուրգում, բայց մեր սիրտն ու հոգին, մեր բովանդակ միտքը այնտեղ էին, Կովկասեան լեռներում, Սեւ Ծովի ափերին: Օտար Պետերբուրգը է՛լ աւելի բորբոքում էր մեր մէջ ազգասիրական զգացումը, աւելի ու աւելի գնահատում ու սիրում էինք մեր, հեռւոր հայրենիքը եւ մեզ յանցաւոր էինք զգում նրա հանդէպ, որ լքել ենք նրան, փախել հեռացել օտար եւ անձանօթ աշխարհ:


Պետերբուրգում Ղարա Մելիքը շուտ շուտ հիւանդանում էր կոյր աղիքի քրոնիկական բորբոքումով, բայց մի քանի օր անկողնում մընալուց յետոյ՝ նորից ոտքի էր կանգնում եւ անտրտուն շալակում կեանքի բեռը: Մի քանի ամիս յետոյ, Ղարա Մելիքի հիւանդ եղբոր որդին վախճանեց թոքերի հիւանդութիւնից եւ կոյր աղիքի վերաբուժական գործողութիւնից առաջ եկած բարդութիւնից: Մի նոր եւ ծանր հարւած նրա համար, որին նա ենթարկւեց անտրտուն: Պետերբուրգեան մեղամաղձոտ մի առաւօտ, անշուշտ, սառած հոգին յանձնեցինք մեր տարաբախտ ընկերոջ:

1910 թ. Ղարա Մելիքը եւ եւ վերադարձանք Բագու: 1913 թ.

մարտ 7-ին, կեանքը նորից ինք հարկադրեց մեկնել Ամերիկա: Մեր վերջին բաժանումն էր. այդ օրից յետոյ եւ այլեւս Ղարա Մելիքին չտեսայ: Երկու եւ կէս տարի յետոյ, 1915 թ. նոյեմբերին լուր ստացայ, որ նա վախճանւել է Թիֆլիսում թոքերի բորբոքումից, որ առաջ էր եկել մրսելուց: Նրա մահը խոր սգի մէջ ձգեց բոլոր նրան ճանաչողներին:

Բարսեղին կարելի չէ յիշել առանց յուզումի: Մեր անմոռանալի «Բիճա»-ն, մեր «Դեաղինկա»-ն, Բարսեղ Մելիք – Գրիգորեանը, նա ինքը Ղարա Մելիքը, մի ազնիւ, վեհանձն, մերձաւորի, ազգի եւ մարդկութեան համար տառապող, մեղմ եւ քնքոյշ բնավորութեամբ, խղճմտանքով լի հայ մարդու տիպ էր: Եւ միաժամանակ մեծահոգի, հուժկու կամքի տէր, գիտակից, անձնազոհ եւ գործունեայ յեղափոխական գործիչ: Նա մէկն էր այն հիմնական քարերից, վէմն հաստատուն, որի վրա կանգնած է հայ ազատագրութեան տաճարը: Եւ ինչպէ՛ս կարող էր լինել ուրիշ կերպ, երբ Ղարա Մելիքը Քրիստափոր Միքայէլեանի հարազատ գաղափարակից ընկերն էր:

Քիլիլեկ



Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԻ ԱՌԹԻԻ

«Վէմ»-ի անցեալ համարում վերջացան Վ. Փափազեանի յուշերը Տարօն - Տուրուբերանի դէպքերի մասին: Զափաղանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ այդ, ինչպէս եւ Վ. Մինախորեանի յուշերը մինչեւ այժմ «Վէմ»-ի մէջ հրատարակւած ամենէն ցնցող մարդկային վաւերագրերն են: Ես գիտեմ ընթերցողներ, որոնք լացով են կարդացել այդ գրւածքները եւ կարդալուց յետոյ անքուն գիշերներ են անց կացրել:

Եւ, յիշուի, զարհուրելի բաներ են Վ. Փափազեանի պատմածները: Զարհուրելի ո՛չ միայն թիւրքերի դործած բարբարոսութիւններով, ո՛չ միայն ժողովրդի քաջած աննկարագրելի տառապանքներով, ո՛չ միայն գերակատարների հոգեկան ծանր ապրումներով, այլ, մանաւանդ, դիմադրական ա՛յն տկար ոգիով եւ ղեկավարութեան բացարձակ անկարողութեամբ, որով ներկայանում է մեզ Տարօնի աշխարհը Հայկական եղեռնի օրերին: Մինչ անդին Վասպուրականը, տաղնապի գերադոյն վայրկեանին, իր մէջը բաւական կամք եւ վրձնականութիւն ունեցաւ դիմադրելու համար ահաւոր վտանգին ու փրկւեց, Մուշն ու Սասունը, որոնց վրա, տասնեակ տարիներ, ոչ պակաս յեղափոխական ուժ ու գուրդուրանք էր թափւել, հոգեպէս ու կազմակերպական տեսակէտից անպատրաստ գտնւեց ու կործանւեցաւ: Ինչո՞ւ այդպէս պիտի լինէր, ինչո՞ւ այդպէս եղաւ: Վ. Փափազեանի յուշերը անողոք ու սարսափելի են իրենց դաժան պատասխաններով:

Պէտք է ասել, որ դրսի ուժերն էլ իրենց պարտականութիւնը լրիւ կերպով չկատարեցին Տարօն - Տուրուբերանի վերաբերմամբ: Մինչ Արամի օգնութեան ճիշդ արագ արձագանք գտաւ Կովկասում, եւ ուսումնականի առաջապահ կամաւորների Արարատեան ջոկատը ժամանակին հասաւ եւ փրկեց պաշարւած Վանը, Մշից հասնող օգնութեան աղաղակը դուրսագլխից ուսումնականի խուճապային նահանջի առաջ բերած բարոյալքման եւ մնաց ձայն բարբարոյ յանապատի:

Այն ինչ, պէտք է վկայել, որ Տարօնի վիճակը ոչ պակաս, թերեւս եւ աւելի էր յուզում Կովկասի հայութեան միտքը քան Վասպու-

րականին: Մասնաւորապէս Ռոստոմն ու Անդրանիկը շատ էին մըտահոգւած Մուշ ու Սասունի ճակատագրով: Եւ, սակայն, նոյն Անդրանիկը, քիչ յետոյ, երբ պէտք եղաւ յանդուգն մի շարժումով օգնութեան փութալ հոգեվարքի օրեր ապրող Տարօնին, մարդկային տրակարութեան մի ողբալի հոգեվիճակ երեւան բերեց: Եւ յետոյ - ես գիտեմ - անհունօրէն տանջւեց խղճահարութեան մղձաւանջային նուազանքից...

Ես լաւ եմ յիշում այդ օրերը: 1915 թ. յուլիսն էր: Ն. Աղբալեանի հետ Վասպուրականում էի կամաւորական գործերով: Յուլիսի առաջին օրերին մեր կամաւորները, իրենց զօրավար Տրուխինի ջոկատի յառաջապահներ, Ուրթալի տակն էին: Վանայ լճի ամբողջ հարաւը գրաււած էր բոլորովին: Երբ մենք հասանք Արարատեան ջոկատը, մեր կամաւորները արդէն ճակատում էին Ուրթալի բարձունքներում դիրք բռնած թշնամու դէմ, իսկ հրետանին ռմբակոծում էր Ռահվա դաշտը: Յիշում եմ՝ մի խորհրդակցութեան մէջ, որին ներկայ էին Վարդանը, Անդրանիկը, Դրօն, Քեռին, Համաղասալը, Խէչօն եւ ուրիշներ հրամանատարական կազմից, քննութեան առնւեց շուտով դէպի Տարօն արշաւելու խնդիրը եւ ամենից անհամբեր էին երեւում Անդրանիկն ու Դրօն, մանաւանդ Անդրանիկը, որ հին յիշողութիւններ ու համակրանքներ ունէր կապւած հերոսական Սասունի ու Մուշի հետ: Ենթադրւում էր, որ Տարօնի գրաւումը օրերի հարց է: Ամենքիս զբաղեցնողն ու անհանգստացնող միտքը միայն այնտեղի ժողովրդի վիճակն էր - ո՞ղջ էր, տեղահանւո՞ւմ էր, թէ՞ կոտորւած...

Խէչօի թաղումից յետոյ, ամսաթիւը լաւ չեմ յիշում, երեւի յուլիս 12 - 13-ին, ես վերադարձայ Կովկաս: Արդէն Բերկրիում լսեցին չարագուշակ լուրեր, թէ ուսումնական բանակը բոլոր ճակատներում նահանջում է: Տեսանք եւ փախտականների առաջին խմբերը, բայց ոչ ոք ոչինչ չգիտէր: Արաղայի դաշտում լուրերը աւելի ստույգ դարձան. այո՛, ուսումնական ջորքերը նահանջում էին: Կարծեմ Թափառիգի վերա էր հանդիպեցի Մոսկւայի Կոմիտէի բժշկա - սանիտարական խմբին՝ Յովս. Թաղէոսեանի գլխաւորութեամբ, որ գնում էր Վան: Որոշեցինք խմբի ուժերն ու միջոցները տրամադրել նոր գաղթականների տեղաւորման եւ դիմում անել չորրորդ կորպուսի հրամանատարութեան՝ խնդրելով մի շարք վայրերում գաղթականական կայաններ հաստատել՝ տեղահան եղած հայութիւնը պաշտպանելու եւ խնամելու նպատակով:

Երբ հասայ Իգտիր, իրարանցումն ու խուճապը արդէն ընդհա-

նուր էր: Իգտիրի շրջակայքը թափւած էին հազարաւոր փախստականներ Ալաշկերտից եւ ուրիշ տեղերից: Հեռագիրները հաղորդում էին, որ Վասպուրականն էլ տեղահան է եղել ու շարժւել դէպի Կովկաս: Հարկաւոր էր անմիջապէս կազմակերպել օգնութեան ու պաշտպանութեան գործը, իսկ դրա համար անհրաժեշտ էր բանակի հրամանատարութեան արտօնութիւնն ու աջակցութիւնը: Ազգ. Բիւրոյի հրահանգով եւ մեկնեցի չորրորդ կորպուսի կենտրոնավայրը, որ, աւտով էին, Կաղզւանումն էր: Վերջին վայրում, սակայն, իմացեց, որ զօր. Օգանովսկին հաստատուել էր Նովո - Նիկոլաեւկա գիւղում, ուր եւ գտայ նրան զլուխը կորցրած դրութեան մէջ:

Այնտեղ էր եւ Տիգրան Դէվոյեանը, որ այն ժամանակ զբաղւած էր հետախուզական գործով: Նախ քան հրամանատարին դիմելը, ես խորհրդակցութիւն ունեցայ Դէվոյեանի հետ, եւ միասին կազմեցինք այն կէտերը, որոնց կարգադրութիւնը պէտք էր խնդրել, զօր. Օգանովսկուց: Ծիշտ այդ օրերին Դէվոյեանը Մշից տեղեկութիւններ էր ստացել: Բերել էին սղերդցի երկու եղբայրներ՝ Տիգրան ու Խէչօ - երկու սքանչելի քրդախօս երիտասարդներ, որոնք մահը աչքի առնելով՝ ձեռքէլ էին թրքական ռազմագիծը եւ տեղ հասցրել իրենց վստահւած նամակը - մի երկար, հմայելի ձեւով ծաւաւած թուղթ, որի մէջ տեղեկութիւններ էին ամփոփւած թիւրքական զօրամասերի ու հայ ժողովրդի դրութեան մասին եւ շուտափոյթ օգնութիւն էր խնդրում: Տիգրանն ու Խէչօն դեռ Դէվոյեանի մօտն էին եւ պատրաստուում էին նամակի պատասխանը տանելու:

Պէտք է փակադծի մէջ ասել այստեղ, որ հետագային Տ. Դէվոյեանի անունը շատ է քաջքշւել, մանաւանդ, Անդրանիկը եւ Տարօնի գործիչները նրա հասցէին խիստ ծանր ամբաստանութիւններ էին տրել. նրան մեղադրում էին, որ, իբր թէ, բարեխղճութեամբ չի կատարել իր պաշտօնը, որ թշնամու ուժերի քանակի մասին չափազանցւած տեղեկութիւններ է տւել ռուս հրամանատարութեան եւ դրանով նահանջի պատճառ դարձել: Դժւար է ասել՝ որքան հիմնաւոր են այդ մեղադրանքները: Ամէն պարագայի տակ, Տ. Դէվոյեանը, որ արտասահման է եւ հնարաւորութիւն ունի ազատօրէն արտայայտւելու, պարտաւոր է իր խօսքն ասել եղած մեղադրանքների մասին: «Վէժ»-ը անուշտ, տեղ կը տայ նրա առաջադրելիք փաստերին:

Նախ քան զօր. Օգանովսկուն ներկայանալը, Տ. Դէվոյեանի հետ խորհրդակցարար կազմեցինք մի յուշագիր, որի մէջ դրւած էին անմիջական գործադրութիւն պահանջող կէտերը: Որքան յիշում եմ, իմ

միջոցով, Հայոց Ազգային Խորհուրդը չորրորդ կորպուսի հրամանատարից խնդրում էր -

1) Հրաման տալ համապատասխան զօրամասերին, որ ապահովեն հայ ժողովրդի արտագաղթը դէպի Կովկաս:

2) Վասպուրականի եւ Ալաշկերտի ճանապարհի վրա, որոշ կէտերում, հաստատել զօրապահակներ, սնունդի եւ բժշկական կայաններ, դաղթականներին օգնելու համար:

3) Տրամադրել անհրաժեշտ քանաութեամբ սնունդ եւ բժշկական միջոցներ:

4) Տրամադրել փոխադրութեան միջոցներ՝ հիւանդ եւ քաղցու անկարող դաղթականների տեղափոխութեան համար:

Եւ 5) Հրամայել հայ կամաւորական զնդերին, տալով նրանց թնդանօթներ եւ օժանդակ ռուսական ուժեր, թիւրք բանակի թիկունքից, օգնութեան հասնել Մուշի հայութեան:

Այս վերջին կէտը դուրս էր Ազգ. Բիւրոյի կողմից տրւած հրահանգից, բայց Տիգրանի եւ Խէչօի բերած տեղեկութիւնները այնքան ծանրակշիւ էին եւ օգնութեան պահանջը այնքան անյետաձգելի, որ Դէվոյեանի հետ համախորհուրդ որոշեցինք այդ պահանջն եւս մըտցնել յուշագրի մէջ եւ անձնական տեսակցութեան ժամանակ էլ պաշտպանել:

Զօր. Օգանովսկին, եօթանասունը անցած այդ բարի ծերուկը, մեզ ընդունեց, սովորականի պէս, շատ սիրալիր: Նա հայից ոչ պակաս սրտցաւութիւն էր ցոյց տալիս դէպի հայկական գործերը եւ ռուսական շրջաններում յայտնի էր իրրեւ «անուղղելի» հայասէր: Կարգաց յուշագիրը, լսեց իմ բացատրութիւնները, արտասուեց եւ խոստացաւ ամէն բան կատարել: Մանաւանդ, նրան դիւր եկաւ յուշագրի վերջին կէտը, որ ռազմական տեսակէտից էլ արժէքաւոր հետեւանքներ կարող էր ունենալ: Ու սկսեց պատմել նման մի դրւագդ զինուորական կեանքի հեռաւոր անցեալից: Ծիշտ այդ պահուն ներս մտաւ իր սպայակոյտի պետը՝ զօր. Մդիվանին, բարձրահասակ ու ներկայանալի մի զինուորական, որ իսկապէս զօրամասի գործերի իրական ղեկավարն էր:

Զօր. Օգանովսկին շտապեց մեզ ծանօթացնել: Զօր. Մդիվանին, մի քանի շատ սիրալիր խօսքերից յետոյ, կարգաց յուշագիրը, լսեց իր պետի բացատրութիւնները եւ պաղ ջուր լեցրեց բոլորիս գլխին. նահանջող բանակը այնպիսի վիճակի մէջ է, որ մեր խնդրած կէտերից եւ ոչ մէկը հնարաւոր պիտի լինի գործադրել. դաղթականներին օգնելը զօրքի գործը չէ, դրա համար կան թիկունքի կազմակերպու-

թիւներ. հայ կամաւորները հազիւ թէ կարողանան թշնամու բանակի թիկունքը անցնել. այդ շատ վտանգաւոր ձեռնարկ է: Մի խօսքով, մոայլ յոռետեսութիւն: Զօր. Օգանովսկին փորձեց Մզիվանիի ասածները մեղմացնել, յուսադրել ու քաջալերել, բայց պարզ էր, որ պիտի կատարէր Մզիվանիի ասածը եւ ոչ իրենը, ինչ որ եւ հաստատուեց հետագայ դէպքերով:

Երբ ես վերադարձայ Իգտիր, արդէն գաղթականութիւնը խճողւած էր ամէն կողմ: Հասել էր եւ կամաւորական խմբերի մի մասը: Մարդիկ էին եկել եւ Թիֆլիսից ու Երեւանից: Այնտեղ էին Ռոստոմը, Անդրանիկը, Արամը, Արմէն Գարօն, Վարդանը, Դրօն, Իշխանը, Աղբալեանը եւ ուրիշներ: Տեղի ունեցան մի շարք յուզումնալից խորհրդակցութիւններ ստեղծւած կացութեան մասին: Քննութեան առաջին խնդիրը Տարօնի հայութեան շտապով օգնութիւն հասցնելու հարցն էր:

Այս ժողովների միջոցին պարզեց մի հարկից՝ աւելի տխուր պատմութիւն, որ յետոյ հաստատուեց եւ պաշտօնական փաստերով: Երբ նահանջի հրամանը դալիս է Վանի լճի հարաւի զօրամասի պետ զօր. Տրուխինին, վերջինս, Դրօնի եւ մօտը եղող միւս խմբապետների դիմումի վրա, արտօնում է հայ կամաւորական բոլոր զնդերին, ուստական թնդանօթների եւ կազակ հարիւրակների օգնութեամբ արագօրէն շարժել դէպի Մուշ՝ մի կողմից այնտեղի հայութիւնը ազատելու եւ միւս կողմից թիւրք բանակին թիկունքից զարնելու եւ խուճապի մատնելու դիտաւորութեամբ: Բայց այս ծրագրին հակառակում է Անդրանիկը, որ Մուշի ուղղութեամբ առաջաւոր դիրքերում էր, հազիւ 30 քիլոմետր Տարօնի գաշտից: Նա թուղթ է գրում հեծելազօրի պետ զօր. Շարպանտիէին *) յայտնելով, թէ ինքը հնարաւոր չի համարում զօր. Տրուխինի կարգադրութիւնը կատարել, որովհետեւ կարող է կտրւել ուսական բանակից, եւ առանց պատասխանի սպասելու՝ թողնում է դիրքերը եւ բռնում նահանջի ճամբան...

Ինչպէս ասում էին, Անդրանիկն այնքան ջղայնացած ու բարոյալքւած էր, որ ճանապարհին ոչ մի տեղ չի կանգնում եւ իր զինւորներն առած՝ աշխատում է օր առաջ հասնել Կովկաս: Նոյն իսկ Բերկրիում, ուր խոնւած էր Վասպուրականի գաղթականութիւնը, մերժում է տրամադրել իր ուժերը ժողովրդի պաշտպանութեան համար եւ ան-

*) Այդ քրքի պատկերը, գրած Անդրանիկի գործավար Աշխարիէգ Լորու Մելիք - Քալանթարյանի ձեռագիր եւ Անդրանիկի ստորագրութեամբ, գտնուում էր կամաւորական առաջին գնդի ղիւսմական քրքերի մէջ:

պաշտպան թողնելով բազմահազար բազմութիւնը՝ շտապում է հեռանալ: Բարեբախտաբար, վրա է հասնում Դրօն իր զօրամասով եւ իր վրա է աւելում Բերկրիի պաշտպանութեան գործը: Ականատեսները վկայում էին, որ եթէ Դրօն ժամանակին չհասնէր, Վասպուրականի հայութեան մի ահաբեկ մասը կը կոտորէր Բերկրիի ձորում:

Իգտիրում էլ, ժողովների ժամանակ, Անդրանիկը շատ տարօրինակ դիրք բռնեց: Գլխաւորապէս, Արմէն Գարօն եւ Դրօն, որքան յիշում եմ, եւ Ռոստոմն ու Արամը պնդում էին եւ միւսներն էլ համամիտ էին, որ կամաւորական զնդերից կազմւի մի յատուկ զօրամաս, որ անմիջապէս փութայ Տարօնի օգնութեան: Առաջարկւում էր, որ զօրամասի ղեւելը կանգնէ ինքը Անդրանիկը, բայց սա բռնու կերպով հակառակ արտայայտուեց այդպիսի մի ձեռնարկի: Նրա կարծիքով, յիմարութիւն էր միայն հայկական ուժերով առաջ շարժւելու միտքը: Ինչպէ՞ս կարելի է այդքան փոքր ուժերով կռիւ դուրս գալ թիւրքական բանակի դէմ: Ոչ ինքը կ'երթայ, ոչ էլ ուրիշին խորհուրդ կը տայ այդպիսի մի քայլ անելու, որ հաւասար է էջ նահատակութեան...

Անդրանիկի բռնած դիրքը ուղղակի շմեցուցիչ էր բոլորի համար: Երբ ժողովը այնուամենայնիւ, հակառակ նրա բռնու հակառակութեան, որոշեց զօրամաս կազմել եւ օր առաջ ճանապարհ դնել դէպի Մուշ, Անդրանիկը ջղայնացած թողեց ու հեռացաւ եւ այլեւս չը մասնակցեց խորհրդակցութիւններին: Բաւական ձգձգումներից յետոյ, կազմուեց կամաւորական յատուկ մի ջոկատ, որի ղեւելն անցաւ Դրօն եւ շարժւեց Տարօնի ուղղութեամբ: Դժբախտաբար, արդէն ուշ էր. յուլիսի 20 - 25-ին, ճիշտ երբ Իգտիրում սկսւել էին աղմկոտ խորհրդակցութիւնները, Տարօնի ժողովուրդը կոտորւել էր: Եթէ 10 - 15 օր առաջ Անդրանիկը կատարէր զօր. Տրուխինի հրամանը, ո՞վ գիտէ, թերեւս Տարօնի ողջ մնացած հայութիւնը փրկւած կը լինէր...

Դրօն իր զօրամասը ուղղեց դէպի Զիւան: Եւ Զիւանի արշաւանքը եղաւ նրա մարտական գործունէութեան փայլուն էջերից մէկը:

Պէտք է ասել, որ յուսահատութեան ու բարոյական կազմալուծման այս դէպքը առաջինը չէր Անդրանիկի կեանքի վերջին շրջանում: Նոյն երեւոյթը տեղի էր ունեցել եւ առաջին նահանջի ժամանակ, 1914 թ. դեկտեմբերին, երբ ջղայնացած եւ, աջ ու ձախ, ձեռքը ընկած մարդկանց հաշոյնելով ու ծեծելով՝ թողել հեռացել էր դէպի Զուղա՝ երեսի վրա ձգելով Սալմաստի եւ Սոյի հայ գաղթականութիւնը: Նոյն պատկերը, աւելի ճակատագրական հետեւանքներով, կրկնեց եւ 1918-ին, Կարնոյ դէպքերի ժամանակ եւ, մանաւանդ, Ղարաբաղի-

սէի ճակատամարտի օրերին, երբ մերթեց կատարել զօր. Նազար-բէգեանի զինուորական հրամանը եւ իր զօրամասն առած՝ քաշեց հեռացաւ Դիլիշան, ապա՝ Բայազէտի, Վայոց Ձորի ու Նախիջեւանի վրայով դէպի Պարսկաստան: Կուր ժամանակ վախ չճանաչող այս անվեհեր ու քաջ հայդուկը, այդ անպայման բարձրատաղանդ ու հայրենասէր զինուորականը, նահանջի օրերին դարձանալի արագութեամբ մատնուով էր յուսալքման, դառնում էր ջղաբերդի ու անտանելի եւ իր հոգեկան քայքայած վիճակով բարոյալքող ազդեցութիւն էր աւնում եւ շրջապատի վրա:

Այդպէս եղաւ եւ 1915-ի նահանջի ժամանակ. հերոսական ոչինչ չկար նրա ընթացքի մէջ: Երբ Իգտիրում տեսաւ, որ հակառակ իր պնդումի, Տարօնի արշաւանքի առաջարկն անցաւ, ջղայնացած հրաժարեց՝ քանի՜ երրորդ անգամ՝ գնդի հրամանատարութիւնից, ամէն ինչ ձգեց երեսի վրա ու հեռացաւ այլեւս երբեք չվերադառնալու յայտարարութեամբ: Առաջին գնդի գործերը ստիպւած եղայ ստանձնել ես, կամաւորներին ու գոյքերը փոխադրեցի Աւան գիւղը, Երեւանի մօտ, ուր տեղի ունեցաւ գնդի վերակազմութիւնը: Ամիսներ յետոյ, երբ գունդը՝ լրացւած ու վերակազմւած՝ արդէն պատրաստ էր արշաւանքի, Անդրանիկը վերադարձաւ Թիֆլիսից եւ գնդի կամաւորներին գլուխն անցած՝ նորից գնաց պատերազմի դաշտ: Սակայն, այս անգամ էլ երկար չմնաց՝ գունդը յանձնեց Սմբատին եւ վերջնականապէս քաշեց գործերից, մինչեւ 1918-ի եղբերական օրերը...

Ս. ՎՐԱՑԵԱՆ



Հայ - Հայկական Բանակցութիւնները

ՆԻՍՏ ԵՐՐՈՐԴ

Երրորդ նիստը տեղի ունեցաւ հոկտ. 30-ին, երեկոյեան ժամը 8-ին:

Ներկայ էին բոլոր անդամները:

Նախագահում էր, ըստ հերթի, Պ. Վ. Թէֆէեանը:

Նախագահը բանալով նիստը՝ առաջարկեց չարունակել մտքերի փոխանակութիւնը:

Ս. Վրացեան. — Նախորդ նիստում մենք խօսեցինք Խորհրդարանի եւ պատերազմութեան մասին: Այժմ զբաղենք կառավարութեան խնդրով:

Երկու սկզբունք է առաջադրւած մեզ ներկայացւած ծրագրի մէջ՝ 1) Որ կառավարութիւնը բաղկացած լինի արեւմտահայ եւ արեւելահայ ներկայացուցիչներից, եւ 2) որ նրա մէջ ներկայացւած լինեն կուսակցութիւնները:

Մենք պէտք է կանգնենք հատուածական (արեւմտահայ — արեւելահայ) ներկայացուցչութեան վրա եւ աշխատենք, որ ամենալայն հնարաւորութիւն տրւի արեւմտահայ հատուածին մասնակցելու կառավարութեան մէջ: Այստեղ առաջարկւած է կառավարութեան կէսը նշանակել արեւմտահայերից. փափաքելի է նոյն իսկ, որ կէսից աւելին էլ տրւի արեւմտահայերին: Բայց դրանից յետոյ, պէտք է որ կառավարութիւնը գործի ընդհանրապէս ընդունւած եղանակով, այսինքն՝ վճիռները տալով ձայների մեծամասնութեամբ, եւ ոչ այն եղանակով, որ առաջարկւած է պատերազմութեան կողմից:

Նախագահ. — Այստեղ այդ ասւած է բացառիկ խնդիրների մասին միայն, ինչպէս պատերազմ յայտարարելու, ընկերային հարցերի եւ այլն:

Ս. Վրացեան. — Բայց այդ կարգի խնդիրների համար պէտք է հրաւիրել պարլամենտը:

Ինչ վերաբերում է կուսակցական կազմին, ես գտնում եմ, որ այստեղ դրւած պահանջը, որ կառավարութեան մէջ կէսը ներկայացւած լինի Դաշնակցականներից եւ միւս կէսը միւս հոսանքներից,

բունադաստիկ է. մենք պէտք է աչքի առաջ ունենանք ուժերի իրական յարաբերութիւնները, որոնք չեն համապատասխանում դրւած պահանջներին, թէ այստեղ երկրում եւ թէ բոլոր գաղութներում: Եւ այդ պատճառով կառավարութեան մէջ պէտք է ապահովենք գերակշռութիւնը այն հոսանքի, որ ժողովրդի մեծամասնութեան կամքի արտայայտիչն է: Եւ այդ գերակշռութիւնը չի կարող արդէլ լինել կառավարութեան գործերի համերաշխ ընթացքին, քանի որ կարեւոր հարցերի վերաբերմամբ յատուկ համաձայնութիւն կը կայացնենք:

Նախագահ. — Մեզ համար էլ առանձնապէս կարեւորութիւն ունի հատուածների համաձայնութիւնը եւ նրանց ձայների հաւասարութիւնը, իսկ կուսակցական կոալիտիոնի յարաբերութիւնը սկզբունքով կրնո՞ւնենք աչքի առաջ ունենալով այստեղի դրութիւնը: Պէտք է ի նկատի ունենանք, որ այժմեան պարլամենտի ընտրութիւններին չեն մասնակցել երկու կուսակցութիւններ, որոնց մասնակցութիւնը, ի հարկէ, կարող էր փոխել եղած յարաբերութիւնները: *)

Ինչ վերաբերում է գաղութներին, այստեղ դեռ նման ընտրութիւններ չեն եղած բոլորովին, եւ մենք չունենալով փորձ՝ չենք կարող որոշակի բան ասել նրանց տրամադրութիւնների մասին: Օրինակ, Ամերիկայի հայ գաղութի մասին ինձ յայտնի է, որ Ազգային Համագումարի համար այնտեղ ընտրւած էին երկու դաշնակցական եւ երկու ոչ — դաշնակցական. միւս տեղերում պատկերը նոյնպէս չի վկայում դաշնակցական ձայների գերակշռութեան մասին: Իսկ վերջին Ազգային Համագումարը, որ որոշ չափով միակ մարմինն է եղել, որ ներկայացուցեր է հայկական գաղութների եւ Պոլսոյ ու Կիլիկիայի տրամադրութիւնները, տւել է 26 անկուսակցական եւ 13 դաշնակցական պատգամաւորներ: Եւ այդ թւում կային երկու կողմից էլ թէ՛ ընտրւածներ եւ թէ՛ նշանակւած անձինք: Այսպիսով, յարաբերութիւնը այնտեղ տալիս է 2/3 ոչ — դաշնակցական եւ 1/3 դաշնակցական ձայներ: **)

*) Խօսքը Սահմանադիր — Ռամկավար եւ Հայ Ժողովրդական կուսակցութիւնների մասին է, որոնք Հայաստանում չնչին ուժ էին ներկայացնում: ԽՄԲ.

**) Վ. Թէֆէեանի հաղորդած տեղեկութիւնների մէջ կան ակնյայտնի անհշտութիւններ. Ամերիկան Ազգ. Համագումարին տւել էր 4 դաշնակցական պատգամաւորներ: Միւս գաղութներից գրեթէ եւ ոչ մէկում ժողովրդական ընտրութիւններ չէին կատարւել, այլ պատգամաւորների մի մասը նշանակովի էր, միւսն էլ ընտրւած ազգային մեկ շրջանակների կողմից: Այս մասին տես՝ Ս. Վրացեան «Հայաստանի Հանրապետութիւն»:

Այստեղ, մեզ մօտ, մենք տեսնում ենք մօտաւորապէս դրա հակառակը, այսինքն՝ 2/3 դաշնակցական եւ 1/3 միւս տարրերը: Եւ ահա այդ երկու յարաբերութիւնները միացնելով՝ մենք ընդունում ենք կէս առ կէսի սկզբունքը: Մի քանի տեղերում, ինչպէս, օրինակ, Երզնկայում, ընտրութիւնները եղել էին անձերի շուրջը եւ ընտրւել էին դոկտոր Նեւրուզ եւ Վ. Թէքէեան: Այստեղ մենք պէտք է կոալիտիոնի սկզբունքը եւ թւական յարաբերութիւնները նոյն իսկ մի կողմ թողնենք, այնպէս, ինչպէս արդէն մի անգամ եղել էր ժողովրդական կուսակցութեան հետ, այսինքն՝ հաւասար հիմունքներով:

Բացի դրանից կայ եւ մի ուրիշ կողմ. քանի որ Դաշնակցութիւնը յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւն է, իսկ մենք պէտք է գործ ունենանք այնպիսի կառավարութիւնների հետ, որոնք սոցիալիստական չեն, պէտք է այդ էլ ի նկատի ունենանք եւ ըստ այնմ կազմենք մեր կառավարութիւնը:

Մ. Յարութիւնեան. — Ես պէտք է ասեմ, որ նախորդ կոալիցիայի ժամանակ, եթէ մենք այդ տեսակէտներով ղեկավարւեցինք եւ նոյն իսկ զինուորական նախարարի պաշտօնի էլ պատրաստ էինք հրաւիրել զօրավար Գորկանօվին, որ իր հայեացքներով կաղէտական կուսակցութեան մօտ էր, եւ պետական վերահսկիչի պաշտօնին հրաւիրեցինք նոյնպէս ժողովրդական կուսակցութիւնից Մ. Բերբերեանին, ենթարկւեցինք խիստ յարձակումների մեր դաւառի ընկերների կողմից. եւ եթէ այժմ էլ այդպիսի քայլ առնենք, դարձեալ նոյն վիճակի մէջ կը լինենք եւ այդ դէպքում մենք չենք ունենայ մեր ոտքի տակը ուժեղ հող գործելու համար:

Միւս կողմից, ձայների հաւասարութեան սկզբունքով բաժանումը յաճախ առաջ է բերում դժւարութիւններ գործերի յաջող ընթացքի համար: Հարցերը երբեմն լուծւում են պատահական կերպով: Գործի յաջողութեան համար հարկաւոր է, որ մի որ եւ է հոսանք կամ կուսակցութիւն ունենայ մեծամասնութիւն կառավարութեան մէջ:

Բացի դրանից, մենք վստահութիւն ունենք կարծելու, որ իրական գերակշռութիւնը մեր կողմն է հէնց Ամերիկայում, որտեղ իրօք փոքր ի շատէ կանոնաւոր ընտրութիւն է եղել. ըստ մեր տեղեկութիւնների Դաշնակցականները ստացել են բոլոր 4 ձայները: Ես կարծում եմ, որ եթէ երկրի յարաբերութիւնները այնպէս են, որ իսկապէս 2/3-ը դաշնակցական եւ 1/3-ը միւսները, — այդ յարաբերութիւնն է տիրում կուսակցութիւնների միջեւ: Եւ այդ համեմատութիւնը պէտք է այդ ուղղութեամբ էլ գնայ՝ ընդունելով այդ յարաբերութիւնները: Ներկայ պայմաններում, աչքի առաջ ունենալով թէ՛

ձեռքին, որոնք միայն կարող են յաջողութեամբ կուել բոլեւիզմի դէմ: Եւ եւրոպական պետութիւններն էլ հասկանում են այդ իրողութիւնը: Եւ թէ՛ առաջ, թէ՛ այժմ, նոր կառավարութեան օրով, մենք միեւնոյն վերաբերմունքն ենք դնում անդլիացիներին եւ ամերիկացիներին կողմից եւ մեր ընկերավարական լինելը նրանց բոլորովին չի վախեցնում: Ծայրայեղ քայլեր մենք չենք առնում, իսկ այն փոքրիկ սոցիալիստական քայլերը, որ մենք անում ենք, ներկայումս տեղի ունին եւ Անգլիայում, եւ այլ երկրներում:

Նախագահ. — Պահելով այն վերապահումը, որ արի արեւմտահայերի վերաբերմամբ, ես պէտք է ասեմ, որ ոչ մի հոսանք եւ ոչ մի երկրի մէջ չի կարող վստահօրէն ասել, թէ ժողովրդի համակրութիւնը իր կողմն է մնում: Ուրիշ երկրներում էլ նոյնն է. կայ որոշ մեծ զանգւած, որ նայած վայրկեանին՝ փոխում է իր դիրքը այս կամ այն կողմը: Մեր ազգի մեծ մասը, ինձ թւում է, անկուսակցական է, եւ այդ զանգւածը այժմ իր ձայնը տւել է Դաշնակցութեան. ուրիշ պայմաններում կարող է ուրիշ կողմ ձայն տալ:

Երկրորդ՝ կարեւորութիւն ունի արտաքին աշխարհի վերաբերմունքը. ոչ միայն սոցիալիստական լինելու պատճառով Դաշնակցութիւնը չպէտք է ձայների գերակշռութիւն ունենայ կառավարութեան մէջ, այլ որովհետեւ նա յեղափոխական է. հէնց այդ պատճառով է, որ զուտ դաշնակցական կամ դաշնակցական մեծամասնութիւն ունեցող կառավարութիւնը կարող է օտարներին ընդունելի չլինել: Եւ դրա համար էլ պէտք է կէսառ կէսի սկզբունքը ընդունել:

Դրանից դուրս, վերջին ամիսները եղած գործունէութիւնը, որին մենք ծանօթ ենք, առիթ է տալիս — թէեւ պէտք է ասել, որ, թերեւս, կուսակցութիւնը դրանում մեղք չունի եւ, զուցէ, ուրիշ կուսակցութիւնների մասնակցութեամբ էլ նոյնը տեղի ունենար — առիթ է տալիս խիստ քննադատութիւնների: Այժմ ստեղծւել է ծանր կացութիւն եւ այդ բանի համար թէ՛ ժողովրդի ներքին խաւերում եւ թէ՛ արտաքին աշխարհում մեղադրում են ներկայ կառավարութիւնը եւ կուսակցութիւնը, եւ հէնց դրա համար է, որ պէտք է այն տպաւորութիւնը տալ, որ այժմ կառավարութիւնը փոխւած է, նոյնը չէ: Բերեմ մի օրինակ, որ ինձ ասաց անգլիացի ներկայացուցիչ Գրեսին, որ նոյն խօսքերը ասած է նաեւ Պ. Պատիսեանին. «Այն օրը, ասաց նա, երբ ես կը կարողանամ գրել իմ կառավարութեան, որ այստեղ կոալիցիոն կառավարութիւն է կազմւած չափաւոր տարրերից, կարող եմ ասել, որ ձեր դատը Անգլիոյ աչքին շատ բան կը շահի»:

Շ. Միսաքեան. — Օտարներէն աւելի հայ մամուլն է, որ չփոթ

կարծիքներ գոյացուցած է Դաշնակցութեան մասին: Իսկ իրականութեան մէջ Դաշնակցութիւնը ամենարեւելիստ քաղաքականութիւնը վարած է, ընկերավարական ծրագիր չէ գործադրած այնպէս, ինչպէս Վրաստանի Սոցիալ — Դեմոկրատ կուսակցութիւնը ըրած է՝ հողերու արտագրւում եւ այլն:

Ս. Վրացեան. — Այստեղ բերում եւ քննադատում են մեր կառավարութեան գործունէութիւնը, բայց չպէտք է մոռանաք, որ ամենամեծ պատերազմը, որ մենք վարեցինք, — հայ — վրացական պատերազմը — տեղի ունեցաւ հէնց կոալիցիոն կառավարութեան օրով եւ, ի հարկէ, կոալիցիայի մէջ մտած բոլոր նախարարների համաձայնութեամբ: Եթէ դուք կարծում էք, որ ոչ — սոցիալիստների մուտքը կառավարութեան մէջ նրան աւելիկէիւ կը տայ արտաքին աշխարհի առջեւ, իմ կարծիքով, հէնց միայն այն փաստը, որ թէ՛ կառավարութեան եւ թէ՛ պատերազմութեան մէջ մտնում են ոչ — սոցիալիստական տարրեր, բաւական կը լինի այդ համոզումը գոյացնելու համար: Եւ միեւնոյն ժամանակ մեր առաջարկած սկզբունքով կազմւած կառավարութիւնը կարող կը լինի բաւարարել եւ մեր ժողովրդական լայն խաւերին: Զեղ զբաղեցնում են զլիսաւորապէս արտաքին մտահոգութիւնները, իսկ մենք ուզում ենք ունենալ ուժեղ իշխանութիւն. եթէ ներսը լինենք ուժեղ, դուրսն էլ կը լինենք զօրաւոր:

Նախագահ. — Բոլոր արած առարկութիւնների մէջ ես կը նկատեմ շատ կարեւոր այն տեսակէտը, որ այստեղ արտայայտեցին այն մտանշումով, թէ ներկայ պարագաների մէջ բանւորական գործադուլների եւ նման երեւոյթների առաջն առնելու համար կարեւոր է Դաշնակցութեան ազդեցութիւնը: Բայց ես գտնում եմ միաժամանակ, որ Դաշնակցութիւնը կարող է նոյն ազդեցութիւնը ունենալ եւ այն դէպքում, եթէ կառավարութեան մէջ ներկայացւած լինի հաւասար թւով: Բացի այդ, ես կարող եմ վկայել, որ ամերիկացիներն էլ, որոնք Պոլիս եղած էին, ասած են, թէ այժմ, թերեւս, լաւ կը լինէր, եթէ թրքահայերի եւ ռուսահայերի մէջ տարբեր վարչութիւններ դուրսբերելու ունենային, եւ հէնց այս տեսակէտից է, որ ես կը գտնեմ, թէ պէտք է ղեկավարւենք կէս առ կէսի սկզբունքով:

Կայ մի կէտ եւս, որի մասին նոյնպէս պէտք է յիշել, այն, թէ երկրի մէջ դուրսբերելու ունին անպատասխանատու տարրեր, որոնք պէտք է զսպւին եւ որոնք աւելի շուտ կարող են հրապարակ դալ եւ կարող խանդարել, եթէ կառավարութեան մէջ մեծամասնութիւնը լինի Դաշնակցականների կողմը, նրանք չեն կարող նրանց դէմ կուել:

Ն. Տէր — Ստեփանեան. — Հատուածական սկզբունքը, ի հարկէ,

հիմքն է մեր համաձայնութեան, բայց պէտք է աշխատենք բաւարարել եւ կուսակցական տեսակէտն էլ: Եւ այդ դէպքում էլ ամէն կուսակցութիւն պէտք է սպասէ արդար վերաբերմունքի: Յանդգնութիւն է ասել, թէ որ եւ է կուսակցութիւն կամ հոսանք այժմ մեծամասնութիւն կը վայելէ որ եւ է ազգի մէջ: Ի հարկէ, հիւանդոտ երեւոյթ է, որ որ եւ է կուսակցութիւն 2/3-ի մեծամասնութիւն ունի. իրականութիւնն այն է, որ հայ ժողովրդի մեծամասնութիւնը անկուսակցական է եւ հանգամանքների բերմամբ թեքում է այս կամ այն կողմը: Կոալիցիոնի սկզբունքը մենք պէտք է իրազեկենք այնպէս, որ ուժերի հաւասարակշռութիւն լինի: Եթէ ձայների 2/3-ը ընդունենք Դաշնակցութեան կողմը, այդ դէպքում մնացած հոսանքները չեն կարող ունենալ որ եւ է կարեւոր պորտֆէյներ: Օտարների համար էլ մեծ առաւելութիւն է ոչ — սոցիալիստ մեծամասնութեամբ կազմ ունեցող կառավարութիւնը: Այդ մտածելակերպն են ցոյց տւել, օրինակ, չեխո — սլովակներն եւ ուրիշ մի քանի ազգեր:

Մի ուրիշ խնդիր եւս՝ մանդատէր պետութեան տեսակէտը: Մանդատէր պետութիւնը առանձին դժգոհութեամբ պիտի վերաբերւի, եթէ մեր մէջ տեսնի դաշնակցական մեծամասնութեամբ կազմուած կառավարութիւն. այդ դէպքում նա, թերեւս, աւելի աշխատի ճնշել մեր ներքին ինքնավարութիւնը:

Դալով տնտեսական ծրագիրներին՝ Դաշնակցական մեծամասնութեամբ կազմուած կառավարութեան դէպքում կարող է կասկած առաջ գալ, որի հետեւանքով շատերը կը դժարանան մեր երկիրը մըտցնել իրենց կապիտալները, թէպէտ այս դէպքում չպէտք է որ եւ է մեղադրական խօսք ուղղել Դաշնակցութեան դէմ: Բայց դրսի տպաւորութիւնը կարող է լինել այդպէս:

Ս. Վրացեան. — Հէնց այդ տնտեսական վախերի վերաբերմամբ պէտք է ասել, որ գլխաւորապէս մեր՝ հայերի միջից են հրահրուած այդպիսի վախեր, եւ օտարները բոլորովին այդ վախերը չեն բաժանում: Զօր. Հարբորդն, օրինակ, հեռացաւ բոլորովին այն տպաւորութեան տակ, որ սխալ են եղել բոլոր խօսակցութիւնները հայոց կառավարութեան դրամագլխի հակառակ քաղաքականութեան մասին: Կան եւ ուրիշ փաստեր, որ դրսի դրամատէրերը պատրաստութիւն են տեսնում մասնիւր եւ գործելու հայաստանում: Հէնց եղբայր Մայիլեանների ձեռնարկն օրինակ: Նա կը նայի, թէ ինչ իրական դրութիւն է տիրում երկրում եւ ոչ թէ՝ թէ ինչ կառավարութիւն է գործի գլխին: Ես միանգամայն համաձայն եմ այն մտքին, թէ ժողովրդի կուսակցական համակրութիւնը շատ անգամ պարզ չէ եւ դժ-

ւար է որոշել, բայց հարցը նրանումն է, որ այսօր մեր ժողովրդի տըրամադրութիւնը շատ որոշ կերպով արտայայտւած է յօգուտ Դաշնակցութեան: 1917 թւից մինչեւ այսօր մեզ մօտ եղան բազմաթիւ ընտրութիւններ եւ բոլոր այդ ընտրութիւնների ժամանակ ժողովրդի համակրանքն ու քէն երեւան եկաւ ի նպաստ Դաշնակցութեան: Վերջին խորհրդարանական ընտրութիւնների վերաբերմամբ, պէտք է ասել, որ, ի հարկէ, սխալ էր ժողովրդական կուսակցութեան ընտրութիւններին չմասնակցելը. այդ սխալն, անուշտ, այժմ իրենք էլ հետկանում են. նրանց մասնակցութեամբ պարլամենտի կազմը, ի հարկէ, որոշ չափով տարբեր կը լինէր:

Խնդրին պէտք է նայել եւ հոգեբանական տեսակէտից. մեր երկրի ներկայ իրական վիճակը այնպէս է, որ եթէ մենք չկարողանանք կազմել այնպիսի մի կառավարութիւն, որի մէջ մեծամասնութիւնը լինի Դաշնակցութեան կողմը, անիշխանութիւնը կը դառնայ անխուսափելի: Ուստի, հէնց պետական շահի տեսակէտից, կառավարութեան կազմի այն ձեւը, որ դուր էք առաջարկում, նպատակաւորմար եւ օգտակար չէ:

Նախագահ. — Ես համոզւած եմ, որ թէ մենք եւ թէ դուր ղեկավարում էք պետական տեսակէտով: Եւ այդ կէտը ամենից կարեւորն է ձեր ասածների մէջ, որ ժողովրդի այժմեան տրամադրութիւններն այնպէս են, որ այդ հանգամանքը մենք պէտք է հաշի առնենք: Անկարգութիւններ են լինում շատ անգամ, եւ դուր անկարող էք այդ բոլորի առաջն առնել: Բայց, թերեւս, աւելի մեծ յաջողութեամբ կարելի է գործել այդ տարրերի դէմ, եթէ նրանք իմանան, որ կառավարութիւնը Դաշնակցականների ձեռքը չէ: Դուր խօսում էք հայ կապիտալի մասին եւ բերում էք Մայիլեանների օրինակը, բայց նրանց մասին կարելի է ասել, որ այժմ նրանք միայն ուսումնասիրութեան գործով են զբաղւած, եւ կապիտալը երկիր մտցնելուց առաջ նրանք ղեռ կը նայեն, թէ ինչ կառավարութիւն է անցած գործի գլուխ: Դուք զանազան տեղեր յանձնարարութիւններով պաշտօնեաներ էք ուղարկում կոմիսար անունով, բայց հէնց այդ անունն արդէն, ինչպէս անգլիացի Գրեսին էր ասում, խրտչեցնում է օտարներին: Այդպէս նաեւ ուրիշ շատ բաներ:

Ս. Յարութիւնեան. — Այստեղ խօսեցին ժողովրդի տրամադրութեան մասին: Փաստօրէն, ի հարկէ, այդ այդպէս է. Դաշնացութիւնը, իբրեւ ազգային հողի վրա գործող անդրանիկ կուսակցութիւն, ժողովրդի մէջ մեծ համակրանք ունի, բայց ժողովուրդը իսկապէս մօտ ծանօթ չէ նրա ծրագրին: Սակայն, ներկայ դէպքում մենք դրա-

նով չպէտք է ղեկավարւենք, այլ պետական տեսակէտով: Մենք պէտք է աշխատենք բարելաւել մեր յարաբերութիւնները մեր հարեւան պետութիւնների հետ: Այն ինչ, պէտք է խոստովանել, որ ոչ Թիւրքիան, ոչ Ազրբէջանը եւ ոչ նոյն իսկ Վրաստանը վստահութիւն չունեն Դաշնակցութեան վրա: Եւ արտասահմանից էլ, մեր պատւիրակութեան շրջանից մեզ դուրս են, թէ որքան էլ յոյս դնենք Դաշնակիցների վերա, մենք պէտք է բարելաւենք մեր յարաբերութիւնները մեր հարեւանների հետ: Եւ ահա այդ հանգամանքներում պէտք է ընդունենք, որ այդ բոլորը աչքի առաջ ունենալով եւ պետական տեսակէտով ղեկավարւելով՝ ինքը Դաշնակցութիւնը պէտք է աշխատի կառավարութեան մէջ գերակշռող դեր չունենալ: Յետոյ, Դաշնակիցների վերաբերմունքն էլ դէպի դաշնակցական կառավարութիւնը նոյնպէս ուրիշ կերպ է ներկայանում մեր ունեցած այլ տեղեկութիւններից: Այսպէս, օրինակ, ամերիկացի ներկայացուցիչ Եարսոն շատ խիստ խօսքերով է արտայայտւել Դաշնակցութեան դէմ: Կան եւ ուրիշ վերակալութիւններ:

Գալով կապիտալիստներին եւ տնտեսական ձեռնարկներին՝ նոյնպէս ունենք տեղեկութիւններ, որ շատ տեղերից պատրաստուած էին դալ Հայաստան գործեր սկսելու, բայց չէին գալիս, որովհետեւ վրստահութիւն չունեն մեր կառավարութեան վրա, որի գլխին կանգնած է Դաշնակցութիւնը իր սոցիալիստական ծրագրով, այն ինչ՝ եթէ կոալիցիոն կառավարութիւն լինի, այդ վստահութիւնը կը ստեղծւի: Այդ բոլորից եզրակացուած է, թէ պէտք է ընդունել կէսը դաշնակցական, կէսը միւս ոչ՝ սոցիալիստական հոսանքներից եւ նոյն իսկ չէզոք անձնաւորութիւններից բաղկացած կառավարութեան ստեղծումը:

Նախագահ. — Մեր առաջարկի մէջ ասւած է՝ կէսը դաշնակցական, միւս կէսը ժողովրդական կամ ռամկավար: Վերջին խօսքը պէտք է ընդունել ոչ՝ դաշնակցական եւ ոչ՝ սոցիալիստական միտքով, ուրեմն, կարող են լինել եւ չէզոքներ:

Մ. Յարութիւնեան. — Ինչ վերաբերում է կապիտալին, մենք ունենք տեղեկութիւններ Փարիզից, որ այնտեղից կապիտալիստները մտադիր էին մանել Հայաստան, բայց երբ տեղեկութիւն է ստացւել աշխտեղի կոիւնների մասին, յետ են կեցել այդ մտքից: Ուրեմն, ներաշխտեղի կոիւններն է կամ կուսակցական հանգամանքներն էլ խանդարել, այլ ապահովութեան պակասը: Եւ մեր կուսակցութիւնը ինքը, հակառակ լինելով բոլշեւիզմին, չահագրգռւած է, որ, կապիտալը մոտք գործէ եւ զարգանայ մեր երկրի մէջ: Մեր հիմնա-

կան սկզբունքն է, որ կապիտալիզմը մեր երկրում դործ անի, եւ մենք պատրաստ ենք ամէն տեսակի երաշխիքներ տալ դրա համար: Եւ մեր երկրում այժմ մեծ տարբերութիւն կայ համեմատութեամբ Նախկին դրութեան հետ. մեր երկիրը աստիճանաբար դնում է դէպի բարեկարգութիւն ամէն կողմից էլ: Ես կարծում եմ, որ բոլորովին անհիմն են այն վախերը, որ, իբր թէ, եւրոպացիք կամ Դաշնակիցները առանձին կարեւորութիւն են տալիս այն հանգամանքին, թէ Դաշնակցականները տիրապետում են Հայաստանի կառավարութեան մէջ: Նրանց, ինչպէս եւ մանդատէր պետութեան համար, եթէ նրանք այդ տեսակէտի վրա լինեն կանգնած, ոչինչ չարժէ մի անգամից չէզոքացնել այդ կուսակցութիւնը, կամ այլ կերպ ազատւել նրանից:

Նախագահ. — Ես ուրիշ անգամ դաշնակցականների հետ ունեցած խօսակցութեանս միջոցին ասած եմ, թէ որոշ ֆատալիզմ կայ, որ կը տիրէ այդ կուսակցութեան մտքերի մէջ: Ամենքը ասում են, թէ այս ինչ բանը պէտք է լինէր, եւ ի նկատի չեն առնում, որ շատ պայմաններ կարող են փոխել հանգամանքները եւ սպասելիք դէպքերը: Սըխալ է կարծել, թէ մենք պահանջում ենք, որ Դաշնակցութիւնը իր ծրագրերից հրաժարւի, կամ դադարի գոյութիւն ունենալուց, բայց կոալիցիոնի յաջողութեան համար է, որ նա որոշ շեղումներ պէտք է անի իր սկզբունքներից: Այս առթիւ հարկ եմ համարում յիշեցնել, որ Փարիզի մէջ եղած բանակցութիւնների ժամանակ Պ. Ա. հարոնեան ընդունած էր կառավարութեան վերաբերմամբ կէս առ կէսի սկզբունքը եւ մեր պատւիրակութեան մէջ եղած դաշնակցական ընկերը այդ առաջարկը տարաւ Հայաստանի պատւիրակութեան եւ բերեց անոնց համաձայնութիւնը այդ կէտին: Երբ սրանից առաջ կոալիցիոն կառավարութիւն կազմւում էր ժողովրդական կուսակցութեան հետ կէս առ կէսի հիման վրա, բոլորովին անհասկանալի պիտի լինէր, որ այժմ կոալիցիոնը, երբ իր մէջ կունենայ նաեւ արեւմտահայութեան ներկայացուցիչ Աղաջին պատւիրակութիւնը, կազմէր ոչ՝ դաշնակցական անդամների վերաբերմամբ աւելի սահմանափակ անդամներով:

Ս. Վրացեան. — Հարց է՝ հնարաւո՞ր է այդ սկզբունքով, այսինքն կէս առ կէսով ստեղծել մի կառավարութիւն, որ վայելէ ժողովրդականութիւն եւ համակրութիւն երկրում: Ես կարող եմ վկայել, որ մեր կուսակցութեան լայն զանգւածների մէջ այս կոալիցիոնը համակրանք չի գտնի: Նրան կողմնակից կը լինեն միայն վերին խաւերը: Նախորդ կոալիցիոնն էլ համակրութիւն չէր վայելում ժողովրդական լայն զանգւածների մէջ: Այժմ առաջարկւում է կրկնել հին,

ձախողած փորձը եւ ճիշտ միեւնոյն տեսակի կոալիցիոն ստեղծել։ Անհնար է ընդունելի դարձնել այդ ձեւը ժողովրդական լայն խաւերի մէջ։ Այդպէս կազմած կառավարութիւնը չի լինի իրական ուժ մեր երկրի մէջ եւ կը հանդիպի անյաջողութեան։ Իսկ այն ձեւը, որ մենք ենք առաջարկում թէ՛ երկրում հող ունի եւ թէ աւելի կայուն հիմքերի վրա դրած կը լինի եւ, ուրեմն, աւելի հեղինակութիւն կունենայ ժողովրդական լայն զանգւածների աչքին։ Միայն այդ ձեւով կարելի է իրագործել ցանկալի նպատակը։

Ն. Տէր — Ստեփանեան.— Հարց է տալիս, թէ ինչպէ՞ս վարւել այն դէպքում, երբ որ եւ է հարց պէտք է վճուի ձայներով եւ ոչ թէ ընդունած սկզբունքի հիման վրա։ Եթէ նման դէպքում տեղի ունենայ ձայների բաժանում, հարցը կը լուծւի բոլորովին այլ կերպ։

Ս. Վրացեան.— Բացատրում է, որ կառավարութեան գործունէութեան գլխաւոր գծերի եւ դեկլարող սկզբունքների մասին պէտք է նախօրօք համաձայնութեան գտնել եւ վճռենք համախորհուրդ։


Ն. Տէր — Ստեփանեան.— Պէտք է ասել, որ մեզ համար անակընկալ էին այս բոլոր խօսակցութիւնները այս խնդրի շուրջ։ Այստեղ մեկնելիս՝ մենք չէինք նախատեսում նման բան եւ կարծում էինք, թէ կոալիցիոն ասելով արդէն ընդունւում է կէս առ կէսի մասնակցութիւնը։

Դրանից յետոյ որոշւում է փակել նիստը եւ յաջորդ նիստը նշանակել վաղը առաւօտեան ժամը 1-ին։

Քարտուղար՝ Յ. Քոչարեան.

Պատգամաւորներ՝ Վ. Թէֆէեան, Ս. Վրացեան, Ս. Յարութիւնեան, Շ. Միսաքեան, Մ. Յարութիւնեան, Ն. Տէր — Ստեփանեան.

(Շարունակելի)



ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

Գէորգեան ձեմարանի մեծ դէպք

Հ. Յ. Դ. Կեդր. Դիւանում մնացել է Բագրատ վարդ. Թաւափաւեանի ձեմարան արտագրած հետեւեալ երգը, որ յօրինել ու երգում էր 1894 թ. նոյեմբերին Էջմիածնի Գէորգեան ձեմարանում պատահած «Մեծ Դէպք» անունով յայտնի աշակերտական խռովութեան առթիւ։

Մինչեւ իրիմեան Կաթուղիկոսի Էջմիածին հասնելը ձեմարանում, ինչպէս եւ ամբողջ վանքում, տիրող էին մշակական ուղղութեան պատկանողները, եւ աշակերտութեան մեծ մասը նոյնպէս մշակական էր։ Իրիմեանի գալով, թէ՛ ձեմարանում եւ թէ՛ միաբանութեան մէջ սկսեց մաքրագործում. մշակականները հեռացւում էին եւ նրանց տեղ նշանակւում էին պահպանողականներ։ Այս հոգի վրա 1894 թ. նոյեմբ. 24-ին ծագեց աշակերտական մի մեծ խռովութիւն. Կաթուղիկոսի կարգադրութեամբ, ոստիկանութիւն մտցւեց ձեմարան եւ ՏՅ աշակերտներ բանտարկեցին ու վտարեցին։

Կատարւածը այնքա՛ն անարդար էր ու դաժան, որ ընդհանուր վրդովում առաջ բերեց հասարակութեան լայն խաւերում եւ խստօրէն դատապարտեց մամուլի կողմից։ Այդ տարադի դէպքի արձագանգներից մէկն է եւ յիշեալ երգը, որ երկար ժամանակ երգւում էր ձեմարանում եւ դուրսը, հասարակութեան մէջ։ Երգը յօրինողը Սահակ վարդ. Ամատունին է՝ «Բառ ու Բան» բառարանի հեղինակը, որ հեղեմնեմով, բայց հարազատօրէն ներկայացրել է ամբողջ դէպքն ու դերակատարներին։ Երգը երգւում էր «Չայնը հնչեց Էրզրումի Հայոց լեռներից» երգի եղանակով։

ԽՄԲ.



ձեմարանի կուրի ձայնը հնչեց հինգշաբթի, *)

Կուռողքն էին ութսուներեք անպիտան հողի։

Յառաջ տւեց Կարամուրդէն մեր տեսչի կրծքին,

Ու չպրտեց պինդ խուխ ու թուր նրա՛ կարճ միջքին։

*) 24 նոյեմբեր, 1894 թ.։

Եննա բոլորն իմբողջ տւին թեւ ու թիկունքին,
 Մի քանիսն էլ ոտով տւին նրա փաշէքին:
 Աստուածածնայ պատկերի տակ *) Դանադէոգեանին
 Վրա հասան, վե՛ր կոխեցին մեր էս հայվանին:
 Ծւի՛կ – ծւիկ պատուեցին իբրեւ գառան փոստ
 Նրա սերթուկ, պալտո՛ւ, չէմշակ ու տրոստ:
 Էս որ տեսան Սէթ, Յոհանէս, Քեարա՛մ, Բերբերեան,
 Մորթին առած չա՛ն պէս թռան, ընկան վեհարան:
 Էս որ տեսան Եզնիկ, Յուսիկ, Տիրա՛յր արեղէք,
 Առան – փախան վեղա՛ր, միբուք, իբրեւ երեսէք:
 Էս որ տեսաւ աստուածարան մեր խե՛ղճ Կարապետ,
 Ասեց՝ Ա՛ստած, ո՞ր ծակ մտնեմ ես էլ սրանց հետ:
 Իսկ տիրացու սիրուն Մուշեղ, թթւած Ռափայէլ,
 Ծլո՛ւնկ – ծլունկ ծըլկըվեցին իբրեւ սոված գէլ:
 Տէր – Միրաքեան երբ էս տեսաւ, էլ չզիմացաւ,
 Աղլուին աչքին բռնեց – զնաց, կուից հեռացաւ:
 Էս թունդ կուի փիս ժամանակ մնացին անվնաս
 Գէորգ, Աշոտ եւ Անտրիաս, իբրեւ սիրուն հարս:
 Եննա էկան Ներսէս, Սարգիս, Վահան Վարդապետ,
 Կոխ՛ւ տւին, կոխ՛ւ առան էս լրբերի հետ:
 Եննա վանքից վերցրած եկան փէտ, վարոց, խանչալ,
 Մտան ըստեղ թւանքչիքով շատ քոռ ու քաշալ:
 Էնպէ՛ս տւին տուր ու տմբոց մեր էս էջերին,
 Որ ասեցին՝ «Հէրն անիծեմ ըստեղ մընողին, ըստեղ մտնողին»:
 Ֆոսանտ գցեց մեր Հայրիկն էլ, քաշեց վեհարան, **)
 Գող շան նման գոռսել տւեց դարբաղի դռան:
 Հարա՛յ մանդաթն ընկաւ աշխարհ, էկան – թոփ էղան
 Մէր ու տղայ, հարս ու աղջիկ, բոլոր Միաբան:
 Քիթ ու պոռնակ արին լուիկ էս չա՛ն թուլէքը
 Փախան – մտան ձեմարանի նեղ – նեղ օտէքը:
 Պրիստաւով եննա հանեց, անշոր ու անճաշ,
 Գեղի մէջը տութսաղ էրկօր ու մի ճաշ: ***)

*) Աստուածածնի պատկերը՝ ձեմարանի վերին յարկում, միջանցքի արեւելեան գլուխը: Նրա առջեւ առաւօտ ու երեկոյ աշակերտները աղօթք էին անում:

**) 27 նոյեմբեր, կիրակի:

***) 27 - 29 նոյեմբեր, կիրակի – երեքշաբթի: Երկու օրւայ բանտարկւած աշակերտներին միայն մի ճաշ տւին:

Դէ խնդացիր, քաշա՛լ Կոստօ, դո՛ւրս եկ քո ծակից, *)
 Մեզ էլ, քեզ էլ աղատեցիր էս չա՛ն տղէքից:
 Էս տաղի մէջ հէ՛ջ սուտ չկայ, ասեցինք դուզը,
 Էս կուին էլ հէ՛նց ըստեղ էր սէֆիլ Թովուզը:
 Փառաւորի մեր Հայրիկն էլ Խորէն Խրիմեանով,
 Էրկու շաթրով, ինն նոքարով, երեք աշպաղով, սարկաւազներով:

Վերջին այս «երկու շաթրի, ինն նոքարի եւ երեք աշպաղի» մասին էլ երգում էր հետեւեալ երգը, «Ո՛հ, ի՛նչ քաղցր բան»-ի եղանակով:

Հաջի Կարապետ,	Լաքէյ Կարապետ,
Սարկաւազ Վահան,	Թէյարար Վիմոն,
Սարկաւազ Ռափայէլ	Աւելածու Օհան
Եւ շաթիր Վահան:	Եւ տնտես Սիմոն:
Շաթիր Կարապետ,	Խոհարար Մարգար,
Դաղբաշի Սեփան,	Մուքուրիկ **)
Լաքէյ Մկրտիչ	Խոհարար Սարգիս,
Եւ ջրկիր Վարդան:	Բաղչաշի Թաթոս:

Երգերի մէջ յիշւած անունները հետեւեալներն են.

Կարամուրզէն. — Երաժշտագէտ Գր. Կարա Մուրզա, որ ուսուցիչ էր ձեմարանում եւ դէպքից յետոյ արձակեց պաշտօնից: Հայրիկն, առհասարակ, հէ՛նց առաջին օրից չսիրեց նրան: Ինչպէս պատմում է Ա. Ահարոնեանը «Հայրենիք» ամսագրում (1927 թ. թիւ 2), «Ճամբու դրեց ձեմարանի երաժշտապետ Կարա – Մուրզային, որովհետեւ եռաձայն ու քառաձայն երգեցողութիւն չէր տանում»: Ծաղրելով աւսում էր. «Սա գիւղական տղաքները կը բերեն Մայր Աթոռ, մաճ, արօր, երկրագործութիւն թողած՝ մուզիկ կը չալեն»:

Դանադէոգեան. — Խրիմցի, վերակացու էր ձեմարանում: Յետոյ ձեռնադրեց վարդապետ Մուշէ վարդ. Եղաշեան անունով, եւ երկար տարիներ վարեց Նոր – Նախիջեւանի թեմի յաջորդութիւնը: Ունի գրական աշխատութիւններ, մեծ մասամբ թարգմանութիւններ Չեխովից, Կորոլենկոյից եւ ուրիշ այլ հեղինակներից: Աշխատակցում էր գլխաւորապէս «Լումայ» հանդէսին:

*) 24 նոյեմ. – 4 դեկտեմ. փակւած մնաց տանը. չէր համարձակւում դուրս գալ:

**) Մուխարիկ — աման լւացող:

Սէք. — Սէթ Յարութիւնեան, հայոց լեզուի ուսուցիչ ձեմարանում:

Յոհաննէս. — Բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեան:

Քեարամ. — Նիկողայոս Քեարամեան, պատմութեան ուսուցիչ:

Բերբերեան. — Մինաս Բերբերեան, պահպանողական ուղղութեան պատկանող հասարակական գործիչ, գրական քննադատ եւ հրապարակագիր: Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ պետական վերահսկիչը:

Եզնիկ. — Հետադային վարդապետ:

Յուսիկ. — Յուսիկ եպ. Զոհրաբեան, Ռուսական թեմի աթմայ առաջնորդը:

Տիրայր. — Տիրայր եպ., Ամերիկայի նախկին առաջնորդը:

Կարապետ. — Կարապետ վարդ. Տէր — Մկրտչեան, յետոյ՝ եպիսկոպոս: Դէպքի ժամանակ տեսչի օգնական էր: Վերջը եղաւ ձեմարանի տեսուչ, ապա Ատրպատականի ու Շամախու թեմերի առաջնորդ: Յայտնի գիտնական, աստուածաբան:

Մուշեղ, Ռափայէլ. — Սարկաւազներ:

Տէր — Միրաբեան. — Ծանօթ մանկավարժ Յ. Տէր — Միրաբեան, որ նոյնպէս շուտով հեռացւեց ձեմարանից, իրրեւ մշակական:

Գէորգ, Աշոտ եւ Անդրիաս. — Վերակացուներ:

Վահան վարդապետ. — Վահան վ. Տէր — Գրիգորեան: Նախկին մշակական, աշխատակցում էր «Մշակ»-ին Կապիւլացի կեղծանունով, ապա դարձաւ պահպանողական եւ Խրիմեանի կողմնակից: Հետագային կառավարութեան կողմից աքսորւեց Նոր — Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը եւ երկար ժամանակ եղաւ նոյն վանքի վանահայր:

Կոստո. — Յայտնի գիտնական — հայագէտ Կարապետ Կոստանեան, ձեմարանի տեսուչ:

Հաջի Կարապետ. — Զրբաշխեան, Հայրիկի մերձաւորը:

Սարկաւազ Վահան. — Հետադային Կորիւն վարդապետ, Գանձակի առաջնորդ, աքսորւեց Սիրիոյ Հ. Յ. Դաշնակցութեան գործով:

Շաքիր Կարապետ. — Ագրիպասեան, Գոլոշեանի ընկեր Ագրիպասեանի եղբայրը, Հայրիկի մերձաւորներից մէկը:

Միւսները՝ վանքի ու վեհարանի ծառայողներ ու սպասաւորներ, մեծ մասամբ վանքից:

ԱՆՑԵԱԼՔ

ԳԱՅՐԻՅԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

1936 նոյեմբեր 20-ին Փարիզի արւարձաններէն Էփինէյի անկեւանոցին մէջ մեռաւ Ազգային Պատւիրակութեան նախկին նախագահ Գաբրիէլ Նորատունկեան, 85 տարեկան, լքած բոլորէն:

Նորատունկեան կարեւոր դեր կատարած է թէ՛ օսմանեան — պետական եւ թէ՛ հայկ. — ազգային կեանքին մէջ, որով կարժէ ներկայացնել զինքը մեր ընթերցողներուն: Ծնած էր 1852 նոյեմբերին Սկիւտար, Սէլամսըղ: Որդին էր Էքմէքճի պաշը Գրիգոր Էֆ.—ի: Նախնական կրթութիւնն ստացած էր իր տան, յետոյ Գաւրգիւղի Փրանսական Ֆրէնքերու վարժարանին մէջ, տրուել շրջանն աւարտեց 1869-ին: Նախ առեւտրական ասպարէզը մտաւ, սակայն, 1870 օգոստոսին, հօրը մահէն վերջ, իրրեւ օժանդակ պաշտօնեայ մտաւ Բ. Դուռ՝ արտաքին գործերու նախարարութեան զիւանական արձանագրութեանց գրասենեակը: Քանի մը ամիս վերջ, նոյն նախարարութեան արտաքին թղթակցութեանց զիւանին անդամ անւանեցաւ: Երկար չմնաց հոն եւ զիւանագիտական ասպարէզին պատրաստւելու համար զրկւեցաւ Փարիզ, ուր մինչեւ 1875-ի վերջը ուսումը կատարելագործեց, հետեւելով Քալէժ տը Ֆրանսի, Սարպանի եւ Էֆու տէ Սիւան Փալիքիֆի դասընթացներուն ու աւարտեց իրաւաբանական վարժարանը: Ուսանող եղած ատեն, 1873 սեպտ. 3-էն սկսեալ, Օսմ. դեսպանատան պատւակալ կցորդի տնտես ստացաւ:

1875 դեկտ.—ին Փարիզի դեսպան Ալի փաշայի հետ վերադարձաւ Պոլիս, ուր արտաքին գործերու նախարար Բաշիտ փաշա արտաքին թղթակցութեանց զիւանին քարտուղար կարգեց զինքը, Միւթէ-մայինի աստիճանով: 1877 — 78-ի ուսեւթուրք պատերազմէն վերջ Ա. քարտուղար նշանակւեցաւ այն Միջազգային Յանձնաժողովին, որ պաշտօն ունէր ճշդելու թուրքեւսերպ սահմանները: Օսմանեան Բ. պատերազմի կարգւեցաւ Արապ — Թապիայի խնդրին առթիւ կազմած խառն յանձնաժողովին, որ դումարւեցաւ Սիւրիսթէի մէջ. յետոյ նաեւ անդամ՝ ուսեւթուրք սահմանագծման միջազգային յանձնախումբին: Այս երեք պաշտօններուն պատճառաւ 1878 հոկտեմբերէն մինչեւ

1881 մարտ, Բուժէլի եւ Անատոլու մնաց: 1881 մայիս 9-ին Չէթինէի Օսմ. դեսպանատան Ա. քարտուղար նշանակւեցաւ: Երկու տարի այս պաշտօնը վարելէ վերջ, 1883 ապրիլին, Բ. Դրան իրաւագէտ — խորհրդական անւանւեցաւ: Այս պաշտօնին վրա մնաց երկար ատեն, մինչեւ Օսմ. Սահմանադրութեան հռչակումը: 1884 ապրիլ 5-ին՝ Բ. կարգի Ուլա, 1888 մայիս 8-ին՝ Ա. կարգի Ուլա եւ 1894 օգոստ. 2-ին ալ Պալայի աստիճանները ստացաւ Օսմ. կառավարութենէն:

1908 յուլիսին, երբ Օսմ. Սահմանադրութիւնը հռչակւեցաւ եւ հարկ եղաւ հայերէն ալ նախարար մը առնել դահլիճին մէջ, Նորատունկեանն էր որ առեւտրական եւ հանրօգուտ շինութեանց նախարարի պաշտօնին կոչւեցաւ, այսպէս դառնալով առաջին հայ նախարարը Օսմ. սահմանադրական կառավարութեան: Միեւնոյն ժամանակ ցկեանս՝ Երաւուտական եւ Լահէյի Միջազգային Ատենանի օսմանեան պատւիրակ անւանւեցաւ: 1912-ին, երբ իթթիհատականները շնորհազուրկ եղան եւ որոշւեցաւ «մեծ դահլիճ» մը կազմել՝ Կազի Ահմէտ Մուխթար փաշայի նախագահութեամբ, Նորատունկեան կոչւեցաւ արտաքին գործերու նախարարի պաշտօնին: Իր օրովն էր որ Պալքանեան չորս պետութիւններ (Պուլկարիա, Սերպիա, Յունաստան եւ Գարատաղ) զինակցեցան եւ Եւրոպական Թուրքիան իրարու մէջ բաժնեցին: Կազի Ահմէտ Մուխթար փաշայի քաշւելէն վերջ, երբ Քեամիլ փաշան Մեծ — Եպարքոս դարձաւ, Նորատունկեան պահեց արտաքին գործերու նախարարի պաշտօնը մինչեւ 1913 յունւար 10/23-ի իթթիհատական պետական հարւածը, որ վերջ տւաւ իթիլաֆականներու իշխանութեան:

Այդ թւականին վերջ գտաւ իր պետական կեանքը. այնուհետեւ թէեւ շարունակեց մնալ ծերակուտական, սակայն, Մեծ Պատերազմը չուղացաւ եւ Նորատունկեան քաշւեցաւ Զւիցերիա, անկէ ալ 1919-ին եկաւ Փարիզ, ուր եւ մնաց մինչեւ իր մահը:

Բ. Դրան իրաւագէտ — խորհրդական եղած ատեն հրատարակեց չորս մեծ հատորներ՝ 1300-էն մինչեւ 1902 Օսմ. պետութեան կողմէ կնքւած միջազգային բոլոր դաշնագիրներու հաւաքածոն (Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman), տպւած Փարիզի մէջ 1897 — 1903: Այս հատորները, ինչպէս նաեւ իր զիւանադիտական զանազան կարեւոր պաշտօնները, միջազգային համբաւ ապահովեցին իրեն: Բացի օսմանեան Ա. կարգի Օսմանիյէ եւ ականակուտ Մէճիտիյէ պատւանշաններէն, զանազան բարձրագոյն կարգի պատւանշաններ ստացաւ պարսիկ, սերպ, ռուս, իտալական, ֆրանսական, հելլենական, ռումանական եւ գերման կառավարութիւններէն: Պահ

մը դասախօսած է նաեւ Պոլսոյ իրաւագիտական վարժարանին մէջ՝ միջազգային օրէնսգիտութեան եւ քաղաքագիտութեան ճիւղերը: Վարած է ուրիշ պետական պաշտօններ ալ:

Բ. — Ազգային գործունէութիւնը

Պետական պաշտօններուն հետ զուգընթաց, Նորատունկեան խիստ մօտէն հետաքրքրւած է նաեւ ազգային կեանքով, երիտասարդ հասակին մտնելով հողաբարձութեանց եւ զանազան ազգային մարմիններու մէջ:

Եւրոպայէն վերադարձին հողաբարձու եղաւ Գատըգիւղի Արամեան վարժարանին. 1877-ին ատենապետն էր Սկիւտարի միացեալ թաղերու հողաբարձութեան. կարեւոր դեր կատարած է Արարատեան եւ Միացեալ Ընկերութեանց մէջ: 1877 սեպտ. 1-ին ատենապետ եղաւ Տնտեսական Խորհուրդին: 1882 նոյեմ. 15-ին ազգային երեսփոխան ընտրւեցաւ Սկիւտարի Ս. Սաչ թաղէն: 1885 յունիս 28-ին՝ Քաղաքական Ժողովի անդամ եւ Բ. ատենապետ: 1866-ին՝ Դաստիարակութեան Դիւանի ատենապետ, 1894-ին՝ Ազգ. Երեսփ. Ժողովի Ա. ատենապետ, 1896 նոյեմ. —ին՝ դարձեալ անդամ Քաղաք. Ժողովի, պաշտօն զոր վարեց երկար տարիներ. 1906 յունիս 25-ին՝ ատենապետ նոյն Քաղ. Ժողովի: 1885-էն ի վեր ատենապետ Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովին: Ատենապետ Սանասարեան վարժարանի Պոլսոյ Խնամակալութեան. ատենապետ՝ Արհեստից վարժարանին եւ Գարակէօզեան Կտակի Միացեալ Յանձնաժողովին. կտակակատար՝ Մատթէոս Խերեան կտակին:

Կարելի է ըսել, թէ՛ 70-ական թւականներէն սկսեալ մինչեւ Մեծ Պատերազմ՝ Պոլսոյ ազգային կեանքին մէջ ամենէն կարեւոր դերը կատարեց՝ մասնակցելով Ազգ. Պատրիարքարանի եւ Ազգ. Ժողովի հսկողութեան տակ տեղի ունեցած բոլոր ձեռնարկներուն:

Հայկական դատի կապակցութեամբ, իր գործունէութեան ամենէն կարեւոր շրջանը կը սկսի Զինադադարին, Փարիզի մէջ: Երբ Փարիզի Ազգ. Պատւիրակութիւնը Ազգային Համագումարի մը զադափարը յղացաւ, Զւիցերիայէն հրաւիրեց Գաբրիէլ Նորատունկեանը, նախագահելու այդ համագումարին: Յետոյ իբրեւ խորհրդական մասնակցեցաւ Ազգային Պատւիրակութեան. իսկ երբ Պոզոս Նուպար յուսալքւած ու յղջած, գործէ քաշւեցաւ, Նորատունկեան ստանձնեց Ազգ. Պատւիրակութեան նախագահութիւնը: Լոզանի դաշնագրին ատեն (յուլիս, 1923) Զւիցերիա գնաց, ազգային դատը հետապնդելու

համար, սակայն ձեռնունայն վերադարձաւ, դաշնակիցներու լրջութիւն պատճառաւ:

Այնուհետեւ փոխ եւ պատուակալ նախագահի պաշտօններ ստանձնեց Հ. Բ. Ը. Միութեան մէջ, ուր չկրցաւ կարեւոր դեր մը կատարել, յոգնած եւ տարիքն առած ըլլալով:

Ահա գլխաւոր գիծերուն մէջ Նորատունկեանի պետական եւ ազգային գործունէութեան շարքերը:

Իբրեւ պետական մարդ, շատ լաւ ուսումնասիրած էր օսմանեան բարձրը եւ յարմարած անոնց: Պզտիկ հասակէն Բ. Դրան մէջ մըտած, թրծւած էր Պապը Ալիի դիւանագիտական ճկուն դարձածքներուն մէջ: Վերջին ծայր զգոյշ եւ սկեպտիկ, իր խօսքերը կշռելով կարտասանէր եւ երբեք վճռական կարծիք չէր յայտնէր՝ ամէն մէկ նախադասութեան գլխին՝ «կարծեմ թէ», «թերեւս», «հաւանաբար», «ենթադրաբար» եւ այլ թէական բառեր փակցնելով: Մաքուր եւ անկաշառ մարդ էր: Պահպանողական դադափարներով տոգորւած, կը դգուշանար յախուռն գործերէ: Վճռականութեան պակասը յաճախ անշիղ ըլլալու աստիճան ծայրայեղութեան կը տանէր: Կը պատմէր թէ՛ հանրագոյտ շինութեանց նախարար եղած ատեն ո՛չ մէկ շինարարութիւն կատարեց Օսմ. կայսրութեան մէջ. աղբիւր մը անգամ չի նել չտաւ: Արտաքին գործերու նախարար եղած ատեն՝ չկրցաւ ժամանակին տեղեկանալ Պալքանեան զինակցութեան կազմութեան. իսկ երբ տեղեկացաւ կատարւած իրողութեան, ստորագնահատեց հակառակորդներուն ուժը: Օրինակ, Պալքանեան պատերազմի նախօրեակին, խօսելով Տէյլի Թէլէկրաֆի թղթակցին հետ, «զանցառելի քանակ» որակած էր Պուլկարիան, մինչ այս վերջինը ամենէն կարեւոր դերը կատարեց այդ պատերազմին մէջ:

Ազգային կեանքի մէջ, իր գործունէութիւնը թերեւս աւելի օգտակար եղած է այնպիսի շրջանի մը, երբ Օսմ. պետութեան հաւատարիմ պաշտօնատարներու ներկայութիւնը Պատրիարքարանի եւ հայ վարժարաններու շրջանակներուն մէջ, հաւաստիք մըն էր անվտանգ գործունէութեան: Ազգային կալածներուն ու իրաւունքներուն պահպանութիւնը, ազգ. դպրոցներուն եւ եկեղեցիներուն մատակարարութիւնը միակ գործն էր որով կարելի էր զբաղել Համիտի օրով: Նորատունկեան այդ գործին ներկեցաւ եւ շատ ժամանակ դոհեց: Սահմանադրութենէն վերջ եւս, նոյն ձեւով շարունակեց:

Զինադադարին՝ հակառակ սկզբի դժկամակութեան՝ նոյնքան անձնւիրութեամբ լծեցաւ ազգային դատին միջազգային սեղաններու առջեւ հետապնդման գործին: Սակայն, եթէ չյաջողեցաւ, յանցանքը

իրը չէր: Մինչեւ վերջին վայրկեանը կը պահէր իր թրքական անցագիրը, այն յոյսով որ օր մը պիտի կրնայ Պուլիս վերադառնալ եւ փրկել իր գրաւած գոյքերը: Այդ յոյսը ի դերեւ ելաւ:

Իրմով կանհետանայ հին սերունդի տիպար ներկայացուցիչ մը, որ պետական եւ ազգային կրկնակ հոգերու վրայ բեղուն գործունէութիւն մը ունեցած է եւ գիտցած է հաշտեցնել մէկը միւսին հետ:

Հ. ՍԱՄՈՒԷԼ

ԳԱՐԲ. ՄԵՆԵՎԻՇԵԱՆ

Նոյեմբ. 14-ին վախճանեց Վիէննայի Մխիթարեան միաբանութեան վաստակաւոր անդամներից մէկը՝ Գարբիէլ Մէնէվիշեանը: Հանգուցեալը ծնւել էր 1864 թ. Պուլի Բէօյիւք Դէրէ արւարձանում, թրքախօս ընտանիքի մէջ: 1878 թ. մտել էր Վիէննայի Մխիթարեան վանքը ուսանելու եւ 1887-ին ձեռնադրւել քահանայ: Նոյն թւականին հիմնեց եւ «Հանդէս Ամսօրեա»-ն, որի գործօն աշխատակիցներից մէկը եղաւ Մէնէվիշեանը: 1889-ին ուղարկեց Արեւելք դպրոցական գործով: Երեք տարի աշխատեց Զմիւռնիայում իբրեւ Մխիթարեան դպրոցի փոխ - տնօրէն: Այնտեղից տեղափոխեց Պուլիս ու յետոյ՝ Վիէննա: 1898-ին նշանակեց Պուլի վարժարանի տնօրէնի պաշտօնին, որ վարեց մինչեւ 1905 թ., իսկ վերջը, մինչեւ 1909 թ. մնաց իբրեւ դասատու նոյն դպրոցում: 1909 - 1913 տարիներին վարեց Վիէննայի վանքի ընդհանուր քարտուղարի պաշտօնը: Ապա, իբրեւ հոգաբարձու, ուղարկեց Նայսաց (Իւզոսլաւիա), ուր եւ անցրեց պատերազմի տարիները:

Իր կեանքի վերջին շրջանը Մէնէվիշեանը ամբողջապէս նւիրեց հայ մշակոյթին՝ գրական - բանասիրական աշխատութիւններին: Նա ունի բազմաթիւ տպւած եւ անտիպ գործեր, որոնցից յիշենք «Կեանքաւարանութիւն», «Բուսաբանութիւն» եւ «Համաբանութիւն» երեք հատոր դասագրքեր, «Արդի լեզագիտութիւն»-ը, «Գիրք կամ յօդւած գրելու Արւեստը» եւ այլն: Թերի է մնացել «Ոսկեղար հայերէնի բառգիրքը», որ լինելու էր Մէնէվիշեանի գլուխ գործոցը:


Յանձնի Գ. Մէնէվիշեանի հայ մշակոյթը կորցրեց իր վաստակաւոր ու բազմաբեղուն աշխատաւորներից մէկին:

ՍԵՂԱՔ ՍԱՄՈՒՆԻ

Դեկտ. 7-ին, Փարիզում, դաւադիր գնդակին զոհ գնաց մեր խոստմնալից մտաւորական գործիչներից մէկը՝ Սեղր. Սասունին: Հանգուցեալը Սասունի Ահարոնք գիւղից էր, բուն մականունով Տէր -

Ղաղարեան: Ծնւել էր 1895 թ. օգոստոսին: Նախնական ուսումը ստացել էր գիւղի դպրոցում, ապա՝ 1907 - 8-ին Տիգրանակերտի Ս. Կիրակոսի նախակրթարանում: 1910-ին փոխադրւելով Պոլիս՝ մտնում է Կեդրոնական Վարժարանը, որ աւարտում է 1914-ին եւ հրաւիրւում Ռոստոմթոյի Ազգային Վարժարանի տնօրէն: 1915-ին, Ռոստոմթոյի հայութեան հետ միասին տարադրւում է մինչեւ Տէր - Զոր, ուր ջրկիրութեամբ կարողանում է պահել իր գոյութիւնը եւ մի բախտաւոր պատահմունքով ընկնում է Դամասկոսի հիւանդանոցը, իբրեւ պաշտօնեայ: 1918-ին, ուրիշ մի քանիսի հետ, փախչում է դէպի Եգիպտոս, ճանապարհին, Ամանի անապատում, բռնւում է անգլիացիների կողմից եւ իբր պատերազմի գերի ուղարկւում Եգիպտոս, ուր, ընծիւրից մէկում, թարգմանի պաշտօն է կատարում: 1919 թ. սեպտեմբերին աղաւելելով՝ վերադառնում է Պոլիս, որտեղից մեկնում է փարիզ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար: 1923-ին աւարտում է իրաւաբանական համալսարանը, ապա սովորում է ատամնաբուժութիւն եւ իր ապրուստը շահում այդ գործով:

Աշակերտական եւ ուսանողական նստարաններից սկսած Սեդրաքը եռանդով մասնակցում էր հասարակական կեանքին: Անդամ էր Պոլսի եւ Փարիզի Հայ Ուսանող. Միութիւնների: Գործօն դեր էր կատարում Հ. Յ. Դաշնակցութեան մէջ եւ 1934-ից սկսած ներկայացուցիչ էր Ընկերվ. Միջազգայինի մէջ: Մասնակցում էր զանազան գրական - մշակութային կազմակերպութեանց: Զարգացած ու հետախուզող միտք եւ գրական ճիւղ պաշար ունէր, պերճախօս էր, շէնչող բընաւորութեան տէր, դիւրահաղորդ, ընկերական եւ, որ գլխաւորն է, սիրում էր հայ ժողովուրդն ու հայ մշակոյթը եւ կամք ու ցանկութիւն ունէր ծառայելու նրանց: Մեռաւ եղբրական մահով, կարելի է ասել, հասարակական կեանքի շեմքին, երբ դեռ նոր պիտի տար ինչ որ ունէր արժէքաւոր:



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԴՈՒՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

«Սիւն»-ի նշխարների համարում տըրւած են ընդարձակ տեղեկութիւններ Դուրեան Գրական Մրցանակի 1935 - 36 շրջանի արդիւնների մասին:

Այս անգամ, երուսաղէմի Ուսումնական Խորհուրդը, Գրական Յանձնաժողովի հանգամանքով, իր տրամադրութեան տակ ունեցել է չորս աշխատութիւն. անցեալ շրջանից մնացած Կ. Բասմաջեանի «Հայկական Դրամագիտութիւնը», Գար. Արք. Յովսէփեանի «Հոգեւոր Կեանքներ եւ Գլխաւորի բարձր դպրոցը Պոռնիցից իշխանութեան մէջ», Յ. Օշականի՝ «Վ. Թէֆէեան եւ ժամանակակից արեւմտահայ գրականութիւնը» եւ նոր ներկայացւած՝ Ստ.

Կանայեանցի «Բաջանց Տուն»-ը: Այս չորս գործերից առաջինը արդէն բնուած էր նախորդ շրջանին եւ նկատւած մրցանակի արժանի: Վերջին երեքը յանձնել էին յատուկ քննիչների եզրակացութեան՝ Գարեգին Արքեպ.՝ ի գործը՝ պրոֆ. Ն. Աղունցիւն, Ս. Կանայեանցի՝ Ն. Արքայեանին եւ Յ. Օշականին՝ Մ. Կիրակեանին: Քննիչները համաձայնութիւն կազմաւորեցին տեղեկագիրներով բոլոր գործերը գտել էին մրցանակի արժանի: Որով Ուսումնական Խորհուրդը 40 անգ. ոսկի յատկացրել է Գարեգին Արք. Յովսէփեանին. 30՝ Կ. Բասմաջեանին, 25՝ Յ. Օշականին եւ 25՝ Ս. Կանայեանին:

ՄԻ ԶՇՏՈՒՄ

«Վէմ»-ի ԺԶ. Յուլիս - Հոկտեմբեր համարի մէջ «Հին Թուրքեր» բաժնում տպւած է մի յօդւած Արսէն Թախմախեանի մասին, որին խմբագրութիւնը կըցել է հետեւեալ ծանօթութիւնը. - «Հ. Յ. Դ. Կեանքնական Դիւանի քղեքրում կայ մի գրութիւն, ուր անձանք հեղինակը 1920 *) ք. յունարին, գրի է առել մի շարք տեղեկութիւններ ու կարծիքներ Արսէն Թախմախեանի մասին: Երեւում է, որ հեղինակը մօտից ճանաչել է Թախմախեանին, այդ պատճառով նրա գրածները գուրկ չեն հետաքրքրութիւնից: Այստեղ տալիս ենք այդ գրութիւնը»:

*) Տպագրական սխալ է. պէտք է լիւնի 1902 թ.:

ԽՄԲ.

քեան էական մասերը»:

Այդ գրութի հեղինակը Սիմէոն Տէր Գրիգորեանն է՝ վաղարշապատցի, որը անցեալ դարու ուրսումնական քականներին, երբ դեռ եւս Թիֆլիսի գիւմար-գիւղի աշակերտ էր, մասնակցում էր հայկական շարժումներին եւ Մոսկուայի հայ ուսանողական այն խմբակի մէջ էր, որը հրատարակում էր «Ազատութեան տետրերը» **): Համալսարանը քողակցուց յետոյ, Ս. Տէր Գրիգոր-

**) Այդ աշխատանքների մասին տես «Հայրենիք» ամսագիր 1936 թ. Ռ. Սեւեան «Առաջին հայ յեղափոխական կինը»: Այդ մասին բաւական մանրամասն խօսւում է Է. Քրիստափորի յուշերում:

եանը ոչ մի հետաքրքրութիւն չէր ցոյց տալիս դէպի հայ հասարակական կեանքը եւ մի շարք ոչ - յաջող պետական պաշտօններ վարելուց յետոյ, 1900 թ. ւականի սկզբներին եկել էր նաւաշէրջանը, ուր տեղաւորել էր կրասիւնիկեան եղբայրների Թամանի շրջանի նաւահանգիստը:

Նաւաքահանգների դաշնակցական կեանքը աշխուժացրեց եւ այդ նախկին պետական պաշտօնեային: Մեր կապերը այնքան սերտացան, որ Միմընը համաձայնեց գրի առնել եւ կարգաւ մեր գաղտնի երեկոյթների մէկում ուրաւական քականների շարժումների մասին:

1901 թ. վերջերին, թէ 1902-ի սկզբներին, մենք կազմակերպել էինք մի բազմամարդ գաղտնի երեկոյթ բանուրական շրջանում, բժիշկ Յ. Բէյ - Մամիկոնեանի բնակարանում, ուր ներկայ էր եւ Քրիստափորը: Այդ տեղ էր, որ Ս. Տէր Գրիգորեանը առաջին անգամ երեսաց մեր գաղտնի շրջանակում եւ խօսեց ուրաւական քականների շարժումների մասին *): Իր խօսածը մեր խնդրանքով գրի առաւ եւ իմ միջոցով յանձնեց Քրիստափորին, որ ժընել ուղարկեց մի շարք ուրիշ քաղաքների հետ, ինչպէս երեւում է Քրիստափորի մի ընդարձակ նամակից, ուղարկած Բագից:

*) Այդ դասախօսութեան մասին տեսնել մեր աշխատութիւնը «Հայրենիք» ամսագրում «Բագի դերը մեր ազատագրական շարժման մէջ», 1924 թ., յուլիս:

15 յունիսին 1902 թ. ւականին. ահա՛ նամակի այդ հարցին վերաբերեալ մասը. «Սիրելի՛ք, նամակս բերողը մեր համակրելի ընկերներից է, գալիս է ուսանելու:

Նրանից կարող էք հարցնել վերջին օրերի նորութիւններից, որոնց տեղեակ է: Սրա հետ ուղարկում եմ.

1.- Շարունակութիւնը Միսակի յիշատակարանի (երկու սեւ տետրակ), որի առաջին մասը ուղարկել էի Բերնի օրիորդի հետ.

2.- Սաֆօի յիշատակարանը. —

3.- Սիմէոն Տէր Գրիգորեանի այն շրջանից երբ գործում էր Թոխմախանը. (Ընդգծումը մերն է. — Ա. Գ.).

4.- Մատթէոս Միմասեանի ինքնագիր կենսագրականը եւ ուսանաւորներ.

5.- Շերամ Ղազարեանի ինքնագիր կենսագրութիւնը.

6.- Երկու լուսանկար, մէկը Մատթէոսինն է, միւսը՝ Ստեփան Տէր - Մկրտչեանինը. (սրանք թէեւ ինձ են ընծայել, բայց թողէք մնան մեր ալբոմում, որոնք դեռ ասպարէզից հեռացած մարդիկ չեն):

7.- Երեք նամակ երկրից, որոնցից երկուսը քաղաքացիութիւններ են... » *)

Թեպէտ կարելի էր բերել եւ ուրիշ ասպարէզներ, սակայն, այսօրմէն էլ բաւարար եմ համարում:

Ա. ԳԻՒԼԻՍԱՆԴԱՆԵԱՆ

*) Տե՛ս Հ. Յ. Դ. Կ. Դիւանի համար 1778 թղթածրարի Քրիստափորի նամակը:

ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերնագրի տակ, Ի. Կուսիկեանը գետեղել էր մի շահեկան յօդած «ԽՍՀՄ ազգութիւնների դրականութիւնը» ամսագրի 11-րդ համարում: Յօդածը ներկայացնում է Հայաստանի մատուցած աշխատանքի կատարած աշխատանքի մի մասը, որ, անշուշտ, հետաքրքրական է եւ «Վէճ»-ի ընթերցողներին համար: Առաջ ենք բերում այդ յօդածի հայերէն թարգմանութիւնը որոշ յաւելումներով: Հարկ ենք համարում աւելացնել, որ աշխատանքը կատարած է մինչեւ վերջին եղբարական դէպքերը՝ Ա. Խանջեանի ինքնասպանութիւնը, հայ մատուցականութեան դէմ գործադրած հալածանքները եւ նոր աւերը Հայաստանի մշակույթի բնագաւառում: ԽՄԲ.

Վերջին հինգ տարում Խ. Հայաստանի Լուսժողովատիւն կից գոյութիւն ունի յատուկ հրատարակչութիւն (այսպէս կոչւած՝ «Մեյֆոնեան փոնդ»), որը հայերէն լեզուով հրատարակում է հասարակական գիտութիւնների վերաբերեալ գրականութիւն: Հայաստանի Պետհրատից տեալ հրատարակչութիւնը տարբերում է նրանով, որ նա տպագրում է, գլխաւորապէս, Հայաստանի պատմութեան, գեղագիտութեան, գրական գիտութեան, նիւթական մշակույթի պատմութեան եւ լեզուաբանութեան վերաբերեալ հիմնական աշխատութիւններ: Այս հրատարակչութիւնը լոյս է ընծայել 22 այնպիսի գրքեր, որոնք իրենց վրա լուրջ ուշադրութիւն են հրաւիրում ոչ միայն իրենց հետաքրքիր բովանդակութեամբ, այլ նոյնիսկ արտաքին տեսքով:

Հրատարակչութեան տպագրած աշ-

խատութիւնների հեղինակները Խ. Հայաստանի յայտնի մասնագէտներ են: Հրատարակչութեան բաց թողած արտագրանքը հանդիսանում է գիտական աշխատանքի զարգացման բազմաթիւ ցուցանիշներից մէկը Միութեան մէջ ընդհանրապէս եւ Հայաստանում մասնաւորապէս:

Մեծ արժէք են ներկայացնում այն աշխատութիւնները, որոնք ներած են Հայաստանի եւ մասամբ ընդհանրապէս Անդրկովկասի պատմութեանը:

Այստեղ հարկաւոր է յիշել պրոֆ. Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ գիրքը՝ «Սեպագիր արձանագրութիւնների դարաշրջանի Հայաստանի բնական պատմութիւնը»: Այս աշխատութիւնը, որ գրւում է 555 էջ, հիմնւած է սեպագիր յիշատակարանների ուսումնասիրութեան վրա եւ ընդգրկում է Հայաստանի պատմութիւնը նոր դարաշրջանից 3000 - 600 տարի առաջ եղած ժամանակաշրջանը: Հեղինակն սպառիչ կերպով օգտագործել է եւրոպական լեզուներով եղած ողջ գիտական գրականութիւնը եւ տեղ է այդ գրականութեան իւրաքանչեւ բնագաւառական ամփոփում: Գիրքն օժտւած է գիտական տեսակներով, ունի մեծ քանակութեամբ նկարներ, գիտական գրականութեան մանրամասն ցուցակ, քարտէզ եւ ամփոփում ռուսերէն լեզուով: Որպէս յաւելւած՝ տրւած են քաղաքական վաւերագրերի քարտեզներ քիւններ: Պրոֆ. Ա. Խաչատրեանի աշխատութեան մէջ ընթերցողը գտնում է Հայաստանի հնագոյն պատմութեան վերաբերեալ անհրաժեշտ բոլոր նիւթերը: Հրատարակչութեան լոյս ընծայած

պատմական աշխատությունների մի ամբողջ շարքը պատկանում է յայտնի պատմաբան պրոֆ. Յ. ՄԱՆԱՆԻՆՆԻ գրչին: Պրոֆ. Մանանդեանի անունը յայտնի է նաև ռուսական պատմական գրականության մեջ՝ շնորհիվ ռուսեր - րեն գրած նրա մի շարք աշխատությունների, որոնցից աչքի է ընկնում հետազոտությունը «Հայաստանի քաղաքների անունների մասին» հնադարեան ժամանակների համաշխարհային անունների կապակցությամբ» (1903 թ.): «Մեյ-ֆոնեան փոնդ»-ի հրատարակչության կողմից տպագրված են պրոֆ. Յ. Մանանդեանի հետազոտությունները: 1) «Կլիմները և չափերը հայկական հնագույն աղբյուրներում», 2) «Մաները հետազոտություններ», 3) «Երատոսֆենի ստադիոնը և պարսկական ասպարեզը» և 4) «Առատականությունը հնադարեան Հայաստանում»: Վերոյիշեալ բոլոր աշխատությունները մեծ արժեք են ներկայացնում պատմագետի համար, բայց առանձնապես այժմեականը հանդիսանում է վերջինը, որն ընդգրկում է Արշակունիների և մարգարանների ժամանակաշրջանը: Այս գիրքը, որ բաղկացած է 337 էջից, ունի 12 գլուխ, որոնք մեկուսիս են աղբյուրների և պատմագրության գնություններ, Հայաստանի առատական հասարակության դասակարգերին և դասերին, դասակարգային պայքարին, առատականության ծագմանը, գարգացմանը և Հայաստանում եղած նրա առանձնատեսություններին: Գիրքը տալիս է փաստական ընդարձակ նիւթ և օգտագործել է հայկական հին աղբյուրները, որոնցում հեղինակն ամրացնում է իր բնորոշումները և եզրակացությունները: Այս աշխատությունը հանդիսանում է հեղինակի մի շարք հետազոտությունների իրատեսակ ընդհանրացում:

Հայաստանի 13-րդ - 19-րդ դարերի ուսումնասիրության տեսակետից ար -

ժեֆաուր նիւթեր են պարունակում «Համապարհորդների նօթերի» առաջին և վեցերորդ հատորները, որ կազմել է Յ. ՅԱԿՈՒՆՆԻՆԸ, և «Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գրքի առաջին հատորը: «Համապարհորդների նօթերը» գրքի առաջին հատորը, որն ընդգրկում է 13-րդ - 16-րդ դարերը, պարունակում է Հայաստան եկած արեւմտեան նամակաւոր հորդների նօթերի քարգմանությունները (Ռուբուկի, Պոլոյի, Կալիստոյի և ուրիշների), իսկ վեցերորդ հատորն ընդգրկում է 1800 - 1820 թվականները և պարունակում է իր մեջ Մալիու-մի, Գարդանի, Ժոքերի, Մորիերի, Կոցերույի և ուրիշ եւրոպացիների նկարագրությունները: Ողջ հրատարակությունը բաղկանալու է մօտ 12 հատորից, որտեղ սպառիչ կերպով ներկայացվելու են այն բոլոր տեղեկությունները, որոնք հասկանալի են եւրոպացիների կողմից Անդրկովկասի մասին: Լայն տեսած երկու հատորները ցայց են տալիս, որ Յ. Յակոբեանի ձեռնարկած աշխատությունը յաջողությամբ կը պատկերվի, չնայած թագաւոր արգելների: Այդպիսի արգելիքներից մեկն այն է, որ բնագրերը դժարությամբ են ստացվում, որովհետեւ մի քանի աղբյուրներ, չնայած որ մի ժամանակ տպւած են եղել Արեւմուտքում, հիմա շատ դժարությամբ են հասնում: «Նօթերի» բոլոր քարգմանություններն ունեն լուսաբանություններ (երբեմն բաւական մանրամասն), նկարներ և աշխարհագրական քարտեզներ: Հայերեն քարգմանությունները արած է հասարակ, պարզ լեզուով, դրա համար էլ հրատարակությունից կարող են օգտուել ընթերցողների լայն շրջանները: *)

*) Դժբախտաբար, Յ. Յակոբեանի թարգմանությունները, լեզու տեսակետից, շատ անյայտ է են. անտանելի հանքերով են կազմւած և դժարութեամբ են կարդացւում: ԽՄԲ.

Գրականագիտության աշխատությունների շարքին է պատկանում նաև Մ. ԱԲԵՂՆԱՆԻ «Հայ լեզուի տաղաչափություն» և ԵՐԻԱՆԴ ՇԱՀԱԶԻՋԻ «Մի-ֆայել Նալբանդեանի Դիւանը»: Պրոֆ. Մ. Աբեղեանի աշխատությունը հանդիսանում է մի մանրամասն հետազոտություն, որը տալիս է հայկական տաղաչափության ներկայ դրութեան պատմությունը և վերլուծումը: 452 էջից բաղկացած այս խոշոր գործը պետք է համարել հայ գիտության մեծ նվաճումը Հայաստանում: Անկասկած, այս գիրքը ղեկավարող ձեռնարկ պետք է դառնայ նաև երիտասարդ բանաստեղծների համար:

Ե. Շահաղիզի գիրքը հանդիսանում է նոր նիւթերի ժողովածու հայ յայտնի հրապարակախօս, բնագետ և 60-ական թվականների լեզուաբան Մի-ֆայել Նալբանդեանի մասին: Ժողովածուի նիւթերից առնելի հետաքրքրական է Նալբանդեանի նամակը Պետրոպոլիսի բերդից:

Հրատարակությունների լեզական շարքին են պատկանում պրոֆ. Մ. ԱԲԵՂՆԱՆԻ «Հայ լեզուի տեսություն» և պրոֆ. Հ. ԱՅՆՈՒՆԻ «Հայ լեզուի արմատական բառարան» 4րդ - 7-րդ հատորները: Մ. Աբեղեանի, հայ լեզուի յայտնի մասնագետի, գիրքն ամբողջովին գրած է հնդեւրոպականության կանոնների հիման վրա: Այս գիրքը պարունակում է մեծ քանակությամբ նիւթեր հայ լեզուի վերաբերեալ, որոնք կարող են օգտագործուել, եթե ընթերցողն ունենայ մեթոդաբանական ճիշտ դրություններ:

Պրոֆ. Հ. Անտեանի աշխատությունը, որի առաջին երեք հատորները լայն են տեսել դեռ նախ քան «Մեյֆոնեան փոնդ»-ի կազմակերպումը, իրենից խոշոր արժեք է ներկայացնում: Մի քանի տասնյակ տարիների ընթացքում կազմւած «Բառարանը» հանդիսանում է հայ

լեզուի հանրագիտարան: Անտեանի բառարանը գոյություն ունեցող բոլոր հայկական բառերը բացատրում է հնդեւրոպական տեսանկյունով: Հեղինակը հայ լեզուն համարում է «միասնական» մի զանգւած, իսկ այդ լեզուի առանձին բառերը «արմատական» կամ «փոխ առած» բառեր: Բացատրությունների հետ միասին բերւած են ողջ աշխարհի լեզուագետների բազմաթիւ կարծիքներն այդ գրքի մասին և բառեր՝ զանազան սխառմաների բազմաթիւ լեզուներից: Հեղինակը զարմանալի բարեխղճությամբ ահագին նիւթեր է հաւաքել: Ամեն մի հատորը բաղկացած է 1200-ից մինչև 1500 էջից: Այսպիսի բառարանի լայն ընծայումը գիտական խոշոր փաստ է հանդիսանում:

Հրատարակություններ լայն է ընծայել մի շարք արժեքավոր հետազոտություններ նաև Հայաստանի նիւթական մեր շակոյի պատմության մասին: Այստեղ պետք է նշել հրատարակւած Թ. ԹՈՐՈՒՄՆԻԱՆԻ աշխատությունը՝ «Շինարարական նիւթերի գործածությունը հնադարեան Հայաստանում»: Ոչ պակաս շահագրգռական է նաև հրատարակւած Ն. ԲՈՒՆԵԱՅԵԱՆԻ աշխատությունը՝ «Գտնի հետազոտական տառերը» (յատակագծեր և լուսանկարներ): Այս շարքին է պատկանում յայտնի ազգագրագետ և հրատարակւած (այժմ մահացած) Ե. ԼԱԼԱՆԻ աշխատությունը «Գտնաբանների պեղումները և Հայաստանում» վերնագրով, որն ունի բազմաթիւ նկարներ: Առանձնապես հետաքրքրական է Ե. ՇԱՀԱԶԻՋԻ «Հին երեսան» գիրքը, որի հեղինակն ահագին նիւթեր է հաւաքել և առաջին փորձն է կատարել՝ տալու և Հայաստանի մայրաքաղաքի պատմությունը: Շուտով լայն կը տեսնուի մասնագետ հնարան Ա. ԲԱՆԱՆԻԱՆԻ գիրքը «Վաղարշապատի պեղումների» մասին:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի նիւթական մշակոյթի պատմության ու-

սումնասիրութիւնը յաջող է ընթանում, եւ տպագրած գրքերը տալիս են շատ արժէքաւոր նիւթ, որը հարստացնում է մեր գիտութիւնը:

Վերջում հարկաւոր է մատնանշել եւ թաժտագէտ ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ (այժմ մեռած) «Վոմիտասի ստեղծագործութեան վերլուծութիւնը» եւ «Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկը», Գ. ԼԵԻՆԵԱՆԻ «Հայ պարբերական մամուլն սկզբից մինչեւ մեր օրերը», Զ. ԿՈՐԿՈՏԵԱՆԻ «Եռերկր» Հայաստանի բնակչութիւնը վերջին դա-

րում» (1831 - 1931) գրքերը: Հայ երաժշտութեան պատմութիւնը քիչ է ուսումնասիրւած, այդ իսկ պատճառով Ս. ՄԵԼԻՔԵԱՆԻ աշխատութիւնը արժէքաւոր գանձ է հանդիսանում ոչ միայն հայ երաժշտութեան, այլ նաեւ ընդհանրապէս երաժշտութեան պատմութեան տեսակետից: Հայերի մշակոյթի պատմութեան համար եւ որպէս տեղեկագիրք, այդ գիրքն անփոխարինելի է: Զ. ԿՈՐԿՈՏԵԱՆԻ գիրքը տալիս է Հայաստանի ազգաբնակչութեան անման հետաքրքրական պատկերը:

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

Ինչպէս բերքերի մէջ երեւցած ազդերից յայտնի է, ծանօթ բանասէր - լրագրող Հ. Մ. Պոտուռեանը ձեռնարկել էր «Հայ Հանրագիտակ» բառարանի հրատարակութեան: Այդ գործի առաջին պրակը արդէն լոյս է տեսել: Հանրագիտակին բաժանորդագրելու ուզողները կարող են դիմել հեղինակի հասցէին: P. M. Bodourian, Frumoasa - Cluc, (Roumanie).

Նմոյշի համար մեզ ուղարկւած պրակը (16 էջ), որ պարունակում է Ա տառի առաջին մասը՝ մինչեւ Աբիւ, կարող է վկայել, որ Հ. Պոտուռեանը խիստ անհրաժեշտ աշխատանքի է ձեռնարկել, միայն գործի լրջութիւնը պա-

հանջում է լինել աւելի բնասողիք եւ ջոկել նիւթի արժէքաւորը անարժէքից: Ներքին չէ Հանրագիտակի մէջ տեղ տալ հանրային կարեւորութիւն չներկայա - ցնող «գործի մարդկանց» կենսագրութիւններին, առեւտրական յայտարարութեան ձեւով գովասանքներ շոյլել եւ դնել նրանց հասցէները: Հանրագիտակը հասցէագիրք չէ, ոչ էլ ռէֆլաւի միջոց: Հանրագիտակի մէջ պէտք է տալ տեղեկութիւններ հանրային բնոյթ եւ արժէք ներկայացնող անունների եւ գործերի մասին: Այս է էականը: Եւ ջանալ, որ այդ տեղեկութիւնները լինեն ճշտւած եւ լրիւ. նմոյշ - պրակից դատելով, դժբախտաբար, գործը այս տեսակետից անբերի կարելի չէ համարել:

Լ. ԷՍԱՃԱՆԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Բանաստեղծ Լեւոն Էսանեանի մահւան տարելիցի առթիւ, հանգուցեալի յիշատակը յարգելու մտածումով, արքեպիսկոպոսի մի խումբ հայ մտաւորա - կաններ որոշել են հրատարակել նրա անտիպ երկերի մի ժողովածու եւ այդ նպատակով կազմել են մի յանձնախումբ, «Պարբենոն» անունով, որի մէջ մտնում են Ա. Պետրոսեան, Գ. Լազեան, Վ. Դափէսեան, Գ. Բարադամեան

և Գ. Փափագեան: Հրատարակելիք գրքի հասոյթը պիտի յատկացւի բանաստեղծի գերեզմանի վրա շինելիք դամբանին: Յանձնախումբը կոչ է ուղղել հասարակութեան, որով բարոյական եւ նիւթական աջակցութիւն է խնդրում: Դրամական ամէն առաքում կարելի է անել գանձապահ Գ. Փափագեանի հասցէով՝

Rue Stade, 62, Athènes (Grèce).

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԼՈՒԻՉԱ ԱՍԼԱՆԵԱՆ (ԼԱՍ)՝ «Հարցականի ուղիներով» (վէպ)

1936, Փարիզ, 514 էջ.

Տիկ. Լասի այս վէպը ուշադրութեան արժանի գործ է արտասանմանի հայ գրականութեան մէջ: Նա մի կողմից սպառնաց է հեղինակի անվիճելի շքանորհի, միւս կողմից՝ մի անգամ եւս երեւան է բերում մեր կեանքի եւ մշակոյթի ծանր հիւանդութիւնը, իրեն հետեւանք ազգային միջավայրի բացակայութեան:

Տիկ. Լաս իր գրքի երեսին գրել է՝ «վէպ»: Աւելի ճիշտ կը լինէր ասել՝ «Ժամանակագրութիւն», որովհետեւ վէպ լինելու համար նրա մէջ բացակայում է հիմնական պայմանը՝ կենտրոնական անձը կամ կենտրոնական գաղափարը: Որի՞ «վէպ»-ն է պատմում մեզ Տիկինը, ի՞նչ հիմնական գաղափարների շուրջ են զարգանում նրա պատմած դէպքերը: Տիկ. Լասի գործում կան վիճակներ եւ սպորումներ, բայց վիպական տարրը շատ քոյլ է:

Բռնագրօսիկ ու կամայական է քուում եւ գրքի անունը՝ «Հարցականի ուղիներով»։ Ի՞նչ ուղիների մասին է խօսքը: Տիկ. Լասի գրքում, առհասարակ, ուղիներ քիչ կան, եղածն էլ՝ հարցական չեն:

Առհասարակ, Տիկ. Լասը սիրում է «օրիփնալ» խօսքեր: Նրա գրքի առաջին մասը, օրինակ, կոչւում է «Արեւելեան դորգը»։ Ինչո՞ւ «գորգ» եւ ոչ, օրինակ, «Արեւելեան բաստան»: Կամ երկրորդ մասը՝ «Կլիմայ»՝ կապումը փրանսական համապատասխան արտա - յայտութեան: Տիկ. Լասի գրական կա-

րողութիւնը շատ աւելի լուրջ է և պէտք չունի այս կարգի աժանոց պահուսնակների, որոնք միայն տեսնութիւն են առաջացնում գեղարուեստական մշակի տէր ընթերցողի մէջ: Տիկ. Լասը կանգնի նազանով կոտրատում է բառերի եւ արտայայտութիւնների հետ, եւ այդ անպայման վնասում է նրա գործին:

Տիկ. Լասը իր վէպը բաժանել է երեք մասի. Ա. - «Արեւելեան գորգը», ուր ներկայացւում է Թարիզի միջավայրը եւ «Փարիզ» տպարանի տէր Նուրա - ընտանիքը իր առօրեայով ու հոգեկան ապրումներով: Այստեղից են դուրս եկել գրքի գլխաւոր գործող անձերը: Մի տեսակ, նահապետական ընտանիք, ուր իշխում է Բենեդ տատի հնաւանդ ոգին: Բ. - «Կլիմայ», սեւ ամպեր են կուտակւում Նուրարի ընտանիքի զբոսի: Բոլոր յոյսերի խորտակում: Գ. - «Բասի միջից», - Հայկական Փարիզը եւ վէպի հերոսների նակատագրի վերջնական ձեւաւորումը:

Գործի մտայնացումը շատ յաջող է: Տիկ. Լասը մտածել է տալ մեր վերջին տարիների կեանքի վէպը - պատերազմի նախօրեակ, պատերազմի տարիներ, յեղափոխութիւն, Հայաստանի Հանրապետութեան ստեղծում, բոլշեւիզմ ... Իր ծրագիրը, սակայն, նա սահմանափակել է միայն արտասանմանով, որով հայ կեանքի մի մասն է միայն արտա - յայտւած նրա գործում: Յետոյ, նա ծանրացել է ոչ քէ արտաքին երեւոյթների

վրա, այլ վեր է առել այդ երեւոյթների անդրադարձումը մարդկանց հոգեկան աշխարհում: Տիկ. Լասի վեպը գերազանցապէս հոգեբանական գործ է: Այդ տեղ է նրա ոյժը: Իսկ հասարակական մասով նրա վեպը տկար է:

Հոգեբանական տեսակետից էլ, մեզ քուտ է, կան հիմնական քերութիւններ Տիկ Լասի գրքի մէջ: Այսպէս, եթէ չհաշուենք մի — երկու տոգոյն դէմքեր, նրա համարեա բոլոր հերոսները հիւանդատ մարդիկ են, անհոգ ու անխաբիս, կեանքի նպատակի գիտակցութիւնը կորցրած գլուխներ: Նուրարի մեծ որդի Զաւէնը, օրինակ, առողջ եւ կամքի տէր մի պատանի, գնում է Ռուսաստան, աւարտում է համալսարանը եւ վերադառնում խեղճ ու կամագործ մի արարած: Նմանապէս Գրիգոր աղայի տղայ Բարկէնը, Փարիզում, տրարում ու փչանում է: Նոյնպէս Հայկը եւ ուրիշներ: Ինչո՞վ բացատրել այս երեւոյթը: «Արեւելեան գորգը» բացատրութիւն չի տալիս: Ինչո՞ւ առողջ, գործունեայ եւ հաւատարմորէն Նուրարի գաւակները այդպիսի անյոյժ ընթացք պիտի ստանային: Թաւրիզի միջավայրն էր պատմաւոր, բայց այդ միջավայրի մէջ ոչինչ արտակարգ արատ չի նկատուում: Այդ նոյն միջավայրից են ծնունդ առել եւ Ներսէսն ու Բագրատը: Ի՞նչ առանձնայատուկ բան կար «Արեւելեան գորգ»-ում, կամ «Փարիզ» սուպրանի տիբոյ ընտանիքում, որ կարողանար բացատրել Զաւէնի, Վարդենիի և միւսների հետագայ կեանքը և Նուրարի ապրած ողբերգութիւնը: Դժբախտաբար, Տիկ. Լասը այս հիմնական հարցի պատասխանը չի տալիս, որով նրա վեպի ընկերային հիմնաւորումը դառնում է անհամոզեցուցիչ: Ընդհակառակը, ներկայացւած տեղանքի իրեն արդիւնք Նուրարի եւ իր գաւակների ճակատագիրը պէտք է լինէր բոլորովին տարբեր:

Արտաքինից դատելով՝ կարելի է որոշ

նմանութիւն տեսնել Չեխովի եւ Տիկ. Լասի հերոսների միջեւ — երկուսն էլ պտուղ նախապատերազմեան պայմաններին: Բայց Չեխովի «աւելորդ մարդիկ», այդ բոլոր «Դեպքեա վանեա»-ները ծնունդ էին առնական հոգիի, որ խորապէս տարբեր է հայկականից, եւ ապա՝ համառոտական կործանող «Բալի պարտեզ»-ի: Հայկական «պարտեզ»-ը բոլորովին այլ վիճակ ունէր. հայ կեանքը ապրում էր մտաւոր ու հոգեկան վերելքի ու գործօնութեան շրջան. տխրած ու բարոյալքած անհատներ կարող էին պատահել, բայց դժբախտ հասարակական երեւոյթ չէին կազմում ու տիպական չէին: Այս տեսակետից Տիկ. Լասը նիշտ չի պատկերացրել դարաշրջանը:

Հարազատօրէն չեն ներկայացւած եւ դարաշրջանի արտայայտիչ դէմքերը: Եթէ, Ներսէսի տիպը, իր տոգոնութեամբ եւ անորոշութեամբ, դեռ որոշ չափով իրական է հայ բոլշեւիկների նախնական շրջանի համար, Արտոն բնաւ արտայայտիչ չէ ժամանակի տիրող գաղափարախօսութեան: Արտոն պարզ ու սովորական հայդուկ է, կուի մարդ, բայց մի՞թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացւում էր Արտոնեւով: Տիկ. Լասը խեղափութում է իրականութիւնը, երբ Բագրատին կամ Արմաշին հակադրում է պարզունակ ու Տիկ. Լասի գրքի տակ մի քիչ ծիծաղելի դարձած Արտոյին, կամ այն «վրէժ — վրէժ» ազգակող որբին: Կայ ինչ որ դիտումնաւոր աչառութիւն Տիկ. Լասի մէջ, երբ նա խօսում է երկու ուժերի՝ Հ. Յ. Դաշնակցութեան եւ բոլշեւիզմի համեմատութեան մասին: Այստեղ վիպագիրը իջնում է արեւտագէտի առարկայական բարձունքից եւ դառնում է քաղաքագետ եւ աչառու կողմ:

Այս պարագան առանձնապէս աչք է ծակում, երբ հեղինակը, բազում անպտուղ դեգերումներից յետոյ, վարդենուն ուղարկում է խորհրդային աշ-

խարհ: Այստեղ արդէն չի քաղցնում իր համակրանքը բոլշեւիկների նկատմամբ. «Վարդենին ներս մտաւ ոսկէ դոնե-րից»... Եւ կուրութեան մէջ մոռանում է, որ այդ «ոսկէ դոնեքը» տանում են այն երկիրը, ուր կանգնեցնէր յուսահատ՝ տարեանակի գնդակով ցրիւ են տալիս իրենց ուղեղը, ուր հայ մշակոյթի տաղանդաւոր մշակները՝ Բալենցներ ու Մահարիներ՝ դաժան վայրագութեամբ բանտերն են նետում, ուր բռնութիւնն ու կամայականութիւնն է քաղաւորում աշխարհիս ամենաագնիւ գաղափարների անւան տակ եւ ստոր գետնափաշտութիւնը ներազդածում է այդ ամենը...

Բռնագրոսիկ եւ կամայական ձեւով է ներկայացւած եւ վարդենիի հոգեփոխ — խորիւնը: Տիկ. Լասը ուզում է մեզ հաւատացնել, թէ վարդենին Հայաստան է գնում հրապուրած խորհրդային իշխանութեան բարիքներից: Ի՞նչ գիտէ այդ խեղճ աղջիկը Հայաստանի կամ խորհրդային իշխանութեան մասին: Նա Հայաստան է գնում, որովհետեւ սիրում է Բագրատին, իսկ Բագրատը ապրում է Հայաստանում: Եթէ Բագրատը ապրէր Չինաստանում, Տիկ. Լասի պատկերացրած վարդենին, անկասկած, կերպար Չինաստան: «Ոսկէ դոնեք» վարդենիի համար Բագրատի սէրն է եւ ոչ թէ այն երկիրը, «ուր գործարանների ծխնելոյզների վրա քաւար դուշն իր կապոյտ քեւերն է քափահարում»: Այդ երկրի մասին Տիկ. Լասը իմք շատ աղօտ հասկացողութիւն ունի, ուր մընաց խեղճ ու կրակ վարդենին...

Անկեղծ ցաւով պէտք է արձանագրել, որ Տիկ. Լասը իր գործը փչացրել է ակնյայտնի «սոցիալական ապսպրանք»-ով: Սա այն քարն է, որից սայթափել են շատերը: Ա. Շահխաթունին էլ, օրինակ, «Առաքել Աղա»-յի մէջ իր Անահիտին, իրեն բողոք Հայկական Փարիզի դէմ, ուղարկեց «Քաւար դուշի» երկիրը: Չեղաւ մէկը, սակայն, որ ցոյց

տար մեզ, թէ «ոսկէ դոնեք» ներս մըտնելուց յետոյ ի՞նչ եղան այդ Անահիտներն ու վարդենիները, արդեօք ազա՞տ են հիմա, թէ Բալենցների ու Մահարիների կողքին են «Քաւար դուշի» կապոյտ քեւերի» տակ...

Ինչո՞ւ է այս այսպէս: Ինչո՞ւ այս սայթափումը: Հեղինակն է մեղաւոր, թէ մի ուրիշ պատճառ կայ: Անշուշտ, հեղինակի անձնական հակումն էլ որոշ դեր ունի, բայց հիմնական պատճառը, մեր կարծիքով, առարկայական պայմանների մէջ է, ա՛յն, որից տառապում է մեր ողջ կեանքը, մէջը լինելով և զբաղակցութիւնը: Հո՞ղ չկայ, խաբիս չկայ: Գաղութային մեր ծովի մէջ հայ գրողը դատապարտւած է լոյսաւ անդեկ ու անառաքստ, եւ նաեւ առանց կողմնացոյցի: Ո՞ւր ուղղէ իր նաւը — եզերք չի երեւում: Միակ եզերքը — Մայր Հայրենիքը — անբաւարար մշուշի մէջ է, կամ՝ որպէս կրկնեւորութիւն ներկայանում մարդու տեսողութեան: Եւ նրա կողմը ուղղւած, նրանից փրկու-րիւն հայցող բոլոր նաւերը, մինչեւ այժմ անայայտ խորտակւել են... Տիկ. Լասն էլ բացառութիւն չէ. նա էլ ապրում է նոյն ողբերգութիւնը, ինչ որ բոլոր հայ գրողները արտասահմանում — հող ու խաբիս չունենալու ողբերգութիւնը: Նրա որոնումներն էլ բնական կերպով ուղղւած են Մայր Հայրենիքի կողմը: Աւա՛ղ, նրա նակատագիրն էլ աւելի լաւ չէ, քան նրանից առաջ եղած բոլոր որոնողներին: : Ինչ որ առանձնապէս ցաւալի է, այդ նրա վեպի ակնյայտնի արհեստական վախճանն է, որ ապացոյց է, թէ հեղինակը առարկայական պայմանների գոհ լինելով հանդերձ՝ ինքն էլ բոլորովին ազատ չէ կանխակալ կարծիքներից, այլապէս աւսած՝ միտումնաւոր է, բաւարար չափով անկեղծ չէ: Այս տեսակետից լիովին արդարաւում է հետեւեալ քառուկը, որ մի կատակաւոր պարոն գրել է նրա մասին.

Աջ նայելով, ձախ նայելով
Եւ ժպտալով ամենքին՝
Հարցականի ուղիներով
Ուր ես գնում, ա՛յ տիկին...
Տիկ. Լասը իրապէս որոշ դուռ չու-
նի, բայց ցոյց է տալիս, բէ հասել է
«ոսկէ դռան»...

Այս բոլորով հանդերձ, Տիկ. Լասի
վէպը արժեքաւոր գործ է՝ օժտւած ան-
վիճելի արժանիքներով, որոնց մասին
գրական քննադատութիւնը, անշուշտ,
պէտք է արտայայտի դրական կերպով:
Ա. Վ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄՏԻՑ

«Վէմ»-ի յաջորդ համարից պիտի սկսենք հրատարակել Հմ. Մա-
նուկեանի գրած քննքը Վասպուրականի պատերազմի շրջանի դէպքե-
րի մասին՝ տեղեկագիր, յիշատակարան, եւ այլն: Պիտի տանք նոյն-
պէս Վանում քաղաք ընդունվին անտիպ նկարներ ու զանազան վա-
ւերագրեր:

«Վէմ»-ում պիտի հրատարակւի նաեւ մեր վաստակաւոր աշխա-
տակից Պ. Ռ. Բերբերեանի մէկ նոր գործը՝ «Պատրանքներ շրջանից»
վերնագրով:

Խմբագրութիւնս մէկ անգամ եւս խնդրում է «Վէմ»-ի գործա-
կալներին եւ բաժանորդներին փութացնել բաժնեգնքերի վճարումը:

Յաջորդ թիւից պարտաւորւած պիտի լինենք դադարեցնել «Վէմ»-ի
առաջումը ընդոր նրանց, որոնք չեն փակել իրենց հաշիւները:

ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Իշխան՝ «Տումբու Երգը», Պէյ-
րուք, 1936:

Մկ. Պարսամեան՝ «Արեւմտահայ բա-
նաստեղծներ», Ա. շարք, Մատենաշար
«Համագային», քիւ 1, Փարիզ, 1936:

Օ. Չարմուշի՝ «Երգ յաւերժական»
(բանաստ. հէֆեաթ), Սոփիա, 1936:

«Հայրենիք» ամս., քիւ 1, 2:

«Հանդէս Ամսօրեայ», քիւ 1:

«Բազմավէպ», քիւ 1:

«Սիրոն», քիւ 10, 11:

«Հայ - Բոյժ», քիւ 25, 26, 27:

«Նոր Գիրք», քիւ 10 - 11:

«Հասկ», քիւ 10 - 11:

«Պապ - Ուխտի», քիւ 1:

«Կեանք եւ Արուեստ», քիւ 10:

«Որհորդ. Արուեստ», քիւ 21:

«Գրական Թերթ», քիւ 26, 27:

«Bulletin de l'Union Arméno-Geor-
gienne», N° 1, 2, 3.

ՎԷՍ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Տոքո. Ս. Քէշիշեան, Տիբրոյիտից,
մեր տրամադրութեան տակ դրել է 200
փր., որ յատկացրինք Քէսապի եւ Հա-
լէպի Պատանեկան Միութիւններին «Վէ-
մ»-ի բաժանորդագրութեան:

Ս. Վարդապետեան, Ամերիկա - Հա-
սինէի Ազգ. վարժարանին:

Հ. Քէսիշեան, Փարիզ - Հայ Պատա-
նեկ. Միութեան, Ալեքսանդրապոլիս,
Յունաստան:

Պ. Գ. Ծառուկեան, Մոնթէվիտէոյից,
խմբագրութեան տրամադրութեան
տակ դրել է 50 փէսօ, որ յատկացրինք
Սիւրիայի դպրոցական գրադարաննե-
րին:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 ,,
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ	
ՄԻԱՍԻՆ	
Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 ,,
Հասցէ՝	

13-15 Shawmut st.

BOSTON MASS (U.S.A.)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան	6 դոլար
Վեցամսեայ	3 ,,
Եռամսեայ	2 ,,
Հասցէ՝	

Haïrenik Press, 13-15 Shawmut st.

BOSTON-MASS (U.S.A.)

Ա Ր Մ Ե Ն Ի Ա

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Արտաստեմ, տարեկան,	3 դոլար
Արժանքիմ, տարեկան,	6 փէսօ
,, վեցամսեայ,	3.50 ,,
Հասցէ՝	

"ARMENIA" Canning 1087,
Buenas-Aires, (Argentine)

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան,	150 եգ. դի.
,, վեցամսեայ,	80 ,,
Արտաստեմ, տարեկան,	40 շիլիմ
,, վեցամսեայ,	20 ,,

Հասցէ՝

'Houssaper', B. P. 868

Le CAIRE (EGYPTE)

Ն Ո Ր Օ Ր

ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան, տարեկան,	420 տր.
,, վեցամսեայ,	210 ,,
Եւրոպա, տարեկան,	135 փր.
,, վեցամսեայ,	80 ,,
Ամերիկա, տարեկան,	8.00 դոլար
,, վեցամսեայ,	4.50 ,,

Հասցէ՝

"NorOr", 20-A, Rue Vouli,

ATHÈNES (GRÈCE)

Ա Զ Դ Ա Կ

ՕՐԱԹԵՐԹ

Սիւրիա՝ տարեկան	550 ս. դ.
Սիւրիա՝ վեցամսեայ	300 ս. դ.
Արտաստեմ՝ տարեկան	7 դոլար
Արտաստեմ՝ վեցամսեայ	4 դոլար
Հասցէ՝	

"Aztag". B. P. 587 Beyrouth
(Liban)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀ. ԶԱԻՐԵԱՆ. — Գաբրիել Սուրբուկեան	1
ՎԱՀ. ՄԻՆԱՆՈՐԵԱՆ. — Արեալիբի օրեր	24
ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ. — Անդրանիկը Սիւնեաց երկրում (վերջ)	50
ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ. — Ղարա Մելիք	70
ՍԻՄ. ՎՐԱՅԵԱՆ. — Վ. Փափագեանի յուշերի առթիւ	80
ՀԱՅ. — ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ	87
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ. — Գեորգեան ձեմարանի մեծ դէպքը	99
ԱՆՅԵԱԼՔ. — Գ. Նորատուկեան — Հ. Գ. Մէնէվիշեան — Ս. Սաաունի	103
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Դուրեան Գրական Մրցանակը — Մի ճշդում	109
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ. — Հայաստանի Գիտական Գրականութիւնը — Հայ Հանրագիտակ — Լ. Էսանեանի գործերը	111
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ. — Լ. Ասլանեան (Լաս)՝ «Հարցականի ուղիներով», Ս. Վ.	115
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ	118
ՅԱԻԵԼԻԱՍ. — Վախրամ Եպ. Մանկունի, «Գեորգ Դ. եւ իր ժամանակը»	241

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս՝ տարեկան 4 դուլար
Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանկ
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիրիա, եւ
Պարսկաստան՝ , , 50 ֆրանկ
ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԱՖԱՆՁԻՐ 6 ԳԻՐՔԸ՝ 25 Ֆր.
Հասցէ՝ Գաւազնի, դրամի, յոդաձմերի եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար —

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Imo. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquiére, PARIS (17e)

Թեան արեւելեայ՝ դեսպանը նախ այցելեցեն ինքեան, եւ ապա Հոգեւոր Տէր փոխանակիցէ նոցա զայցելութիւնս: Միանգամայն ձեւացունէ զվստահութիւն, զի ըստ ազգարարութեան իւրում՝ դեսպանըն սրբայից եւ Աթենայի կանխեսցեն զալ յայցելութիւնս ինքեան կաթողիկոսի եւ դեսպանըն եւրոպականք անշուշտ հետեւեսցեն նոցա:

Մոռանա՞յր արդեօք պ. Իկնաթիէվ զառաջին այցելութիւն Հոգեւոր Տեառն առ ինքն, եւ կամ թէ խրատէ՞ր զսա, թողցուք ի բաց դայս: Միամտութեամբ իմն վստահացեալ Հոգեւոր Տեառն հրապուրիչ բանից դեսպանի, առանց թափանցելոյ դիւանադիտական խորամանկութեանց եւ խարդաւանութեանց նորա՝ խոստացաւ հետեւել խորհրդոցն, միանգամայն զգուշանայր ի զժտութեանց յառաջին քայլափոխան:

Պօսեցաւ պ. դեսպան եւ զայլ բանս նենդամտութեամբ իմն ըստ խնդրոյ Պալատէնիոյ, եւ սակս ուղղութեանց Հայոց Կ. Պոլսոյ եւ Պատրիարքարանի Գում Գաբուլի, յորդորէր զՏէր Գեորգ Կաթողիկոս փութացուցանել զչու իւր աստի ի Կ. Պոլսոյ, եւ այսպէս ազատեալ ի սանձարձակ հոսանաց եւ ի յանդընութեանց երիտասարդաց մայրաքաղաքի՝ հանգչել ի Ս. Էջմիածին եւ վարել անդ լրջամտութեամբ եւ ազատութեամբ (°) զիշխանութիւն Հայրապետական եւ եթէ զինդիր վերաքննութեան Պալատէնիոյ: Յաճախ շեշտէր զայսորիկ բանս իւր զողջես ձեւացուցեալ սրաշտպանել զազատութիւն եւ զանկախութիւն կաթողիկոսական:

Վերադարձաւ Պ. Իկնաթիէվ զօրավար ի դեսպանատուն:

Ընդ սովորական զբաղմանց եւ պատրաստութեանց՝ Վեհ. Հայրապետ սկսաւ շարունակել զայցելութիւնս իւր առ կարեւորագոյն անձինս, առ Օսմ. նախարարս եւ առ այլս եւ նախ ի 18-րդ աւուր ամսինս, առ Սոմ. նախարարս եւ առ այլս եւ նախ ի 18-րդ աւուր ամսինս ի Զորեքչարաթու վճարեաց զփոխադարձ այցելութիւն առ Տ. Պօղոս Արքեպս. պատրիարք ի պատրիարքարանի ի Գում — Գաբու, եւ ապա դնաց յայցելութիւն առ բարեկամս իւր վաղածանօթ, Րիշտի Մէհմէտ փաշայ մեծ — եպարքոս (սատրաղամ), Մէհմէտ փաշայ Կիպրոսցի (Գըպըրդը) նախագահ պետական խորհրդոյ (շուրաքի տէվիէթ), եւ Ասլի փաշայ նախարար արտաքին գործոց (խարիֆիյէ նազըրը), որուն յաջորդեաց յետ աւուրս ինչ Ֆուատ փաշայ, եւ Հոգեւոր Տէր դնաց եւ առ նա յայցելութիւն եւ ի շնորհաւորութիւն յ9-ն Փետրվարի:

Տեսեալ Նորին Սրբութեան եթէ անցին աւուրք առաւել քան զհինգեաւսն եւ ոչ ոք ի դեսպանաց այցելեաց ինքեան, անկաւ ի կառ-

Հայրապետական, մին խաչ եւ միւսն գաւազան կորագլուխ: Երկր-
քին կարմրահանդերձ շաքիւրք կաթուղիկոսականք յառաջընթաց եր-
թային ունելով ի ձեռինս իւրեանց զմի մի ցուպս խնձորագլուխս ար-
ծաթեայս:

Հետեւէր զօրապետ Զինովիէ՛վ Սարգիս Արքեպիսկոպոսի:

Այսպէս ուրեմն մեկնեցաւ թափօրն այս հրաւիրակաց ի Ս. Եր-
րորդութիւն Եկեղեցւոյ երգովք շարականաց (Որ զչնորհոյ), յամրա-
քայլ ընթացիւք ընդ պողոտայն Թօղրու – եօլ:

Ծիփայր բազմութիւն Հայոց եւ օտարաց ընդ երթեւեկաց սկսեալ
ի գաւթէ եկեղեցւոյ, ի մեծի պողոտայի մինչեւ ցղուռն հիւրընկալ
բնակարանի Նորին Սրբութեան:

Եհաս եւ եմուտ թափօրն եկեղեցական ի տուն Յակոբ Էֆ. Նո-
րատունկեանի եւ ել ի յարկն առաջին, ուր մնայր Վեհ. Հայրապետ
ի մեծի սրահի ընդունելութեան ընդ բազմութեան եպիսկոպոսաց,
վարդապետաց եւ հայազնեայ նշանաւորաց:

Ներկայացեալ Հրաւիրակաց Հոգեւոր Տեառն՝ ետուն զհամբոյրս
Ս. Աջոյ Նորին Սրբութեան, եւ Տ. Սարգիս Արքեպոս. Զալալեանց
Հրաւիրակապետն կացեալ յատենի առաջի Ս. Կաթուղիկոսի ընթեր-
ցաւ զուղերձս զայս.

« Աստուածարեալ Քահանայապետ՝

« Անհասանելի եւ անսահմանելի կամքն Աստուծոյ հրաւիրէ զԶեր
« Վեհափառութիւն ի Գահակալութիւն Սրբոց Առաքելոցն Թաղէոսի
« եւ Բարդուղիմէոսի եւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Մեծի Պարթե-
« լին, Լուսաւորչացն մերոց եւ Առաջնորդացն հաւատոյն Հայաս-
« տանի:

« Ընտրեաց նա զԶեր Վեհափառութիւն ի Գլուխ համօրէն Ազգի
« Հայոց եւ ի լոյս Հայաստանի, վասն որոյ զնոյն բանաւոր հօտ ա-
« զատեալն ամբիժ արեամբ որդւոյ իւրոյ Միածնի յանձն առնէ՝ զամե-
« նամեծ պաշտպանութեան Զերոյին Վեհափառութեան առ ի վերա-
« կանգնել զնա եւ ժառանգեցուցանել զժառանգութիւնս աւերակս,
« ասել կապելոց, թէ ելէ՛ք, եւ որք ի խաւարի ետին, թէ յայտնե-
« ցարուք. հրաւիրէ զՄեծ Քահանայապետդ՝ զօրացուցանել զտկարս,
« բժշկել զհիւանդս, յանձնաձեւ զչարհարեալս, դարձուցանել զմո-
« լորեալս, խնդրել զկորուսեալս, եւ սրբել միանգամայն յաչաց նո-
« րա զգառն արտասուս, բնակեցուցանելով զնոսա ի վայրի դալա-
« րոջ, եւ սնուցանելով առ ջուրն կենաց եւ հանգստեան. եւ թէպէտ
« այսոքիկ ամենածանր զթողութիւնք տառապանք են եւ բաժակ չար-
« չարանաց Մեծի Քահանայապետիդ, սակայն լրութեան Ազգիս հան-
« գիստ եւ հսկայաքայլ յառաջդիմութիւն:

« Արդ՝ Մայր մեր Սուրբ Էջմիածին ընկալեալ զսոյն երկնառաք
« շնորհ լիակատար խնդութեամբ բերկրի զաւակովք հանդերձ, զի
« Տէր ողորմեցաւ Մեծին Հայաստանի՝ պարզեւելովն զԶեր Վեհա-
« փառութիւն մեծ խնամակալ, արթուն Հովուապետ եւ Սուրբ Ա-
« լանդապահ իւրոյ գոյութեան, վասն որոյ տարածեալ զբազուկ իւր
« Սուրբ կոչէ ասելով. «Արի՛ ե՛կ, մերձաւոր իմ՝ արի՛ ե՛կ առ պատ-
« ուարաւ պարսպիս, երեւեցո՛ր զերեսս քո ի մեզ, զի քեւ անցցէ ձը-
« մեռն ցրտաշունչ. ծաղիկք գիտութեանց եւ բարոյականութեանց
« ծաղկեցեն ի մեզ. տատրակք արձակեցեն զձայնս իւրեանց ի մե-
« նաստանաց, շիւղաբարձ աղաւնիք ելցեն ընդ առաջ ի նշան բեր-
« կրութեան, եւ ամենայն ուրեք ուսումնարանք մեր փթթեցեն բու-
« րելով զհոտ անուշից ի ցնծութիւն եւ ի բերկրութիւն լրութեան Ազ-
« գիս, եւ եղիցին նոքա իբրեւ զգետ յորդեալ փառաւոր ի ծարաւուտ
« երկրի:

« Իսկ մեք համախմբեալ բազմութեամբ ի տրիտուր սոյնպիսի
« գերօրինակ երկնառաք պարգեւաց զբաժակ փրկութեան Տեառն ըն-
« կալցուք եւ զանուն նորա յաւէտ կարգասցուք գետնամած ծնրա-
« դրութեամբ եւ պաղատախառն արտասուօք, զի որպէս ընտրեաց նա
« զԶեր Վեհափառութիւն պաշտպան Հայրենեաց, պաշտպանեցէ
« նոյնպէս երկնային իմն զօրութեամբ առ ի տանել զամենամեծ եւ
« զվսեմ ազգային ամենակարեւոր պաշտօնն յարուցանելով ի քարանց
« Հայաստանի լայնածաւալ կառավարութեան մեծ Քահանայապետիդ
« զհաւատարիմ օժանդակ անդամս Եկեղեցւոյ՝ որդիս Աբրահամու,
« ծաղկեցի յաւուրս Զեր արդարութիւն, բազում խաղաղութիւն
« մինչեւ կատարեցի լուսին, եւ մեծ Քահանայապետդ կացցէ եւ
« մնացցէ ընդ արեւու դարս շնորհօք Սուրբ Աստուածութեան նորա
« ի պերճազարդ պայծառութիւն եւ ի փառս պարծանաց լրութեան
Ազգիս:

Նուաստ ծառայ Արքեպիսկոպոս

Սարգիս Հասան Զալալեանց »

Ի 13 փետրվարի, 1867 ամի,

Ի Կ. Պոլիս.

Եւ ի նորոյ խոնարհեալ առաջի Հոգեւոր Տեառն՝ համբուրեաց
զՍ. Աջն Հայրապետական յանձնեալ եւ զուղերձն:

Ի պատասխանի որոյ պարգեալ Վեհ. Հայրապետի զգիտակցու-
թիւն իւր ըստ ծայրագոյն կոչման յառաջակայ պաշտօնի իւրոյ եւ
ըստ վիճակաց Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ զպարտաւորու-
թիւնսն՝ ապաւինեցաւ շնորհօք պաշտպանութեան Տեառն, աջակցու-

թեան իւր զՏ. Գէորգ Կաթ. եւ յստակեցուցեալ զօր ընդունելութեան՝ առաքեաց զսենեկապետ (պաշ – մապէյննի) զԳեամիլ պէյ ի 24-ն փետրվարի, յաւուր ուրբաթու, առ ի հաղորդել Նորին Սրբութեան զօրն ներկայացման:

Վասն որոյ ի 1-ն Մարտի, յաւուր չորեքշաբաթու, զմիջառուրբ, եւ եւ զհաց Վեհ. Հայրապետ ընդ Կաթ. Հրաւիրակաց ի պալատն կայսերական ի Տոլմա – Պահճէ, ուր նախ դիմաւորեաց զսա եւ հիւրասիրեաց Վսեմ. Գեամիլ պէյ սենեկապետ, եւ ասլա կիսոյ ժամու դարձեալ ներկայացոյց Օգոստ. Սուլթան Ապտ – իւլ Ազիզ կայսեր ի մեծ դահլիճի հանդերձ Սարգիս Արքեպս. եւ Գրիգոր վարդ. Հրաւիրակօք:

Տ. Գէորգ Կաթողիկոս մատոյց խորին յարգանք զերախտազիտական զգացմունս իւր եւ զսրտազին շնորհակալութիւնս զշնորհաց եւ զխնամաց Վեհ. Սուլթանի եւ Օսմ. կառավարութեան եթէ առ ինքն յամենայն պաշտօնավարութիւնսն եւ եթէ առ Ազգն Հայոց, եւ եթէ կամք Աստուածային եւ ընտրութիւն ազգային պարտաւորեն զինքն մեկնել ի սահմանաց Թուրքիոյ, սակայն ոչ երբեք մեկնեսցի սիրտ եւ երախտազիտութիւն իւր ի Թուրքիոյ, եւ ոչ իսկ մոռացի զսէր եւ զքաղցրութիւն կայսեր եւ ոչ զաղարեացի յաղօթից եւ ի բարեմաղթութեանց ուր եւ գտանիցի, խնդրեաց շարունակել զմշտանուէր եւ զառատախնամ շնորհս իւր առ Թուրքիաքնակ Հայս, եւ յաւել զբարեմաղթութիւնս վասն կենաց եւ բարօրութեան կայսեր, եւ վասն յաջողութեանց եւ զօրութեանց Օսմ. կառավարութեան:

Պատասխանելով Օգոստ. Սուլթանի՝ շնորհաւորեաց զկաթողիկոսական կոչումն եւ զպաշտօն, փոխանակեաց զշնորհակալութիւնս եւ զգովեստ սակս ջերմեռանդ զգացմանցն եւ հաւատարիմ պաշտօնավարութեանց Տ. Գէորգայ՝ աներկմիտ յուսացեալ, զի յարատեւեսցէ ի նոյնպիսիս ուր եւ գտանիցի, եւ ի նշան բարեկամութեան եւ բարեհաճութեան իւրոյ տայ ձեռամբ իւրով զառաջին աստիճան Մէմխիյէ շքանշանի, զոր եւ յանձնեաց Նորին Սրբութեան:

Բացորոշ երեւէին արգահատանք Սուլթանի ի խօսակցելն ընդ Գէորգ Կաթողիկոսի:

Ողջունախառն մաղթանք Վեհ. Սուլթանի եւ Վեհ. Հայրապետ ընդ Հրաւիրական արտաքս ի դահլճէ խորին յարգանք եւ ըստ սովորական կարգի:

Նստեալ սակաւիկ մի ի հիւրանոց Սենեկապետ պէյի՝ վերադարձաւ եւ եկն Հոգեւոր Տէր ի բնակարան իւր հանդերձ ուղեկցօք եւ դրօշակրովք:

Իսկ նախ քան զայս ներկայութիւն յաջողեցաւ Վեհ. Հայրապետի

աղատել զիշխանս Հայոց Ուլնիոյ ի բանտէ, որոյ վասն ոչ մոռացաւ մատուցանել նաեւ զերախտազիտութիւն մասնաւոր Օգոստ. Սուլթանի բարեխնամի:

Յաման 1859 – 64 առթիւ արքունական տրոց եւ նորօրինակ միջամտութեանց Օսմ. կառավարութեան յուզեալ էին եւ ապստամբեալ Հայք Ուլնիոյ (Ձէյթունի), որք բաղկանային իբր ի քսան հազար բընակչաց բաժանեալ ի չորս թաղս ընդ իշխանութեամբ եւ կառավարութեամբ չորից ժառանգական եւ նահապետական իշխանաց, որք եւ հատուցանէին Օսմ. կառավարութեան զքսան եւ հինգ հազար դահեկանս ի տարեկան տուրս, եւ ոչ զայլ ինչ, մինչ կառավարութիւն ջանայր յաւելեալ գտարեկան տուրս արքունականս, զենել զոմն ի մահմետականաց ի կառավարիչ Ուլնիոյ, սեղմել եւ սահմանափակել իսպառ զիշխանութիւնս եւ զիրաւունս չորից իշխանաց, միանգամայն իսկ ասել՝ համադասել զՁէյթուն ընդ ընդհանուր վարչութեամբ կառավարութեան, ի շարս այլոց գիւղօրէից եւ դաւառաց:

Համաձայն ուղեգրութեան Վիկտոր Լանգլուա Գաղղիացոյ, ըստ աշխարհագրութեան գտանի բարձրադիրն եւ լեռնապատ Ուլնիա ի 34° եւ 35° աստիճանս լայնութեան եւ ի 38° եւ 39° աստիճանս երկայնութեան: Սահմանքն են ի հիւսիսոյ՝ Տորոս, ի հարաւոյ՝ զառիվայր լեռանց՝ ընդ որովք անցանէ գետն Պերամոս, յարեւմտից՝ Գրքմըզ լեռն եւ Խոզանեան վայրք եւ յարեւելից՝ գետն Պերամոս: Ունի գերկու լեռնահովիտս:

Անցք եւ յաջողութիւնք Լիբանանու առաւել հրապուրէին զհայ երիտասարդս Կ. Պոլսոյ եւ զՀայս Ձէյթունի, եւ առանց հիմնական եւ փորձառու պատրաստութեանց եւ հեռատեսութեանց, ոչ ունելով մանաւանդ ի պաշտպան ինքեանց եւ ոչ զոք յերոպական ի մեծ պետութեանց, յանձնապատան իմն յանդընութեամբ ապաւինեցան յանառիկ դիրս լեռանց եւ վայրաց իւրեանց, առին զգէնս իւրեանց եւ ելին ընդդէմ Օսմ. կառավարութեան: Ի վերջին յուսահատական վիճակի եւ ի ճգնաժամու հնար էր Ձէյթունցոց զինել հազիւ զհինգ հազար անձինս, առանց բժախնդրութեան սեռի եւ հասակի կամ ամաց:

Քանիցս յաջողեցաւ նոցա մղել յետս մեծաւ յաղթանակաւ զգորս Թուրքաց՝ մատնեալ ի պարտութիւն: Այլ հուսկ ուրեմն տարաւ բանակն Օսմանեան զյաղթանակ կատարեալ եւ գրաւեաց զՁէյթուն:

Առանց հետեւելոյ ժամանակագրական ճշտութեան անցից եւ մանրամասնութեանց՝ փութամբ յարել իբրեւ զընդհանուր տեսութիւն եւ զքննադատութիւն, զի Ուլնիա եւ Քոզան ի լեռինս Տաւրոս-

եան սահմանակից լեալ միմեանց՝ յաճախ զինակցէին եւ պաշտպանէին զիրեարս ընդդէմ արտաքին կառավարական յարձակմանց եւ միջամբնութեանց :

Արդարեւ Քոզանցիք եւ բռնապետք նոցա երբեմն հարստահարէին զհայս եւ զգիւղորայս, որ արտաքոյ սահմանաց իւրեանց եւ Ուլնիոյ, եւ հրատահարեալ, ընդ որս եւ Հաճընցիք բողոք բառնային առ Պատրիարքարան, որ եւ հրաւիրեաց զուշադրութիւն կայսերական կառավարութեան, որոյ վասն Գէորգ Եսոյ. (Կաթողիկոս) յայն ժամանակի ի մտերմական ինչ տեսակցութիւն իւրում ընդ Պօղոս Արքեպս. — Պատրիարքի՝ զգուշացոյց զնա, զի մի՛ տկարասցի իսպառ Զէյթուն եւ ընկճեսցի : Այլ ի նանիւր :

Եւ ահա հանեալ կառավարութիւն զյատուկ բանակ աջակցութեամբ Հայոց Հաճնոյ՝ նուաճեաց իսպառ զՔոզանցիս, աքսորեաց զբռնապետ պէյս, զխան Մահմուտ, եւ այսպէս խորտակեալ զզինակից եւ զաջակից Ուլնիոյ՝ յաջողեցաւ տակաւ առ տակաւ նուաճել իսպառ եւ զԶէյթուն :

Յետ որոյ Օսմ. կառավարութիւն երբեք բռնի եւ զչորս իշխանս Զէյթունի՝ զԱստուածատուր (Ասատուր) Եէնի — Տիւնեա մականուամբ, զՂազար, զՆազարէթ եւ զՄկրտիչ այսր ի Կ. Պոլիս, եւ ոչ թողոյր սոցա վերադառնալ ի հայրենիսն :

Իսկ Պատրիարքարան Գում — Գարույի ապիկարութեամբ իւրով փայլեալ, ըստ միամիտ թելադրութեան ոմանց երիտասարդաց եւ Ներսէս Եպիսկոպոսի Վարժապետեան, խնդրէր զաջակցութիւն անդրալեւոնային մոլեռանդ առն խարդախի եւ վտանգաւորի՝ Գերապայ-ժառ Հասունեանի, որպէսզի միջնորդեալ առաջի գաղղիական դեսպանի եւ կառավարութեան՝ ներդրածեսցէ ըստ գործոց Զէյթունի՝ ազատելով եւ զիշխանս :

Առիթ բարեպատեհ եղիտ Գերապայժառ Հասուն պապամօլն եւ տարածեաց զուռական իւր ի Հայս Ուլնիոյ լի խաբուսիկ խոստմամբ, որսացաւ զսակաւս ոմանս, պատրեաց եւ զիշխանս, եւ այսպէս սկսաւ արդիւնաւորել յաւէտ եւ միայն զնախճիրս հռովմէականութեան : Զգաստացաւ Պատրիարքարան Գում — Գարույի, այլ անազան յոյժ :

Դարձեալ իշխանք անուղղակի իմն եղանակաւ ենթարկեալ նենգամիտ ազդեցութեանց եւ դաւադիր թելադրութեանց ռուսական դեսպանատան, որ հրահանգեալ է զնոսա հրատարակել ի գաղղիական լրագիրս Կ. Պոլսոյ զբողոք զընթացից եւ ընդ դէմ Օսմ. կառավարութեան, ընդ ստորագրութեամբ իւրեանց հրատարակեն զբողոքագիր ի միում ի գաղղիական թերթի եւ խնդրեն զպաշտպանութիւն եւրո-

պական պետութեանց՝ պատրեալ իբր զի առիթ առեալ դեսպանաց զայսպիսի բողոք նոցա՝ միջամտեսցեն գործոց Զէյթունի եւ պաշտպանեսցեն զիշխանս հանդերձ սարօքն :

Ընդ այս զայրացեալ Մեծ Եպարքոսի եւ նախարարի Արտաքին գործոց՝ հրամայեն ձերբակալել անմիջապէս եւ տան բանտարգել զիշխանս Ուլնիոյ : Եւ ահա զայսու միջոցաւ հհաս Տ. Գէորգ Կաթողիկոս ի Պրուսայէ ի Կ. Պոլիս, եւ մինչ Գերապայժառ Հասուն ջանայր ի գաղտնի եւ մերձ էր յաջողել զարձուցանել իսպառ ի պապականութիւն զիշխանս չորեսին, որպէսզի ազատեսցէ զնոսա իբրեւ զժողովուրդ իւր ի բանտէ, բունն միջամտութեամբ գուն գործեաց Հոգեւոր Տէր, ոչ սակաւ բանակցութեամբ էառ զսիրտս Մեծի Եպարքոսի եւ նախարարի արտաքին գործոց եւ ազատեաց զիշխանս ի բանտէ :

Հիւրասիրեաց Նորին Սրբութիւն զգլխաւոր եւ զազդեցիկ իշխանս Աստուածատուր՝ այր բարձրահասակ, անձնեայ եւ թիկնաւէտ՝ ի բընակարանի իւրում, որպէս եւ պատրիարքարան հիւրասիրեաց զմիւս իշխանս, եւ այսպէս խայտառակեաց զՀասուն եւ զխարդաւանութիւն նորա :

Համաձայն նախապատրաստութեանց եւ հրահանգաց Հոգեւոր Տեառն՝ յետ ամսոյ ինչ ընկալաւ Պատրիարքարան Գում — Գարույի եւ զհրաման Բ. Դրան առ ի վերադարձուցանել զիշխանս ի հայրենիս իւրեանց՝ համակերպեալ նորոյ տնօրէնութեանց կայսերական կառավարութեան՝ ի մեծ վիշտ սրտին ողջամիտ անձանց :

ԳԼՈՒԽ ԽԶ.

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԱՐԱԳԵԼՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ

Ժողովուրդ Հայոց մայրաքաղաքի, մանաւանդ նշանաւոր եւ ազդեցիկ արուարձանաց, փափաքել փափաքէր եւ խնդրէր, զի Հոգեւոր Տէր մատուցէ զՍ. պատարագս կաթողիկոսական հանդիսիւ ի կարեւոր եկեղեցիս, յաւագ եկեղեցւոյ ի Գում — Գարու, ի Բերա, ի Միջագեղ, յիւսկիւտար եւ ի Քաղքեղոն : Որով յապաւելոյ էր եւ մեկնումն Վեհ. Հայրապետի ի Կ. Պոլսոյ, մինչ ռուս. դեսպանն գուն գործէր փութացուցանել, եւ խնդրէր զհրաման Նորին Սրբութեան առ ի տալ բերել յՕգեսայէ զպետական յատուկ շոգենաւ փոխադրութեան :

Վեհ. Հայրապետ զգուշանայր յաւէտ ի գժտելոյ ընդ ռուսական կառավարութեան, միանգամայն ի վտանգաւոր ջանից եւ ի թելա-

դերութեանց եթէ երկտասարդաց ոմանց մոլորելոց եւ պնդելոց զհետ կրօնական պատրուակեալ բարեփոխութեանց եւ եթէ հակապալածէնիական կոուսակցութեան, եւ որոշեաց պատարագել մի անգամ ի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ ի Բերա, եւ այսպէս ըստ մասնեայ գոհացումնել զբաղձանս ժողովրդեան Հայոց:

Վասն որոյ ի 19-ն փետրվարի յաւուր կիւրակէի, յորում էր եւ տարեդարձ գահակալութեան Օգոստ. Աղեքսանդր Բ. Կայսեր Ռուսաց, մատոյց մեծաւ հանդիսիւ եւ փառաւորութեամբ զյատուկ Ս. պատարագ, յորում միջոցի զգեստաւորեալ կանգնեալ էին չորս եւ պիսկոպոսունք յերկուս կողմանս Սեղանոյ ի բեմի ի պատիւ Վեհ. Կաթողիկոսի:

Մինչեւ ցվերջ Ս. Պատարագի եկին եւ ներկայ կանգնեցան ի դասս Վսեմ. Իկնաթիէվ զօրավար դեսպանն, կին նորա, ռուսական պատուիրակ — հրաւիրակ Վսեմ. Վասիլ Զինովիէվ զօրապետն, կաբեւոր պաշտօնեայք դեսպանատան, եւ նշանաւոր հայազգիք ոմանք:

Խօսեցաւ Նորին Սրբութիւն քարոզ ըստ պատշաճի աւուրն եւ խորատական ի սէր եւ ի խաղաղութիւն: Յետ աւարտման Ս. Պատարագի՝ եւ եւ զնաց ի ռուսական դեսպանատուն ընդ Տ. Սարգիս Արքեպիսկոպոսի եւ հանդերձ այլով, եւ ի մեծի դահլիճի արար զմաղթանս վասն Կայսեր Ռուսաց նորօրինակ իմն օտարամոլութեամբ՝ երիցս երգեալ խմբովին զմի տուն Անդաստանական աղօթից (Օրհնեսցի... Արեւմտեան կողմն աշխարհի...), եւ այսպէս օրհնեաց զկայսրն Աղեքսանդր եւ զդեսպանն, եւ ապա հանգիստ էառ սակաւ ինչ եւ պատուասիրեցաւ: Յետ որոյ մեկնեցաւ ի դեսպանատունէ ընդ ուղեկիցան:

Ոչ աւելորդ համարեսցի արձանագրել ասդէն եւ զայս միջադէպ:

Յորժամ զգեստաւորեալ Հոգեւոր Տէրն ելանէր հանդիսիւ եւ երգով Խորհուրդ Խորհիմի ի ձախակողմեան պահարանէ առ ի մատուցանել զՍ. պատարագ, եւ զգեստաւորեալ չորս եպիսկոպոսունք երթային երկուս կարգս յառաջոյ նախ քան զՀոգեւոր Տէր, եւ ահա յեկանէն նոցա ընդ աստիճանս բեմի եւ յուղումն մեծ եւ խռովութիւն ի ձախակողմեան դասու, եւ երկտասարդք ոմանք ընդ Կարապետի Փանոսեան խմբադրասկետի Մանգրաւի Էփեմար հայատառ եւ թուրքաբարբառ լրագրոյ ոչ թողուն միում յեպիսկոպոսացն զգեստաւորելոց՝ Մկրտիչ Եպ. Քէյֆսիդեան Գերմանիկեցւոյ (ապա եղելոյ պիտականուն Կաթողիկոս Ստոյ) ելանել ի բեմն՝ աղաղակ բարձեալ, զի ոչ վայել է կախարդ եպիսկոպոսի ելանել ի բեմն եւ կալ առնթեր Հայրապետին Ազգիս մերոյ, մինչեւ յաջողեցաւ վերադարձուցանել

զայրն զայն ի պահարան եւ այլ ոմն եպիսկոպոս փոխանակեաց նմա, համաձայն հրամանի Նորին Սրբութեան: Իսկ առիթ խռովութեան եւ ղեւ սոյն այս խնդիր:

Մկրտիչ Եպ. Գերմանիկեցի կորուսանէ ի ժամանակաւոր սենեկէ իւրմէ Պատրիարքարանի զգումար ինչ դրամական, եւ առ ի գտանել զդրամսն՝ շրջեալ էր զհաց բանալեալ կախարդական իմն սովորութեամբ: Եւ յաւուրս յայնորիկ յուղէին լրագիրք, մանաւանդ Մանգրաւի, զկախարդական խնդիրս, զրդոէին զժողովուրդ եւ խնդրէին ի Պատրիարքարանէ զքննութիւն եւ զդատապարտութիւն Մկրտչի, որում եւ հետեւէր Գում — Գարու: Ականատես լեալ արծարծեաց զսոյն զայս կախարդական գործ Մկրտչի Ստեփան վարդապետ Արքեպիսկոպոսեան Մաղնիսացի (որ ձեռնադրեալ էր ի Պօղոս Արքեպիսկոպոսէ Թաքթեան ի Պատրիարքէ ի Զմիւռնիա, եւ մնայր ի Պատրիարքարանի):

ԳԼՈՒԽ ԽԷ.

ՅԱՂԱԳՍ ԽՆԴՐՈՑ ԻՆՉ ԵՒ ԱՆՑԻՑ ՈՄԱՆՑ

Որք հետեւէին եւ պնդէին խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ 1836-ի, ջանային, զի Հոգեւոր Տէր հանդիսաւոր իմն եղանակաւ յատենի եկեղեցւոյ եւ առաջի ժողովրդեան, կամ յատենի Երեսփ. Ժողովոյ ուխտիւք խոստացէ հետեւել վերաքննութեան Պալատէնիոյ բոլոն ջանիւք: Սակաւաթիւ էին նոքա, այլ յանդուգն եւ խրոխտք:

Արդարեւ էր կարեւոր եւ ծանրակշիւ խնդիրն այն, այլ անխորձութիւնք եւ շրջահայեցութիւնք Տ. Գէորգ Կաթողիկոսի պահանջէին եւ ստիպէին հետեւել առաւել զգուշութեանց, եւս եւ մնալ ազատ ի նախապաշարմանց, ի հրապարակային խոստմանց եւ ի զըրդուիչ ցուցամոլութեանց: Մանաւանդ զի որք հետեւէին այսպիսական ջանից՝ ազատ էին ի պատասխանատուութեանց եթէ ասդ ի Կ. Պոլիս եւ եթէ ի սահմանս Ռուսիոյ, մինչ ծանրանայր ի վերայ Վեհ. Հայրապետի վիճակ կրկնակի եւ պատասխանատուութիւն ծայրագոյն եւ զժուարագոյն եթէ առաջի Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ եթէ առաջի ռուսական կառավարութեան, վասն որոյ բաւականանայր բերանացի եւ անպաշտօնական իմն եղանակաւ խոստանալ հետեւել ըստ փորձառութեանց եւ համազգային մասնակցութեամբ վերաքննութեան Պալատէնիոյ, զոր եւ չուայ իմն խոստմամբ դիւրացուցանէր Պ. Իկնաթիէվ հանել ի գլուխ ըստ արժանւոյն ի Մայր Աթոռոյ ի Ս. Էջմիածնի եւ եթ՝ եւ ոչ երբեք աստ ի Կ. Պոլիս: Դժուարին էր Հոգեւոր Տեառն ըմբռնել զգիւնազիտական լեզու նորա:

Յուզէին եւ ալ խնդիրք ինչ, որպիսիք էին հաստատութիւն Լուսաւարչական բարեփոխեալ Ընկերութեան, բարեփոխութիւն ոմանց եկեղեցական կանոնաց հանդերձ ալլովքն:

Ոմն ի միաբանից Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի Յակոբոս անուն Չիլինկիրեան՝ ալր անհանդարտ եւ թափառական, ջանալը հաստատել զմիաբանակցութիւն ինչ ընդ անուամբ Լուսաւարչական բարեփոխեալ Ընկերութիւն կամ Եկեղեցի, որում միաբանէին մոլորեալք ոմանք եւ երիտասարդ, ընդ որս Կարապետ Փանոսեան, եւ տալազրեալ զթամազիրք նոր եւ փոփոխեալ բազմօք, զծիսարան եւ զայլ կանոնս, գուն գործէին ընդհանրացուցանել զգաւանութիւն եւ զգաւանակիցս իւրեանց եւ հաստատել զպարգուծիւն յեկեղեցիս՝ ի դարդըս, ի ծէսս, յարարողութիւնս եւ ի պաշտամունս, զորպիսիս յուզէր չարաչար Կարապետ Փանոսեան՝ եզրակացուցեալ յաճախ՝ գործածել զարծաթեղէնս կրթութեան, եւ պահել զեկեղեցիս ի պարզութեան, համաձայն բողոքականաց:

Պատրիարքարան Գում — Գաբուլի ջանալը տկարացուցանել զնոսա, արդելոյ զյանդուղն գործողութիւնս, եւ առանց յարուցանելոյ զհալածանս՝ հետեւէր դատապարտել ամբողջութեան զվտանգաւոր նպատակ ընկերութեանդ, յորում երեւէր ալլաղք իմն գրութիւն բողոքականութեան, այն է՝ լութեականութեան:

Բայց յայցանէ, զիմեցին ոմանք առ Վեհ. Հայրապետ, որ խրատեաց զնոսա դադարել ի մոլորութեանցն, մի՛ պատճառել տարապարտ զհերձուած յեկեղեցւոյ, եւ ի մի բան մնալ հաւատարիմ եւ հրնազանդ Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Պատուիրեաց Պատրիարքարանի յորդորել եւ զՉիլինկիրեան դատնալ ի չար ճանապարհէն եւ զկեաց եւ զվերջանալն յուսոց՝ կարգալոյժ առնել եւ բանադրել զնա միայն:

Իսկ ոմանք գաւառացիք մատուցեալ զխնդրագիր իբրեւ զհանրագիր ստորագրութեան սակաւուց անձանց աննշանից՝ յուզէին զխնդիր եւ խնդրէին ժողով եկեղեցական գումարել եւ բարեփոխել զծիւղահամարս ազգականականս եւ խնամեալանս, զիւրացուցանել զամուսնութիւնս եւ զամուսնալուծութիւնս, թեթեւացուցանել զեկեղեցական արարողութիւնս ինչ եւ զպահս, պակասեցուցանել զկիւրակէ, եւ շարունակէին յաւելուլ եւ զայլ խնդիրս ալլապիսիս: Եթէ ոչ էր այս հանրագիր կորուսեալ յուղեւորութիւնս մեր, ամփոփեալ աստ ըստ պատճէնն ի տեղեկութիւն եւ ի յագուրդ հետաքրքրութեան բանասիրաց, թէեւ գուրկ էր ի տրամաբանութենէ, յերաւագիտութենէ, յողջամտութենէ, ի գիտակցութեանց ազգային եւ եկեղեցական շահոց

եւ պիտոյից, եւս եւ յօրինաւոր շարադասութեանց եւ ի պատմական հետազոտութեանց:

Պատճառք այսչափ էին, զի զգուշանալը Վեհ. Հայրապետ երթալ մի անգամ յԵրեսփ. Ժող. Ազգային եւ օրհնել զանդամս եւ զջանս, թէպէտ երկիցս առիթ կայաւ — երկիցս յեկեղեցւոյ եւ մի անգամ ի Թաղ. Խորհրդարանի Բերայի — գովեաց եւ օրհնեաց զԸնդհ. Ժողով եւ զազգային երեսփոխանս ընդ համայն ժողովոյ եւ խորհրդոյ:

Ապաքէն արժան էր եւ վայելէր Հոգեւոր Տեսուն գէթ պատուել միանուագ ներկայութեամբ իւրով զԱզգ. Ժողով Երեսփոխանաց եւ խորտուսել՝ յայտնեալ եւ զչնորհակալութիւնս առթիւ ընտրութեան իւրոյ ի Կաթողիկոս Ամենայն Հայոց: Միանգամայն այսու պարզել զյարգ եւ զպաշտպանութիւնս Ազգ. Սահմանադրութեան եւ Երեսփ. Ժողովոյ առաջի օտարաց, մանաւանդ ընդդէմ ջանից հիւսիսայնոց...

Ընդ նմին հարկ էր անհրաժեշտ երթալ ի նշանաւոր եկեղեցիս կարեւորագոյն արուարձանաց եւ պատարագել ի հոգեւոր մխիթարութիւն ժողովրդեան ըստ բարեպաշտ փափաքանաց եւ խնդրանաց նոյս:

Այլ սակայն երկնէր յաւէտ եւ զգուշանալը յերթալոյ յԸնդհ. Ժողով եւ ի կարեւորագոյն եկեղեցիս, զի մի՛ ոմանք յուղեցցեն զխրնդիրս, զըզուսցեն զհակառակութիւնս եւ արդիւնաւորեցցեն զխոփութիւնս եւ զանպատուութիւնս, յորպիսիս նպաստէին սանձարձակ աղատութիւնք եւ զազդիւրամոլական թեթեւարարոյթիւնք ընդհանրացեալք աստ ի Կ. Պոլիս ընդ լրբենի հրատարակութեանց եւ անուանարկութեանց լրագրաց: Եւ իբր ի փոքրիկ ապացոյց եւ յօրինակ յաւելումք համառօտել զանցս ուրումն Աւետ պէյ անուանելոյ իբր Ղաթապաղեւոյ:

Այլս այս բախտախնդիր եկն մի անգամ ի Պրուսա նախ քան զկաթողիկոսական ընտրութիւն Համազգային ընտրական Ժողովոյ Ս. Էջմիածնի, եւ Վեհ. Հայրապետ հիւրասիրեաց զնա յԱռաջնորդարանի, որպէս սովոր էր սիրել եւ հիւրընկալել զհամայն ուսուսչայս եւ թէ աստ ի Կ. Պոլիս եւ եթէ ի Պրուսա, ուր հիւրասիրեալ էր զԳլարցի Պ. Եսայի Իզմիրեանց, զՍտեփան քահանայ Իզմիրցի եւ զայլս, առանց ճանաչելոյ անձամբ զնոսա, որպէս եւ զԱւետ, եւ առանց ստանալոյ անգամ զյանձնարարագիրս:

Արդ՝ Աւետ պէյ Ղաթապաղցի ինքնակոչ, ոչ ունելով զդերս ինչ եւ զպաշտօն, իբրեւ զուղեւոր իջեալ էր ի Պրուսա: Իսկ յետ գալստեան Տ. Գէորգայ Կաթողիկոսի այսր ի Կ. Պոլիս, ընկալեալ զյանդիմանական պատասխանի բացատական, ոչ ամաչէ հրատարակել զամբաս-

տանազիր զԳէորդայ ի լրագիրս, եւ պահանջէ զծախս, իբրեւ զի խոսեցեալ եւ պայմանեալ զօրով կանխաւ ընդ Գէորդայ՝ աշխատեալ եւ յաջողեալ է տալ ընտրել զնա (զԳէորդ) ի Կաթողիկոս, որոյ վասն հարկ է վճարել ինքեան զվարձս իւր, զոր զլանայ տալ Ս. Հայրապետ:

Աստի յայսմանէ զիւրազոյն լիցի չափել եւ զվարկս լրագրաց եւ հրատարակութեանց՝ խոնարհէին ստորնութեանց եւ աննախանձելի ընթացից բազմապիսեան, եւ որք չարամիտք զիտէին գործածել զլրագիրս համաձայն քմահաճոյից իւրեանց: Իսկ յայնժամ օրէնք քաղաքականք եւ տպագրականք էին իբր ազատականք եւ ոչ օգնէին ինչ: Եւ հրամանն կաավարչական ոչ կարէր արդիւնաւորել զարդարութիւն: Այո՛, ուշագորաւ էր պատրուակն եւ գիւթիչ, այս է ազատութիւն մամլոյ եւ խղճի ըստ երոպացւոց, եթէ ոչ սանձարձակութիւն լսիրչ եւ քստմնելի:

Թուէր իմն, զի եւ ոռոտական դեսպան մեքենայէր ի գաղտնի եւ զրգոյն զանձինս ոմանս, ընդ որս եւ զԱւետ առ ի հնարել զխնդիրս եւ ի զանուանարկութիւնս, որպէսզի վշտացեալ Ս. Հայրապետի Տ. Գէորդայ՝ փութացէ մեկնել հեռանալ ի Կ. Պոլսոյ, որում անդուստլ ջանայր եւ հետեւէր ի կնաթիւն:

Չանց առնեմք այլեւս զխնդրոյ պիտականուն կաթողիկոսութեան Աղթամարու եւ զամբաստանեալ իշախտուր Եպիսկոպոսէ գրտանելոյ ի Պատրիարքարանս, զորմէ ջանք էին արդարացուցանել Հայրապետական միջամտութեամբ եւ վճռով, որպէս եւ ինքն իշախտուր եւ կուսակիցքն զիմէին Նորին Սրբութեան, այլ Վեհ. Հայրապետ մերժէր միջամտել, ոչ ճանաչէր զպիտակ կաթողիկոսութեան Աղթամարու եւ ոչ իսկ հաճէր հաստատել զյարաբերութիւն եւ զպայման ինչ ընդ Աղթամարու եւ ընդ իշախտուր, առանց հաստատելոյ կանխաւ զօրինաւոր պայմանս եւ զսահմանս յարաբերականս եւ զնուիրապետականս:

ԳԼՈՒԽ ԽԸ.

ՅԱՂԱԿՍ ՄԵԿՆԵԼՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ Ի Կ. ՊՈԼՍՈՅ

Համաձայն հաւանութեան Նորին Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ ըստ հեռագրական ազդարարութեան ոռոս. դեսպանի՝ ի 21-ն Մարտի եկն եհաս այսր ի Կ. Պոլս առքունական Միշել (Միքայէլ) անուն երկկայմեան, որոնքն ոռոսական (անուաւոր) յՕդեսայէ ի դիմաց ոռոս. կառավարութեան առ ի փոխադրել զՍ.



« Վ Է Մ » - Ի Ն

Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը. —

Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.

Ն. Կակոսեան, (Մարտէլի եւ չրջակայքի ընդհ. գործակալ)
49, Rue Nationale, Marseille.

Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.

Կիպրոս՝ Յ. Մահտեսեան, Arasta St. No. 1, Nicosia.

Բուլղարիա՝ Գ. Հալաճեան, K. Haladjian, B. P. 444, Sofia.

Ռումանիա՝ Ե. Սարգսեան,

Typ "Astoria", 14, Str. Pictor Luchian, Bucarest.

Եգիպտոս՝ Գ. Միթարեան, խմբագր. «Յուսաբեր»-ի.

B. P. 868, Le Caire.

Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսալեան, Hirna.

Պաղեստին, Վահան Կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.

Լիբանան, Գառնիկ Գիւլայեան,

Collège Arménien 127, rue Vadi Abou Jemil, Beyrouth.

Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 310, Alep.

,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.

Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.

Իրան՝ Խ. Մելիքումեան, Թաւրիզ:

,, Աւ. Գէորգեան (Խուլիստանի ընդհ. գործակալ),

Իրան՝ Թ. Համբարձումեան, Ահւազ,

Southern State Railway, Ahwaz.

Թեհրան՝ Ար. Խոջայեան,

A. Khodjayan. Magasin «Khochnoud», Avenue Lalezar, Téhéran.

Սպահան — Զուղա՝ Թաղ. Թաղկոսեան

Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան,

H. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).

Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires

» » Ար. Գալստեան,

Rua 25 de Março, 262 São Paulo (Brésil).


« Յ Ա Ռ Ա Զ »

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Խմբագիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Յոսամսեայ
Յրանս եւ Գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Լեզվի, Եգիպտոս, Զիցերիա, Խալիս	250 ֆրանք	130 ֆրանք	
Ռիշ Երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Սմերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍՏԷ. — 17, Rue Damesme, Paris XIII



Imp. ARTISTIQUE, — 42. Rue de la Jonquière, PARIS (17^e)